



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

330.148



ՀԱՍՏԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ


ԳՅՈՒՂՑԵՐԻՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՇՐՋԱՆ
(ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆ)

A $\frac{\text{II}}{22842}$

Յերկողդ բարեփոխված նրանք ակտություն



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1930

Հր. № 1295:

Դրահեպվար № 5132 (բ):


Տեղագ 4000:

Գետնը առաջին ազարան Վազորդապառում:

Պատվեր № 60:

ՀԱՏՎԱԾ ԱՌԱՋԻՆ

**Խ. Ս. Դ. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳԸ**



ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ Խ.Ա.Հ. ՄԻՈՒԹՅԱՆ
ԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Այս հատվածում գուք կծանոթանաք կա-
չատվածի բռվան-
դակութեանը: պիտալիստական տնտեսության գլխավոր և բնո-
րոշիչ գծերի հետ: Համեմատեցեք այն խորհրդա-
ցին տնտեսության բնորոշիչ գծերի հետ: Խորհրդալին տնտե-
սությունը մի անցողական աստիճան ե՝ սոցիալիստական կար-
գերին անցնելու: Վորոշեցեք, թե ինչումն ե կայանում տարբե-
րությունը անտեսական այդ լերկու սիստեմների միջև: Ընդհա-
նուր ծանոթություն ստանալով կապիտալիզմի մասին, գուք
միևնույն ժամանակ հասկացողություն կկազմեք նաև սոցիալիզ-
մի մասին, դեռի վորը գնում և վորը կառուցում են ԽՍՀ
Միության բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կու-
սակցության դեկավարությամբ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԿԱԳԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

«Մինչայժմյան բոլոր հասարակությունների պատմությու-
նը դասակարգերի կովի պատմությունն ե... Պատմության նախ-
ընթաց շրջաններում մենք զրեթե ամենուրեք գտնում ենք
հասարակական դիրքի բազմապիսի աստիճաններ, տեսնում ենք,
վոր հասարակությունն անդամահատված ե զանազան դասերի...»

Մեր շրջանը սակայն նշանավոր ե նրանով, վոր նա դասա-
կարգերի հակասություններին պարզ ձև ե տվել: Ամբողջ հա-
սարակությունը գնալով ավելի ու ավելի լե բաժանվում լերկու
մեծ, իրար թշնամի բանակների, լերկու մեծ դեմ առ դեմ կանք-
նած դասակարգերի—բուրժուազիայի և պրոլետարիատի: Այս-
պես ելին գրում աշխատավորության մեծ ուսուցիչները՝ Կարլ
Մարքսն ու Ֆ. Ենգելսը իրենց «Կոմունիստական մանիֆես-
տում» սրանից դեռ 80 տարի առաջ:

Այսպիսի լեզրակացության ելին լեկել նրանք կապիտալիստական կարգերի մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո. Ուրեմն կապիտալիստական հասարակաբում հասարակությունն ավելի է բաժանված լերկու բանակների, լերկու դասակարգերի, քան նախկին հասարակաբում:

Իսկ թնջից և առաջանում այդ բաժանումը և թնչ և դասակարգը:

Դասակարգեր կոչվում են մարդկանց մեծ խմբերը, վորոնք միանման տեղ են գրավում հասարակական արտադրության մեջ և միենուքն չափով են ոգտվում արտադրական միջոցներից: Հասարակական մեկ դասակարգ աշխատում է յուրացնել մյուս դասակարգի աշխատանքի արդյունքը: Ժամանակակից հասարակակարգերը բաժանված են դասակարգերի, վորոնց անդամները միջուկնույն միջոցով են ձեռք բերում ապրուսաի միջոցներ և ունեն միանման շահեր:

Այսպիսով դասակարգերն իրարից տարբերվում են նրանով, թե արդյոք թնչ տեղ են գրավում արտադրության մեջ, արտադրության միջոցներ ունեն, թե վոչ, թնչապես են նրանք իրենց հասույթները ստանում (իրենց աշխատանքներից), թե ուրիշների աշխատանքը շահագործենուց): Դասակարգերն իրարից տարբերող ամենազլիավոր հատկանիշը արտադրության մեջ ունեցած զերն ե—շահագործմաղ ե, թե շահագործվող, արտադրության միջոցներ ունի, թե վոչ: Կապիտալիստական հասարակակարգում լերկու հիմնական դասակարգեր կան՝ բանվոր դասակարգ և բուրժուազիա, Բացի այս լերկու դասակարգերից, կան նաև անցողական ու միջնադիր դասակարգեր:

Սա հասարակության այն մասն ե, վորի բանվոր դասպարզ, գոյության աղբյուրն աշխատավարձն ե, վոր ու ստանում ե կապիտալիստից՝ աշխատելով նրա մոտ:

Սրանք գործարանների, ֆաբրիկաների, բուրժուազիա, ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ հողի և կապիտալների սեփականատերերն են, վորության մասնություն են նրանց աշխատանքից շահույթ և ապրում են այդ շահույթով: Սրանք կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերն են:

Անցողական դասակարգի շաբաթին են դաշտուական դասպարզները, վորոնք կանգուն են մնացել նախակապիտալիստական ժամանակից՝ որինակ՝ կալվածատերերը, գուղացիները, մանր առևտրականները, արհեստավորները և տնախագործները:

Գլուղացիութիւնը, տնայնագործներին ու արհեստավորներին մենք անվանում ենք մանր բուրժուազիա, սրանք կանգնած են բուրժուազիաի ու պրոլետարիատի միջն։ Սրանք ունեն արտադրութիւն սեփական միջոցներ, ապրում են իրենց սեփական աշխատանքով. լեռեմն կիրառում են վարձու աշխատանք շատ սահմանափակ չափով։

Խոշոր բուրժուազիաի ճնշման տակ կապիտալիստական հասարակակարգի այս մասի խոշորագույն մասը աստիճանաբար կորցնում է իր արտադրութիւն միջոցները, քայլավում ու պրոլետար ե դառնում. սրանց փոքրաթիվ մասին ե հաջողվում վեր բարձրանալ, անցնել բուրժուազան դասակարգի շարքերը։ Հասարակութիւն այս խավերը, շնորհիվ իրենց տնտեսութիւն միջանկյալ ու անկայուն վիճակի, միշտ տատանվում են լերկու հիմնական դասակարգի՝ բուրժուազիաի ու պրոլետարիատի միջն։

Մենք ասինք, վոր գլուղացիությունը ևս անցողական մանր բուրժուական դասակարգին ե պատկանում, ստկայն նա ներքուստ միաստարը չե. նա բաժանվում է լերեք խավերի՝ կուլակներ, միջակներ ու չքավորներ։

Գլուղացիութիւն վերին կուլակալին շերտն ապրում ե բատրակների գարձու աշխատանքով և գլուղի չքավորութիւնը շահագործելով։ Սա գլուղական բուրժուազիան ե, վորը համերաշխում ե քաղաքի բուրժուազիայի հետ։ Միջակ գլուղացիությունը կանգնում ե բուրժուազիայի և պրոլետարիատի միջն և կազմում և մանր բուրժուազիայի մի առանձին խմբակ։ Միջակ գլուղացիությունը ապրելով թր հողաբաժնի հասուլթով, իր աշխատանքով, բավականանում ե իր ընտանիքի աշխատող ուժով։ Նա լել լեռեմն բարերակներ ե վարձում, բայց այդ տեղի լե ունենում վորպես բացառություն, որինակ՝ դաշտավին աշխատանքների լեռուն շրջանում։ Միջակի տնտեսութիւն գոլությունը կապատիալիզմի ժամանակ անկայուն ե. Նրա մի մասը վեր ե բարձրանում դեպի կուլակը, իսկ մնացած խոշորագույն մասը թեև դանդաղորեն, բայց քայլավում ու չքավոր ե դառնում։ Միջակ գլուղացիությունը տնտեսական ալսպիսի անկայուն դրութիւն պատճառով շարունակ տատանվում ե բուրժուազիայի և պրոլետարիատի միջն։ Զեավոր գլուղացիություն—սա գլուղացիութիւն կիսապրոլետարտկան խավը ե, վորը չի կարողանում ապրել իր թուլլ տնտեսութիւն հասուլթով և գնում ե նաև վարձու աշխատանքի. սրանք ապրում են վոչ այնքան այն հասուլթով, վոր

իրենց հողն և տալիս, վորքան այն աշխատավարձով, վոր ձեռք են բերում զբսի ալս ու այն կողմնակի սեղոնալին աշխատանքներից, կամ կուլակի տնտեսության մեջ աշխատելով։ Դյուզացիոնթյան ալս մասից են զատվում բատրակներն ու քաղաքի պրոլետարները. բատրակները բանվոր դասակարգի մեջ են մըտնում. դրանք գյուղատնտեսական պրոլետարներն են։

Կապիտալիզմի ժամանակ չքավորները և բատրակները վոչ մի հույս չունեն իրենց գրությունը բարեկավելու, ազգատության ճիրաններից ազատվելու։ Սրանք անդադար լրացնում են քաղաքի բանվորների բանակը։ Դյուզացիոնթյան այս խավը գնում է պրոլետարիատի հետ ընդդեմ բուրժուազիայի։

Մենք միջնադիր խավերի շարքը կդասենք ինտելիգենցիային, այսինքն մտավոր աշխատանքի գործիչներին (ճարտարապետներ, գյուղատնտեսներ, բժիշկներ, ուսուցիչներ և այլն)։ Բայ իրեն սոցիալականն (հասարակականն) գրության ինտելիգենցիան գանվում է հրամայող ու շահագործվող գասակարգերի միջին, ըստ վորում սպասարկում և (կապիտալիստական կարգերի որոք) գյուղավորապես բուրժուազիային։ Սա նույնպես տատանվող խավ է, բուրժուազիայի հետեւց քարշ լեկող, ամեն ինչով նրան նմանվել ձգտող։ Ինտելիգենցիայի մի մասը (որինակ, ճարտարապետներ, իրավաբաններ) ամբողջովին զովվում է բուրժուազիայի հետ և կարող է կոչվել բուրժուական ինտելիգենցիա։ Մյուս մասը (որինակ, գյուղական ինտելիգենցիան, ուսուցչությունը, գյուղատնտեսները, տեխնիկները) իրենց մեծագույն մասով հարում են մանր բուրժուական խավերին։ Ինտելիգենցիայի միայն փոքրադույն մասն է կապիտալիզմի որոք անցնում բանվոր դասակարգի կողմը։

Վերջապես կապիտալիստական հասարակության մեջ կան խմբավորումներ, վորոնք միանգամայն կարվել են իրենց դասակարգերից, ապահովակարգայնացման են լենքարկվել։ Դրանց թվին են պատկանում մուրացկանները, բոսակները, պլոֆեսիոնալ գողերը, վոճրագործները և այլն։ Այդ խավերը խիստ չարացած են լինում գոյություն ունեցող կապիտալիստական կարգերի գեմ, բայց նրանք չեն կարող ուժ հանդիսանալ շահագործման թագավորությունը տապակելու համար, վորովհետեւ նրանց այլասերել ե բուրժուական հասարակակարգը, վորովհետեւ նրանք վորպես պրոլետարություններ ապրում են հասարակության հաշվին, կտրվել են արտադրական աշխատանքից, կազմակերպվելու ան-

ընդունակ են, պրոլետարիատի հետ կապեր չունեն: Այս խավը կոչվում է լումզեն պրոլետարիատ, ալսինքն բոսլակալին պրոլետարիատ:

Ըստիսով բուրժուական հասարակության լերկու գլխավոր դասակարգերի—բուրժուազիալի և պրոլետարիատի կողքին մենք տեսնում ենք անցողիկ դասակարգերի ու խմբավորումների մի խալտարդետ կազմ:

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՃՆՇՈՒՄՆ ՈՒ ՊԱՅՔԱՐԸ ԿԱԳԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Այժմ տեսնենք, թե ինչպիսի փոխարաբերությունների մեջ են լերկու գլխավոր դասակարգերը կապիտալիստական կարգերում: Ամեն մի դասակարգ իր սեփական շահերն ունի, վորոնք տարբերվում լիվ հակադիր են մյուս դասակարգերի շահերին:

Բուրժուազիան, որինակ՝ ձգտում ունի վոչ միայն պրոլետարիատի շահագործման գոյություն ունեցող սիստեմը պահպանելու, այլ և արտադրությունից ստացած իր բաժինն ավելացնելու, այսինքն ուղղում ե բանվորներից ավելի շատ հավելյալ արժեք յուրացնել: Բանվորի շահերն ընդհակառակը պահանջում են վոչ միայն բանվորի բաժին արտադրանքի ավելացումը, այլ և կապիտալիստական սիստեմի լիակատար վոչնչացումը:

Այսպիսով այդ լերկու հիմնական դասակարգերի միջև գոյություն ունի շահերի անլուծելի անհաջողեցնելի հակադրություն և անընդհատ պայքար: Իր դրությունը հիմքից փոխելու համար բանվոր դասակարգը պետք է վճռական հաղթանակ տանի բուրժուազիայի հանդեպ և կապիտալիստների տիրապետությունը տապալ:

Բանվորն իր ծանր աշխատանքի համար ստանում և չնշին աշխատավարձ և ապրում ե աղքատության մեջ: Իսկ կապիտալիստը բանվորի այդ աշխատանքից ստանում ե հսկայական շահույթներ և ապրում ե շքեղության մեջ (թե ինչպես և նա ստանում այդ շահույթները—այդ կտեսնենք հետագալում):

Ուրեմն դասակարգերի մեջ գոյություն ունի անհավասարություն. մեկ դասակարգը (բուրժուազիան) շահագործում ե և շահույթներ ե քամում մյուս դասակարգից (պրոլետարիատից):

Ինչից ե առաջանում ալսպիսի անհավասարությունն ու շահագործումը:

կապիտալիստներն ասում են. այդ նրանից ե, վոր մենք ունենք կապիտալ, ֆարբիկաներ, գործարաններ, հողեր, վորոնց մենք ենք վաստակել:

Իսկ բանվորներն ասում են. միայն աշխատանքն ե, վոր ստեղծում ե բոլոր հարստությունները, ֆարբիկաներն ու գործարաններն ստեղծվել են մեր աշխատանքով. միայն թե նրանց սեփականացրել են կապիտալիստները:

Ստեղայն ինչից ե, վոր կապիտալիստները հնարավորություն ունեն բանվորների աշխատանքով ստեղծված հարստությունները լուրացնելու:

Նախ նրանից, վոր բանվորները չունեն իրենց սեփական գործարաններն ու աշխատանքի միջոցները գաղգրահներ, գործիքներ, հում նկութ և ալյու Այդ բոլորն աստիճանաբար կուտակվել ե կապիտալիստների ձեռքում: Բանվորին մնում ե միայն վաճառել իր բանվորական ուժը և դրա փոխարեն սահանալ միամիայն այնքան, վորքան անհրաժեշտ ե իր մնունդի համար: Յերկրորդ՝ վոր կապիտալիստական հասարակությունը հիմնված ե և պահպանվում ե շահագործման, բռնության ու ճնշման միջոցով, վոր գործադրում և բուրժուազիան պրոլետարիատի վերաբերմամբ: Գլուզի չքավորներն ու միջակները, արհեստավորները և տնայինագործները ամել կամ պակաս չափով են շահագործվում են կապիտալիզմի կողմից: Կապիտալիստների ձեռքում ե իշխանությունը, զորքը, վոստիկանությունը, զատարանը և ալյու: Այս բոլորը ծառալում են այն նպատակին, վոր կապիտալիստը կարողանաւ անարգել քամել բանվորների հյութը: Նույն «Կոմունիստական Մանիքեստում» Մարքսն և Ենդելսը գրում են, վոր «Ժամանակակից պետական իշխանությունը վոչ ալ ինչ ե, քան յիթե բուրժուազիայի հասարակական գործերը վարող կոմիտե»:

Այսպիսով՝ կապիտալիստական հասարակությունը նիմնված ե բանվոր դասակարգի ներման վրա՝ բուրժուազիայի կողմից:

Կարմաղ և արդյոք բանվոր դասակարգը հաշտվել կապիտալիստական շահագործման հետ. թուլատրել, վոր բուրժուազիալի մի խմբակ ճնշի իրեն:

Իհարկե վոչ, նա չի հաշտվել և իերբեք ել չի հաշտվել: Կապիտալիստական հասարակության մեջ տեղի ունի անդադար պալքար կապիտալիստների և պրոլետարիատի դասակարգերի միջև, քանի վոր նրանց շահերը, ինչպես մենք տեսանք, տարբեր են: Կապիտալիստներն ամեն միջոցներով ճնշում են վոր

դնում բանվորների վրա, աշխատավարձը պահասեցնելու և բանվորական որը իերկարելու նպատակով—չե վոր այդպիսով նրանք մեծ ողուտներ կստանան: Խսկ բանվորներն իրենց հերթին պարբերում են իրենց գրությունը բարելավելու, աշխատավարձն ավելացնելու և բանվորական որը կրծատելու համար: Հաջող պարբերում համար բանվորները միանում են և պրոֆեսիոնալ (արհեստական) միություններ կազմում, գործադուլներ են կազմակերպում և այլն:

Բայց կարող են արդիոք բանվորները կապիտալիստական կարգերում շոշափելի չափով բարելավել իրենց գրությունը:

Վոչ, չեն կարող, քանի վոր նրանց գրության այդպիսի բարելավումը կզրկեր կապիտալիստներին իրենց շահութից, իսկ կապիտալիստները բավական ուժեղ են և իրենց հոժար կամքով այդպիսի մեծ զիջումներ լերբեք չեն անի:

Դրա համար պրոլետարիատը միայն մի նախապարհ ունի. տապալել բուրժուազիայի իշխանությունը յեկ նաստանել այնպիսի հասարակակարգ, վորտեղ չեն լինի վոչ դասակարգեր յեկ վոչ ել մարդու օննագործում՝ մարդու ձեռնով. Պրոլետարիատի դասակարգացին պարբերի վերջնական նպատակն ե հաստատել այդպիսի կորպուր, կոմունիստական հասարակակարգը: Տեսնենք այժմ, թե ինչ է լինելու կոմունիստական հասարակակարգը:

Ի՞Զ Ե ՍՈՑԻԱԼԻՍ- Այդ հասարակակարգում ամենից առաջ չի լի-
ՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱ- նելու մասնավոր սեփականություն: Արտադրու-
ԿԱՐԳԸ ՅԵՎ Ի՞Զ Ե թյան բոլոր գործիքներն ու միջոցները—Փարբի-
ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆԸ: կաները, գործարանները, հողը—բոլորը պատ-
կանելու և ամբողջ հասարակությանը: Ամեն մեկը կաշխատի և
իր բոլոր կարիքները կնորա ամբողջ հասարակության կողմից
ստեղծված բարիքներից: Եթե չի լինի մասնավոր սեփականու-
թյուն և ամենըը կաշխատեն ու կապրեն իրենց աշխատանքով,
ապա չի լինի և շահագործում, հետեւապես չեն լինի և դասակար-
գեր, իսկ դասակարգերի բացակայության գեպքում պետք չի լի-
նի նաև պետությունը. նա կմեռնի: Չե վոր պետությունը հար-
կավոր ե նրա համար, վոր տիրող դասակարգը ճնշի մլուս, լեն-
թակա դասակարգերին: Կապիտալիստական հասարակության մեջ,
որինակ, բուրժուազիան հիմում ե իր իշխանությունը, իր պետու-
թյունը պրոլետարիատին անտրդել շահագործելու և բռնությամբ
ճնշելու նրա փորձերը՝ կապիտալիստական շահագործումից ա-
զատվելու: Այս վերջին նպատակին են ծառալում պետական ա-

պարատը—զորքը, վոստիկանությունը, դասարանը և ալյու։ Կոմունիստական հասարակածարգում տիրելու յել լիակատար հավասարություն, չեն լինելու գաստկարգեր, հետեւարար չեն լինի նաև վոչ բանություն և վոչ մարդու շահագործում մարդու ձեռքով։ Իսկ այդ գեղջքում կվերանա նաև պետությունը, բռնության և մնջումի այդ գործիքը կվերանա նաև փողը, վորպես շահագործման միջոց։

Այդպիսի կոմունիստական հասարակությունը մի անգամից չի հաստատվի։ Առաջին աստիճանում կլինիկ սոցիալիստական կարգերը, այսինքն կլինիկ սոցիալիստական հասարակությունը, Առաստիճանը կվերանա այն ժամանակ, մերք կվոչնչանա մասնագոր սեփականությունը և կվերտնա մանր արտադրությունը, իսկ ամբողջ տնտեսությունը կվարի ինքը՝ ամբողջ հասարակությունը կողեկտիվ և կազմակերպված կերպով և պլանային կարգով, ինը ամեն վոք իրան անհրաժեշտ մթերքները կստանա վոչ թե շուրկայում գներով, այլ պլանաշափ բաշխման կարգով, քանի վոք հասարակության ամբողջ արտադրանքը կենթարկվի պլանային բաշխման (շուրկայի փոխարեն կսահմանվի մթերքների պլանային բաշխում)։ Սոցիալիստական կարգերի տարբերությունը լիակատար կոմունիստական կարգերից կկայանա նրանում, վոր անտեսության տեխնիկան և արտադրողականությունն այնքան բարձր չեն լինի, վորպեսզի բավարարեն բոլորին ըստ նրանց պահանջների—այդ պատճառով ամեն մեկը հասարակության սուացվածքից կստանա մթերքներ իր աշխատանքի, նրա քանակի և վորակի համեմատ նշանակում ե զեռ չի լինի լիակատար հավասարություն։ Բացի այդ, սոցիալիզմի ժամանակ դեռևս բոլորովին վերացած չեն լինի նախկին կապիտալիստական կարգերի բոլոր մնացորդները, մարդկությունը դեռ բավարար չափով վերաբաստիարակված չի լինի լիակատար ազատությունից ոգութելու համար։ Այդ պատճառով սոցիալիստական կարգերում դեռևս կշարունակի գոյություն ունենալ հարկադրանքը՝ անտեսության կազմակերպության և նրա արտադրանքի բաշխման դործում, հետեւապես և կպահպանվեն պետական իշխանության վորոշ մնացորդները։ Միմիայն այս բոլորը վերանալուց հետո կհաստատվեն կոմունիստական կարգերը։

Հաճախ սոցիալիստական հասարակակարգը շփոթում են կոմունիստականի հետ։ Լենինն իր «Պետություն և հեղափոխություն» գրքում սպառիչ բացատրություն ե տվել այս հարցին։ Նա

գրում ե, վոր սոցիալիստական կարգը միտն առաջին տստիճանն է դեպի կոմունիստական հասարակությունն անցնելու, յերբ մարդկանց մեջ կսահմանվի լիակատար հավասարություն, յերբ կվերացվեն խորը տրմատներ զցած բուրժուական նախապաշտումները և յերբ գլխավոր կանոն կլինի—բամեն վոք իր ընդունակությունների համեմատ, ամեն մեկին իր պահանջների համեմատ։ Սա նշանակում ե, վոր այն ժամանակ վերացած կլինի տարբերությունը Փիզիկական և յատապոր աշխատանքի միջև, վոր այս կամ այն աշխատանքով զբաղվելը կդառնա վոչ թե պարտականություն կամ արտօնություն, այլ հասարակական կարիք (պահանջ—պոտրեబոս्त)։ Ամեն մեկը կաշխատի, կզրազվի այն աշխատանքով, ինչ համապատասխանում ե նրա հակումներին և ընդունակություններին, ինչ կստանա՞այնքան, վորքան պահանջունի։ Ահա թե ինչ ե լինելու կոմունիստական հասարակակարգը։

Պրոլետարիատը մեր յերկրում, դաշնակցած ԽՈՐՉՈՎԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ—ԱՆՑՈՂԱԿԱՆ ԱՍՏԻճԱՆ ԵՎ ԴԵՐԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ, վում, տապալեց բուրժուազիալի իշխանությունը և հաստատեց իր դիկտատուրան, Խորհրդային կարգերը։ Կարմաջի արդյոք հաղթող պրոլետարիատը մի անգամ ից հաստատել սոցիալիստական կարգեր։ Կարելի՞ յե արդյոք հաղթական հեղափոխության հենց հետևյալ որը վոչնչացնել դասակարգերը, վերացնել պետական իշխանությունը։ Վոչ, անկարելի՞ յե, նախ և առաջ անհրաժեշտ ե վերջնականապես ճնշել բուրժուազիալին, հակառակ՝ դեպքում նա կարող ե նորից գլուխ բարձրացնել և վերադարձնել իր իշխանությունը։ Հեղափոխական պրոլետարիատը, հաղթելով և իր ձեռքն առնելով իշխանությունը, սկզբում դեռ պետք ե՝ վարի բացարձակ քաղաքացիական պատերազմ բուրժուազիալի դեմ, վորին վերջնականապես ճնշելու և սոցիալիստական շինարարության հնարավորությունն ապահովելու համար պրոլետարական պետությունը։

Մեր հեղափոխության՝ որինակի վրա մենք տեսնում ենք, վոր պրոլետարիատը հաղթանակեց վոչ մի անգամից ամբողջ աշխարհում, այլ միմիայն մի յերկրում, Ռուսաստանում։ Այդ պատճառով մենք պետք ե վոչ թե վոչնչացնենք, այլ ընդհակառակն ամեն կերպ ամրացնենք մեր պետական ապարատը, դատարանները, մեր բանակը, վորպեսզի մեզ չտապալեն կապիտալիստական

պետությունները։ Նշանակում ե պրոլետարիատը չի կարող մի անգամից, իր հաղթանակից անմիջապես հետո, վերացնել պետությունը։

Շահագործման վրա հիմնված կապիտալիստական անկազմակերպ տնտեսությունը նոր սոցիալիստական տնտեսության վերակառուցելու (վերածելու—պերստրօյկ) համար կապահանջվի ժամանակի Այդ տնտեսության ներկա դրությունն ու նրա աեխանիկայի մակերեսությը վոչ մի կապիտալիստական պետության մեջ լիովին բավարար չեն, վարպեսպի իշխանությունը վերցնելով մեկ անգամից կառուցել լիակատար կազմակերպված սոցիալիստական տնտեսություն, վորը բավարարեր հասարակության բոլոր պահանջներին։ Կապիտալիստական հասարակակարգի տնտեսության վերակառուցման համար գլխավոր արգելքը հանդիսանում ե գյուղացիական մանր սեփականատիրական տնտեսությունը։ Հարկավոր ե միջոնավոր մանր գյուղացիական տնտեսությունները միացնել, կազմակերպել կողեկտիվներ, հասցնել գյուղատնտեսության չափազանց հետամնաց տիենիկան իր անհրաժեշտ բարձրության, ջնջել բոլոր տարրերությունները քաղաքի և գյուղի միջն։ Այս ըոլորը հարկադիր միջոցներով կամ լոկ զեկրետներով անկարելի լի անել, Այստեղ պահանջվում ե շերկարտակ ու համառ աշխատանք՝ ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու, մանր գյուղացիական տնտեսությունները միացնելու, գյուղատնտեսության մեջ մեքենաներ և հողի մշակման կուլտուրական ձեռք մուծելու համար։

Պրակտարիատը հաղթանակելով, խլում ե բուրժուազիայից ֆարբիկանները, գործարանները, լերկաթուղիններն ու բանկերը։ Տնտեսության այս գլխավոր բարձունքներին տիրելով, պրոլետարիատը հնարավորություն ե ստանում հաջողությամբ առաջ տանելու դեպի սոցիալիզմն ամբողջ ժողովրդական տնտեսությունը, նույն թվում և նրա ամենալետամնաց ճյուղերը։ Ապագասակարգային հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ ե կուլտուրական բարձր մակարդակ, հարկավոր և վոչնչացնել բուրժուական կարգերից ժառանգություն մնացած բոլոր նախապատրումները, հարկավոր և նախապատրաստել դրա համար աշխատավորական նաև լետամնաց տարրերին։

Այս բոլորը ցուց են տալիս, վոր բուրժուազիաի իշխանության տապալման շրջանի և սոցիալիստական կարգերի իրականացման միջն ընկնում ե տնտեսական և կուլտուրական նա-

լասպատրաստական մի մեծ շրջան։ Պարզ է, վոր կապիտալիզմից դեպի սոցիալիզմն անցնելու այս անցողական շրջանում պետք է գորություն ունենան նաև առանձին անցողական կարգեր։

Լևինին իր «Գետություն և հեղափոխություն» գրքի մեջ բերում է կ. Մարքսի հետեւալ խոսքեղը. «Կապիտալիստական և կոմունիստական հասարակությունների միջն ընկնում և մի շըրջան, վորի ընթացքում առաջինը հեղափոխականորեն պետք և վերափոխվի յերկրորդին։ Այդ շրջանին համապատասխանում և նաև քաղաքական անցողական շրջանը, վորի ընթացքում յեղած պետությունը չի կարող լինել մի այլ բան, քան պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրան»։

Ընկ. Ստալինն ըստ Լևինի արսակ և վորոշում պրոլետարիատի դիկտատուրայի նշանակությունը.

1. «Պրոլետարիատի իշխանության ոգտագործումն՝ շահագործումը ճնշելու համար, յերկիրը պաշտպանելու համար, մլուս յերկրների պրոլետարների հետ կապը կանոնավորելու համար և բոլոր յերկրներում հեղափոխությունը զարգացնելու և նրա հաղթանակն ապահովելու համար։

2. Պրոլետարիատի իշխանության ոգտագործումն՝ աշխատավորներին և շահագործվող մասսաներին բուրժուազիալից վերջնականապես կտրելու համար, պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրապնդելու համար, այդ մասսաներին սոցիալիստական շինարարության գործին գրավելու համար և այդ մասսաներին պրոլետարիատի կողմից պետականորեն զեկավարելու համար։

3. Պրոլետարիատի իշխանության ոգտագործումն՝ սոցիալիզմի կառուցման համար, դասակարգերի վոչնչացման համար, դեպի ապագասակարգային և պետականազուրկ հասարակությունն անցնելու համար։

Սրանք են պրոլետարիատի դիկտատուրայի, հետեւապես և այդ դիկտատուրան իրականացնող Խորհրդային պետության հիմնական գծերը։

Հետեւապես, Խորհրդային իրավակարգը (վորի մասին մանրամասնորեն կխոսվի հետագալում) դեպի սոցիալիզմը տանող անցողակի իրավակարգ է, վորի ըրջանում նիմնադրվում յեկ ամրապնդվում են սացիալիզմի նիմերը։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳՈՒՄ

Ներածության մեջ մենք քննեցինք կապի-
ստաժին Գլուխ ԲՈ-
տարիստական հասարակարգի բնորոշիչ զծե-
ՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝
ըստ ընդհանուր առմամբ Այժմ մենք կքննենք
կապիտալիզմի անտեսական հիմքը, նրա ար-
տադրությունը, կծանոթանանք, թե ինչ գլխավոր հատկանիշներ
նա ունի, ինչպես և կառուցվում և վորտեղից և առաջանում կա-
պիտալիստական շահույթը։ Այս հարցերի քննությունը կպարզի,
թե ինչի վրա ին հիմնվում կապիտալիստական շահագործումը և
վորտեղ և թագնված նրա գլխավոր զապանակը։

§ 1. Կապիտալիստական արտադրության բնորոշիչ զծերը.

Ցեմե քննելու լինենք, թե ինչպես և կա-
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՊ-
ՐԱՆՔԱՑԻՆ
ԲՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱ-
ԿԱՆ կարգերում, ամենից առաջ մենք կտես-
նենք, վոր նա կատարվում և արտադրությունը
վաճառելու հաշվով (հույսով): Կոշկակար-արհեստավորը կոշէկ-
ներ և կարում վաճառելու համար, գործարանատերն արտադրութ-
յունը կամ մի այլ բան վոչ թե իր սեփական գործածության,
այլ վաճառելու համար։ Ամեն մի արտադրանք, վոր պատրաստվում
և վաճառելու համար, լինի կոշէկ, չիթ, գիրք կամ մի ուրիշ բան,
կոչվում և ապրանք։

Հապա ինչպես և ապրում կոշկակարը, յեթե նա միմիայն
կոշէկներ և արտադրում կամ գործարանատերը, յեթե նրա ձեռո-
նարկը միմիայն չիթ և պատրաստում։ Վարտեղից են նրանք
ստանում իրենց ապրուստի միջոցները, կենսամթերքներ, շոր և
այլն։

Նրանք ալդ մթերքներն ստանում են իրենց արտադրանքը
փոխանակելով իրենց համար անհրաժեշտ ապրանքների հետ։

Վերցնենք որինակ՝ կոշկակարին Յենթաղրենք նրա և նրա ընտանիքի ապրուստն արժե ամսական հարլուր ռուրիլի. 10 ռուրիլի բնակարանի վարձ, 60 ռուրիլի նրանց սնունդը և 30 ռուրիլի իել մնացած ծախսերը, նշանակում ե, կոշկակարը մեկ ամսում պետք ե պատրաստի այնքան զուգ կոշիկ, վորատակի հարլուր ռուրիլի, իեթե զիցուք մի զուգ կոշիկն արժե տասը ռուրիլի, ապա նա պետք ե պատրաստի տասը զուգ, Կոշկակարը վաճառելով իր պատրաստած կոշիկները, ստացած փողով գնում ե իր և իր ընտանիքի համար անհրաժեշտ մթերքները: Իսկ գործարանատերը վաճառում է չիթը և դրանից ստացած փողով գնում ե այն, ինչ անհրաժեշտ ե իր հետագա արտադրության համար, վճարում ե բանվորներին աշխատավարձ և ինքն ել ապրում ե:

Կապիտալիստական հասարկուրյան մեջ արտադրության արդյունենական վիճակի մեջ նշանակած են միմյանց ներ: Երանե նենց երամար ել արտադրության մեջ, վոր փոխանակվեն: Սակայն ինչպես ե պատահում, վոր կոշկակարը հավատացած ե, թե կոշիկի փոխարեն նա կարող է ստանալ հաց, շաքար, հագուստ և այլն իրեն անհրաժեշտ քանակությամբ:

Դա հնարավոր ե շնորհիվ աշխատանքի բաժանման՝ հասարակության մեջ: Մի արհեստավոր կամ գործարանատեր արտադրում է կոշիկներ, մյուսները — չիթ, իրկրորդը — ասենք ամանեղեն, գյուղացիները — ուտեստի մթերքներ և այլն և այլն: Իսկ աշխատանքի գլխավոր բաժանումը — դա քաղաքի և գյուղի, աշխինքն արդյունաբերության և գյուղատնտեսական արտադրության միջև ե: Գյուղատնտեսությունն իր մթերքները փոխանակության միջոցով մատակարարում ե քաղաքի ազգարնակությանը, իսկ հույն նյութը — արդյունաբերությանը: Դրանց փոխարեն գյուղատնտեսությունն ստանում է քաղաքից գյուղական տնտեսության համար պահանջվող արդյունաբերական արտադրանքներ:

Այսպիսով կապիտալիստական կարգերի առաջին համեմիօք — դա ապրանքային տնտեսությունն ե, այսինքն այնպիսի տնտեսությունն, վորը կառուցված և աշխատանքի հասարակական բաժանման, փոխանակության համար արդյունաբերությունը: Դրանց փոխարեն նրանց փոխանակելու վրա:

Սովորաբար ասում են, վոր ապրանքալին հնջողութ և ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ՄԻ ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԿԱՆ ԱՌԱՋԻ ՍՊՈՒՏՈՒՄ ՄԵՋԻ ՍՊՈՒՏՈՒՄ ՄԵՋԻ ՍՊՈՒՏՈՒՄ ՀԵՏ: տնտեսության ժամանակ ամեն ինչ արտադրը վում և շուկաի համար: Տվյալ դեպքում շուկան այն սովորական վաճառանոցը (բազար) չե, ուր գյուղացին տանում է իր հացը և վորեալից նա գնում է իրեն հարկավոր իրերը: Շուկան ավելի լայն հասկացողություն եւ Ապրանքալին տնտե-

սության միջոցին ամեն ինչ վաճառում և ամեն ինչ գնում են։ Այդ բոլոր վաճառումներն և գնումները, բոլոր վաճառելու համար հանվող ապրանքները միասին—դա կլինի շուկա։ Շուկան, ուրիմ, ապրանքային տնտեսության բոլոր փոխանակական զործառնություններն են միասին վեցրած։ Այդ պատճառով, ինքը ասում են արտադրվում և շուկայի համար, դա չէ նշանակում, թե մոտակա վաճառանոցի համար ե, այլ արտադրվում և առնասարակ վաճառքի, փոխանակության համար։

Տեսնենք այժմ, թե ինչպես են փոխանակության մեջ ապրանքները շուկայում։

Ասենք, թե կոչկակարը մեկ գույգ կոշիկ և զուրս բերել վաճառելու և ցանկանում և փոխանակել շապկի հետ։ Ամեն մի ապրանք արտադրող ցանկանում է ինարկել իր ապրանքը փոխանակել նրան հավասար գին ունեցող ապրանքի հետ։ Բայց ինչպիս, որինակ, շապիկը հավասարեցնել կոշիկին։ Նրանց պատրաստելու համար տարրեր նյութեղեն և հարկավոր և տարրեր գործիքներ են գործածվում։ Ի՞նչ ընդհանուր բան կա շապկի և կոշիկների միջև։ Ընդհանուրը նրանց մեջ այն ե, զոր արտադրվում են մարդկային աշխատանքով, վոր նրանց մեջ ներդրված ե վորոշ քանակությամբ աշխատանք։ Յենթադրենք, թե շապիկ պատրաստելու համար, բացի պատրաստի նյութեղենից և գործիքներից, գործադրվել ե 5 ժամ աշխատանք։ Այն նյութեղենը, վորից պատրաստվում և շապիկը, նույնպես աշխատանքի արդյունք ե։ Ասենք, թե մեկ շապիկ պատրաստելու համար անհրաժեշտ նյութեղենի վրա ծախսվել ե 5 ժամ աշխատանք (հաշվելով վուշի աճեցումը, մշակումը, մանելը և մանվածքի գործելը)։ Շապիկ պատրաստելու համար գործածվում են գործիքներ, վորոնք նույնպես աշխատանքի արդյունք են։ Յենթադրենք, թե մեկ շապկի համար ծախսվում են (մաշվում են) մեկ ժամվա աշխատանքի հավասար քանակով գործիքներ։ Այդ մեկ ժամվան մեջ մենք հաշվում ենք նաև շենքի և շապիկ պատրաստելու համար անհրաժեշտ մասցած միջոցների մաշումը։ Այժմ հաշվենք. նյութեղեն—5 ժամ աշխատանք, արտադրության մլուս միջոցները—1 ժամ, նոր աշխատանք և գործադրված կարելու վրա—4 ժամ։ Ընդամենը շապկի վրա գործադրվել ե 10 ժամ աշխատանք։ Իսկ կոշիկների վրա յենթադրենք գործադրվել ե՝ նյութեղեն— $10 \frac{1}{2}$ ժամի աշխատանք, արտադրության մլուս միջոցներն ու գործիքները—1 $\frac{1}{2}$ ժամի աշխատանք, նոր աշխատանք և գործադրված

(կոշկակարի աշխատանքը) 8 ժամ: Ընդամենը 20 ժամ: Ահա այսպես հաշվելով, կարելի՞ է արդյոք համեմատել ու վորոշել շապէի և կոշիկների համեմատական արժեքը: Այս, կարելի՞ է: Դուքս և գալիս, վոր կոշիկների արժեքը լերկու անգամ թանգ և շապէի արժեքից, հետևապես, մեկ զույգ կոշիկը փոխանակվում է լերկու հատ շապէի հետ: Այսպիսով՝ ապրանքների արժեքը վսրություն և նրանց պատրաստելու համար զործադրված աշխատանքի հանակով:

Վերցնենք մի ալսպիսի որինակ: Մեկ մարդ, ասենք թե, 10 ժամ շարունակ տաշել ե գերանի մի կտոր: Այս ել 10 ժամվա աշխատանք եւ, Սակայն լեթե նա փորձի գերանի ալդ կոռուը, վորի վրա նա գործադրել ե 10 ժամ աշխատանք, փոխանակել շապէի հետ (նույնպես 10 ժամ աշխատանք), ալդ նրան չի հաջողվի, նա չի շինել ոգտակար իր, նրա աշխատանքն ոգտավետ չի հասարակության համար, նրա ալդ տաշած գերանը վոչ վոքի հարկավոր չի: Ալդ պատճառով ել, լերը ասում են, թե աշխատանքը ստեղծում է արժեք, վորի մեծությունը հաշվում են աշխատանքի քանակով, ինկատի ունեն հասարակական-անհրաժեշտ աշխատանքը: Այս ելքացատրենք: Յենթազրենք պատրաստվում են ողի և բրլիանաները, Ազտակմրդ բաներ են արդյոք սրանք: Հստ լերևութիւն վոչ, կարծեք թե ողիի կամ բրլիանաների մեջ մի առանձին ոգտակարություն չկա: Սակայն նրանց գնում են, նրանք իրենց արժեքի համեմատ փոխանակվում են: Ինչժամ ե, ուրեմն, բանը, Բանը նրանումն ե, վոր ողին թեն՝ ասենք, վասակար բան և (ոգտակար չե), բայց նրան գնում են, նրա պահանջը կա: Նույնը և բրլիանաները, վորոնց համար հարուստները խոշոր գումարներ են վճարում: Յեթե տվյալ հասարակությունը գործ և ածում ողի կամ բրլիանաներ, ապա նրա համար անհրաժեշտ ալդ արտադրանքները «հասարակականորեն-ոգտակար» են և նրանց պատրաստելու համար գործադրած աշխատանքն անհրաժեշտ և տվյալ հասարակության համար, հետևապես ալդ աշխատանքը «հասարակականորեն-անհրաժեշտ ե», վորն ալդ հասարակության մեջ ստեղծում է արժեքներ:

Իսկ թնջպես վարվել այն դեպքում, լերը մեկ կոշկակար միևնույն տեսակի կոշիկները կարում ե 15 ժամում, իսկ մյուսը՝ 30 ժամում: Առաջինը ճարպիկ ե, լերկորդը՝ նրանից ավելի անշնորք: Յերկրորդ կոշկակարի կարած կոշիկները կարժենան

նույնքան, վորքան առաջինի կարածները, չնայելով նրանց գործադրած ժամերի տարբերությանը՝ նրանց արժեքը վորոշվում է տվյալ պայմաններում աշխատանքի միջին հանակորյամբ։ Յենթադրենք, թե բոլոր կոշկակարները մեկ զույգ կոշկեկ կարելու համար միջին հաշվով գործադրում են 20 ժամ—սա չել կլինի կոշիկների արժեքը։ Եթե անշնորք կոշկակարը գործադրի 30 ժամ, միենալուն ե, այդ 30 ժամում նա արտադրում է մի արժեքը վոր հավասար ե 20 ժամ միջին աշխատանքի։ Նշանակում ե, միենալուն ժամանակի ընթացքում վորտեղալ բանվորն արտադրում է ավելի մեծ արժեք, քան միջակ բանվորը, իսկ անփորձ բանվորն արտադրում է ավելի փոքր արժեք։

Սովորաբար կոշիկն ուղղակի չեն փոխառ սորութիւնը գիւղ։ նակում շապկի հետ, այլ սկզբում կոշիկների փոխարեն վերցնում են փող (վսոկի, կամ նրան փոխարինող թղթադրամ) և այդ փողով արդեն գնում են շապիկ։ Սակայն դրանով վոչինչ չի փոխվում։ Վոսկին նույնպես յուրահետակ ապրանք ե. նա նույնպես ձեռք ե բերվում մարդկալիին աշխատանքով, ձուլվում ե, փող և կտրվում և ալլու։ Յենթադրենք վուկի հինգ ուուրիանոց պատրաստելու համար հարկավոր ե 10 ժամ աշխատանք (հաշված նաև նյութեղենն ու արտադրության միշտցները). Դա չել կլինի այդ փողի արժեքը։

Մեր կոշկակարն իր մեկ զույգ կոշիկը նախ վաճառում է յերկու հինգ ուուրիանոցով, ապա նրանցով գնում ե յերկու շապիկ։ Վերածելով փողի, կոշիկների արժեքը հավասար կլինի 10 ուուրլու, իսկ մեկ շապկի արժեքը՝ 5 ուուրլու։

Ուրեմն ապրանքի արժեքն՝ արտահայտված փողով, կոչվում ե ապրանքի գին։ 5 ուուրլին շապկի գինն ե։ Այդ չի նշանակում, թե շապիկը մշտապես վաճառվում ե 5 ուուրլով, պատահում ե, վոր յերեմն ավելի կամ պակաս են վերցնում։ Ինչու չե ալրաբես Այս գեղքում նշանակություն ունի ապրանքի պահանջն ու առաջարկի։ Ասենք՝ շուկայում կարող ենք գնել ալրաբան շապիկ—սա այդ ապրանքի համար յեղած պահանջն ե։ Սակայն արտադրված և շուկայի դուրս բերված պահանջվածից ավելի քիչ քանակությամբ շապիկ։ Սա տվյալ ապրանքի առաջարկն ե։ Տվյալ դեպքում առաջարկն ավելի քիչ ե, քան պահանջը, նաև լիովին չի բավարարում պահանջին։ Այսպիսի դեպքերում գները բարձրանում են (արժեքը մնում և նույնը), վորովհետև շապկի կարիք ունեցող գնորդը համտածայն ե նույնիսկ ավելի վճարելու, միայն թե ձեռք

քերի: Պատահում և հակառակը, լերը առաջարկը գերազանցում ե պահանջին: Այս գեպքում շապիկ արտադրողը համաձայն ե ավելի եժան վաճառելու, միայն թե կարողանա վաճառել: Այսպիսի տատանումներ միշտ տեղի յեն ունենում, բայց նրանք տեղի յեն ունենում արժեքին համապատասխանող գների շուրջը: այդ բոլոր տարրերումները յեթե ի մի գումարելու լինենք, ապա միջին գինը կհավասարվի, կհամապատասխանի ապրանքի իսկական արժեքին:

Կապիտալիստական տնեսության առաջին հասում են ՊԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐԴԱ-
ԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԵ-
ՐՈՒՄ: Կապիտալիստական տնեսություն մեջ նույնպես արտադրվում են ապրանքներ, գորություն ունի շուկա և փոխանակություն, կարելի յե պատկերացնել նաև այնպիսի տնտեսություն, վորտեղ բոլոր ապրանքներն արտադրվում են արհեստավորների կողմից և փոխանակվում են նրանց միջև—սա կապիտալիստական տնեսություն չի լինի:

Ուրեմն վորոնենք այնպիսի հատկանիշներ, վորոնք բնորոշ են հատկապես կապիտալիստական արդյունաբերության համար:

Արտադրությունն առաջ տանելու համար անհրաժեշտ են գործիքներ, մեքենաներ, հում նյութ և այլն: Մրանք բոլորը կոչվում են արտադրության միջոցներ: Ում ձեռքումն են գտնվում այս բոլորը կապիտալիստական կարգերում, Կապիտալիստական կարգերում արտադրության միջոցները կենցրուացած են մի փոքր խորհրդ կապիտալիստների ձեռքում:

Ի՞նչպես ե այս պատահել:

Ապրանքալին տնտեսության մեջ գնորդ գտնելու համար անընդհատ պայքար և մղվում—մցում և կատարվում: Ով ավելի լավ ու եժան ապրանք պատրաստի, նա ավելի արագ և հաջողությամբ կվաճառի, կամ կիսարի գնորդին և հեշտությամբ կընկճի իր մրցորդին: Այս ընկճած մրցորդը շատ անգամ ստիպված է լինում ձգել արտադրությունը, վաճառել իր արհեստանոցն ու գործիքներն իր լերջանիկ հակառակորդին և գնալ հենց նրա մոտ վարձով աշխատելու: Մեկ արհեստավոր դառնում ե մի շարք արհեստանոցների սեփականատեր, իսկ մյուս արհեստավորը դառնում ե վարձու բանվոր: Կարելի յե մտածել թե վարքան ջանաւեր լինի արհեստավորը, վորքան շատ աշխատի նա—այնքան

կհարստանա ու խոշոր սեփականատեր կղառնտ։ Դա, իհարկե, այդպիս չեւ իզուք չեւ ասված, թե շատ աշխատելուց պալատներ չեն ունենա։ Արհեստավորը կարող է խոշոր սեփականատեր դառնալ (ինչպես և գլուղացին կարող է կուլակ դառնալ) միմիայն ուրիշի աշխատանքից ողավելով, միմիայն ուրիշի աշխատանքը շահագործելով, Փոքրիկ սեփականատերը հետզհետեւ ամրանալավ, շահուկթներ և քամում ուրիշի աշխատանքից, գնալով հարստանում ե, իր ձեռքն և ժողովում առևտուրն ու արտադրությունը և այդպիսով հետզհետեւ դառնում է խոշոր կապիտալիստ։ Այս պրոցեսը անընդհատ կատարվում է. արտադրության միջոցները հետզհետեւ կենարոնանում են ավելի ու ավելի փոքր թվով հարստաների ձեռքում, իսկ ինքնուրոււն արտադրողների մեծագույն մասը դառնում է վարձու բանվոր։ Սակայն միմիայն այսպիսի խաղաղ ճանապարհով չեւ, վոր անել և կապիտալիզմը և կուտակել և ահազին հարստությունները միենույն ձեռքերում։ Կապիտալիզմի արշալուսին մանր արտադրողներին բացարձակ կողոպառում ելին։ Կալվածատերերն ուղղակի խլում ելին հողերը գյուղացիների ձեռքից, վաճառականները բացարձակապես կողոպառում ելին նոր գտնված յերկրների լետամնաց ժողովուրդներին։ Նույնն անում ելին և պետությունները։ Մի շարք յերկրներում զոյլություն ուներ պարտապիր աշխատանք գործարաններում։ Այս շրջանն այսպիս կոչված կապիտալի նախնական կուտակման շրջանն եր։ Մանր տնտեսությունների աստիճանաբար քայլարման հետագա պրոցեսն ավելի մեղմ միջոցներով եր շարունակում հարստությունների կենարոնացումը փոքրաթիվ մարդկանց ձեռքում։

Այսպիսով վերջիվերջո մեքենաները, արհեստանոցները, հանքերը, ֆաբրիկաները, յերկաթուղիները և այլն կենարոնացն կապիտալիստաների ձեռքում։

Արտադրույթան այսորինակ կենարոնացումը մի խումբ կապիտալիստների ձեռքում—ահա կապիտալիզմի յերկորդ նատկանիօր։

Այս բոլորի մեջ մեծ դեր է խաղացել մեքենաբեռնասեռնասկան Տեխնոլոգիան ապահով տեխնիկայի զարգացումը։ ՆԻԿԱՑԻ ՆԵԱՆԱԿՈՒ- Ի՞նչ գործ ունի ալստեղ մեքենան։
ԹՅՈՒՆԸ։

Վերցնենք, որինակ, կալսող մեքենան։ Վեց բանվորի ոգնությամբ նա կարող է կալսել այնքան ցորեն, վորքան կարող են ձեռքով կալսել նույն այդ վեց բանվորը 5 որում։ Մեքենան կրճատում է աշխատանքը, հետևաբար կալսիչ մեքե-

նա ձեռք բերող հարուստ գլուղացին առավելություն և ձեռք բերում չքավորի դիմաց— նրա հացի վրա ավելի քիչ աշխատանք և գործադրվում, նա կարող և իր հացն ավելի եժան վաճառությունը ջամանակում է, նա պետք և ստանա ավելի քիչ՝ քան առաջ արժեք նրա նույն քանակությամբ աշխատանքը, կսկսի ավելի աղքատ ապրել, նույնիսկ վերջնականապես քալքալի և ստիպված գնալ հարուստ գլուղացու մոտ վորպես բարրակ նրա կալսիչը պտտելու:

Որինակ վերցնենք արդյունաբերությունից: Մինչև մանածագործական մեքենալի գյուտը մանածագործությամբ զրադպում ելին բազմաթիվ տնախագործներ: Առաջին մանածագործական մեքենան փոխարինեց 12 բանվորի աշխատանք: Պարզ ե, վորակը մեքենան ձեռք բերող կապիտալիստը (տնախագործը ալդպիսի մեքենա չի կարող ձեռք բերել, նա թանգ արժեք) իր ապրանքը սկսում է արտադրել շատ ավելի եժան, վորովհետև մեքենան 12 անդամ կրծատել ե աշխատանքի քանակը: Կապիտալիստը միքանի ալդպիսի մեքենաներ գնելով, փոխարինում է դրանցով հարլուրավոր տնախագործների: Այս վերջիններն անխուսափելի կերպով քալքալի վորովհետև չեն կարողանում դիմանալ մրցմանը, վորովհետև մեքենան ավելի եժան ապրանք և արտադրում: Առաջին մեքենաների մուտքից հետո՝ մեքենալական տեխնիկան սկսեց արագ զարգանալ: Յուրաքանչյուր կապիտալիստ ձգտում է նոր, ավելի լավ մեքենաներ մացնել, վորակների իր վրա ապրանքն ավելի եժան նստի, վորովհետև միմիայն դրանով նա կարող է հաղթել իր մրցորդներին, այնպես, ինչպես իր ժամանակին նա հաղթել եր տնախագործներին: Փամանակակից կապիտալիստական արտադրությունը կառուցված և մեխենալական տեխնիկայի վրա:

Գործի մեջ նոր ու նոր և ավելի թանգարժեք մեքենաներ մտցնել կարող են միմիայն խոշոր կապիտալիստները: Միմիայն նրանք կարող են ոգտվել մարդկային աշխատանքը կրծատող մեքենալական տեխնիկայի առավելություններից: Իսկ բազմաթիվ մանը արտադրող արհեստավորներ և նույնիսկ մանը կապիտալիստներ քալքալի վորովհետև արտադրության միջոցներից: Նույն պրոցեսը կապիտալիզմի որոք կատարվում է նաև գլուղացիության մեջ: Խոշոր կալվածատերերը հնարավորություն ունենալով գլուղացիական արտադրության մեջ կատարելագործ-

ված մեքենաներ մուծելու, հաղթահարում են և աստիճանաբար քալքայում մանր գլուզացիական տնտեսությունները, Գյուղացիության մի մասը, ճիշտ նույնպես, ինչպես և քաղաքի մանր արտադրողները, զրկվում են արտադրության միջոցներից (հողից, աշխատող անսպուններից, գործիքներից): Այսահեղ նույնպես արտադրության միջոցները, ճիշտ և դանդաղ կերպով, բայց անշեղորեն կենարոնանում են խոշոր հողատեր-կարվածատեր կուլյակների ձեռքում, իրենց ձեռքում կենցրոնացնել արտադրույթն հիմնական զիսավոր միջոցները կապիտալիստները կարողացան զրկապուապիս մեթենայական տեխնիկայի օնորիվ:

Այսպիսով կապիտալիստական հասարակության մեջ արտադրության միջոցներն ավելի բարձրությամբ ու ավելի լին կենարոնանում մի փոքր խումբ սորության մեջ է:

Հարուստների ձեռքում: Ի՞նչ և անում բազմաթիվ այն մարդկանց խումբը, վորոնք զրկվում են արտադրության միջոցներից, թնչպես և այդ մասսան իր գոյությունը պահպանում: Նրանց միայն մի բան և մնում—կամ գնալ բատրակ մտնել կարվածատիրոջ մոտ, կամ վարձիկ կապիտալիստին՝ ֆարբիկայում աշխատելու: Թե մեկ և թե մյուս դեպքում նրանք պրոլետարանում են, դառնում են վարձու բանվորներ: Վարձու աժխատանքը—կապիտալիստական կարգերի յերրորդ հասկանին ե:

Առ յերեսույթ վարձու բանվորն ազատ ե: Նա ինքն իրեն չի վաճառում կապիտալիստին, այլ միայն վաճառում և նրան իր բանվորական ուժը: Կապիտալիզմի ժամանակ բանվորական ուժը դառնում է ապրանք, բանվորը վաճառում և իր այդ ապրանքը ճիշտ նույնպես, ինչպես շուկայում վաճառվում են և այլ ապրանքներ: Առաջ այդ բանվորն ուներ արտադրության միջոցներ (արհեստավոր եր), նա վաճառում եր իր աշխատանքի արդյունքը վորպես ապրանք: Այժմ արտադրության միջոցներ նա չունի, ինքնուրուցն կերպով ապրանք արտադրել նաև չի կարող, բայց նրա մոտ մնացի և իր բանվորական ուժը, վորը և վաճառում ե կապիտալիստին: Դործի ամբողջ ելությունը կայանում և նրանում, վոր բանվորի մոտ մնացի և միակ ապրանքը—նրա բանվորական ուժը: Ցեթե նա չվաճառի այդ ապրանքը—նա չի կարող ապրել, քաղցից կմեռնի: Անա, թե ինչու կապիտալիզմի ժամանակ բանվորը հարկադրված է վաճառելու իր բանվորական ուժը, սիպված և աշխատելու կապիտալիստի համար, կապիտալիզմի ժամանակ սովորական ապրանքների—հացի, չթի, կո-

շիկների և ալլն—շուկալի հետ զուգընթաց առաջ ե գալիս նաև աշխատանքի օտիկա, վորտեղ պըրոլեստարները վաճառում են իրենց բանվորական ուժը: Այդ շուկան լերեր չի կլանում ամբողջ բանվորական ուժը: Այս պատճառով ել միշտ կան գործազուրկներ, վորոնք կազմում են աշխատանքի պահեստի բանակը, Գործազըրկությունը կապիտալիզմի անխուսափելի ուղեկիցն ե:

1926 թվին գործազուրկների թիվը հասնում եր՝

Անդիայում	1.750	հազար	մարդ
Գերմանիայում	1.745	»	»
Լիեսաստանում	280	»	»
Ավստրիայում	150	»	»

Այսպիսով՝ կապիտալիստական կարգերի ամենազլիսավոր հատկանիշները հետևյալներն են:

1. Ապրանքային տնտեսություն:
2. Արտադրության միջոցների կենտրոնացումը կապիտալիստների դասակարգերի ձեռքում:
3. Վարձու բանվորական աշխատանք, բանվորական ուժի ապրանք դառնալը:

§ 2. Վորտեղից ե կապիտալիստական նասարակության մեջ սացվում շահույթը

ՎԱԶՔԸ ՇԱՀՈՒՅԹԻ
ՅԵՏԵՎԿԻՑ—ԿԱՊԻՏԱ-
ԼԻՍԱԿԱՆ ԱՐՏԱ-
ԴՐՈՒՅԹԱՆ ԳԼԽԱ-
ՎՈՐ ՇԱՐԺԻՉՆ Ե՝

Դուք տեսաք, վոր կապիտալիստները տիրում են բոլոր Փարբիկաներին ու գործարաններին, իսկ այստեղ աշխատելու համար վարձում են բանվորներ, ինչի՞ համար են նրանք այդ անում: Վոչ նրա համար, իհարկե, վոր նրանց շատ դուք են գալիս Փարբիկաների անիմների ձայները կամ գործարանների ծխնելույզների ծուխը: Բանվորներին ել նրանք վարձում են վոչ նրա համար, վոր շատ բարի սիրտ ունեն և ցանկանում են մարդոց հնարավորություն տալ աշխատելու և ապրելու: Վոչ, կապիտալիստն իր արտադրությունը վարում ե և բանվորներ ե վարձում միմիայն շահույթ ստանալու նպատակավ: Շահույթի յետվից ընկնելը—անդադար վագեր շահույթի յետվից—ահա կապիտալիստական արտադրության շարժը:

Վորքան կարելի յե շատ շահույթ ստանալ, վորքան կարելի յե շատ քամել բանվորների աշխատանքից—ահա կապիտալիստի

նպատակը. Յեթև հանկարծ մի վորեւ անժիտ կապիտալիստի խելքին փշեր հրաժարվել շահույթից, նա շուտով կքալքալվեր, կը կնազեր իր մրցորդների կողմից, վորովհետեւ նա անկարող կլիներ նոր մեքենաներ մտցնել գործի մեջ, լայնացնել իր արտադրությունը և ինքն ել հարուստ ապրել Կապիտալիստն, իհարկե, յիրբեք չի հրաժարվի շահույթից, ընդհակառակը, նրա բոլոր հաշիվներն այնպես են կազմված, վորպեսզի վորքան կարելի լեցատ շատ շահույթ ստանա:

Ալ, որինակ, հայտնի Պուտիլովյան գործարանը (Լենինգրադում) անցյալ ժամանակներում արտադրում եր զանազան մեքենաներ: Հետազարում գործարանի տերերը վորոշեցին, վոր ավելի ձեռնտու իւ թնդանոթների և այլ ռազմական զենքերի արտադրությունը: Պուտիլովյան գործարանը զարձավ Ռուսաստանի զլիավոր ռազմական գործարանը: Միմիայն Խորհրդացին իշխանության որով նորից փոխվեց նրա արտադրությունը. ալժմ այնտեղ պատրաստում են գլխավորտապես տրակտորներ:

Բայց ինչպես և ստացվում շահույթը, վո՞րտեղից և ստանում կապիտալիստն ալդ շահույթը:

Մենք տեսանք, վոր կապիտալիստական կարգերում բանվորական ուժը զանում և ապրանք, Կապիտալիստը զնում և բանվորական ուժը և գործադրում և նրան իր ֆաբրիկակում: Դրա փոխարեն կապիտալիստը տալիս և բանվորին աշխատավարձ, այսինքն վճարում և բանվորական ուժի արժեքը:

Մենք տեսանք, վոր ապրանքարին տնտեսության մեջ փոխանակվում են միահավասար արժեքները, հետեւարար իր բանվորական ուժի փոխարեն բանվորը ստանում և համապատասխան արժեք աշխատավարձի ձևով: Կարծես թե կապիտալիստը դրանից վոչինչ չի շահում:

Տեսնենք թե ալդպես և արդյոք:

Բանվորական ուժ ասելով մենք հասկանում ենք կենդանի անձի փիզիկական, հոգեկան և մտավոր ունակությունները միասին վերցրած. դա բանվորի ուժն ու շնորհն եւ: Աշխատելու համար անհրաժեշտ եւ, վոր բանվորն ինքը սնվի, իր արհեստը սովորի, իր ընտանիքին կերակրի՝ հներին փոխարինող նոր աշխատողներ պատրաստելու համար: Մենք տեսանք, վոր կապիտալիզմի ժամանակ բանվորը վաճառում եւ իր բանվորական ուժը: Ալդ ապրանքի—բանվորական ուժի—արժեքը կազմվում ե

Նրան նախապատրաստելու վրա կատարած ծախսերից և նրան աշխատունակ դրության մեջ պահելու ծախսերից, Յենթաղբենքը բանվորին իր ընտանիքի հետ միասին ապրելու, նրա միմիայն ամենաանհրաժեշտ կենսական պահանջները հոգալու համար պահանջվում ե ամսական 36 ռուբլի: Այդ ել կլինի նրա բանվորական ուժի արժեքը: Յենթաղբենք նույնպես, թե բանվորի ամեն մեկ ժամ աշխատանքն ստեղծում ե 25 կոպեկի արժեք: Վերքան ժամանակ պետք ե աշխատի բանվորը, վորպեսզի հանի 36 ռուբլու աժեք և դրանով ծածկի իր բանվորական ուժի արժեքը: Պարզ է՝ 144 ժամ (36 ռուբլին կանի 3600 կոպեկ, վորը բաժանած 25-ի վրա, կստանանք 144): Ալսքանը մեկ ամսում: Իսկ յեթե հաշվելու լինենք մեկ որվանը, հաշվելով մեկ ամսվա մեջ 24 բանվորական որ, այն ժամանակ 36 ռուբլու փոխարեն մենք կստանանք $1\frac{1}{2}$, ռուբլի, ($36 : 24 = 1\frac{1}{2}$), վորը կծածկվի բանվորի ամենորդա 6 ժամաւ աշխատանքով:

Կապիտալիստը բանվորին դնում ե, ասենք թե, դանակների արտադրության վրա և հարկադրում ե նրան աշխատելու վոչ թե 6, այլ 12 ժամ: 12 ժամյա բանվորական որվա ընթացքում բանվորն ստեղծում ե վոչ թե $1\frac{1}{2}$, այլ 3 ռուբլու արժեքը ($15 \times 12 = 300$ կոպեկ կամ 3 ռուբլի): Իսկ կապիտալիստը վճարում ե բանվորին միմիայն այնքան, վորքանով գնել ե նրա բանվորական ուժը, ալսինքն $1\frac{1}{2}$ ռուբլի իբրև աշխատավարձու և արգախով նրա աշխատանքից մաքուր վաստակ և ստանում $1\frac{1}{2}$ ռուբլի:

Կապիտալիստական արտադրության մեջ Ի՞նչ ե ՀԱՎԵԼՑԱԼ այս անվճար աշխատանքով ստեղծվող արժեքը: Քը կոչվում ե հավելյալ արժեք:

Հավելյալ արժեք ստանալու ամբողջ գաղտնիքը կայանում ե նրանում, վոր կապիտալիստը լերկարացնում ե բանվորական որն այն ժամանակամիջոցից ավելի, վորքան հարկավոր ե բանվորին՝ նրա բանվորական ուժը պահպանելու վրա ծախսվող արժեքը փոխհատուցելու համար: Մեր բերած որինակում բանվորը պետք ե որական աշխատի 6 ժամ, վորպեսզի փոխհատուցի իրեն հարկավոր ամենորյա մթերքների արժեքը: Այդ 6 ժամը նրա անհրաժեշտ բանվորական ժամանակամիջոցն ե—անհրաժեշտ աժխատանքը: Յեթե նրա աշխատանքը 6 ժամից պակաս տեսի, այն ժամանակ բանվորը չի կարող ստեղծել իր կանքի համար անհրաժեշտ ամբողջ արժեքը: Իսկ յեթե 6 ժամից պակելի յե տե-

վում, այն ժամանակ նա արտադրում և ավելի և ալդ ավելցու-
կը գնում և կապիտալիստի ոգախն Բանվորի անհրաժեշտ աշ-
խատանքից գուրս կատարված աշխատանքը կոչվում և հավելվալ
աշխատանք: Իսկ ալդ հավելվալ աշխատանքով ստեղծված արժե-
քը կոչվում և հավելյալ արժեք և նա գնում և կապիտալիստի
դրամանք:

Ուրեմն բանը նրանումն ե, վոր բանվորն իր բանվորական
որվա ընթացքում կարող և ստեղծել ավելի արժեք, քան իր բան-
վորական ուժի արժեքն եւ իսկ ալդ ավելի արժեքը հենց հավել-
յալ արժեքն եւ:

Ավելի պարզելու համար, նորից դառնանք մեր որինակին:
Թող կապիտալիստը վարձի վոչ թե մեկ, այլ 80 բանվոր, ամեն
մեկին որական $1\frac{1}{2}$ ոռուրով և 12 ժամ աշխատելու պայմանով:

Յենթագրենք, թե ալդ բոլոր բանվորները միասին մեկ
որում կարտագրեն 360 դատ դանակ: Ի՞նչն և մանելու նրանց
արժեքի մեջ:

Նրանց վրա գործադրված նյութեղենի արժեքը, ինչ-
պես և գործիքների և արտադրության մլուս միջոցների արժեքի
մի մասը, այն մասը, վորը մեկ որվա ընթացքում կմաշվի ու
կծախսվի. յենթագրենք, թե ալդ բոլորը միասին կազմում են 50
կոպեկ ամեն մի դանակի վրա. իսկ բոլոր դանակներինը միա-
սին կլինի 180 ոռուրի:

Յերկրորդ՝ այն արժեքը, վորը կդրվի դանակների մեջ 30
բանվորի 12 ժամյա աշխատանքով: Թանի վոր ըստ մեր պարա-
նի ամեն մի բանվոր մեկ ժամում ստեղծում և 25 կոպեկի ար-
ժեք, ապա 30 բանվորը 12 ժամում դանակների մեջ կդնեն 90
ոռուրու արժեք ($25 \times 12 \times 30 = 9000$ կոպեկ կամ 90 ոռուրի): Ըն-
դամենը 360 դանակի արժեքը, վոր ստանում և կապիտալիստը
բանվորների աշխատանքով, հավասար կլինի 270 ոռուրու: Վա-
ճառելով ալդ արժեքով, կապիտալիստը ալդ 270 ոռուրուց կծած-
կի՝ ա) նյութեղեննի և գործիքների ծախքը — 180 ոռուրի (և ը) բան-
վորների աշխատավարձը, ըստ պայմանի լուրաքանչյուրին $1\frac{1}{2}$
ոռուրի որական, 30 բանվորին 45 ոռուրի, իսկ բոլորը միասին
225 ոռուրի: Այսպիսով կապիտալիստի ոգտին զուտ շահուցիթ կմնա
45 ոռուրի ($270 - 225 = 45$): Ի՞նչից ստացվեց այս շահուցիթը:
Նրանից, վոր բանվորները 12 ժամում նոր արժեք ստեղծեցին
90 ոռուրու, իսկ աշխատավարձ ստացան միմիալն 45 ոռուրի
Նրանք իրենց աշխատավարձը կարող ելին հանել 6 ժամիա ան-

հրաժեռ բանվորական ժամանակում (25 կոպ. $\times 6 \times 30 = 4500$ կոպեկ կամ 45 ռուբլի), բայց նրանք կատարելով նորից 6 ժամ հավելյալ աշխատանք, կապիտալիստին տվեցին 45 ռուբլի հավելյան արժեք։ Ահա, թե ինչպես են ստանում կապիտալիստները շահութ իրենց ֆաբրիկաներում և գործարաններում։

Այսպիսով կապիտալիստական արտադրության մեջ բանվորն իր աշխատանքով վոչ միայն տուիւը։ թիւան մեջ բանվորն իր աշխատանքով վոչ միայն

վարձատրում ե ինքն իրան, այսինքն փոխհատուցում ե այն միջոցները, վորոնք անհրաժեշտ են նրան իր գորությունը պահպանելու համար, այլ ստեղծում ե նաև հավելյալ արժեք։ Այս հավելյալ արժեքը յուրացնում ե կապիտալիստների դասակարգը։ Հետեւապես կապիտալիստական կարգերում բանվորների աշխատանքի մի մասը խլում են կապիտալիստները։ Այս վերջինները հավելյալ արժեքով ապրում են և լայնացնում են իրենց արտադրությունը, վորպեսզի հնարավորություն ունենանավելի մեծ չափով հավելյալ արժեք ստանալու։ Հենց դա լել կապիտալիստական օանագործություն ե։

«Հազարավոր առվակներով հոսում ե հավելյալ արժեքը՝ դեպի տիրողների գրպանները։ մի մասը գնում ե իրեն՝ կապիտալիստին—դա շահութն ե, մի մասը գնում ե կալվածտերնողատիրոջը (ռենտա), մի մասը հարկերի ձեռվ գնում ե կապիտալիստական պետությանը, մի մասն առևտրականներին և այլն։ և այլն։ Այդ հավելյալ արժեքի հաշվին են ապրում այն բոլոր ձրիակերները, վորոնց ստեղծում ե կապիտալիստական հասարակակարգը («Կոմունիզմի ալյուբենը»)։ Նշանակում ե հավելյալ արժեքը յուրացվում ե կապիտալիստների ամբողջ դասակարգի կողմից, իսկ այն կապիտալիստը, վորի արտադրության մեջ ստեղծվում ե նա անմիջապես, ստանում ե միմիայն նրա մի մասը, վորն արդեն լիովին նրան և պատկանում։ Այդ մասը կոչվում է շահութ։ Ահա, թե ինչումն ե տարբերությունը հավելյալ արժեքի և շահութի միջև։

Բայց ի՞նչն ե տալիս կապիտալիստներին հավելյալ արժեքը յուրացնելու հնարավորությունը, ի՞նչն ե հարկադրում բանվորներին աշխատելու կապիտալիստների ոգտին։ Կապիտալիստների ձեռքությունների արտադրության բոլոր միջոցները և բանվորը հարկադրված ե ֆաբրիկայում աշխատելու վոչ թե 6 ժամ, այլ 12 ժամ, վորովհետև ուրիշ լելք չունի։ Ոգտվելով այս դրությունից, կապիտալիստների դասակարգը շահագործում ե բանվորներին,

քամում ե նրանցից այնքան հավելյալ արժեք, վորքան հնարավոր ե, թողնելով բանվորներին այնքան, վորքան անհրաժեշտ ե, վորպեսզի նրանք քաղցից չմեռնեն, իրենք կապիտալիստներն առանց աշխատելու ապրում են շքեղության մեջ։ Բանվորների աշխատանքով ստեղծված հավելյալ արժեքի նշանավոր մասը կապիտալիստաները գործադրում են իրենց ձեռնարկները լայնացնելու վրա կամ կառուցում են նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, մտցնում են նոր մեքենաներ և այլն, Բոլոր գոյություն ունեցող Ֆարիկաները, լերկարուղիները, տները, կապիտալիստական հասարակուրյան ամբողջ նարսուրյունը—բոլորն ստեղծվել ե բանվորների ածխատանիշ։ այդ բոլորն ածխատավորների մեջ բանակի հավելյալ ածխատանիշն ե, վոր բարացել, բնդունել և առարկաների կերպարան։ Այդ բոլոր հարստությունները գտնվում են մի խումբ հարուստների ձեռքում, իսկ այդ հարստություններն ստեղծողներին բաժին ե ընկած ծանր աշխատանք և աղքատություն։

Յեզրակացություններ անենք։

1) Կապիտալիստական արտադրության մեջ արտադրության բոլոր միջոցները կենտրոնացած են կապիտալիստաների գասակարգի ձեռքում։

2) Բանվոր գասակարգը զուրկ լինելով արտադրության բոլոր միջոցներից, հարկադրված և վաճառելու իր բանվորական ուժը։

3) Կապիտալիստական արտադրության գլխավոր շարժիչ ուժը՝ վազքն և շահութիւնելիք։

4) Շահութը կապիտալիստական արտադրության մեջ ստեղծվում և բանվորների հավելյալ աշխատանքով։

5) Կապիտալիստական հասարակակարգում կապիտալիստները շահագործում են բանվորներին, լուրացնում են նրանց աշխատանքով ստեղծված հավելյալ արժեքը։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ և ապրանքալին տնաեսությունը. վորժնք են նրա գլխավոր հատկանիշները։

2. Ի՞նչով ե կանոնավորվում փոխանակությունը ապրանքալին տնաեսության մեջ։

3. Ինչպես են կենտրոնացել կապիտալիստների ձեռքում արտադրության միջոցները:

4. Ի՞նչ և բերում մեքենալոկան տեխնիկայի զարգացումը մանր տնտեսությանը:

5. Ինչու յե բանվորական ուժն ապրանք դառնում կապիտալիստական կարգերում:

6. Ինչի՞ համար և կապիտալիստը վարում արտադրությունը:

7. Ո՞վ և կապիտալիստական հասարակության մեջ ստեղծում բոլոր հարստությունները և նվազ և ալդ հարստությունների տնօրինողը:

ԽՆԴԻՐՆԵՐ

1 Հաշվեցեք, թե վեր չափով են կրճատում աշխատանքը դրուղասնտեսական մեքենաները՝ կալսող մեքենան, հնձող մեքենան, և թե վերքան եժան և նստում ալդ մեքենաների աշխատանքը, համեմատած ձեռքի աշխատանքի հետ:

2. Մի վորեկ որինակի վրա քննեցեք կապիտալիստական արտադրության ստացած հավելյալ արժեքը՝ պայմանով, վորանհրաժեշտ աշխատանքը հավասար լինի հինգ ժամի, իսկ ամբողջ բանվորական որը՝ 8 ժամի: Բոլոր մնացած թվերը՝ բանվորների թիվը, նյութեղենի, գործիքների, հումուզի և այլ արժեքները վորոշեցեք ինքններդ: Այդ նույն որինակում հաշվեցեք, թե կապիտալիստը վորքան շահույթ կստանա ապրանքի ուրաքանչյուր հատից:

ԳԼՈՒԽ ՑԵՐԿՐՈՐԴ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ Խ. Ս. Զ. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Զեղ արդեն հայտնի լե արտադրության ԳԼՈՒԽ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, բնորոշիչ գծերը կապիտալիստական կարգերում: Այժմ տեսնենք՝ թե ինչով ե տարրերվում ԽՍՀՄ պետական ձեռնարկների արտադրությունը (այսինքն պրոլետարիատի գիլտատուրայի ժամանակ): Կապիտալիստական արտադրությունից: Մենք կքննենք նույնպես շահութի հարցը խորհրդային արտադրության մեջ, կտեսնենք, թե ուր և նա գնում և կամ արդյոք շահագործում ԽՍՀՄ պետական ձեռնարկներում: Վերջապես պետք ե ծանոթանալ նույնպես, թե ինչ և մասնավոր կապիտալի գերը և. Միության մեջ, ինչու չե խորհրդային իշխանությունը թուլատրում նրան գոյություն ունենալու, ով և ինչպես և կովում շահագործման դեմ մասնավոր ձեռնարկություններում:

§ 1. Ինչո՞վ ե տարբերվում խորհրդային տնտեսությունը կապիտալիստականից.

Արտադրության միջոցների և առհասարակության տնտեսության հրամանատարական բարձունքների կենտրոնացումը կապիտալիստների դասակարգի ձեռքում հանդիսանում և հիմնական պայմանը կապիտալիստական շահագործման և հենարանը կապիտալիստների աիրապետության: Ահա՝ թե ինչու

1 ժողովրդական տնտեսության հրամանատարական բարձունքներն են՝ խոշոր արդյունաբերությունը, տրանսպորտը (յերկաթուղին յեզ ջրագին հաղորդակցության միջնորդը), բանկերը, Այսպես են նրանք կոչվում այն պատճառով, վոր վճռական նշանակություն ունեն յերկը անտեսական կյանքի համար նրանից, թե ինչ զրության մեջ են նրանք, կամ ով և նրանց տիրապետում, կախված և տվյալ յերկը ժողովրդական տնտեսության վիճակը:

պրոլետարական հեղափոխության նպատակն ե վոչ միտոն տապալել բուրժուազիայի պետական իշխանությունը, այլ և զրկել նրան տիրապետության տնտեսական հիմքերից, այսինքն այն հրամանատարական բարձունքներից, վորոնց տիրապետությունը հնարավորություն և տալիս բուրժուազիային տիրապետելու իրկրի ամբողջ տնտեսությանը։ Դրան որինակ կարող ե լինել չոկտեմբերյան հեղափոխությունը։ 1918 թվին բոլոր խոշոր և նույնիսկ միջակ ձեռնարկները—Փարբիկաները, գործարանները, հանքերը, լերկաթուղիները, բանկերը և այլն խլվեցին կապիտալիստների ձեռքից և դարձան խորհրդային պետության սեփականություն։ Ներկայումս Խորհրդային Միության արդյունաբերական ձեռնարկների $98^0/_{\circ}$ -ը գտնվում է պետության ձեռքում և միայն $11^0/_{\circ}$ -ը, գլխավորապես մանր ձեռնարկությունները, գտնվում են մանր սեփականատերերի ձեռքում։ Ժողովրդական տեսեսուրյան նրամանատարական բարձունքները յեկարտադրության հիմնական միջոցները Խորհրդային Միության մեջ գտնվում են պետրյան ձեռնում, իսկ վորովհետև պետությունը բանվորական ե, ուրեմն և բանվոր դասակարգի ձեռնում։ Այս ե Խորհրդային տընտեսության գլխավոր տարբերությունը կապիտալիստական տընտեսությունից։

Մեր լերկրի պրոլետարիատն ինքն ե արտադրության տերը և իր պետական որգանների՝ ժողովրդական անտեսության խորհուրդի, տրեստների և գործարանների վարչությունների միջոցով կառավարում ե ամբողջ արտադրությունը։ Մեր պետական գործարաններում կարմիր վերատեսուչը կապիտալիստի գործակատարը չե, այլ գործարանի ղեկավարը, վորին արդյունաբերության տերը՝ պրոլետարական պետությունը հանձնարարում ե տվյալ ձեռնարկության կառավարչությունը։ Ֆարբիկաների և գործարանների վերատեսուչների ու կառավարիչների մեծ մասը կամ բանվորներ են և կամ բանվորների միջից գուրս լիկած մարդիկ։

Բանվորները գործարանային կոմիտեների և արտադրական խորհրդակցությունների միջոցով մասնակցում են արդյունաբերության վարչությանը, քննության են առնում արտադրությանը վերաբերող հարցերը, նրանց պակասություններն ու այդ պակասությունները վերացնելու միջոցները։

Ահա, թե ինչպես և նկարագրում մի բանթղթակից արտադրական խորհրդակցության նիստը մեր խոշոր գործարաններից մեկում—ընկ։ Ստալինի անվան գործարանում։

«Զեկուցում և գործարանի վերատեսուչը՝ հին բալլարկ
բանվոր Խոսում և իրենց արտադրության հաջողությունների
մասին—այտադրությունը բարձրացել ե, ինքնարժեքը՝ պակասել։
Դիմավոր բացն առաջմ այն ե, վոր գործարանը լերբեմ ժամա-
նակավորապես կանգ և առնում մեղենաների փչացման, հումուկ-
թի պակասության կամ բանվորների աշխատանքի չգալու պատ-
ճառով։ Սրանում մասամբ մեղավոր են բանվորներն իրենք։

Դեռ զեկուցումը չվերջացած՝ վիճարանություններին մաս-
նակցելու համար արգեն զըմկել են 20 հոգի...

Ցեվ լերը նստած լսում ես նրանց խոսքերը, սկսում ե
հասկանալի զառնալ, արդպես կարող են խոսել միայն այն մար-
դիկ, վորոնք իրենց տեր են զգում, մարդիկ, վորոնց համար
գործարանը սոսկ գոյության ազրուր չի, այլ մոտիկ, հարազատ մի
դործ, վորի զարգացման համար պետք և համառօրեն աշխատել։

Սոցիալիստական կարգերում շուկան կմեռ-
ԽՍՀ ԱՐՏԴՐՈՒ- նի, չի լինի ապրանքների փոխանակություն,
ԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՒԺԵՑ, այլ հասարակության աշխատանքի ամբողջ
արտադրանքը կրաշխվի պլանալին կարգով։

Ալդ կարգերին մենք վերջիվերջո կհասնենք, Բայց առաջմ ա-
ռանց շուկայի, առանց ապրանքալին փոխանակության և առանց
առեստրի դիմանալ չենք կարող։ Ի՞նչո՞ւ,

Կապիտալիստական տնտեսության մեջ շուկան և առեսու-
րը հանդիսանում են միակ կազմն առանձին տնտեսությունների
միջև։ Առեստուրն ու շուկան մնում են նաև մեզ մոտ, ԽՍՀ Միու-
թյան մեջ, Դրա պատճառն այն ե, վոր, բացի պետական ար-
դյունաբերությունից, մեզ մոտ գոյություն ունի նաև մանր
տնայնագործական արդյունաբերություն և ամենագլխավորը, զեռ
գոյություն ունեն 22 միլիոն գլուղացիական տնտեսություններ։
Կապը՝ պետական արդյունաբերության և գլուղական տնտեսու-
թյան միջև անհրաժեշտ ե։ Անկարելի յե, վոր քաղաքն իր գոյությունը պահպանի ինքն իրեն, իսկ գլուղը՝ ինքն իրեն։ Այս-
պիսի պայմաններում կապը կարելի յե պահպանել շուկայի և
առեստրի միջոցով։ «Առեստուրը միակ հնարավոր տնտեսական
կազմն և տասնյակ միլիոնավոր մասը հողագործների և խոշոր
արդյունաբերության միջև» (Լենին)։

Իսկ յերբ արդյունքն արտադրվում և շուկայի համար, ապա
նա դառնում և ապրանք, իսկ ամերող տնտեսությունն ել դառ-
նում և ապրանքալին տնտեսությունն է հետևաբար ԽՍՀՄ արա-
գաւրյանը—ապրանքալին արտադրություն ե։

Կարծես թե ալստեղ վոչ մի տարբերություն չկա խորհըրդակին և կապիտալիստական արտադրության միջև. թե մեկում և թե մլուսում արտադրությունն ապրանքալին ե, թե այնտեղ և թե ալստեղ գոյություն ունի շուկա: Բայց ամբողջ հարցը նրանումն ե, թե ում ձեռքումն ե գտնվում շուկան: Կապիտալիստական տնտեսության մեջ շուկան գտնվում ե կապիտալիստների, վաճառականների ձեռքումն ե հետեւալ թվերը հաստատում են այդ: 1925—26 թ. ԽՍՀՄ ամբողջ առենտրական շրջանառությունը հավասար եր 20.468 միլիոն ռուբլու, վորից պետական և կոռպերատիվ առևտարին բաժին եր ընկնում 15.608 միլիոն ռուբլի կամ 73%, իսկ 1926—27 թ. պետական և կոռպերատիվ տոկոսը հասնում ե 78%-ի: Մասնավոր առենտրի բաժինը վոչ միայն աննշան ե, այլ և նա անընդհատ նվազում ե: ԽՍՀՄ շուկայում տերն ու տնօրենը վոչ թե կապիտալիստն ե, այլ պրոլետարական պետության մարմինները: Իսկ այս հանգամանքն ահազին նշանակություն ունի:

Եռկան կապիտալիստի համար ամենից առկական կապիտալիստական տնտեսությունն առջև է գտնվում են ապրանքները: Իսկ ապրանքների գանձում այդ վաճառման միջոցով բանվորների ստեղծած հավելյալ արժեքը վեր ե ածվում հնչյուն դրամի և ընկնում կապիտալիստի գրպաննը: Դրա հետ միասին շուկան մի գործիք ե, վորով խոշոր քայլալում ե փոքրիկ տնտեսություններին, վորոնք չեն կարողանում մրցել խոշոր տնտեսությունների հետ: Չե վոր, թե մանր ապրանքալին տնտեսությունը և թե խոշոր կապիտալիստականն իրենց ապրանքները դուրս են բերում շուկա Այստեղ շուկայում տեղի յե ունենում կոիվ առաջնի և չերկորորդի միջև: Այդ կովի մեջ խոշոր կապիտալիստական արտադրությունը հաղթում, կլանում հ մանր տընտեսությանը, վորն անկարող ե դիմանալ մրցությանը:

Մեզ մոտ, ԽՍՀ Միության մեջ շուկան նույնպես ծառալում ե վորպես կապի միջոց խոշոր պետական սոցիալիստական արդյունաբերության և մանր գլուղացիական տնտեսությունների միջև: Սակայն ինչժեմն ե այդ տարրերությունն ալդ յերկու շուկաների միջև: Կապիտալիստական շուկայում տիրապետում են խոշոր կապիտալիստները, վորոնք իրենց ձեռքում են պահում ժողովը դաշտանաենասության հրամանատարական բարձունքները: Այդ տիրապետությունը շուկայում՝ նրանք գործադրում են իրենց հետագա ուժեղանալու և արտադրության միջոցներն իրենց ձեռքում ավելի ու ավելի կենտրոնացնելու համար՝ ի հաշիվ մանր

անտեսության քալիքալման (նույն շուկայի միջոցով): Մեղ մոտ, ԽՍՀՄ մեջ խոշոր սոցիալիստական արտադրությունը նույնպիս տիրապետում և շուկայում: Այդ տիրապետությունը պրոլետարիատն ոգտագործում և իր զիկատատուրայի անտեսական հիմքերն ամրացնելու, այսինքն խոշոր սոցիալիստական արդյունաբերությունն ամրացնելու համար: Սակայն այդ ամրացումը կատարվում և վոչ ի հաշիվ մանր անտեսություն քալիքալման: Սոցիալիստական արդյունաբերությունը շուկայի միջոցով այնպիսի կապ և սահմանում մանր գյուղացիական տնտեսության հետ, վորը ձեռնաու յե նրանց փերկուսին ել, վորը ծառալում և վոչ թե միայն արդյունաբերության ամրացմանը, այլ և միենույն ժամանակ ոգնում և գյուղացիական տնտեսության բարձրացմանը ու կոլեկտիվացմանը:

Փոխադարձ կախումի և փոխադարձ ոժանդակության հիմքի վրա յե կառուցված մեղ մոտ փոխանակությունը, առետուրը՝ քաղաքի և գյուղի միջև, զետեսաբար փոխանակությունը բաղամի յեկ զյուղի միջնի ԽՍՀՄ սահմաններում զուրկ և այն տաճագործական նպատակներից, վոր մենք տեսում ենք կոսպիտալիստական կարգերում: Այս նրանից ե, վոր այնտեղ շուկայի տերը կապիտալիստան ե, իսկ ԽՍՀՄ-ում բանվոր դասակարգը, հանձինս իր պետական առետարական մարմինների: Սրա ամենալավ ապացուցը հանդիսանում և Խորհրդային իշխանության վարած գների քաղաքականությունը: Յերբ 1923 թվին արդյունաբերական ապրանքների գները շատ բարձրացան, իսկ գյուղատնտեսական ապրանքներինն ընկան, Խորհրդային իշխանությունը մի շաբթ միջոցներ ձեռնարկեց, վորոնց հետևանքով արդյունաբերական ապրանքների գներն իջան 30 % ով, իսկ գյուղատնտեսական ապրանքների գները բարձրացան: Ներկայումս Խորհրդային իշխանությունը լեռանդուն կերպով շարունակում է գների իջեցման քաղաքականությունը, գյուղին հժան ապրանք հասցնելու նպատակով: 1927 թ. հունիսին գները նորից իջեցրին 10% ով:

Շարունակենք հետևել, թե ինչ նպատակ-նույն ԱՐԴՅՈՒՆԱ- ներ և հետապնդում պրոլետարիատի զիկտա- ԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ տուրան սոցիալիստական արտադրության և ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱ- մանը գյուղացիական տնտեսության կապի ՄԱՆԱԿ ՅԵՎ ԽՍՀՄ վերաբերմամբ: Կապիտալիստը պալիքարում և ՄԵԶ: վերաբերմամբ: Կապիտալիստը պալիքարում և խոշոր մեքենայական արտադրության համար, վորովհետեւ այդ իր գասակարգի տիրապետության հենարանը և

յանը արտադրողներին շահագործելու միջոցն ե, վորը և միջոցն ե իր սեփական հարստացման: Այնտեղ խոշոր արդյունաբերությունը հրամալողն ե ամրող ժողովրդատնտեսության, հոգուտ մի խումբ կապիտալիստների, հոգուտ նրանց տնտեսական հզորության և իշխանության ամրացման: Խոկ ԽՍՀՄ սահմաններում խոռոր արդյունաբերությունը, խոռոր արտադրյունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքում, վոր ոգտագործում ե այն՝ ամբողջ ժողովրդատնտեսության վերակազմելու յեզ դեպի սոցիալիզմն առաջ շարժելու նպատակով:

Ի՞նչ ե նշանակում այդ:

Այս թե ինչ: Հազթող պլոյետարիատի առաջ ծառացած ե մի խոշոր կարևորություն ունեցող խնդիր—միացնել, համախմբմարել, կոլեկտիվացման լինթարկել մանր տնտեսությունները, հանրայնացնել այն, արսինքն վերացնել այն մասնավոր սեփականատիրական սկզբունքները, վորոնց վրա հիմնված են արդ արնտեսությունները: Այդ մանր տնտեսություններն իրենց թուլության և մասնության հետևանքով տեխնիկապես և կուլտուրապես լիտամաց են և հիմնական արգելքն են հանդիսանում սոցիալիզմի իրականացման: Վերացնել արդ մանրությունը, խոշորացնել, կառուցել նրանց բարձր մեքենայական տեխնիկայի հիման վրա, վորը կտա աշխատանքի բարձր արտադրողականություն գլուզատնտեսության մեջ, և դրանով հարթել տարբերությունը՝ քաղաքի և գյուղի միջև—ահա թե ինչպիսի խնդիր ե գրված սոցիալիստական շինարարության առաջ՝ մանր գյուղացիական տնտեսությունը վերափոխելու խնդրում:

Ի՞նչ պայմաններում կարող ե հաջող առաջ գնալ գլուզացիական տնտեսության արդպիսի սոցիալիստական վերակառուցումը: Նախ՝ պլոյետարիատի դիկտատուրայի անընդհատ ամրացման պայմաններում, վորովհետև պլոյետարիատը միակ դասակարգն ե, վորը մինչև վերջ շահագրգոված ե սոցիալիզմի: Իրականացման միջ: Ցերկրորդ՝ անհրաժեշտ ե, վոր անընդհատ ամրանա սոցիալիստական պլոյետարիատի դաշինքը գլուզացիության չքավոր և միջակ մասի հետ, վորոնց հիմնական շահերը սոցիալիզմի կառուցման մեջ զուգադիպում են: Ցերվորդ՝ անհրաժեշտ ե, վոր անընդհատ ուժեղանա խոշոր սոցիալիստական արդյունաբերությունը և ամրանա այս վերջինի կապը մանր գլուզացիական տնտեսության հետ: Այս վերջին պայմանն ավելի մանրամասնորեն քննենք:

Բարձրացնելու համար գլուղատնտեսությունն այնպիսի տեխնիկական բարձրության վրա, վորը մոռեցներ նրան սոցիալիզմին, անհրաժեշտ և մատակարարել նրան ավելի ու ավելի մեծ քանակությամբ մեքենաներ, քիմիական պարարտանյութեր և այլ արդյունաբերական ապրանքներ։ Այս խնդիրը մեզ մոտ կատարում և պետական արդյունաբերությունը։

Սակայն չե՛ վոր կապիտալիստական արդյունաբերությունը նույնպես մատակարարում և գլուղատնտեսությունը մեքենաներ։ Տարրերությունն ալյատեղ նրանումն ե, վոր կապիտալիզմի ժամանակ մեքենան գլուղատնտեսության մեջ ծառայում և գլուղացիության շերտափորման և չքավոր խավերի պրոլետարացման արագացմանը։ Կապիտալիզմի պայմաններում մեքենաներ կարող ե ձեռք բերել միմիայն կալվածատիրական կամ կուլակալին անտեսությունը, բացի այդ, մեքենան զործադրել կարելի չե միմիայն խոշոր անտեսության մեջ։ Ի՞նչ պիտի անի, որինակ, 3—4 հեկտար հող ունեցող գլուղացին տրակտորը։

Այն ինչ այն մեքենան, վոր ուղարկվում և գյուղ մեր սոցիալիստական արդյունաբերության կողմից, ոժանդակում և հատկապես գլուղացիության հիմնական մասսայի տնտեսությունների բարձրացմանը (խոշոր մեքենաներ բաց են թողնվում գլխավորապես չքավորներին և միջակներին առանձին արտօնություններով, ինքան բարեկարան վարկով և այլն)։ Մրա հետ միասին մեզ մոտ մեքենան չի ծառայում վորպես միջոց գլուղացիության շերտավորման արագացման, այլ մի միջոց և մանր անտեսությունների միացման, նրանց կոլեկտիվացման։ Մեքենայի շուրջն ստեղծվում և մեքենապատագործման ընկերություն, կոլեկտիվ աշխատանքը մեքենայով գլուղացիներին ցուց և տալիս կոլեկտիվ աշխատանքի առավելությունները, դրզում և միանալու անտեսությունն նաև մնացած ճյուղերում (մթերքների վերամշակում, հալթայթում և այլն)։ Գլուղացին համոզվում ե, թե մեքենան ինչ առավելություններ ունի գլուղանտեսության մեջ, իսկ այդ առավելությունները կարելի յե ոգտագործել միմիայն մանր անտեսությունների միացման, կոլեկտիվացման միջոցով։ Կոնկրետ որինակներով գլուղացի-սեփականատերը համոզվում ե, թե իրեն վորքան ձեռնտու յե և ընդունելի կոլեկտիվացումը, հանրալին աշխատանքը և անտեսության վերակառուցումն այդ հիմունքներով։

Հասկանալի յե, վոր այդպիսի սոցիալիստական դեր մեր

Խոշոր արդյունաբերությունը կարող է խաղալ շնորհիվ այն լեռ-կու պայմանների, վորոնց մասին քիչ առաջ խոսհցինք:

Ալպիսով՝ խոշոր արդյունաբերությունը բանվոր դասա-կարգի ձեռքում մի գործիք և գլուզատնտեսությունը բարձրաց-նելու, նրան վերակառուցելու կոլեկտիվ հիմունքներով, վորոնք և ապահովելու լին նրա առաջմղումը դեպի սոցիալիզմ, ԽՍՀՄ խուօր արդյունաբերությունը հանդիսանում է պրոլետարիատի դիկ-տառարայի նեցուկը, նենարանը, միջնավույն ժամանակ նա մի միջոց ամբողջ ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական հիմունե-յերով վերակառուցելու:

Այս թե ինչով և տարբերվում ԽՍՀՄ խոշոր արտադրու-թյան դերը կապիտալիստական արտադրության դերից:

§ 2. Շահույթը ԽՍՀՄ մեջ յեվ թե՞ ուր և նա գնում.

Կապիտալիստն արտադրությունը վարում է շահույթ ստա-նալու նպատակով։ Արդյունաբերությունը ԽՍՀՄ մեջ բանվոր դասակարգի ձեռքում ծառայում է դեպի սոցիալիզմը շարժվելու նպատակին։ Նշանակում է արդյուք դա այն, վոր մեր պետական արդյունաբերության մեջ շահույթ չպետք ելինի։

Ինարկե, վո՛չ Յեթք բանվոր դասակարգն իր ձեռքում գտնվող արդյունաբերության մեջ արտադրի այնքան, վորքան և սպառի, այն ժամանակ արդյունաբերությունն առաջ և չի գնա, այն ժա-մանակ և վոչ մի առաջնադաշտան մասին դեպի սոցիալիզմը խոսք լինել չի կարող։ Սոցիալիզմ կառուցելու համար հարկա-վոր և կառուցել նոր ֆարբիկաներ և գործարաններ, երեսոր-կալաններ, հարկավոր և զարգացնել տեխնիկան, արդյունաբե-րության մեջ ներմուծել նոր ու նոր միջոցներ։ Իսկ այս բոլորի համար անհրաժեշտ է միջոցներ—կուտակութեր։ Մեր պետական արդյունաբերության մեջ ևս կա շահույթ, բայց դա սկզբունքո-րեն տարբերվում է կապիտալիստական գործարանների շահույ-թից։ Այնտեղ շահույթը շահագործման հետեւնք է, վորն առա-ջանում է շնորհիվ լերկու դասակարգի առկայության։ Մեր ար-դյունաբերության նկատմամբ շահույթ տերմինը գործածվում է պայմանատկան իմաստով՝ վորովհետեւ ալտեր չկա շահագործում, հավելյալ արժեք, հետևապես և շահույթ։ Մեզանում բանվորի ամբողջ աշխատանքը անհրաժեշտ աշխատանք է, վորի ընթաց-քում արտադրանքը կարելի է բաժանել լերկու մասի՝ ա) ան-հատական սպառման ֆոնդ և բ) բանվոր դասակարգի հասարա-

կակախն կարիքների համար դործադրվող փոնսդ: Այդ լերկուորդ փոնսդը վոչ հավելլալ արժեք ե, վոչ ել շահուկթ, ավելի ճիշտ դա «հավելլալ մթերք ե»:

Սակայն ամբողջ հարցը նրանում ե, թե ուր ե գնում այդ շահուկթը: Ահա, որինակի համար, ինչպես եր բաշխվում պետարդունարերության շահուկթը 1923/24 թվին՝

Պետ. գանձարանին	46.900	հազար սուրլի կամ	33.8%/ ₀
Պահեստի ֆոնդ	30.800	» » »	22.2%/ ₀
Շրջանառության և թողնված 30.100	» » »	»	21.7%/ ₀
Բանվորն. կենցաղը բարելավ. 23.900	» » »	»	17.3%/ ₀
Նոր շինարարության	7.000	» » »	5%/ ₀

Ինչպես տեսնում ենք, խոշոր տեղ ե բանում շահուկթի այն մասը, վորը գնում ե բանվորների կենցաղը բարելավելու նպատակին—բանվորական արվարձաններ կառուցելու, բանվորական ճաշարաններ և ակումբներ հիմնելու և այլն:

Սակայն ամենակարեռն այն ե, վոր շահուկթը գնում ե վոչ թե կապիտալիստի զրապանը, այլ մնում ե բանվոր դասակարգի, բանվորական պիտության ձեռքում և ծախսվում ե սոցիալիստական շինարարության համար:

Կապիտալիստական կարգերում շահուկթն ԿԱՐԴՅՈՔ ՇԱՀԱ- ստացվում ե բանվորներին շահագործելու մի- ԳՈՐԾՈՒՄ ԽՍՀՄ ՊԵ- ջոցով: ԽՍՀՄ պետառնարկներում նույնպես ՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱ- շահուկթը ստացվում ե: Նշանակման և արդյոք, ՔԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՋ վոր պետձեռնարկներում նույնպես շահագոր- ծում կա: Բանվորների թշնամիները, իսկ լերեմն ել անդիտա- կից բանվորներն ասում են. լեթի կա շահուկթ, կնշանակի կա և շահագործում: Սակայն նրանք աչքաթող են անում ամենագըլ- խավորը. կապիտալիստական արդյունաբերության մեջ զեմ հան- դիման կանգնած են լերկու դասակարգեր՝ կապիտալիստների դասակարգը, վորը տիրում ե արտադրության միջոցներին և պըոլետարների դասակարգը, վորը տիրում ե իր ուժը կապի- տալիստներին: Կապիտալիստների դասակարգը լուրացնում ե պըոլետարների ստեղծած հավելլալ արժեքը, այսինքն շահուկթ և ստանում պըոլետարներին շահագործելով: Դանք մեր պետար- դունաբերությանը: Այստեղ կա միայն մեկ դասակարգ՝ պըոլե- տարիատը: Նա տերն ե (իր պըոլետարական պետության միջո- ցով) արտադրության միջոցների, նա լել ստեղծողն ե այն բանի, ինչ մենք անվանում ենք շահուկթ: Մեր ձեռնարկներում ստեղծ-

վող հավելյալ արտադրանքը չի լուրացվում ուրիշ վորեւ դասակարգի կողմից, վորովհետեւ այստեղ չկա այլ դասակարգ, այլ կա միայն մի դասակարգ—պրոետարների դասակարգ։ Մեր պետձեռնարկների շահուլիթը գնում և պրոլետարական պետությանը, վորը ներկայացուցիչն և ամբողջ բանվոր դասակարգի, հետեւացար շահուլիթը գնում և ամբողջ բանվոր դասակարգի ոգտին։ Իսկ լեթե՛ շահուլիթը գնում և նույն դասակարգին, վորը և ալդ շահուլիթի ստեղծողն ե, այսինքն բանվոր դասակարգին, ապա ի՞նչ շահագործում կարող ե լինել այստեղ։ Զե՞ վոր չի կարող բանվորն ինքն իրեն շահագործել, լուրացնել իր իսկ հավելյալ արդյունքը։ Պետական արդյունաբերության մեջ օահագործում չկա։

Վոմանք ասում են. շահագործում չկա, բայց ԱՇԽԱՍՎԱՐՁՅԱՑ ՅԵՎ ինչու չե բանվորների աշխատավարձը ցածր։ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆ ԻՆՉՈՒ ԱՇԽԱՍՎԱՐՁԸ մեղ մոտ պակաս ե, քան միքանի կապիտալիստական լերկրներում, ինչ-պես, որինակ, Ամերիկայում։

Բանը նրանումն ե, վոր Ամերիկայում տեխնիկան բարձր ե, այդ պատճառով ել բարձր և աշխատանքի արտադրողականությունը։ Մեզ մոտ աելինիկան թույլ ե, աշխատանքի արտադրողականությունն ել շատ պակաս ե։ Այդ լերնում և հետեւալ համեմատություններից։

Ամերիկայում հանքագործ բանվորը մինչպատերազմյան շըրժ ջանում մեկ տարում հանում եր մոտ 575 տոնն քաշածութ, իսկ Ռուսաստանում՝ մոտ 150 տոնն։ Թղթագործ բանվորն Ամերիկայում արտադրում եր 205 տոնն, իսկ Ռուսաստանում՝ միայն 25 տոնն։ Մետաղագործն Ամերիկայում կատարում եր տարեկան 5400 սուրլու գործ, իսկ Ռուսաստանում՝ միայն 1500 սուրլու։

Զե՞ վոր, լեթե Ամերիկայում շինվում ե, ասենք թե, 10 հատ ապրանք, աշխատավարձը բաշխվում ե ալդ տասը հատի վրա, իսկ ուրիշ լերկրում, լեթե բանվորն արտադրում ե 5 հատ նույնպիսի ապրանք, ապա նրա աշխատավարձը բաշխվում ե միմիտն ծ-ի վրա։ Ցեթե մեկին և մյուսին հավասար վճարվի, այն ժամանակ լերկրորդ դեպքում ապրանքը շատ ավելի թանգ կստացվի, չի դիմանա մրցության, նրա արտադրությունը շահուլիթ չի տա։

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում արտադրությունն ապրանքալին բնույթ ե կրում, ալդ պատճառով ել մեղ մոտ աշխատավարձի մակարդակը կախված ե աշխատանքի արտադրողականությունից։

Բացի ալդ, պատերազմից հետո աշխատանքի արտադրողա-

կանությունը խիստ ընկել ե, վորովհետև մեքենաները մաշվել՝ հնացել են, հումուկթը վատացել ե և ալլն. 1923/4 թվին, որինակ, քարածուկի արդյունաբերության մեջ արտադրողականությունը հավասար եր նախապատերազմիան շրջանի $56^{\circ}/_0$ -ին, նավթարդյունաբերության մեջ— $50^{\circ}/_0$ -ին, մանվածային արդյունաբերության մեջ— $48^{\circ}/_0$ -ին:

Պարզ ե, վոր աշխատանքի նվազ արտադրողականության միջոցին աշխատավարձը չի կարող բարձր լինել:

Խորհրդային իշխանությունը միջոցներ ե ձեռք առնում բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, նրա հետ միասին անշեղ կերպով բարձրացնում ենաւ աշխատավարձը: 1925 թվի ընթացքում մեկ բանվորի մեկ որդան աշխատանքի արդյունքը 6 ոռութի 13 կոպեկից բարձրացավ մինչև 6 ո. 25 կոպեկի, իսկ աշխատավարձը 1 ո. 81 կոպեկից բարձրացավ մինչև 2 ո. 24 կ.: Խնդիրն տեսնում ենք, 1925 թ. աշխատավարձը ԽՍՀՄ մեջ աճել ե ավելի բարգ, քան աշխատանքի արտադրողականությունը:

ԽՍՀՄ աշխատավարձի քաղաքականությունը նպատակ ունի ավելի ու ավելի բավարարելու բանվորների կարիքները: Իսկ կապիտալիստական կարգերում՝ կապիտալիստն իր շահուկթն ավելացնելու նպատակով մշտապես ձգտում ե կրճատելու բանվորների աշխատավարձը:

Աշխատավարձ տերմինը ևս մենք գործածում ենք պարմանական իմաստով. մենք ասացինք, վոր պետարդյունաբերության մեջ չկա կապիտալիստական դասակարգ և արդյունաբերության միջոցների տերը բանվոր դասակարգն ե: Աշխատավարձը լենթագրում ե վարձու. աշխատանք—ալսինքն, վոր բանվորական ուժը առ ու ծախսի առարկա լե, ապրանք ե—իսկ սրա համար նորից անհրաժեշտ ե լերկու դասակարգի գորություն. մինչդեռ մեր պետարդյունաբերության մեջ բանվորը միևնույն ժամանակ գործարանի տերն ե: Մեր պետարդյունաբերության մեջ աշխատավարձը իր արտաքին ձևով նման է կապիտալիստականին, իսկ իր բնույթով, բովանդակությամբ բոլորովին տարրեր ե:

§ 3. Մասնավոր կապիտալիստական արտադրությունը ԽՍՀՄ մեջ.

ԽՍՀՄ մեջ կան նույնպես արդյունաբերական սահմանագործությունը՝ կապիտալիստականության մասնակիությունը, պատկանությունը արդյունաբերական սահմանագործությունը՝ կապիտալիստականին: Մասնավոր արդյունաբերական սահմանագործությունը՝ նաբերության դերը կապարզվի, լեթե համեմատենք նրան պետական արդյունաբերության հետ:

Արտադրությունը միլիոն ռուբլիներով.

	1924/5	1925/6	1926/7
Պետական և կոռպերատիվ	6449	9343	10645
Մասնավոր	1799	2165	2356

Խնչակես տեսնում ենք, մասնավոր արդյունաբերության բաժինը հետպես նվազում է. 1924/5 թվի 27%՝ 1926/7 թվին հասել է 22%՝ իւ.

Պետք է մի բան ել նկատի ունենալ, վոր այդ 27 և 22 տոկոսների մեջ մտնում են այն տնախագործական արդյունաբերությունը, վորտեղ վարձու աշխատանք չի կիրառվում. Վարձու աշխատանքով իսկական կապիտալիստական ձեռնարկություններ քիչ կան, նրանք կազմում են Խորհրդային Միության ամբողջ արդյունաբերության միմիայն 3%՝ իւ.

Խ. իշխանությունն այդ մասնավոր ձեռնարկություններին թույլատրում ե գոյություն ունենալ այն պատճառով, վոր պետարդյունաբերությունը ներկայումս անկարող է լիովին բավարարել ազգաբնակության, հատկապես գլուղական անտեսության բոլոր պահանջները. Պետարդյունաբերությունն աստիճանաբար զարգանալով և ամրանալով, աստիճանաբար կվերանա մասնավոր արդյունաբերությունը, Ուժեղացնելով տնտեսության սոցիալիստական հատվածը, մենք անընդհատ դուրս ենք վանում մասնավոր կապիտալը. մեր կուսակցության 15-րդ համագումարը վորոշեց ել ազելի ուժեղացնել հարձակումը մասնավոր կապիտալի դեմ. Սակայն վոմանք դատում են ալիքես. հարկավոր ե իսկույն և եթ բոլորովին վերացնել մասնավոր կապիտալը, պետության ձեռքը վերցնել մասնավոր-կապիտալիստական ձեռնարկները, հակառակ դեպքում նրանք կամրանան, կուժեղանան և կսկսեն նեղել պետարդյունաբերությանը, կապիտալիստաները նորից մեծ ուժ ձեռք կրերեն. Խորհրդային իշխանությունն իհարկե բավականաշափ ուժեղ ե և կարող ե այդ անել, յիրե միայն այդ ձեռներու լիներ ներկայումս մեր յերկի համար. Բայց նա այդ չի անում ամենից առաջ այն պատճառով, վոր պետարդյունաբերությունն ինքը դեռ ևս անկարող ե ամբողջ յերկրին մատակարարել բոլոր անհրաժեշտ ապրանքները. Բացի դրանից, իերը տնտեսական բոլոր գլխավոր բարձունքները՝ տրանսպորտը, խոշոր արդյունաբերությունը, բանկերը գտնվում են պետության ձեռքում, մասնավոր կապիտալի առկայությունն այնքան ել սարսափելի չե, քանի վոր

պետությունը կարող և մասնավոր կապիտալը կարգավորել այնպես, ինչպես իրեն (պետությանը) ձեռնտու և ոգտակար ե:

Մասնավոր ձեռնարկներում շահությն ինարա-
սաւազոր աւո- կե զնում և ձեռնարկատիրոջ գրպանը: Այսաեղ
նարկներում, նույն պատկերն ե, ինչ վոր տիպիկ կապիտա-
լիստական ձեռնարկության մեջ. բանվորների
շահագործում, հավելյալ արժեքի ուրացում կապիտալիստի կող-
մից: Բայց շահագործման հնարավորությունները մասնավոր ձեռ-
նարկներում Խ. Միության սահմաններում խիստ կրճատված են
աշխատանքի վերաբերյալ որենքներով; 8 ժամուա բանվորական
որով և աշխատավարձի ամուր գրուգներով: Բանվորների շահե-
րը պաշտպանում են նուև մեր պրոֆեսսիոնալ միությունները,
վորոնք արգելում են շահագործման ուժեղացումը մասնավոր ձեռ-
նարկներում և աշխատան են բարելավիլ բանվորների գրությու-
նը: Պրոֆմիություններ կան նույնպես. և կապիտալիստական
չերկներում, բայց այնտեղ քուրժուազիալի պետական իշխանու-
թյունը ճնշում է բանվորական շարժումը, նույն թվում և պրո-
ֆեսիոնալ միություններին: Այս պատճառով այնտեղ պրոֆմի-
ություններն իրենց պայքարում չեն կարողանում անել այն, ինչ
անում են մեզ մոտ պրոֆմիությունները, վորոնց պաշտպանում
և պրոլետարական պետությունը:

Ցեղակացություններ անհնք:

1. ԽՍՀՄ մեջ արտադրության միջոցները պատկանում են իրենց՝
աշխատավորներին, բանվորներին, հանձինս Խորհրդային պետության
մարմինների:

2. Արտադրությունը ԽՍՀՄ մեջ կրում է ապրանքային բնույթը:
Բայց վորովինեակ ժողովրդական տնտեսության հրամանատարա-
կան բարձունքները գտնվում են պետության ձեռքում, ուսիս
փոխանակ մանր արտադրությունը շահագործելու գործիք լինե-
լու, դարձել է պետական արդյունաբերությունը զյուղացիական ըն-
թափական հետ գոդելու գործիք:

3. ԽՍՀՄ խույզ արդյունաբերությունը հանդիսանում է պրա-
լիստարիատի դիմացաւարայի հենարան յեկ զյուղացիական տնտեսու-
թյունը սոցիալիստական հիմունքներով վերափոխելու միջոց: Խոշոր
արդյունաբերության միջոցով բանվոր դասակարգն ուղղում է
ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացումը սոցիալիստա-
կան ուղինելով:

4. ԽՍՀՄ պետականարկներում օհիագործում չկա: Ստացված

շահումիթը մնում և պրոլետարական պետության ձեռքում և գործադրվում և ժողանտեսության բարձրացման և բանվոր դասակարգի դրությունը բարելավելու համար:

5. ԽՍՀՄ մեջ գոյուրյուն ունեցող մասնավոր-կապիտալիստական ձեռնարկները յերկրադական յեվ ոժանդակող դեր են խաղում: Ակնտեղ գորություն ունի բանվորների շահագործում: Սակայն այդ շահագործման չափազանց զարգացումը սահմանափակվում և խորհրդալին աշխատանքալին որենքներով և պրոֆմիության աշխատանքներով:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ պատճառով և ինչու համար պրոլետարիատն իր ձեռքը պետք և վերցներ տնտեսության հրամանատարական բարձունքները:

2. Ինչու ԽՍՀՄ արտադրությունն ապրանքալին բնություն և կրում:

3. Ինչպես և փոխվում շուկայի դերը պրոլետարիատի դիկտուրալի շրջանում:

4. Ի՞նչ դեր և խաղում խոշոր արդյունաբերությունը գլուղացիական տնտեսության վերաբերմամբ՝ կապիտալիստական յերկրներում և Խ. Միության մեջ:

5. Ի՞նչի համար և հարկավոր շահումիթը պետարդյունաբերությանը:

6. Ի՞նչո՞ւ իրավացի չեն նրանք, վորոնք ասում են, թե պետքունարկներում շահագործում կա:

7. Ի՞նչ քաղաքականություն և վարում Խ. իշխանությունն աշխատավարձի խնդրում:

8. Ի՞նչո՞ւ Խ. Միության մեջ թուլատը վում են մասնավոր-կապիտալիստական ձեռնարկները և վո՞րն և նրանց դերն ու տեսակարար կշիռը:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԽԱՀԱ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ

Դուք քննեցիք կապիտալիստական արտա-
դրության հիմնական գծերը և ԽՍՀՄ արտադրու-
թյան արբերիչ գծերը: Այժմ ուշադրություն

դարձնենք առանձին կապիտալիստական ձեռնարկների միջև զո-
յություն ունեցող պայքարի (մրցության) և այդ պայքարի հե-
տեւանքների (ճգնաժամեր) վրա, տեսնենք, թե ով և հաղթում արդ
պայքարում և թե ինչպես կապիտալիստներն աստիճանաբար, բայց
անշեղ կերպով կենտրոնանում են փոքրաթիվ կապիտալիստների
ձեռքում (արտադրության համակենտրոնացումը—կոնցենտրա-
ցիան): Այնուհետև նայեցնք, թե ինչպես մեզ մոտ՝ ԽՍՀՄ մեջ
վերանում և արտադրության անարխիան, տեսնք, թե կա արդյոք
պայքար առանձին ձեռնարկությունների միջև, թնջ բնույթ և
նա կրում և թե գեղի ո՞ւր և նա տանում:

§ 1. Մանր յեվ խոշոր արտադրության պայքարը կապիտալիստական կարգերում

Բաղմաթիվ մանր, միջակ և խոշոր ձեռնարկ-
էլիստական արտա- ների (տնտեսությունների) միակ կապը հանդի-
դրության տանում և շուկան: Շուկայի միջոցով և բավա-
րանին կարգավո- րավում ազգաբնակության վճարունակ պա-
րուն ե՝ հանջը: Ի՞նչպես և լինում, վոր կոշկակար-ար-
հետավորները և կոշկակար-գործարանատերերը շուկա լին դուրս
բերում ճիշտ այնքան կոշիկ, վորքան կարող և գնել հասարա-
կությունը: Չե վոր նրանք հաշվառում չեն կատարում, թե ազ-
գաբնակությունը վորքան կոշիկ և մաշում, վորքան նա կոշիկ
կարող և գնել այսոր և վաղը: Այդպիսի հաշվառում կատարելն,

իհարկե, դժվար եւ նույնիսկ լեթե ալդ հաշվառումը հնարավոր ել չինք, ապա ինչպես պիտի անել, վոր տվյալ գործարանատերի ձեռնարկությունն անպատճառ արտադրի ալսքան կոչիկ և վոչ մի զուգ ավելի կամ պակաս: Բաղմաթիվ ձեռնարկների գործարքան դեպքում և նրանց ցրվածության հետեանքով համաձայնեցրած աշխատանք տանել ալդ ուղղությամբ անկարելի լի:

Հապա ինչպես են սահմանվում և համաձայնեցվում վճարունակ պահանջի հետ արտադրության չափերն, ուրիշ խոսքով՝ ինչն և կարգավորում արտադրությունն ապրանքալին տնտեսության մեջ:

Կարգավորող ուղան եւ:

Բացատրենք ալդ որինակով: Յենթադրենք, թե հասարակությունը մեկ տարում կարող է գնել 3 միլիոն զուգ կոշիկ: Նշանակում եւ, ազգաբնակությունը շուկայում պահանջ և առաջադրում էներկու միլիոն զուգ կոշիկ: Իսկ բոլոր կոշիկ արտադրողները՝ արենաստավորներն ու գործարանատերները՝ արտադրել և շուկա լեն դուրս բերել 3 միլիոն զուգ: Այստեղ մենք տեսնում ենք կոշիկների գերաւողությունն, ալսինքն ապրանք արտադրոված և տվյալի, քան տվյալ միջոցին կարող է գնել հասարակությունը:

Ի՞նչ և ստացվում պահանջի և առաջարկության այսպիսի անհամապատասխանության դեպքում:

Ապրանքը (կոշիկները) շուկայում ավելի շատ եւ, քան կարող են գնել: Այսուամենալիք վաճառողներն արտադրած կոշիկները վաճառելու համար պատրաստ են ավելի եֆան, նույնիսկ ֆասով վաճառելու, միայն թե կարողանան վաճառել: Վորովինետն իեթե նրանք իրենց ապրանքները չվաճառեն, միջոց չեն ունենա արտադրությունը շարունակելու և իրենք ել ապրելու: Մեր բերած որինակում այսուամենալիք 1 միլիոն զուգ կոշիկ մնում ե առանց վաճառելու: Յերբ շուկայում ապրանքի շատություն ե, նրա գներն ընկնում են, արտադրությունը կրճատվում ե, վորով հետեւ գոյություն ունեցող ցածր գների պատճառով նա ալլես ձեռնոտու չե (շահութը փոքր ե) և բացի ալդ, ինչի՞ համար արտադրեն, քանի վոր շուկայում առանց այն ել ահագին քանակությամբ չվաճառվող ապրանք կա: Իրերի ալսպիսի դրության միջոցին արտադրողների մի մասը քայլքալվում ե, մյուս մասը ձգում ե կոշիկ արտադրությունը և անցնում ե վորեւ արտադրության, վորի պահանջը կա շուկայում: Բայց ահա անցնում

և մի յերկու տարի, շուկայում կուտակված կողիկները վաճառվել են, այժմ արդեն կոշկի արտադրության կրճատման և կապիտալի արտադրության ուրիշ ճուղերին անցնելու հետեանքով, քիչ կոշկի և արտահանվում շուկա, այնինչ պահանջը մնացել է նույնը: Այժմ արդեն հակառակն է տեղի ունենում: պահանջը գերազանցում և առօջարկությանը, գնորդը վաղում և կոշկի լեռնից, պատրաստ և ավելի վճարելու, քան սովորաբար վճարում եր, միայն թե գնի: Կոշկի գործարանները մեծ շահութներ են արտադրում: Ազգախոսի բարձր շահութի լեռնեց ընկնելով, կատաղի արագությամբ լայնացնում են կոշկի արտադրությունը Բայց այդ, խոշոր շահութի լեռնեց ընկնելով, մյուս կապիտալիստների մի մասն ել ձգում և ավելի պակաս ձեռնառու արտադրությունը, սկսում և կոշկի արտադրել ի վերջո կոշկի արտադրությունը լայնանում ե, պահանջը բավարարվում: Հետագայում նորից կոշկի գերարտադրություն, գների, ուրեմն և շահութի անկում, նորից կապիտալների տեղափոխություն մյուս ավելի շահութաբեր արտադրությունները: Յեկայն այսպիս անվերջ ամեն մի արտադրության մեջ, Ազգախոսի՝ կապիտալիստական ապրանքային արտադրության մեջ արտադրությունը կարգավորվում և ուղարկվում միջոցով: Բայց այդ կարգավորմբ տարեային ե, անկախ յուրաքանչյուր մի առանձին կապիտալիստի յեկայն երանց բոլորի միամբն կամքից ու հաշիվներից: Շուկան կապիտալիստական կարգերում մի կուլը տարեհային ուժ է, վորը յերբեմն կապիտալիստին կատաղի շահութներ ե բերում, իսկ յերբեմն ել քայլայում և նրան:

ՄՐՑՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԶԱՆ ՄԵԶԱՆ ՄԵԶԱՆ

Քից ու հաշիվներից չի կախված, բայց նա կախ-
թանգար անընդհատ վաղքից շահութի հե-

տեղից, մըցորդին տապալելու ցանկությունից:
Ի՞նչումն և բանը: Ահա թե ինչում:

Կապիտալիզմի որով առեն մի առանձին ձեռնարկություն արտադրում և այն ապրանքը և այն քանակությամբ, վորն ինքը այս կամ այն պատճառով ձեռնառու լեռ համարում: Բայց կապիտալիստը չի կարող նախատեսել, թե այդ նույն ապրանքից վորչափ կարտադրեն մյուս կապիտալիստները և թե վորքան կարգենան նրանց արտադրած ապրանքի հատը: Գուցեն նրանք մատցրել են նոր մեքենաներ և նրանց ապրանքն ավելի եժան ե: Այդ դեպքում կապիտալիստի բոլոր հաշիվները՝ բարձր շահութ ստանալու, ջուրը կընկնեն, իսկ յեթե ինկատի առնենք, վոր բոլոր կա-

պիտալիստները նույնպես կուրորեն են գործում, ապա ակներե կդառնա կապիտալիստական արտադրության անկաղմակերպվածությունը, անկարգությունը, անարխիական բնույթը Ուրիշ խոսքով՝ կապիտալիզմի որով տիրում և արտադրության անարխիա¹:

Բայց ահա կապիտալիստը շուկա լե բաց թողնում իր գործարանի կոշէկը, նույնն են անում և մուս կապիտալիստները, նրանք ինչ ել վոր լինի, պետք և վաճառեն իրենց ապրանքը, հակառակ դեպքում անկարելի կլինի շարունակել արտադրությունը: Նրանցից ամեն մեկը ցանկանում և մուսից առաջ վաճառել, վորովնեսուն չգիտե, թե ինչ կլինի վաղը, ինչպես և չգիտե, թե վորչափ մեծ և առաջարկությունը: Արա հետեանքով ըուկա դուրս յեկած կապիտալիստների միջել առաջանում ե կատարի կոփի՝ գնորդ ձեռք բերելու համար, մրցում: Մըրցումը ծնունդ և արտադրության անարխիայի, վորովնետե լեթե կապիտալիստը նախորդ կարողանար միշտ ու անսխալ կերպով հաշվառության յենթարկել շուկայի պահանջը, նա հավատացած կլիներ, վոր իր ապրանքը կվաճառի առանց պալքարի, առանց մրցության: Ով ավելի շուտ իր ապրանքը կմուտեցնի գնորդին, ով ավելի լավ հաշվի կառնի գնորդի ճաշակը և շատ հաճախ ել, ով ավելի ժարպիկությամբ կիսարի գնորդին, նա յել կհաղթի մրցության մեջ: Կապիտալիստն անցնում և մասսալական արտադրության, վորպեսզի իր մրցորդին տապալի ամենից առաջ ապրանքի քանակով, հաշվելով, վոր քիչ շահույթ ստանալով ապրանքի ամեն մեկ հաստից, նա վերջին հաշվով մեծ շահույթ կստանա ապրանքի ամբողջ քանակից: Այստեղից մենք կարող ենք վերադառնալ գերարտադրությանը: Գերարտադրությունն ստացվում և վոչ միայն նրանից, վոր անհատ կապիտալիստները շեն կարող հաշվի առնել շուկան կամ սահմանել արտադրության վորոշ նորմաներ, այլ գլխավորապես այն պատճառով, վոր խիստ մրցության պահմաններում առանձին կապիտալիստները շուկա լեն շպրտում ավելի ու ավելի մեծ քանակությամբ ապրանքներ, իրենց մրցորդներին տապալելու նպատակով: Մըրցությունից հաղթող դուրս լեկող կապիտալիստը վաճառում և իր ապրանքը, պարտվողը չկա-

¹ Անարխիա—ընդհանրապես նշանակում ե իշխանության բացակայություն, իսկ ժողովնահոսության վերաբերմամբ նշանակում ե գիտակցարար կարգավորելու, պահանջին սիստեմի, կազմակերպության բացակայություն:

բողանալով վաճառել, քայլարմում և և դադարեցնում արտադրությունը: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել, ինը մենք խոսում ենք շուկայի միջոցով տարերային կարգավորման մասին: Մըցությունը հարկադրում է անընդհատ շարժել ու զարգացնել մեքենայական տեխնիկան, մտցնել նոր մեքենաներ եժան ապրանք արտադրելու համար: Վերջապես մրցուրյունն ուժեղացնում է բանվոր դասակարգի շահագործումը: Վորքան քիչ վճարի կապիտալիստը բանվորին և վորքան հարկադրի նրան շատ աշխատել, այնքան շատ կինի հավելված արժեքը, այնքան կապիտալիստն իժան կարող և վաճառել իր ապրանքը:

Կապիտալիզմի զարգացման ամենավերջին շրջանում առաջ են գալիս կապիտալիստների միավորումներ, վորոնք հաճախ իրենց ձեռքն են վերցնում ամբողջ լերկրի շուկան ապրանքների մի ամբողջ ճյուղի վերաբերմամբ (մենաշնորհնային շրջան): Թվում ե, թե այսպիսի պայմաններում հնարավոր պիտի լիներ վերացնել մրցումն ու արտադրության անտրիխան: Այն, անհատ կապիտալիստների միջև, լերը նրանք միանում են, մրցումը լիթի ամբողջովին չի վերանում, ապա վորոշ չափով մեղմանում եւ: Բայց դրա փոխարեն նա մինչ այդ չտեսնված ուժով սկսվում է կապիտալիստների միավորումների միջև թե լերկրի ներսում և թե առանձին լերկրների միավորումների միջև: Այսպիսի պայմաններում արտադրության անտրիխան շարունակվում է, բանվոր դասակարգի ճնշումը—նույնպես:

Ահա մի որինակ: 1926 թվին Անգլիայում քարածխի արդյունաբերությունն անկարող լեզավ համաշխարհային շուկայում մրցել ամերիկական և գերմանական եժան քարածխի հետ: Այն ժամանակ անգլիական կապիտալիստներն իշեցրին հանքագործների աշխատավարձը և միաժամանակ լերկարացրին բանվորական որը: Նրանք իրենց ապահովեցին մրցությանը դիմանալու համար: Հանքագործները գործադրու արին: Կես տարօրուց ավելի տևեց գործադրությունը բայց վերջը պարտվեցին: կապիտալիստներն անդրգվելի մնացին, վորովհետև գրված եր նրանց լինել չլինելու հարցը դաժան մրցման պայմաններում:

Եարունակենք քննել տարերային կարգավորման և արտադրության անարխիայի հարցը նաժաման կապիտալիստական կարգերում: Վերը բերած որինակում շուկայում կար մեկ միլիոն զույգ պվելի կոշիկ: Ուրեմն հետեւյալ տարվա համար պետք և արտա-

դրել միայն մեկ միլիոն դուզգ, ալսինքն արտադրությունը պետք է կրճատել 3 անգամ, Մի անգամից այդ չափով կրճատելն անհարին ե. մի վորոշ ժամանակ արտադրությունն ընթանում ե իր նախկին թափով, իսկ հետո բանից դուրս ե դալիս, վոր շուկան չի կարողանում կլանել և վոչ մի զույգ նոր արտադրությունից: Այն ժամանակ կոչկի արդյունաբերությունը կանգ ե առնում, ֆարբիկաներն ու գործարանները փակվում են, բանվորներն արձակվում: Կոչկի արդյունաբերությունն ապրում և ժամանակավոր ճգնաժամ: Բայց նա հազարավոր թելերով կապված ե ուրիշ շատ արտադրությունների հետ: Այդ ճգնաժամը նշանակում ե, վոր կոչկի արդյունաբերությունն այլևս չի գնելու իրկաթի մեխեր, պատրաստի կաշիներ, փալտի կաղապարներ, դադահներ և գործիքներ, նավթ ու քարածուխ իր շարժիչների համար: Նա անկարող ե իր ժամանակին վերադարձնել բանկերից ստացած վարկերը, դադարում ե իրկաթուղիներով փոխադրել իր ապրանքներն ու հումուկթը և այլն: Դրա հետևանքով դադարում են գործիքնուց կոշիկների մեխեր և կաղապար պատրաստող գործարանները, իսկ այդ նշանակում ե, թե նվազում ե մետաղի և փալտեղենի պահանջը: Ճգնաժամը լայն շրջանակներով տարածվում ե ամբողջ լերկրի տնտեսությունովը մեկ: Այստեղ մենք վերցրինք արդյունաբերության լերկրորդական մի ճյուղ և միայն մեկը նրանից: Յերբ ճգնաժամը վերաբերում ե միայն մեկ ճյուղին, ապա նա խոշոր մվասներ և պատճառում միմիայն այդ ճյուղին: մնացած կապիտալիստներն ու արտադրության ճյուղերը դրանից, ճիշտ ե, տուժում են, բայց փոքր չափով: Սակայն յեթե ճգնաժամը բռնում ե արդյունաբերության խոշոր ճյուղերից մեկն ու մեկը կամ նրանցից միքանիւը, ապա նա տարածվում ե ամբողջ ժողովրդական տնտեսության վրա և հաճախ նույնիսկ ազդում ե համաշխարհալիքն տնտեսության վրա: Վերցնենք մի այսպիսի որինակ: յենթադրենք ճգնաժամն առաջցել ե մետաղագործական արդյունաբերության մեջ: Նա դադարում ե գործածել լերկաթ, պողպատ, չուգուն և կամ կրճատում ե նրանց գործածությունը: Կանգ են առնում պողպատ և չուգուն ձուլող գործարանները: դրա հետևանքով կանգնում են լերկաթի և ածուխի հանքերը: Զե վոր մեկ փութ չուգուն հալելու համար հարկավոր ե միքանի փութ ածուխի: Սրանից կարելի է պատկերացնել՝ թե այդ ճգնաժամն ինչպես ծանր պիտի անդրադառնա ածուխի արդյունաբերության վրա: Պարզ ե, վոր մե-

տաղագործական արդյունաբերության ճգնաժամը, ինչպես տեսնում ենք, տարածվելու յե արդյունաբերության ամենախոշոր և ամենակարենոր ճյուղերի վրա և այդ պատճառով ել ցնցելու յե ամբողջ ժողովրդական տնտեսությունը: Այդպիսի ճգնաժամը տեղում և մեկ, յերկու տարի, յերբեմ ել ավելի: Այնուհետև արտադրած ավելի ապրանքներն աստիճանաբար սպառվում են, արդյունաբերության մեջ նորից կենդանություն և սկսվում, արտադրությունը նորից լայնանում և: Հետո նորից նույն պատկերը արտադրության անընդհատ և վոչ պլանային կարգով լայնանալու հետեւանքով վորոշ ժամանակից հետո ստացվում և ապրանքների գերարտագրություն, նորից ապրանքները կուտակվում են առանց զնորդ ունենալու, նորից սկսվում և ճգնաժամը: Մի վորոշ ժամանակից հետո անխօսափելի կերպով սկսվում և ճգնաժամը: 1914—18 թվականների պատերազմից առաջ ճգնաժամերը կրկնվում ենին յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ:

Արտադրության անարխիայի զոյության պայմաններում նզնամամեր կապիտալիստական Տնտեսության մեջ անխօսափելի յեներանք անհաշիվ թշվառություններ են բերում իրենց հետ, բազմաթիվ ձեռնաբարկություններ փակվում են, հարյուր հազարավոր բանվորներ փողոց են շղթավում: Ահա՝ որինակի համար, թե ինչ հետեւանքներ ունեցավ կապիտալիստական արտադրության 1907—10 թվականների համաշխարհային կրիզիսը: Հլուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործազուրկների թիվը 1907 թ. 8⁰/₀-ից հասավ 32⁰/₀-ի, իսկ միքանի ճյուղերում նույնիսկ ավելի: Որինակ՝ շինարարական արդյունաբերության մեջ հասավ 42⁰/₀-ի, ծխախոտի արդյունաբերության մեջ 55⁰/₀-ի: Դերմանիալում մի քանի ամսում գործազուրկների թիվը կրկնապատկվեց: Թե ինչ չափով կրճատվեց արտադրությունը, կարելի յե գաղափար կազմել այն բանից, վոր Միացյալ Նահանգներում չուգունի հալոցքը մեկ տարում 26 միլիոն տոննից իջավ մինչև 16 միլիոն տոննի (տոննը=61 ֆթի): Եթե վերջապես կապիտալիստական տնտեսության մեջ ճգնաժամերն առաջանում են վոչ թե նրանից, վոր շատ են արտադրում քան թե հասարակությունը կարիք ունի, այլ նրանից, վոր հասարակությունը հնարավորություն չունի գնելու արտադրանքը, նրա գնողունակությունը նվազ է և թուլլ:

§ 2. Ա՞վ և հաղբողը մրցման սիցոցին կապիտա-
լիսական կարգերում.

Ուրեմն կապիտալիզմի որով շուկայում տե-
ղի լի ունենում անընդհատ պայքար, մրցում:
թօսն սուպելու-
թօնուները. Այդ պայքարին մասնակից են տարրեր ձեռ-
նարկություններ. խոշոր մեքենայական, միջակ,
մանր-կիսատնայինգործական և վերջապես ձեռքի աշխատանքով
ապրանք արտադրող արհեստավորներ և տնալնագործներ. Միգ-
քեր են սրանցից հաղթող գուրս գալիս այս պայքարում: Հաղ-
թում են նրանք, ովքեր ունեն այս կամ այն տռավելությունը:
Իսկ առավելություններ ունեցողները խուզու ձեռնարկություն-
ներն են:

Ինչումն են կալանում խոշոր ձեռնարկությունների այդ առա-
վելությունները:

Նախ՝ մեքենայական տեխնիկաի տռավելությունները: Մե-
քենան կրճատում և ապրանքի արտադրության համար անհրա-
ժեշտ աշխատանքի քանակը, հետեւարար ապրանքն ստացվում և
հժանան: Առաջին գլխում մենք արդեն տեսանք, թե ինչպիս առա-
ջին մանաժագործական մեքենան փոխարինեց 12 ջուլհակների:
Վերցնենք ուրիշ որինակի հոչկի արտադրության մեջ գործա-
դրվում և հետեւալ քանակությամբ աշխատանք՝

Մեխերը խփելու համար—մեքենայով—15 րոպե, ձեռքով—40 րոպե
Մանսովկայի համար — 3 » 3 » » 80 »
Պադոշն ամրացնելու համ. » 3 » » 80 »

Ահա, թե վորպիսի հսկայական տարրերություն կա:

Մեկ բանվորի արտադրողականությունը զանազան ձեռ-
նարկություններում նույնպես տարբեր է: Ռուսական խոշոր ար-
դրունաբերության մեջ մինչ պատերազմյան շրջանում մեկ բան-
վորն արտադրում եր 1828 ոռորլի, մանր արդյունաբերության
մեջ—588 ոռորլի, իսկ տնայինգործը կամ արհեստավորը գու-
ղում—196 ոռորլի:

Ինչպես տեսնում ենք, խուզու արտադրությունն ունի առավե-
լյուրյուններ մանր արտադրության հանդեպ՝ մեքենայական տեխնի-
կայի սգաւարութման տեսակիցից: Իսկ մեքենայական տեխնիկան
ոգտագործել կարող են միայն խոշոր ձեռնարկությունները, խո-
շոր կապիտալիստները, քանի վոր մանր արտադրության համար
մեքենաները թանգ և անմատչելի լեն: Մեքենաներ կիրառել կա-

րելի յե միայն ապրանքների մասսայական արտադրության միջոցին, այսինքն՝ խոշոր ձեռնարկության մեջ։ Ինչ պիտի անեմեքնան արհեստավորը, յեթե նա կապիտալ չունի մասսայական արտադրություն սկսելու համար (մեծ քանակով հումուզ գնելու և այլն)։

Խոշոր արդյունաբերությունն ուրիշ առավելություններ ևս ունի, Բանկը վարկ և տալիս ավելի շուտ խոշոր ձեռնարկությանը, քան թե մանրին։ առաջինը, ինչպես ասում են, ավելի վստահելի յե, նրան վարկ տալն ավելի քիչ և վտանգավոր։ Մեծ քանակով հումուզ գնելը նույնպես ավելի ձեռնարկ յե, ինչորին հայտնի յե, վոր մեծ քանակությամբ ապրանք գնելիս ավելի մեծ զեղջեր են անում, ավելի հժան և գնվում։ Խոշոր ձեռնարկությունը, բանկային վարկերից ոգտվելով, առավելություններ ունի նաև իր ապրանքն սպառելու համար։ Նա կարող և ունենալ իր խանութները, իր հերթին վարկ կարող և տալ իր գնորդներին և այլն և այլն։

ԽՈՇՈՐ ԱՐԴՅՈՒՆԱ-
ԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱ-
ՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱ-
ՆԱԿ ՔԱՅՔԱՅՈՒՄ Ե
ՄԱՆՐԻՆ։
ԱՊՐԱՆՔԸ,

Ի՞նչ և մնում անել տնալնապործին, յեթե նրա ապրանքը չի վաճառվում շուկայում։ Մնում ե ձգել արտադրությունը և գնալ վարձվելու կապիտալիստական գործարանում։ Այդպիս ել լինում ե։ Որինակ, ցարական Խուսաստանում 1866 թվին ֆարբիկաներում աշխատում ելին 94000 բանվոր, իսկ 30 տարուց հետո, 1895 թվին—242000 բանվոր։ Միենուն ժամանակամիջոցում տներում աշխատող բանվորների թիվը 66000-ից հասավ 20000-ի։

Խոշոր արտադրության հետ մրցելու միջոցին քայլավում են վոչ միայն տնալնագործներն ու արհեստավորները, Քայլավում են նաև մանր և միջակ կապիտալիստական ձեռնարկները։ Դա հասկանալի յե, Սրանց վերաբերմամբ հսկա ձեռնարկությունը նույն առավելությունն ունի, ինչ տնալնագործի վերաբերմամբ, միայն ավելի փոքր չափով։ Տարբերությունը միայն նրանումն ե, վոր մանր ու միջին կապիտալիստական ձեռնարկությունները մը փոքր ավելի յեն դիմանում մրցման։ Այստեղ վորոշ վերապահումներ պիտի անենք։ Պատահում ե, վոր արհես-

տավորն ել լեռբեմ ավելի լե զիմանում մրցման, քան մանր կապիտալիստը. բայց արհեստավորը զիմանում ե ի հաշիվ իր սեփական կազմալուծման, աղքատության, անվերջ լեռկարացնելով իր բանվորական որբ: Իսկ մանր կապիտալիստն ինքը չի արտադրում, իսկ վարձու բանվորներին հարկադրել անվերջ աշխատելու նա չի կարող, ինչպես արդ անում ե արհեստավորն իր վերաբերմամբ: Բայց անկասկած ե մի բան. խոռոր արտադրությունը կապիտալիզմի ժամանակ բայց անվանում յել կլանում ե մանրին յել ավելի լայնանում ե նրա հաւաին:

Խոշոր արտադրությունն անընդհատ աճում արտադրությունը և լայնանում ե: Ծուլսաստանում արդյունաբենականությունն ուշ սկսեց զարգանալ, մի 50—60 (Կունաթաւաւային), տարի սրանից առաջ: Սկզբնական շրջանում գերազանցում ելին մանր ձեռնարկությունները փոքրաթիվ բանվորներով: Բայց կարճ ժամանակում խոշոր արտադրությունն առաջին տեղը գրավեց: Պատերազմից առաջ հետեւյալ դրությունն իր տիրում:

Մինչև հիսուն բանվոր ունեցող ձեռնարկներում աշխատում ելին բոլոր բանվորների թվի $11^0/0$ -ը.

»	200	»	»	»	»	$18^0/0$ -ը.
»	1000	»	»	»	»	$33^0/0$ -ը.
1000-ից ավելի	»	»	»	»	»	$37^0/0$ -ը.

Հսկալական ձեռնարկներում (1000 բանվորից ավելի) աշխատում ելին բոլոր բանվորների մեկ լեռը մասից ավելի: Ունենալով բարձր արտադրողականություն, այս խոշոր ձեռնարկությունները տալիս ելին ամբողջ արտադրանքի կեսը:

Արտադրության այսպիսի կենտրոնացումը խոշոր ձեռնարկություններում միաժամանակ մանր արտադրության դերի նվազելու հետ միասին կոչվում ե արտադրության համակենտրոնացում, կոնցենտրացիա:

Կապիտալիստական արտադրության զարգացումը, իր անարխիայով, մրցւում յեկ անխուսափելի նզնաժամերով, տանում ե դեպի մանր տեսական միասին կոչվում ե արտադրության համակենտրոնացում:

Այսպիսով կապիտալիստական արտադրությունն արհեստավորության մեջ իշխում ե անարխիան—անկազմանական կերպավածությունը, վորը ստեղծում ե ամբողջ թօնությունը, ժողովրդական տնտեսության համար կորըստաբեր և ծանր ճգնաժամեր: Այսպիսի դրության պատճառները

կապիտալիզմի որոք վերացնել անհնարին և Ալդ պատճառով արտադրության անարխիան, նրա անկազմակերպվածությունը կապիտալիստական տնտեսության առաջին հակասությունն եւ կապիտալիզմի լերկորորդ հակասությունը, դա հակասությունն եւ աշխատանքի և կապիտալի, պրոլետարիատի և կապիտալիստաների գոտակարգի միջն։ Առաջիններն իրենց աշխատանքով ստեղծում են բոլոր հարստությունները, լերկորորդները, չնորհիվ արտադրության միջոցների կենտրոնացմանն իրենց ձեռքում, յուրացնում են այդ հարստությունները։ Վաղքը շահույթի լետեից, կապիտալիստական տնտեսության այդ գլխավոր շարժիչ ուժը շարունակ մղում և կապիտալիստաներին անդադար ճնշելու բանվոր դասակարգին, նրա աշխատավարձը նվազեցնելու և պատասխան դրան կապիտալիզմի զարգացման հետ միասին աճում ու զարգանում և բանվոր դասակարգի պայքարը կապիտալիզմի դիմ։ Այս հակասությունը և այս պայքարն աշխատանքի և կապիտալի միջև—նույնպես վերանալ չի կարող կապիտալիզմի որոք։ Բանվորները չեն կարող հաշտվել կապիտալիստական շահագործման հետ։ Իսկ կապիտալիստաները չեն կարող նրանից ազատվել, քանի վոր դա կապիտալիզմի հիմքն եւ։

Ցերորդ հակասությունն այն ե, վոր արտադրությունն ունի հասարակական բնույթ, իսկ յուրացումը՝ անհատական։ Սա կապիտալիստական հասարակակարգի հիմնական և գլխավոր հակասությունն եւ։

Այս հակասությունները ծագում են հետեւալ, կապիտալիզմի համար բնորոշ գրություննից։ Ապրանքալիին տնտեսության միջոցին յուրաքանչյուր մի տնտեսություն—ձեռնարկություն արտադրում և վոչ թե անմիջապես իրեն համար, այլ մյուս տնտեսությունների, ամբողջ հասարակության համար։ Արտադրությունը կրում և հասարակական բնույթ, Բայց կապիտալիստը վոչ մի գործ չունի հասարակության հետ, նրա համար գլխավորը—շահույթի նա տերն և արտադրության միջոցների և շահույթի լետեից վազելով, նա ավելի ու ավելի լե կենտրոնացնում իր ձեռքում արտադրության միջոցները։ Շահույթի լետեից ընկնելով, նա շահագործում է վարձու աշխատանքը, կովում, մրցում և մյուս կապիտալիստների հետ, առաջ ըերելով դրանով անկազմակերպվածություն և անարխիա տնտեսության մեջ։ Իսկ արտադրության միջոցներին տիրանալը նրան հնարավորություն և տալիս յուրացնելու պրոլետարիատի աշխատանքի պտուղները, բանվորների վարձու աշ-

հաստանքով ստեղծված հարստությունը։ Ստացվում է հակասություն մի կողմից արտադրության հասարակական բնույթի և մյուս կողմից կապիտալիստների դասակարգի կողմից ստեղծված հարստությունների անհատական լուրացման միջն։

Այս հակասությունները, վոր շատ ծանր են հասարակության մեծամասնության համար, կարող են վերանալ միմիալն կապիտալիզմի տապալումով, իերը արտադրության միջոցները կանցնեն հասարակությանը, կանցնեն նրանց ձեռքը, ովքեր ստեղծում են այդ հարստությունները։ Միակ լելքը—սոցիալիստական հեղափոխությունն է։

Կապիտալիզմն ինքն են նախապատրաստում իր կործանումը։ Կապիտալիստական արտադրության աճման հետ զուգընթաց աճում և և բանվոր դասակարգը, վորի վրա առանձնապես ծանր են անդրագանում կապիտալիստական հասարակակարգի հակասությունները և վորը ամենքից ավելի յէ զգում կապիտալիստական շահագործման ծանրությունը։ Միակ լելքն այս դրությունից բանվոր դասակարգի համար—դա կապիտալիզմի տապալումը և սոցիալիստական հասարակության կառուցումն է։ Այս նպատակն և զնում իր առաջ բանվոր դասակարգը կապիտալիզմի գեմ մզած իր կովում։ Բանվոր դասակարգը—կապիտալիզմի զերեղմանափորն է, իսկ ալդ գերեզմանափորներին ծնում և ինքը՝ կապիտալիզմը։

Միևնույն ժամանակ կապիտալիզմ ստեղծում է նախադըրքալներ սոցիալիստական կարգերին անցնելու. կապիտալիզմի որոք բարձրանում և արտադրության տեխնիկան, ինքն արտադրությունը խոշորանում է։ Խոկ արտադրության միջոցների կենտրոնացումը կապիտալիստաների փոքրաթիվ դասակարգի ձեռքում հեշտացնում և սոցիալիստական պրոլետարիատին տիրելու նրանց և ոգտագործելու սոցիալիստական շինարարության համար, այսինքն վորքան շատ և արտադրությունը համակենտրոնանում, այնքան հեշտանում և նրա հանրախնացումը (հանձնումը ամբողջ հասարակությանը), դյուրին և դառնում արտադրության կառավարչությունը կապիտալիստաների դասակարգի ձեռքից առնելին ու ամբողջ հասարակության ձեռքը հանձնելը։

Այսպիսով կապիտալիզմի որով ստեղծվում են անլուծելի հակասություններ, վորոնք մի կողմից նախապատրաստում են նրա կործանումը և մյուս կողմից ստեղծում են նախադրյալներ կապիտալիստական կարգերից սոցիալիստական կարգերին անցնելու։

§ 3. Գոյություն ունի՝ արդյոք պայման ԽՍՀՄ սոցիալիստական արդյունաբերության մեջ.

ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ՝
ԱՐԴՅՈՔ ՄՐՑՈՒՄ
ՊԵՏԱՐԴՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ մեջ այն զրությունից, վոր փոքր ինչ վերև մենք քննեցինք
ՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐ-
ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻ-
ԶԵՎ:

Ինչպէս և տարբերվում զրությունը ԽՍՀՄ
պետարդունաբերության մեջ այն զրությունից, վոր փոքր ինչ վերև մենք քննեցինք
ԽՍՀՄ պետարդունաբերության բոլոր ձեռ-
ՆԱԲԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ միայն մեկ տեր ունեն—
բանվոր դասակարգը, վորը հանձինս իր պե-
տության և նրա մարմինների կառավարում և արտադրությունն
ու առևտուրը: Ազգ պատճառով մրցում, վորի նպատակն և շու-
կալից դուրս շպրտել, քայլայել հակառակորդ ձեռնարկությանը,
մեր պետձեռնարկությունների միջն գոյություն չունի: Բայց կա
մի ուրիշ բան: Նրանց միջն կա մրցակցություն (соревнование)՝
սպառողին լավորակ և եժան ապրանք տալու: Խորհրդային իշ-
խանությունն ուժեղ կամպանիա լի տանում ապրանքների հատ-
կությունը լավացնելու համար: Բայց, կասեն շատերը, այդպիսի
մրցակցություն գոյություն ունի նաև կապիտալիստական ձեռ-
նարկությունների միջն: ԶԵ վոր կապիտալիստները միմյանց հար-
վածում են իրենց ապրանքների եժանությամբ և լավորակու-
թյամբ: ԶԵ նշանակում արդյոք, վոր մեր ձեռնարկությունների
միջն տեղի ունեցող ալդ մրցակցությունը ապրանքների եժանու-
թյան և լավորակության համար նույն տուր ու դմիոցն ե, ինչ
տեղի լի ունենում շուկայում մրցակցող կապիտալիստական ձեռ-
նարկությունների միջն: Վայ, չի նշանակում:

Կրկնում ենք. մեր բոլոր ձեռնարկությունների տերը մեկ
և պետականությունը: Սա շահագրգոված ե, վորպեսզի բոլոր ձեռնար-
կություններն աճեն ու զարգանան և վոչ թե մրցության միջո-
ցով թուլացնեն միմյանց: Բայց միևնույն ժամանակ պետությու-
նը, արդյունաբերության տերը շահագրգոված ե, վոր բոլոր ձեռ-
նարկություններն առաջ գնան տեխնիկապես կաաբերելագործվե-
լով, արտադրողականությունը բարձրացնելով, ապրանքների
հատկությունը լավացնելով և նրանց գներն իջեցնելով: Իսկ մըր-
ցակցությունը և շուկայում գնորդի հանդեպ այս հարցում մեծ
նշանակություն ունի: Ազսպիսով, խորհրդային սիստեմի պայման-
ներում, խորհրդային ապրանքային անտեսությունը չի ճանաչում
մրցության այն դաժան և այլանդակ ձեռքը, վորպիսիները նկատ-
վում են կապիտալիստական ապրանքային անտեսության մեջ:

Ներկում մենք տեսանք, վոր ԽՍՀՄ արտադրությունն ապ-
րանքալին բնուլիթ ունի: Արդյունաբերության արտադրած ապ-
րանքները և գյուղացիական տնտեսության արտադրած գյուղա-
տնտեսական մթերքները փոխանակվում են շուկայում: Նշանա-
կում և արդյոք այդ, վոր մեզ մոտ շուկան և կարգավորում տըն-
տեսությունը: Նշանակում ե, վոր մեզ մոտ նույնպես արտադրու-
թյան անարխիմ յէ, ինչպես և լուրացանչուր մի տնտեսության
մեջ, վորը կարգավորվում ե շուկայի նման կուլը և տարերային
ուժով:

Քննենք այս հարցը:

Մեր տնտեսության կանոնավորման, դեկավարման գործում
դեկավար դեր և կատարում պլանայնությունը, սակայն տարե-
րային, շուկայական կարգավորումը գեռմս շարունակում և գո-
լությունը ունենալ: Պլանային, ալիքնեն պետական կանոնավորման
տեսակարտը կշիռը և դեկավար դերը աստիճանաբար ուժեղանում
ե, իսկ շուկայի տարերային կանոնավորումը թուլանում—վերա-
նում ե: Մեր պայմաններում, յերբ տնտեսության հրամանատա-
րական բարձունքները գտնվում են պետության ձեռքում, մենք
կարող ենք արտադրությունը կարգավորել գիտակցորեն (և վոչ
թե տարերայնորեն), մենք կարող ենք գիտակցորեն կազմել մեր
տնտեսական պլանը: Անարխիան մենք բոլցանում յեկ սահմանա-
փակում ենք, արտադրությունը պլանային ձեզով կարգավորելով:
Ի՞նչ և նշանակում այդ: Ինչպես մենք տեսանք, համարլա ամ-
բողջ արդյունաբերական արտադրությունը պրոլետարական պե-
տության ձեռքումն ե գտնվում: Այս հանգամանքը մեզ թուլա-
տրում ե կազմելու արտադրության այնպիսի պլաններ, վորոնք
հաշվի յեն առնում շուկայի բոլոր պահանջները: Խորհրդային իշ-
խանության պլանային մարմինները լուրացանչուր տարի, հաշ-
վի առնելով շուկան, կազմում են արտադրության պլաններ. այս
ապրանքից պետք ե արտադրվի ալսքան, մլուս ապրանքից—
ալսքան: Իհարկե, շատ դժվար ե շուկայի հաշվառումը, սխալներ
լինում են, կարող ե պատահել, վոր մի ապրանք քիչ արտա-
դրվի, մլուս գերարտադրվի: Շուկայում այս բոլորը պարզվում,
ստուգվում ե, վորովհետև շուկան մնում ե վորպես փոխանակու-
թյան միջոց և այդ փոխանակությունը կարգավորողը: Պլանի
միջոցով մենք ձգտում ենք հասնել այն բանին, վոր շուկայում
փոխանակության միջոցին պահանջը համապատասխանի առա-
ջարկությանը, վոր այդ հավասարումը կատարվի վոչ տարերայ-

Նորեն, այլ գիտակցական հաշվով: Շուկայի կարգավորող զերը
միմիսայն այն ժամանակ ամբողջովին կվերանա, իերը շուկայում
փոխանակելու փախարեն կլինի հաստրակության արտադրած ար-
դյունքների պլանային բաշխում, իսկ ինքը շուկան կմեռնի: Այս
կլինի սոցիալիստական կարգերում:

Թննենք այժմ պետարդյունաբերությունն իր
ԽՍՀՄ ՊԵՏԱՐԴՅՈՒ- ամբողջությամբ, նա ամբողջովին բանվոր դա-
ՆԱԲԵՐԻՑՑԱՆ ՍՊ- սակարգի ձեռքում ե. այն դասակարգի, վորը
ՑԻԱԼԻՍԱԿԱՆ ԲԵ- արտադրողն ե բոլոր հարստությունների: Ար-
ՆՈՒԹՅԸ:

տաղբության անարխիային ալստեղ փոխարի-
նում ե պլանային արտադրությունը, շուկայի կռւյր ուժը նույն-
պես թույանում ե արտադրած արդյունքների բաշխման պլանա-
յին հաշվառումով: Զկա մեր պետարդյունաբերության մեջ նաև
բանվորների շահագործում, վորովհետեւ նրա մեջ չկան իերկու-
դասակարգեր, այլ՝ մեկ դասակարգ, բանվոր դասակարգը, վորը
տիրում ե արտադրության գործիքներին և միջոցներին և վորը
չի շահագործվում, վորովհետեւ այն բոլորը, ինչ ստացվում ե աշ-
խատավարձից ավելի, բոլորը զնում ե արդյունաբերության հե-
տագա ծավալման, այսինքն ամերող բանվոր դասակարգի զրու-
թյունը բարեխափելու վրա: (Ստալին. Կ. Կ. (բ) XIV համագու-
մարում արտասանած ճառից):

Մեր արդյունաբերությունը չի քայլայում մանր տնտեսու-
թյունը, նույն թվում նաև գլուղացիական տնտեսությունը, այլ
ընդհակառակը, նա սոցիալիստական պրոլետարիատի ձեռքում
ծառայում ե իերեւ միջոց այդ մանր տնտեսության սոցիալիստա-
կան վերափոխման: Պետարդյունաբերությունը հանդիսանում է
սոցիալիստական շինարարության հիմքը, բազան և սոցիալիզմը
կառուցող պրոլետարիատի դիկտատուրայի հինարանը:

Մրանք բոլորը մեր պետարդյունաբերությունը դարձնում
են, ինչպես ընկ. կենինն ե ասում, «հետեւղական սոցիալիստա-
կան տիպի ձեռնարկություններ»:

Կ. Կ. (բ) XIV համագումարը հաստատեց, վոր ԽՍՀՄ արդյու-
նաբերությունը հետևողական սոցիալիստական բնույթ ունի գրանով
հետ մղեց միքանի ընկերների, վորոնք կասկածում ելին դրա մեջ:

Այսպիսով սոցիալիստական արդյունաբերու-
թյան ներսում ներքին պայքար գոյություն չու-
կան ՏՄՐԵՐԻ ՊԱՅ- նի: Բայց չե՞ վոր բացի սոցիալիստական ար-
քարց ԽՍՀՄ ՏՆՏԵ- գլունաբերությունից ԽՍՀՄ մեջ գոյություն ու-
ՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ: նի նաև մասնավոր-կապիտալիստական ար-
դյունաբերություն: Ճիշտ ե, նրա կշռից իերկու ընդհանուր տնտե-

սութիան մեջ խոշոր չե, բայց և այնպես նա կա, գոյություն ունի և նրա ու սոցիալիստական արդյունաբերության միջն պարքար տեղի ունի: Այդ պարքարը կատարվում է շուկայում, վորտեղ սպառվում են ինչպես պետարդյունաբերության, նույնպես և մասնավոր—կապիտալիստական ձեռնարկների ապրանքները: Այստեղ պետարդյունաբերության կողմն են խոշոր արտադրության բոլոր առավելությունները: Շուկայում մեր պետարդյունաբերությունը մասնավոր կապիտալի հանդեպ գուրս և գալիս մեկ միացյալ ֆրոնտով: Այնպիսի մի հսկայի դիմաց, վորը տալիս ե ամերող արտադրության $\frac{9}{10}$ -ը, մանր մասնավոր-կապիտալիստական ձեռնարկություններին զժվար և պարքարելը: Սակայն այդ բոլորը չե, ԽՍՀՄ տնտեսության հրամանատարական բարձունքները գտնվում են պրոլետարական պետության ձեռքում: Մասնավոր կապիտալի դեմ մղած պարքարում արդյունաբերությունը մենակ չի մնում, նրան հզորապես ոգնում են այդ հրամանատարական բարձունքները: Պետարդյունաբերությունը պրոլետարիատի դիկտատուրալի հենարանն ե և մեր լերկրի ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հիմքը: Այդ պատճառով պետարդյունաբերության պարքարը մասնավոր-կապիտալիստական արդյունաբերության հետ—շուկայի համար մղվող այն սովորական պարքարը չե, վորպիսին մենք տեսնում ենք կապիտալիստական կարգերում: Այստեղ պարքարում են տնտեսության սոցիալիստական տարրերը մասնավոր-կապիտալիստականի հետ, այսեղ կոփիկը տեղի ունի տնտեսության նոր սոցիալիստական ձեւերի յեվ կապիտալիզմի մնացորդների միջնվագ:

Ո՞վ է հաղթում այս պարքարում:

Հաղթում են սոցիալիստական տարրերը: Կերենում բերած թվերը մասնավոր կապիտալիստական արդյունաբերության չափի նվազման մասին հաստատում են այդ: Այլ կերպ ել լինել չի կարող, իերը սոցիալիստական արդյունաբերության կողմն են խոշոր արտադրության բոլոր առավելությունները, իերը իշխանությունը գտնվում է պրոլետարիատի ձեռքում, վորը սոցիալիզմ և կառուցում, վորի ձեռքումն են գտնվում տնտեսության բոլոր հրամանատարական բարձունքները—բանկերը, իերկաթուղիները, առեսուրը և այլն: Մասնավոր կապիտալիստական տարրերի վճռողաբար գուրս մղելը, մանր զյուղացիական տնտեսության վերակառուցումն ու վերափոխումը—անա սոցիալիստական արդյունաբերության զարգացման, սոցիալիզմի կառուցման ուղին:

1. Ի՞նչպես ե կապիտալիստական տնտեսության մեջ պահանջը հավասարակշռում առաջարկության հետ:
2. Ինչու ին կապիտալիստական արտադրության մեջ տիրում անարխիա:
3. Ի՞նչ հետևանքներ են ունենում անարխիան և մրցումը կապիտալիստական տնտեսության մեջ:
4. Ի՞նչ առավելություններ ունի խոշոր մեքենայական արտադրությունը մանր արտադրության հանդեպ:
5. Ինչու ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ հնարավոր ե անտեսական կյանքի հաջող պլանային զեկավարությունը:
6. Ինչու ԽՍՀՄ մեջ չկա պայքար շուկայում պետարդյունաբերության ձեռնարկների միջև:
7. Ինչու պրոլետարիատի դիկտատուրայի միջոցին անխուսափելի ին տնտեսության սոցիալիստական տարրերի հաղթանակը՝ մասնավոր կապիտալիստականի վերաբերմամբ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՌՈՐԴ

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԿԱՊԻՏԱԼԻՍԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳՈՒՄ ՅԵՎ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Մինչ այժմ մենք քննում ենք գլխավորապես ԳԼՈՒԽ ԲՈՎԱՆԴԱ-
ԿՈՒԹՅՈՒՆԸ, արդյունաբերական արտադրությունը, Մենք տեսանք, վոր կապիտալիզմի որով արդյունաբերության մեջ մեքենայական տեխնիկայի զարգացումը և ձեռնարկությունների խոշորացումը քայլարում են մանր տնտեսությունները, վորոնք կլանվում են խողոր տնտեսությունների կողմից: Այժմ մենք այդ յեզրակացությունները կիրառենք գլուղացիական արտադրության վերաբերմամբ: Մենք կքննենք, թե ինչպես խոռոշոր տնտեսությունը ճնշում և քայլարում ե մանր տնտեսությունները նաև գլուղացիական արտադրության մեջ: Իսկ քանի վոր մանր գլուղական տնտեսությունը գլուղացիական տնտեսությունն ե, ապա զրանով իսկ մենք կպարզենք նաև գլուղացիական տնտեսության վիճակը կապիտալիստական կարգերում: Վերջում մենք կքննենք գլուղացիական տնտեսության վիճակը և նրա զարգացման հեռանկարները ԽՍՀՄ մեջ և կապացուցենք, վոր միմիան կապիտալիզմի ապարատը կարող ե գլուղացիությանը փրկել անխուսափելի քայլարումից:

§ 1. Գլուղացիական տնտեսությունը կապիտալիզմի որով.

Ի՞ն յերկրներում, վորտեղ տիրապետում ե կապիտալը, հողը բաշխված ե շատ անհավասար կերպով, Վերցնենք միքանի որինակներ: Ձրանու կարգերում:

Այն յերկրներում, վորտեղ տիրապետում ե կապիտալը, հողը բաշխված ե շատ անհավասար կերպով, Վերցնենք միքանի որինակներ:	Ձրանու կարգերում:
--	-------------------

29 հազար հողատերեր ունեն	16270 հազար հեկտար	¹ հող
118	>	>
746	>	>
4612	>	>
	16270	>
	14825	>
	13787	>

¹ 1,09 հեկտարը = 1 դեսյատինի:

Այս թվերը ցույց են տալիս, վոր ամբողջ հողի կիսից ավելին պատկանում ե խոշոր հողատերերի մի փոքրաթիվ խմբակի, վորը կազմում ե բոլոր հողատերերի միայն $\frac{1}{35}$ մասը:

Ռումինիայում մինչև պատերազմը $4\frac{1}{2}$ հազար ամենախոշոր իշխան-կալվածատերեր, վորոնք կազմում ենին բոլոր հողատերերի $\frac{1}{250}$ մասը, իրենց ձեռքում ունենին ամբողջ հողի համարյա թե կես մասը: Ցարական Ռուսաստանում հողը հետեւյալ կերպ եր բաշխված.

$10\frac{1}{2}$ միլ. չքավոր և միջ. տնտ. ունելին 82.840 հազար հեկտ. հող 1 միլիոն ունեոր տնտես. ունելին 16.350 » » »

$1\frac{1}{2}$ միլ. կուլակային տնտ. ունելին 76.300 » » » 30 հազար կալվածատերեր ունելին 76.300 » » »

Հետեւարար 30 հազար կալվածատերեր ունելին համարյանույնքան, վորքան $10\frac{1}{2}$ միլիոն գյուղացիական տնտեսություններ:

Ուրեմն գյուղատնտեսության մեջ ել նույն պատկերն ե, ինչ արդյունաբերական տրտադրության միջ. կան հազարավոր դեսլատին հող ունեցող խոշոր տնտեսություններ—սրանք կալվածատիրական տնտեսություններն են, կան մանր տնտեսություններ, մինչև տասը գեսաւատին հող ունեցող—սրանք գյուղացիական տնտեսությունների գլխավոր մասսան են կազմում: Այս իերկու ծայրագույն խմբակների միջն կան միջանկալ տնտեսություններ—մանր կալվածատերեր, կուլակներ և այլն:

Ուրեմն գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի որով կան խոռոր, միջին յել մանր տնտեսություններ, նետեկաբար կա նայել խոռոր տնտեսության պայքար մանր տնտեսության դեմ:

Տեսնենք, թե ով է հաղթում այդ պայքարում:

Կար ժամանակ, իերք գյուղացիական տնտեսական գույշականությանը կարող եր ապրել (օճխություն) համարյա թե բոլորովին առանց քաղաքի, Գյուղացին իրեն բոլոր հարկավոր իրերը մշակում բր ինքը՝ իր տնտեսության մեջ կամ փոխանակում մթերքների հետ հենց իր գյուղում և կամ մոտակա գյուղում արհեստավոր-դարբնի, ջուրհակի կամ կողկակարի մոտ: Տնտեսության ալսպիսի տիպը կոչվում ե բնական տնտեսություն (նատուրալ):

Կապիտալիզմի զարգացումը քարտքարեց գյուղացիական բնական տնտեսությունը, դարձրեց նրան ապրանքային:

Ի՞նչ ե նշանակում ալդ:

Այդ նշանակում ե, վոր գյուղացիական տնտեսությունն սկսել ե արտադրել արդյունքներ՝ վաճառելու համար, այսինքն սկսել ե արտադրել գյուղատնտեսական ապրանքներ, ժամանակակից գյուղացիական տնտեսության մեջ նրա գյուղատնտեսական արտադրանքը բաշխվում ե հետեւալ կերպ. 1) մի մասը թողնվում ե ցանքսի համար, 2) մի մասը գնում ե ընտանիքի և անտառապահության համար, 3) մի մասը գնում ե վաճառելու:

Վորքան կուլտուրական և բարձր ե գյուղատնտեսությունը, վորքան նա առաջ ե գնացել պրիմիտիվ, բնական տնտեսությունից, այնքան մեծ ե նրա ապրանքային մասը, այն մասը, վոր շուկա իւ գնում վաճառվելու համար. Մեզ մոտ՝ ԽՍՀՄ մեջ, վորտեղ գյուղատնտեսությունը գեռ ես ցածր ե կանգնած, այսպիսի դրություն ե տիրում:

1923/4 թվին գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը գնահատվում եր 8,821 միլիոն ռուբլի (նախապատերազման գներով). ալդ գումարից ապրանքային մասը կազմում եր 2829 միլիոնը:

1926/7 թվին ամբողջ արտադրանքը—11,901 միլիոն ռուբլի, նրա ապրանքային մասը—4372 միլիոն ռուբլի:

Այս նշանակում ե, վոր ներկալում մեր գյուղատնտեսությունն իր արտադրանքի $\frac{2}{3}$, մասն արտադրում ե վաճառելու համար:

Իսկ բարձր, զարգացած գյուղատնտեսություն ունեցող լեռներում ալդ ապրանքային մասը շատ ավելի մեծ ե: Ամերիկայում $\frac{3}{4}$ -ից ավելի լե, Դանիայում ավելի բարձր:

Ի՞նչ պատճառով գյուղական տնտեսությունը պետք է արտադրի վաճառելու համար:

Նախ՝ այն պահնառով, վոր անում ե գյուղատնտեսական արտգրանքի պահնանջը հաղաքի յեվ արդյունաբերության կողմից:

Քաղաքի ազգաքնակությունը, վորը զբաղվում է արդյունաբերությամբ, առերրով և ալին, անընդհատ աճում ե: Անգլիայում, որինակ, քաղաքի բնակչությունը կազմում է ազգաքնակության $80^0/_{\circ}$ -ից ավելին: Քաղաքի բնակչության համար պահանջվում է ավելի ու ավելի շատ գյուղատնտեսական մթերքներ (սնունդի միջոցներ), ալդ մթերքները քաղաքին տալիս ե գյուղը, հետզհետե լայնացնելով իր արտադրությունը: Իսկ այնպիսի լեռներում, վորպիսին ե ԽՍՀՄ, վորտեղ ազգաքնակության ճնշող

մասն գրադիում և գլուղատնտեսությամբ, իսկ քաղաքի ընակչությունը նրա աննշան մասն և կազմում, գլուղատնտեսության ապրանքային մասն աճում և ինաշխիվ արտահանման ուրիշ լեռներ, այնպիսի լեռներ, ինչպիսին ե ,որինակ, Անգլիայի իր սեփական գլուղատնտեսական մթերքները բավականացնում են միմիայն 2—3 ամիս)։

Մյուս կողմից՝ անդադար աճող արդյունաբերությունը պահանջում և ավելի մեծ քանակությամբ գլուղատնտեսական հումուզ, վուշ, կանեփ, կարտոֆիլ և ուրիշ տեխնիկական կուլտուրաներ, կաշի և ուրիշ շատ մթերքներ, վորոնք ստացվում են գլուղատնտեսությունից։

Յերկրորդ՝ Շնօրհիլ նրա, վոր անում և արդյունաբերական ապրանքների պահանջը գյուղատնտեսության մեջ։ Գլուղատնտեսական արտադրության լայնացումը պահանջում և զանազան մեքենաներ, արհեստական պարարտանկութեր մուծել գլուղատնտեսության մեջ։ Ամերիկայում, որինակ, բոլոր տնտեսությունների մեջ յերրորդ մասն ունեն տրակտորներ, Դանիայում համարյա յուրաքանչյուր մի տնտեսություն ունի սեպարատոր, ել չասենք ուրիշ մեքենաներ—ցանող, հնձող, կալսող և այլն և այլն։ Այս բոլորը գնելու համար գլուղացիական տնտեսությունը պետք և նախապես վաճառի մի բան, ալսինքն պետք և արտադրի վաճառման համար։

Մյուս կողմից՝ աճում են նաև գլուղատնտեսական ապարնակության պահանջները։ Նավթը, ճոթեղենը, շաքարը, վոտնամանը և այլն—այս բոլորը գլուղացին գնում են։ Դնում և այն պատճառով, վոր նրան ավելի ձեռնորու յե վուշը վաճառելը և չիթ գնելը, քան լեթե նա ինքն արդ վուշից քաթան պատրաստի։ Փարբերիկային արտադրանքը շատ ավելի եժան է, քան ձեռքով պատրաստածը։

Յերերրդ—Շնօրհիլ հարկերի, Կար ժամանակ, լեռը գլուղացին հարկը վճարում եր նատուրայով (մթերքներով)՝ հաց, անասուն, թռչուններ և այլն։ Այդ ժամանակները վաղուց անցել են։ Այժմ ամենուրեք գլուղացին իր հարկերը վճարում և դրամով։ Կապիտալիստական լեռկրներում գլուղացիության վրա ընկնող հարկերը չափազանց մեծ են, գլուղացիությունը ստիպված է իր մթերքների նշանավոր մասը վաճառել այդ հարկերը վճարելու համար։

Ահա այն հիմնական պատճառները, վորոնք հարկադրում են գլուղացուն վաճառելու իր մթերքները, ալսինքն գլուղատընտեսությունը դարձնելու ապրանքային տնտեսություն։

ԿՎՊԻՏԱԼԻՒՏԱԿԱՆ
ՀԱՐՄԵՐՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-
ՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

Ապրանքալնության զարգացումը գյուղա-
տնտեսության մեջ կապիտալիստական հասա-
րակակարգում անխուսափելի կերպով բերում
ե իր հետև և կապիտալիստական հարաբերու-
թյուններ—շահագործում:

Ինչնում ե դա կալանում:

Ամենից առաջ գյուղում յերեան ե գալիս առետրական միջ-
նորդը: Ամեն մի գյուղացի ամեն ժամանակ չի կարող իր ար-
դյունքները տանել մոտակա քաղաքի շուկան: Նա վաճառում ե
ավելի ցած գներով այդ միջնորդին: Նույնիսկ լեթե բերում ել ե
քաղաք, ապա եժան գնով վաճառում ե իր մթերքները վաճառա-
կանին, վորը գնելով գյուղացու հացը, արտահանում եր արտա-
սահման կամ մեծ քաղաքներ և դրանից մեծ ոգուտներ եր ստա-
նում: Շատ անգամ միջնորդն ոգտվելով գյուղացու կարիքից,
նրա հացը գնում եր դեռ չհնձած ժամանակ ե, ինչ խոսք, զնա-
րում եր շատ եժան:

Շատ հաճախ գյուղացին իր հարկը վճարելու կամ մեկ ու-
րիշ կարիքի պատճառով ստիպված ե լինում պարտք վերցնել
միջնորդից կամ կուլակից, վորոնք այնպիսի տոկոսներ են բար-
դում, վոր գյուղացին դառնում ե նրանց սարուկը: Յերբեմն գյու-
ղացին աշնանն իր հողը վաճառում ե եժան գնով, իսկ գարնա-
նը կարիքի դեպքում գնում ե ավելի թանգ գնով, կամ փոխա-
րինարար վերցնում ե կուլակից, աշնանը կրկնակի վճարելու
պայմանուի:

Գյուղացիությունն իր ընդհանուր մասսայով սակավահող ե
և ստիպված ե վարձակալական պայմաններով հող վերցնել կալ-
վածատիրոջից: Որինակ՝ ցարական Ռուսաստանի 27 նահանգ-
ներում գյուղացիների $\frac{3}{4}$ մասն ապրում են վարձակալական
պայմաններով վերցրած հողերի արդյունքներով: Յերբ գյուղն
սկսեցին մուտք գործել կապիտալիստական հարաբերություննե-
րը, վարձակալությունն ել կապիտալիստական բնուկթ ընդու-
նեց: Կալվածատերն սկսեց վարձակալ գյուղացուց այնպիսի վար-
ձավար վերցնել, վոր վարձակալին մար միմիայն նրա ապրե-
լու համար անհրաժեշտ միջոցները: Ցարական Ռուսաստանի 28
նահանգներում գյուղացիների լեկամտի 81^0_0 -ը գնում եր հողի
վարձագին վճարելու համար: Ցարական Ռուսաստանում վարձա-
կալությունն ավելի ծանր եր, քան նույնիսկ խիստ զարգացած
կապիտալիստական լերկրներում: Որինակ՝ Անգլիայում վարձա-

կալն իր մաքուր յեկամտի հարյուր ոռուրլուց կալվածատիրոջը վճարում ե քսան ոռուրլի և բատրակներին՝ 50 ոռուրլի, իսկ իրեն մնում ե 30 ոռուրլի, իսկ ցարական Ռուսաստանում վարձակալ գյուղացին իր մաքուր յեկամտի հարյուր ոռուրլուց կալվածատիրոջը վճարում եր չորս անգամ ավելի, այն ե՝ 80 ոռուրլի։ Կամ կարլվածատերն իր հողից հեռացնում ե վարձակալ գյուղացիներին և սկսում ե ինքը վարել իր տնտեսությունը կապիտալիստական յեղանակով, այսինքն աշխատողներ ե վարձում, մեքենաներ և գնում, իսկ արդյունքները վաճառում են Արտիսի դեպքերում գյուղացի վարձակալը կամ դառնում ե վարձու բանվոր կալվածատիրոջ հողի վրա, կամ գնում ե աշխատանք փնտուելու ուրիշ տեղեր, այսինքն նույնպես դառնում ե վարձու բանվոր։

Յեթե ցարական Ռուսաստանի նման յերկրներում գյուղացուց հավելլալ արժեք քամում են առեւտրական միջնորդը, կուլակն ու կարլվածատերը, ապա ավելի զարգացած յերկրներում այդ բանն անում են բանկերը։ Որինակ՝ Ամերիկայում ֆերմերների (ամերիկական գյուղացիների) համարյա թե բոլոր հողերը դրավ են դրված բանկերում բարձր տոկոսներով։ Ֆերմերն այնպես խճճած ե բանկերի կողմից, վոր իր տնտեսության վաստակի մեծ մասը վճարում ե բանկերին։

Կապիտալիստական շահագործական հարագությունները բերությունները, մուտք գործելով գյուղ, տարբեր պայմանների մեջ դրին գյուղացիության զանազան խավերն ու գյուղական տնտեսությունների զանազան տիպերը։ Խոշոր կալվածատիրական ձեռնարկությունները, մուտք գործելով գյուղ, տարբեր պայմանների՝ վարձու բանվորներով և հողի մեքենալական մշակությամբ։ Հասկանալի լի, վոր այսպիսի ձեռնարկությունն ունի բոլոր առավելությունները՝ հանդեպ գյուղացիական մանր տնտեսության։ Հողի մեքենալական մշակության միջոցին գյուղատնտեսական արդյունքներն ավելի եժան են նստում։ Կալվածատերն իր արտադրանքը կարող ե վաճառել այն ժամանակ, յերբ դա իրեն ամենից ձեռնառու լի։ Նա իր ապրանքը կարող ե յերկաթուղով փոխադրել խոշոր քաղաքները կամ նույնիսկ արտասահման։ Վերջապես նրան ոզնության են գալիս բանկային վարկերը, վորոնք անմատչելի լին գյուղացիական մանր տնտեսություններին։ Գյուղատնտեսուրյան մեջ, ինչպես յել արդյունաբերուրյան մեջ, դիմանում են խոռոր ձեռնարկություն-

Ենրք, վորովմետեկ նրանք ունեն շատ առավելուրյուններ մանր տրն-
տեսուրյունների հանդեպ:

Տեսնենք, թե ինչպես և ազգում կապիտալիստական հարա-
բերությունների մուտքը գյուղացիական տնտեսության վրա:
Աստիճանաբար առաջ են գալիս տնտեսության յերեք տիպեր՝
չփափորական, միջակ և կուլակային տնտեսություններ: Տնտե-
սության այս յերեք տիպերի զարգացման ուղիները տարբեր են:

1. Չքափորական տնտեսությունը, լինելով սակավահող և
հարկերով ճնշված, աստիճանաբար աղքատանում և կազմալուծ-
վում եւ: Չքափոր գյուղացու համար դժվար և մեքենա ձեռք բե-
րելը, չունի աշխատող անասուններ: Անբերրիությունն ու անտ-
տունների կորուստը վերջնականապես քայլքայում են չքափորին,
ստիպում են նրան ճգել հողը, կամ բատրակ մտնել և կամ գնալ
քաղաք աշխատանք փնտուելու:

2. Միջակ տնտեսությունը նույնապես անկալուն եւ: Նա կաշ-
կանզգում և առետրական միջնորդների և կուլակների կողմից
ստրկացուցիչ պայմանների ամրող մի ցանցով և հետզհետե ա-
վելի ու ավելի յեւ ուժեղանում նրա կախումը կուլակից: Միջակ
տնտեսությունների մի փոքր մասը կարողանում է ազստվել այդ
կախումից և աճելով, դառնում ե կուլակային տնտեսություն,
իսկ մնացած մեծ մասն աստիճանաբար քայլքայվում ե ու նրան
սպառնում են նույն հետեանքները, ինչ չքափորական տնտե-
սություններին:

3. Կուլակային տնտեսությունը շահագործում է չքափորնե-
րին և միջակների մի մասին, աստիճանաբար ամրանում ու լայ-
նանում ե, կլանելով չքափորական քայլքայված տնտեսություն-
ներին: Այդպիսի տնտեսությունները կապիտալիստական բնույթ
ունեն ու կառուցվում են բատրակների և չքափոր գյուղացիու-
թյան շահագործման վրա:

Գյուղացիական տնտեսության զարգացման այս ուղին դիմ-
վում եր մեզ մոտ՝ ցարական Ռուսաստանում, դիտվում ե նաև
բոլոր կապիտալիստական յերկրներում:

Տնտեսական ալսպիսի շերտավորումը իր
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒՅԹՅՈՒՆՆ ԱՆՑԵ-
ԼԱՆԵԼԻ ՑԵ ԿԱՊԻՏԱ-
ԼԻԶՄԻ ՈՐՈՎ:

Կապիտալիստական գեկտատուրայի նեցուկն ե գյու-
ղում: Իսկ գյուղացիության ճնշող մասսան յենթակա յեւ այդ դիկ-

տատուրալի տնտեսական և քաղաքական ձնշմանն ու հարստահարմանը. Այսպիսի պարմաններում գյուղացիության հիմնական մասսան աստիճանաբար քարավում, աղքատանում, պրոլետարիզմի լեռնթարկվում (դառնում և պրոլետար—վարձութանվոր), Ահա թե ցարական Ռուսաստանում ինչպես եր պակասում գյուղացիության անասունների թիվը՝

Ամեն մի հոգուն ընկնում եր	1905 թ.	1910 թ.
Զի	25	20
Խոշոր լեղջուրավոր անասուն .	39	30
Վոչխար	57	40
Խոզ	11	9

Կապիտալիստական զարգացած լերկրներում գյուղացիների կախումը կապիտալից այնքան խոշոր է, վոր գյուղացիությունն ելապես, հաճախ նույնիսկ իր սեփական հողի վրա հանդիսանում և բանկերի կամ կալվածատերերի բառակը, ամբողջովին աշխատում և նրանց համար Բանկերն են թելադրում գյուղատրնտեսական մթերքների գները՝ համեմատ իրենց շահերի և դրանով քայլարում են գյուղացիներին. Որինակ, 1922 թ. ամերիկական կապիտալիստները հացի ցածր գներով քարավաեցին մեկ միլիոնից ավելի ֆերմերների:

Կապիտալիստական հասարակակարգում զյուղացիության նիւթեական մասսայի դրաւրյունն անյելանելի յէ: Կապիտալը տիրապետում է զյուղին, բայց յում է մանր զյուղացի արտադրողին, դարձնում է նրան վարձակալ, բատրակ կամ դուրս և տարտում դեպի աշխատնի պահեստի բանակը:

Լեռնը գրում եր. «Կալվածատերերի և կապիտալիստների տիրապետության որոք, միջակ գյուղացիներից շատ քչերը, գուցե միայն հարյուրից մեկը, ձեռք ելին բերում կայուն բարեկեցություն, այն ել կուլակ դառնալով և չքավորության վզին նստելով: Իսկ միջակ գյուղացիների ահագին մեծամասնությունը կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տակ անխուսափելիորեն պիտի կարիքի մեջ լինի և լենթակա հարուստների ծաղր ու ծանակինք:

§ 2. Գյուղացիության դրությունը Խորհրդային կառ-
գերում.

Այսպիսով կապիտալիստական հասարակա-
րիստ է ՏԵՇՆԱԿ-
ՑԵԼՈՎ, ԳՅՈՒՆԱՑԻ-
ՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Ե
ԱԶԱՎԿԵԼ ԿԱՊԻՏԱ-
ԼԻՍԱԿԱՆ ՍՏՐԿԱ-
ՑՈՒՄԻՑՑ:

Կարգի պայմաններում գյուղացիությունը չի
կարող բարեխավել իր գրությունը, Այդ բարե-
խավանի ուղին—կապիտալիզմի տապալում ե.
Այս բանում գյուղացիության ճնշող մեծամաս-
նության շահերը համապատասխանում են պրո-
լետարիատի շահերին, այն դասակարգի, վորո-

կանգնած և կապիտալիզմից ազատագրվելու համար պայքարող
աշխատավորության առաջին շարքերում։ Այս թե ինչու գյուղա-
ցիության մեծամասնությունը բանվոր դասակարգի դաշնակիցն և
համարվում կապիտալիզմի գեմ մզվող պայքարում։ Վորովինետն մի-
միայն պրոլետարական հեղափոխության յեկ կապիտալիզմի տապալ-
ման միջոցով գյուղացիությունը՝ դաշնակցելով պրոլետարիատի հետ
յեկ երա դեկավորությամբ կարող ե ազատվել կապիտալիստական
տահակործումից յեկ բարեխավել իր գրությունը։

Հոկտեմբերյան հեղափոխությունն ազատագրեց նախկին
սուսական կալսորության գյուղացիությունը կապիտալիստական
շահագործումից և լայն հնարավորություններ ստեղծեց նրա դրու-
թյունը բարեխավելու։ Այժմ ԽՍՀՄ գյուղացիությունն իր կրանքը
կառուցում և նոր հիմքերով, կառուցում և դաշնակցած բան-
վոր դասակարգի հետ, բանվոր դասակարգի դիկտատուրայի պայ-
մաններում։ Այս փորձը համաշխարհային նշանակություն ունի,
նրան և նայում ամբողջ աշխարհի գյուղացիությունը։ Տեսնենք,
թե ի՞նչ տվեց գյուղացիությանը պրոլետարական հեղափոխու-
թյունը, ի՞նչ և ներկալացնում իրենից գյուղացիական տնտեսու-
թյան վրձակը՝ պրոլետարիատի դեկտատուրայի պայմաններում։

Կուսակցության և Խորհրդային իշխանու-
թյունակցության Վ-
ՏԱՏԵՍՈՒԹՅԱԿԱՆ Ֆ-
ՃԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՑԻՒ-
ԿԱՐԳԵՐՈՒՄ։

թյան գյուղում տարվելիք քաղաքականության
մասին գլխում¹ մանրամասն խոսվել ե, թե
ինչ ուղիներով և զարգանում մեզ մոտ ԽՍՀ

Միության մեջ գյուղացիական տնտեսությու-
նը, ինչ և անում Խ. իշխանությունը նրա բարձրացման և գյու-
ղացիության զրությունը բարեխավելու համար։ Այսոեղ մենք մի-
միայն կրավականանանք լեզրակացություններով։

¹ Ա-րդ տարվա դասագրքում։

Խորհրդային իշխանությունը սվել ե ամբողջ նողը զյուղացիների ոգտագործության համար։ Գյուղիցիների ձեռքին ե գտնը-վում ԽՍՀՄ գյուղատնտեսության պիտանի տարածության 96% ը։

Հոդի հավասարեցուցիչ բաժնման միջոցով և։ իշխանությունը համապատ չափով հարթել ե տարբերությունը զյուղացիներին տարբեր խավերի միջև։ Կալվածատիրական և պետական հողերը, ինչպես և կուլակների ձեռքում գտնվող ավելցուկները բաշխված են չքավոր և միջակ գյուղացիներին։

Ոգնելով չքայութերին ու միջակներին, և. իշխանությունն աստիճանաբար խոլում ե կուլակների վոտքի տակի հողը, գրկում և նրանց սակագունակ տնտեսություններին ստրկացնելու հնարավորությունից։ Խսկ համատարած կոլեկտիվացման շրջաններում վերացնում ե նրան վորպես դասակարգ, կատարելով ապակուլակացում։ Կոռպերացիալի զարգացումը և պետական վարկը նշանավոր չափով թուլացնում ե չքավորի ու միջակի կախումը կուլակից։ Զբարությունը և միջակ գյուղացիներուն սկսում են ամուր վտաքի կանգնել։

Գյուղացիությանը հասցրած պետական ոգնությունը նպաստում է երա ընդհանուր վերելիքին յեկ զյուղացիական լայն մասսաների բարեկեցությանը։ Խորհրդային պետությունն իր բյուջենից խոշոր գումարներ և հատկացնում գյուղատնտեսության բարձրացմանը։ 1923/24 թվին հատկացված ե յեղել 645 միլիոն ռուբլի, 1924/25-ին՝ 743 միլիոն ռուբլի, 1925/26-ին՝ 849 միլիոն ռուբլի և 1926/27-ին՝ 966 միլիոն ռուբլի։ Դրա հետ միասին զգալի չափով թեթեացրել ե գյուղացիության հարկալին ծանրությունը (ներկայում գյուղական ազգաբնակության ամեն մի շնչին ընկնում ե մոտ 5 ռուբլի, ցարական կարգերի 12 ռուբլու փոխարեն)։

Խ. իշխանության բոլոր այս ձեռնարկած միջոցներն արդեն տվել են իրենց պառազները։ Պատերազմի հետևանքով քայլագած գյուղատնտեսությունն արդեն վոտքի յե կանգնել, հասել ե նախապատրազման չափերին, խսկ միքանի ճյուղերում նույնիսկ անցել ե ալդ չափերից։ Աճում ե նաև գյուղացիական լայն մասսաների բարեկեցությունը։ Միջակ տնտեսությունները կայունացել են, չքավորությունն աստիճանաբար բարձրանում ե, նկատելի չափով կրճատվել ե անասնազուրկ և ցանքաղուրկ տնտեսությունների թիվը։

Խորհրդային իշխանության որով աշխատավոր զյուղացիական

ՏԵՏԵՍՈՒՐՅՈՒՆԻ բառձրանում ե իր ընդհանուր մասսայով, իսկ զյուղացիուրյան ՇԵՏՏԱՎՈՐՈՒՄԸ գնում ե ավելի դանդաղ բափու:

Ի՞նչ ե լինելու գլուղացիական տնտեսության հետագա վիճակը պրոլիտարիատի դիկտատուրայի որով:

ՄԵՔԵՆԱԼԻ հետագա մուտքը և կուլտուրական գիտելիքների տարածումը պետական ոժանդակության հետ միասին հետագա յում կրաքաջացնեն գլուղատնտեսությունը, Գյուղացիական տնտեսուրյունների կոոպերացումը ու կողեկտիվացումը, երանց զորումը կոոպերացիայի միջնորդ բաղակի սոցիալիստական արդյունաբերուրյան հետ՝ հետօնիներ կրուցանեն ու կիարդեն զյուղի ՇԵՏՏԱՎՈՐՈՒՄԸ, կուրունակեն շարժել գլուղացիական տնտեսուրյունը յեվ գլուղացիուրյունը դեպի սոցիալիզմը, վորդ իրականանալով կիթրանան բոլոր արբերուրյունները բաղակի յեվ զյուղի միջնորդ:

Ահա գլուղացիական տնտեսության զարգացման ուղին պրոլիտարիատի դիկտատուրայի պայմաններում:

Հ Ա Բ Ծ Ե Բ

1. Ինչու յենք մենք ժամանակակից գլուղատնտեսությունն անվանում ապրանքալիքին:

2. Ինչումն են կայանում կապիտալիստական հարաբերությունները գլուղատնտեսության մեջ և ինչից են նրանք առաջանում:

3. Ինչ ճանապարհներով և յեղանակով ե կապիտալը շահագործում գլուղացիական տնտեսության:

4. Ինչից ե առաջանում գլուղացիության շերտավորումը կապիտալիզմի որով և ինչպես ե նա ընթանում:

5. Ինչու գլուղատնտեսության մեջ հաղթանակում են խոշոր տնտեսությունները:

6. Վորժնք են կապիտալիզմի ժամանակ ուղիները՝ ա) չքաղվոր տնտեսության, բ) միջակ տնտեսության և գ) կուրակալին տնտեսության:

7. Ինչ միջնորդ գլուղացիությունը կարող ե հիմնական կերպով բարելավել իր գրությունը:

8. Ի՞նչ ե անում Խ. իշխանությունը գլուղացիական տնտեսության համար (հիմնականն ու գլխավորը):

9. Դեպի մեր ե գնում գլուղական տնտեսությունն ու գլուղացիությունը մեզ մոտ՝ ԽՍՀՄ մեջ պրոլիտարիատի դիկտատուրայի որով:

1. Կազմեցնք տվյալ շրջանի գլուղացիական տնտեսության տարեկան բլուջեն, առանձին ցուցչ տալով ապրանքային մասը:

2. Հետևեցնք տվյալ շրջանում, թե ինչպես են անդրադառնում Խորհրդային իշխանության հոգատարությունները՝ ա) հոգային հարցի ասպարիզում, բ) հոգաշինարարության ասպարիզում, գ) գլուղատնտեսական վարկի ասպարիզում, դ) ցանքադուրկ և անասնազուրկ տնտեսությունների թվի կրճատման և յի) հարկից ազատելու ասպարիզում։ Համեմատեցնք այդ նախապատերազման շրջանի հետ։

3. Ուսումնասիրեցնք աշխատանքի և բանվորներ վարձելու հիմնական որենքները գլուղատնտեսության մեջ և հետեւեցնք, թե ինչպես են նրանք կիրառվում կլանքում ըստ տեղական որպանների տվյալների։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵՆԱՇՆՈՐՉԱՑԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Նախընթաց զլուխներում դուք արդեն պար-
գևսիք, թե ինչու կապիտալիստական անտե-
թօնիւը, զեցիք, թե ինչու կապիտալիստական անտե-
թօնիւը—սության զարգացումն—իր մրցությամբ և
արտադրության անարխիալով տանում և դեպի մանր տնտեսու-
թյան քայլայում և արտադրության համակենտրոնացում։ Դուք
այժմ կծանոթանաք կապիտալիզմի զարգացման վերջին ետապի
հետ—մենաշնորհային (մոնոպոլիստական) կապիտալիզմի տիրա-
պետության շրջանի հետ, վորը բնորոշվում է կապիտալիստական
լայն միավորների—տրեստների, սինդիկատների առաջ գալով,
նրանց կողմից շուկաների գրավումով, բանկերի և ֆինանսական
կապիտալի տիրապետությամբ և աշխարհը խոշորագույն կապի-
տալիստական միավորների միջև բաժանելով։ Կապիտալիզմի
զարգացման այս կողմերի ուսումնասիրությունը ձեզ ցուց կտա,
թե ուր և գնում կապիտալիզմը։

Դրա հետ միասին կքննենք տրեստների, սինդիկատների,
բանկերի դերը ԽՍՀՄ մեջ և նրանց տարբերությունը կապիտա-
լիստականից։

§ 1. Կապիտալիստական սիրավորումները յեվ նրանց
մենաշնորհը ըուկայում։

Մենք տեսանք, վոր կապիտալիստական
հաջո՞ւ թե՞ն առաջ գրցությունից հաղթող են դուրս գալիս խոշոր
գլուխ կապիտալիստական սիրավորումները, վորոնք ունեն շատ ա-
ռավելություններ հանդեպ առավել մանր ձեռ-
նարկությունների։ Խոկ ինչ և լինում մանր
ձեռնարկությունների վիճակը. միթե պարտադրաբար նրանք
բոլորը քայլալիքում են, զոչ, դա պարտադիր չե։ Հաճախ նրանք

միանում են խոշոր ձեռնարկության հետ, դառնում են նրա մասը: Վերցնենք մի որինակ: Չուկալում մրցում են միքանի նավթալին ձեռնարկություններ: Նրանցից մեկը՝ ամենախոշորը ճշնշում ե մյուս մասներին: Մանր ձեռնարկությանն սպառնում ե աստիճանաբար շուկալից դուրս նետվել, քայլքայվել Դրանից խուսափելու համար նա միանում ե խոշոր ձեռնարկությանը, չենթարկվում ե նրան, դառնում ե նրա մասը, կլանվում ե նրա կողմից: Այդ մասը ձեռնարկության տերն այս գեպքում պահպանում ե իր կապիտալը, բայց ինքնուրուցնությունը կորցնում է: Դուրս ե գալիս՝ կարծես թե նրա կապիտալը զրվում ե նոր խոշորացած ձեռնարկության մեջ: Այս խոշոր ձեռնարկությանը, վոր ունի խոշոր առավելություններ շուկայում, հարկադրված են լինում միանալ նաև մյուս նավթային ձեռնարկությունները: Այսպիսով ստացվում ե այդ նավթային ձեռնարկությունների արտադրության և նրանց մեջ դրված կապիտալիստների միավորում: Ստացվում ե կապիտալիստական միավորում:

Կամ ուրիշ որինակ, մրցության մեջ հաղթելու համար կապիտալիստը պետք ե խոշորացնի իր ձեռնարկությունը: Դրա համար նա սեփական կապիտալ չունի, բայց կա, որինակ, մի վաճառական, վորը դրամ ե վաստակել առևտորի մեջ և ցանկանում ե արտադրությամբ զրազվել: Այս վաճառականն ընկերանում ե այդ գործարանատիրոջ հետ, ձեռնարկության մեջ ե մըտցնում իր կապիտալը, և յերկուսով միասին դառնում են արդեն խոշորացած ձեռնարկության տերերը: Կարող ե պատահել և այլ կերպ: Դիցուք՝ շուկայում մրցում են յերկու ուժեղ ձեռնարկություններ, սրանք յերկուսն ել իհարկե մանր ձեռնարկություններին խեղզում են, բայց մրցելով միմյանց հետ, պակասեցնում են իրենց շահուկթը՝ իշեցնում են գները և այլն: Այդ յերկու ձեռնարկության տերերը կարող են կամ ուղղակի միացնել իրենց ձեռնարկությունները կամ պայմանավորվել այնպես, վոր միմյանց չխանգարեն: Որինակ, կարող են շուկան բաժանել իրար մեջ՝ մեկը վաճառում ե այս ինչ շրջանում, մյուսը՝ մյուս շրջանում, կարող են սահմանել ամուր գներ և այլն: Թե մեկ և թե մյուս դեպքում առաջ ե գալիս կապիտալիստական միավորում:

Բերված այս բոլոր որինակներից յերեսում ե, վոր կապիտալիստներին միավորվել հարկադրողը մրցությունն ե:

Ստացան յերբեմն կապիտալիստական միավորություններն առաջ

Են գալիս նաև վոչ մըցությունից հարկադրված։ Ցենթադրենք, թե մի վորեե կապիտալիստ միտք ե հղանում յերկաթուղի կառուցելու։ Այս գործը պահանջում ե ահազին կապիտալներ, մեկ վերստ յերկաթուղի կառուցելու համար պահանջվում ե 100,000 ռուբլի։ Յերկաթուղի կառուցել մի կապիտալիստի համար, թեկուզ շատ ել հարուստ լինի նա, դժվար ե։ Այն ժամանակ այդ կապիտալիստը փնտում ե ազատ կապիտալներ ունեցող ուրիշ կապիտալիստների, վորոնց կարող են գրավել յերկաթուղուց ստանալիք ապագա խոշոր շահուկթները։ Միքանի կապիտալիստներ միանալով ընկերություն են կազմում յերկաթուղին կառուցելու համար, կառուցում են և այնուհետև միատեղ շահագործում են այն։ Սա նույնպես կապիտալիստական միավորում ե։

Ինչպես տեսնում ենք, կապիտալիստական միավորումները կարող են ծագել զանազան պատճառներով, հետեաբար նրանք իրենց բնուկթով՝ միշտ և ամեն ժամանակ միատեսակ չեն լինի։

Տեսնենք, թե ինչպիսի կապիտալիստական միավորումներ գոյություն ունեն։

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԻՄԵՐԸ. ԱԿՑԻՈ-ՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵ-ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
Շարունակենք քննել յերկաթուղու կառուց-
ման որինակը։ Նրա կառուցման համար, յին-
թաղբենք, հարկավոր ե 100 միլիոն ռուբլի,
իսկ կապիտալիստների խմբակը, վորը ցան-
կանում ե կառուցել այդ յերկաթուղին, ունի
միայն 50 միլիոն ռուբլի։

Այսպիսի դեպքում նրանք կազմակերպում են ակցիոներական ընկերություն և բաց են թողնում առանձին վկայականներ—ակցիաներ։ Նրանք հաշվի լին առնում, վոր յերկրում գոյություն ունեն փոքրիկ խնայողություններ, իսկ նրանց տերերը տեղ են փնտում իրենց այդ խնայողությունները ձեռնտու կերպով ոգտագործելու։ Մական նրանց այդ խնայողություններն այնքան ել խոշոր չեն, վորպեսզի նրանցով հնարավոր լինի մի վորեե ինքնուրուցին արտադրական կամ առեւրական գործ սկսել։ Բանկում պահելը նույնպես այնքան ել ձեռնտու չե, բանկը ցածր տոկոսներ ե վճարում։ Ցերեք ապագա յերկաթուղին խոշոր շահուկթներ ե խոստանում, ապա այդ ակցիոներական ընկերության բաց թողած ակցիաները կգնվեն ու այդ ճանապարհով կհավաքվի պահանջված 100 միլիոնը։ Ակցիա գնողը գործի՝ այդ ձեռնարկության մասնակիցն ե դառնում և ստանում ե շահուկթ։

ՅԵԹԵ, որինակ, ճանապարհը կառուցելուց հետո 10% լեկամուտ ե տալիս, ապա 100 ռուբլիանոց ակցիալի տերը կստանա 10 ռուբլի շահութիւն: Այս ակցիաները վաճառվում են ձեռքից-ձեռք, գրավ են դրվում, փոփոխում են իրենց տերերին, վորոնք իրականում ակցիոներական ձեռնարկութիւնն կառավարչութիւնը չեն խառնվում: Ընկերութիւնն հիմնադիր կապիտալիստների համար միենում ե, թե ում ձեռքին են գտնվում ակցիաները. Նրանք իրենց գործը կատարել են, կապիտալը ժողովել են ու ձեռնարկութիւնը վարում են իրենց հայեցողութիւնը և իրենց ձեռընտու լեղանակով:

Կամ վերցնենք ուրիշ օրինակ. կոչկի գործարանի տերը ցանկանում ե լայնացնել իր գործարանը, բայց գրամ չունի նա իր ֆիրման ակցիոներական ընկերութիւնն և վերածում և հարկավոր դումարի չափով ակցիաներ ե բաց թողնում: Առաջ, ասենք թե, գործարանը Սիդորովինն եր, այժմ դառնում ե ակցիոներական ընկերութիւնն զործարան: Սիդորովը շարունակում է վարել լայնացրած գործարանի վարչութիւնը, բայց շահութի վորոշ մասը վճարում ե ակցիաների տերերին:

Վոր խոշոր կապիտալիստներին ձեռնտու լե իրենց ձեռնարկութիւններն ակցիոներական ընկերութիւնն վերածել, այդ ցուց և տալիս ակցիոներական ընկերութիւնների աճումը: Որինակ, Անգլիայում դեռ 1904 թ. հաշվում ելին մոտ 37000 ակցիոներական ընկերութիւններ 18 միլիարդ կապիտալով: Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում ակցիոներական ընկերութիւնները վերջին ժամանակներու իրենց ձեռքում ունեն յերկրի բոլոր ձեռնարկների $31,6\%$ -ը, վորոնց բանվորները կազմում են յերկրի բոլոր բանվորների $86,5\%$ -ը, իսկ արտադրանքը՝ յերկրի ամբողջ արտադրութիւն $87,10\%$ -ը: Ցարական Ռուսաստանի կապիտալիստները նույնպես չետ չեն մնում: 1900 թվին գորութիւն ունելին 500 ակց. ընկերութիւններ, 2400 միլիոն ռուբլի կապիտալով, իսկ 1916 թվին – 2956 ընկերութիւններ, 5467 միլիոն կապիտալով:

Ակցիոներական ընկերութիւնները տիրապետում ելին նախապատերազմիւն Ռուսաստանի արտադրութիւն մեջ. 1913 թվին նրանք տվեցին ամբողջ արդյունաբերական արտադրանքի 73% -ը:

Ակցիոներական ընկերութիւնները շուկայի ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐ մրցութիւնը չեն մեղմացնում: Այստեղ փոխվում ե միմիայն ալն, զոր ձեռնարկութիւննը փոխանակ մեկ տի-

քո՞յ ալժմ ունի միքանի տերեր: Այդ պատճառով առաջ են գալիս կապիտալիստական այլ տիպի միավորութեաներ—սինդիկատներ: Յերկու կամ միքանի ձեռնարկություններ կամ ակցիոներական ընկերություններ վճռում են, վոր փոխադարձ մրցումը մեղմացնելու նպատակով նրանց հարկավոր և միացած ու համերաշխ կերպով լեռեան գալ շուկայում: Նրանք արտադրությունը վարում են, ինչպես և առաջ, ինքնուրուցնաբար, սակայն պատրաստի արտադրանքը հանձնում են իրենց միավորությանը—սինդիկատին և սա հանդես է գալիս շուկայում վորպես մեկ կազմակերպություն: Սինդիկատը, վորպես ապրանք մատակարարող խոշոր կազմակերպություն, ունի խոշոր առավելություններ շուկայում, այդ պատճառով ել աստիճանաբար նրան միանում են նույն ապրանքն արտադրող նաև ուրիշ ձեռնարկություններ: Աստիճանաբար սինդիկատը դառնում է տվյալ ապրանքի համարյա միակ վաճառողը շուկայում: Ցարական Ռուսաստանում, որինակ, շաքարի սինդիկատը գեռ 1892 թվին 224 շաքարի գործարանից միացնում եր 203 գործարան: Խոկ «Պրոզամետ» սինդիկատը (մետաղ վաճառող ընկերություն) պատերազմից առաջ ընդգրկում եր իր մեջ տեսակավոր լեռկաթի արտադրանքի 81%՝ և թերթավոր լեռկաթի 74%՝ Պղնձի սինդիկատը՝ պղնձի ամբողջ արտադրության 90%՝, ածուխինը՝ 60%՝: Արտասահմանում արդյունաբերության միավորութեան աստիճանն ավելի բարձր եր:

ՏԵՍՏՆԵՐ:

Կապիտալիստական միավորութեարի ամերիկատարելագործված տիպը տրեստն ե (վոր ընդգրկում և կապիտալների ավելի մեծ թվով միավորում): Յեթե սինդիկատի շրջանակում առանձին անհատ կապիտալիստը կամ ակցիոներական ընկերությունն ինքնուրուցն են արտադրում, ապա տրեստի մեջ ձուլված են միմւանց հետ վոչ միայն ապրանքների սպառումը, այլ և նրանց արտադրությունը: Տրեստի մեջ մտնելու ձեռնարկությունները միանալով կազմում են մեկ ամբողջություն: Ալստեղ միացած են թե արտադրությունը և թե սպառումը: Ձեռնարկության նախկին տերը, վորը ալժմ մտել և տրեստի կազմի մեջ, այլևս չի ղեկավարում արտադրությունը, այլ գառնում և տրեստի փայտաերը: Տրեստը հաճախ կազմվում է սինդիկատից: Որինակ, յենթագրենք, թե սինդիկատը կարող է շուկայում սպառել 10000 տոնն այսինչ ապրանքից, իսկ սինդիկատի մեջ մտնող ձեռնարկություններն արտադրել են

15000 տոնն։ Մնում և 5000 տոնն, վորը պետք ե նրանք սպառեն անկախ սինդիկատից։ Այս հանգամանքը նույնպես սրում և մրցությունը իսկ յեթե սինդիկատը տրեստի լի վերածվում, այն ժամանակ արտադրության մեջ ել չեն լինում միքանի ինքնուրույն տերեր, արտադրությունը միացած և լինում և արտադրությունը միացած և ալիքանքան, վորքան արեստը յենթազրում և սպառել։ Պատահում ել ե, վոր տրեստը միացնում և արտադրությունը մի վորեկ շրջանում և մինչույն ժամանակ մասնակցում և մի սինդիկատի, վորը միացնում և տվյալ ապրանքների վաճառքն ամբողջ յերկրում։

Ցարական Ռուսաստանում տրեստները շատ տարածված չեն, Բայց արտասահմանում, բարձր զարգացում ունեցող կապիտալիստական լերկրներում, տրեստները կապիտալիստական միավորումների հիմնական տիպն են զարձել, թե վորքան ուժիղ են նրանք, կարելի լի դատել նետելալ որինակներով։ Հուսալին Ամերիկայի Միացյալ Նահանգներում պողպատի տրեստն ունի մոտ 5 միլիարդ ռուբլի կապիտալ, տալիս է լերկրի լերկաթիւ և պողպատի ամբողջ արտադրության $70^0/0$ -ը, նրա ձեռնարկություններում զրադիւն 250 հազար բանվորներ։ Ամերիկայի նավթային տրեստը (Ստանդարտ Ոլլ) ունի 1.500 միլիոն ռուբլի կապիտալ և 1924 թվին ստացել է 150 միլիոնից ավելի շահութ։ Այս տրեստն ընդգրկում է Միացյալ Նահանգների նավթային արդյունաբերության կեսը։

Միացյալ սինդիկատների ու տրեստների կապիտալիստական սինդիկատը ստանդարտ Ոլլ ստուգային դրությունը ունի 1.500 միլիոն ռուբլի կապիտալ և 1924 թվին ստացել է 150 միլիոնից ավելի շահութ։ Այս տրեստն ընդգրկում է Միացյալ Նահանգների նավթային արդյունաբերության կեսը։

Միացյալ սինդիկատների ու տրեստների միջ կապիտալիստները ձգտում են թուլացնել մրցումը, վոր արգելք և հանդիսանում նրանց բարձր շահույթներ ստանալուն։ Սակայն այդ նրանց չի հաջողվում։ Որինակ, պատերազմից առաջ Ռուսաստանում շաքարի սինդիկատն իր ձեռքում ուներ շաքարի համարյա ամբողջ արտադրությունը։ Շուկայում նա մրցորդ չուներ, նրա զրությունը շուկայում, ինչպես տառամ են, մենաօնորնային եր՝ ձիշտ նույնպես մենաշնորհային և ամերիկական պողպատի տրեստի դրությունն ամերիկական շուկայում։ Ի՞նչ է առաջ գալիս արտիստի մենաշնորհային դրությունից։ Տրեստը կամ սինդիկատը կարող է բելադրել յեվ սահմանել իր ապրանքների համար իր ցանկացած գները, իսկ գնորդը հարկադրված է վճարել այդ գները, քանի վոր այդ ապրանքից նա ուրիշ տեղ գնել չի կարող։ Նա ստիպված պիտի գնի այդ

տրեստից կամ սինդիկատից, վորը շուկայում մենաշնորհ դրութլուն և վալելում: Բարձր գներ նշանակելու և կատաղի շահութ-ներ ստանալու հնարավորութլուն—ահա այն նպատակը, վորի պատճառով կապիտալիստները ձգտում են միավորութներ ստեղծելու:

Կապիտալիստների միավորումը տրեստաների և սինդիկատների մեջ անխուսափելիորեն տանում և դեպի գների բարձրացումը: Որինակ վերցնենք նախկին ցարական Ռուսաստանից: Շաքարի սինդիկատը, վորի ձեռքութն եր Ռուսաստանի շուկայի մենաշնորհը, շաքարը լերկը ներսում վաճառում եր Փունտը 15—16 կոպեկ (նախապատերազմյան գներով), Գերմանիա լեր արտահանում 11 կոպեկով:

Զթի գինը մանվածալին արդյունաբերութլան միանալուց հետո լերեք տարվա ընթացքում (1904—1907 տ.) բարձրացավ $310\%_0$ -ով: Աղի գինը պատերազմից առաջ միքանի տարիների ընթացքում բարձրացավ $300\%_0$ -ով, այսինքն 3 անգամ: Զարմանալի չե, վոր այսպիսի դրութլունը չափազանց բարձրացնում եր միացյալ ձեռնարկութլունների լեկամուտը, մեծացնելով կապիտալիստների շահութը: Ռուսական մի քանի լուցկիի գործարններ սինդիկատի մեջ միանալուց հետո սկսեցին տալ կապիտալիստներին համարյա կրկնակի շահութ:

Այսպիսով կապիտալիստական միավորութների մենահորին դրույթներ ուղկայում ավելացնում ե երանց շահութները:

Մըսու կողմից այդ դրութլունն իր հետ բերում և բանվորների և առհասարակ ազգաբնակութլան լայն խավերի դրութլան վատթարացում: Դների բարձրացումը ծանր կերպով ազդում և մասսայական սպառողի վրա, թանգութլունը վատթարացնում և աշխատավոր մասսաների դրութլունը:

Առանձնապես վատանում ե բանվորների դրութլունը: Կապիտալիստական միավորութները թելադրում են գոչ միան ապրանքների գները, ալլ և աշխատավարձի չափը: Միավորաւ ձեռնարկութլուններում կապիտալիստների համար ավելի հեշտ և իշեցնել աշխատավարձը, նրանց ճնշումը բանվոր դասակարգի վրա ուժեղանում է, դասակարգային կորիլ յիկ նակասությունները բանվորների յիկ կապիտալիստների մեջն ուժեղանում են, սրվում:

Կապիտալիստական միավորութները հետզհետե ընդգրկում են արդյունաբերութլան նոր ճուղերը: Նրանք աստիճանաբար իրենց ձեռքն են ձգում լերկը համարյա ամբողջ արտադրու-

թլունը և շուկայում գրավում են մենաշնորհյալ դրությունն։ Այսպատճառով ժամանակակից կապիտալիզմն անվանում են մենաշնորհյալին կապիտալիզմ։

Ինչպես ասացինք, կապիտալիստների միավորումները չեն թուլացնում մրցումը։ Պայքարն առհասարակ չի դադարում, այլ ընդհակառակն ավելի ծավալվում է։

Պայքարում են միմյանց գեմ արդեն վոչ թե տուանձին ձեռնարկություններն ու կապիտալիստները, այլ նրանց միավորումները՝ սինդիկատները, տրեստները և այլն, պայքարում են մենաշնորհյալին կապիտալի զանազան խմբակները և ալդ պայքարն աստիճանաբար, ինչպես մենք կտեսնենք հետո, փոխադրվում են ամաշխարհյալին շուկա։

§ 2. Ֆինանսական կապիտալ։

Կապիտալիզմի զարգացման, նրա համարևների ԴԵՐԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵջ։ Կենտրոնացման և կենտրոնացման հետ միասին լայն կերպով տարածվում են բանկերը։

Բանկը—դա մի նույնպիսի կապիտալիստական ձեռնարկություն ե, վորպիսին և գործարանը, առևտրական հիմնարկը և այլն։ Առաջներում բանկերը միմիայն դրամ պահող հիմնարկներ ենին։ Մի վորևե հարուստ գրամն իր տանը չպահելու նպատակով (վախենալով կողոպուտից, հրդեհից և այլն) հանձնում եր բանկերին և մինչև իսկ վճարում եր նրանց դրահամար։

Այժմ դրությունն այլ եւ Բանկերն ալժմ իրենք են վճարում նրանց, ովքեր ցանկանում են իրենց դրամները բանկում պահել, վորովհետեւ այժմ արդյունաբերության և առևտրի զրջանառության համար պահանջվում են մեծ գումարներ։ և կապիտալիստներն ալդ գումարները վերցնում են բանկերից։

Կապիտալիզմի ժամանակ բանկերում ահապին կապիտալներ են կուտակվում։ Այստեղ են հոսում ամբողջ ինքը մանր խնայողությունները, այստեղ են պահում իրենց ազատ կապիտալները կապիտալիստները մինչև այն բոպեն, յերբ իրենց հարկավոր են նրանք արտադրության համար։ Բանի ալդ կապիտալները հարկավոր չեն, կապիտալիստը պահում ե նրանց բանկում, վորը փոխատվության ձեռվ տալիս ե դրամի կարիք ունեղող մուս կապիտալիստներին։ Իսկ յերբ իրեն՝ ալդ կապիտա-

զիստին և դրամ հարկավորվում, նա վերցնում է բանկից վոչ
ժիայն իր ավանդը, այլ և փոխառվություն և վարկ։ Այս դեպ-
քում նա տվյալ մոմենտում ոգտվում է ուրիշ կապիտալիստների
գրամով։ Այսպիսով դուրս ե գալիս, վոր կապիտալիստները միմ-
յանց փոխադարձարար վարկավորում են բանկի միջոցով։ Աշ-
խարհիս ամենախոշոր բանկը՝ Մորգանի ամերիկական բանկն
ունի մոտ յերկու միլիարդի ավանդներ, անգլիական բանկն ու-
նի $1 \frac{1}{2}$ միլիարդի ավանդներ։ Իսկ սրանք, ճիշտ ե, խոշորա-
գույն բանկերն են, քայլ միջիայն առանձին բանկեր եր։ Բան-
կերն իրենց ավանդառուներին վճարում են վորոշ տոկոս, որի-
նակ՝ 6% , իսկ ավանդները շրջանառության մեջ են թողնում,
փոխառվության և վարկերի ձեռվ տալիս են ուրիշներին, առե-
տրական գործարքներ են կատարում և վաստակում են դիցուք
 120% , 60% ի տարբերությունը մնում է բանկիրի ձեռքում, այդ
նրա բանկային շահուլիթն ե։ Այդ չափի տոկոսով Մորգանը տա-
րեկան 90 միլիոն շահուլիթ կտանա։

Ուրեմն, ի՞նչ գեր են խաղում բանկերն արդյունաբերության
և առևտնագործության մեջ։

Կապիտալիստական անտեսության մեջ շրջանառության հա-
մար միշտ հարկավոր են խոշոր գումարներ։ Հաճախ կապիտա-
լիստը չի ունենում այդ գումարները. պատահում ե, որինակ,
վոր նրա ապրանքը գետ չի վաճառվում։ Նա այդ գեղքում վերց-
նում է բանկից փոխարինարար, իսկ ապրանքը վաճառելուց հե-
տո տոկոսներով վերագարձնում ե։

Ակցիոներական ընկերությունների, սինդիկատների և
արեստների զարգացման հետ միասին բանկերն ավելի ազդե-
ցություն են ձեռք բերում արտադրության մեջ։ Նրանք գնում
են ակցիաներ, իսկ բավական ե վորեն ակցիոներական ձեռնար-
կության ակցիաների $35-40\%$ ունենալ ձեռքում, նրա գոր-
ծերի վրա գնուական ազդեցություն ունենալու համար։

Բանը նրանում ե, վոր ալպիսի ձեռնալկության կարե-
փորագույն գործերը վճռվում են ակցիոներների ընդհանուր ժո-
ղովներում ձախների մեծամասնությամբ։ Այդպիսի ժողովներում
շատ ակցիաներ ունեցող խոշոր ակցիոներներն իրենց ունեցած
ակցիաների քանակի համեմատ ել ձախներ ունեն։ Հինգ ակցիա
ունեցողը հինգ ել ձախն ունի և հարլուր ակցիա ունեցողը հար-
լուր ել ձախն ունի։ Այնպիս վոր ակցիաների 35% -ն ունեցողն
ունի նաև բոլոր ձախների 35% -ը։ Ինկատի առնելով այն, վոր

ընդհանուր ժողովին շատ ակցիոներներ, մանավանդ քիչ ակցիաներ ունեցողները ներկա չեն լինում, նաև այն, վոր ներկա լեզողներից վոմանք կողմանակից կլինեն ձախերի 35 °/₀-ն ունեցողին, պարզ ե, վոր ալգաբիսի խոշոր ակցիոները կվաստակի ձախերի մեծամասնությունը, կանցկացնի իրեն ձեռնտու վորոշումներ, այլ խոսքով, իր ձեռքում կունենա ակցիոներական ձեռնարկության զեկավարությունը, Կապիտալիստական մրցման պայմաններում բանկային վարչը խոշոր նշանակություն ունի արտադրության և ապրանքների սպառման համար: Ալդ պատճառով բանկերը հետզհետե մեծ իշխանություն են ձեռք բերում արդյունաբերության մեջ: Հաճախ բանկերն իրենք են հանդիսանում տրեստների և սինդիկատների կազմակերպիչներ: Ցենթրագրենք, որինակ, շուկայում մրցում են լիբերք տակցիոներական ընկերություններ, դրանց բոլորի ակցիաները գտնվում են բանկում, բացի այդ, բանկը նրանց լիբերքին ել փոխատվություններ և տվել Պարզ ե, վոր այդ լիբերք ընկերություններն ել կախումն ունեն բանկից, իսկ բանկին ձեռնտու յե ավելի նսեմացնելն ըստ բանկի բնակչությունությունը: Նա իր վրա յե վերցնում այդ ձեռնարկությունների միավորման կազմակերպչի գերը Բանկը հարկադրում և այդ ընկերություններին միանալ և նրանք ստիպված են հպատակվելու, հակառակ գեապքում բանկը կրադարի նրանց վարկավորելուց, հետ կպահանջի տված փոխատվությունները և այլն: Հասկանալի լե, վոր կազմակերպված այդ միավորության մեջ բանկն ստանձնում ե վճռական ազդեցություն ունեցողի գերը: Աստիճանաբար բանկերը վոչ միայն նվաճում են զեկավարողի գեր արդյունաբերության մեջ, այլև սկսում են կազմակերպել նոր արտադրական ձեռնարկություններ: Խոշոր կապիտալներ պահանջող հազվագյուտ ձեռնարկություն կդտնվի, վոր ըստեղծվի առանց բանկերի վճռական մասնակցության, առանց նրանց կապիտալի: Բանկային կապիտալը լայն կերպով գործադրվում և արտադրության մեջ, միանում և արդյունաբերական կապիտալի հետ:

Բանկային կապիտալի զոդում արդյունաբերական կապիտալի հետ գնում ե նաև այլ գծով: Ամենից հաճախ բանկը՝ զանոււնապես մի ակցիոներական ընկերություն է: Հաճախ վորեն խոշոր արդյունաբերող, կամ արդյունաբերողների մի խումբ, և կամ տրեստ գնում են բանկի ակցիաները, սկսում են զեկավարել բանկը և նրա միջոցով իրենց լինթարկել ուրիշ ձեռնարկու-

թլուններ: Բանկերի ղեկավարող դերն այնքան խոշոր է, վոր վոչ մի նոր խոշոր ձեռնարկութլուն չի կարող լինել առանց բանկերի մասնակցութլան: Բանկերն արդեն վոչ միայն ազգում են արտադրության վրա, այլև առաջ են մղում նրան, կազմակերպում են նոր ձեռնարկութլուններ, լայնացնում և միավորում են հին ձեռնարկութլուններ և այլն: Այսպիսով կապիտալիստական միավորումների զարգացման հետ միասին, բանկային կապիտալը ձուլվելով, միանալով արդյունաբերական կապիտալի հետ առաջացնում և ֆինանսական կապիտալը, վորը ղեկավարում և ամրող կապիտալիստական անտեսությունը:

Ահա որինակներ, թե ինչպես են բանկերը ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻ- տիրապետում արտադրության մեջ: Ռուսա- ՏԱԼԻ ՏԻՐԱՊԵՏՈՒ- տանի ամենախոշոր նավթալին սինդիկատի՝ ՔՅՈՒՆ: Երեխ- բեղը. Նորեկը-ի ակցիաները 1917 թվին բաշխ-

ված ելին հետեւալ կերպով՝

Ազով-Դոնյան	5.800	հազար ռուբլի.
Ազգունաբերական բանկ	2.820	» »
Պետրոգրադի Միջազգային բանկ	4.440	» »
Ռուս-Ասիական բանկ	3.335	» »
Դոլգա-Կամյան բանկ	2.300	» »

Բացի այս խոշոր բանկերից, ակցիաներ ունելին նաև տասնյակ ուրիշ բանկեր: Խակ նորեկ լերեք լեղալը լեղալը նավթալին ակցիաներ ունելին 4.980 հազար ռուբլու: Այստեղ Փինանսական կապիտալը տիրապետել եր նավթալին արտադրությանը: Նույնն եր նաև արդյունաբերության ուրիշ ճյուղերում: Որինակ, մինչև հեղափոխությունը Դոնբասում լերկաթի և ածուխի համարյա ամրող արտահանումը բանկերի, զիսավորապես Փրանսիական և բելգիական բանկերի ձեռքումն եր գտնվում:

Շատ զարգացած կապիտալիստական լերկներում Փինանսական կապիտալի տիրապետությունն արդյունաբերության մեջ ավելի նկատելի լի: Որինակ, ամերիկական ամենախոշոր բանկը՝ Մորգանի բանկը կոնտրոլի լի լենթարկում համաշխարհային ամենախոշոր պողպատի տրեստը, վորի մասին վերը խոսվեց: Բացի այդ Մորգանի բանկը ղեկավարում և հեռագրային, հեռախոսային, հնձի մեքենաների, ըեղինի, նավազնացության և մի շարք լերկաթուղարկին տրեստներ:

Մորգանի բանկը և նրա հետ կապված ու նրան լենթակա ընկերություններն ու տրեստներն իրենց տրամադրության տակ

ունեն 75 միջիարդի հասնող հսկայական կապիտալներ, վորոնք կազմում են աշխարհի մեջ ամենահարուստ լերկրի Ամերիկալի Միացյալ Նահանգների ամբողջ հարստության համարլա մեկ քառորդ մասը:

Ֆինանսական կապիտալի տիրապետությունը չտեսնված կերպով արագացնում է արտադրության համակենտրոնացումը: Հարստությունները կուտակվում են մի խումբ բանկիրների և տրեստատերերի ձեռքում, վորոնք կարգադրում են գոչ միայն ամբողջ լերկրների ամբողջ ժողովրդական տնտեսությունը, այլ և ազգում են այդ լերկրների ամբողջ քաղաքականության վրա:

Ահա թի ինչպես և նկարագրում մեկ խորհրդալին լրագրող, վորը լեզել է Ամերիկայում, նավթալին և շատ ուրիշ տրեստների գլուխ, Մորգանի բանկի մասնակից [և ամենախոշոր հարուստ միջիարդեր Ռոկֆելլերի իշխանությունը]:

«Ձն Ռոկֆելլերն աշխարհի ամենահարուստ մարդն եւ Ամերիկայում նրան անվանում են «Ռոկֆելլեր թագավոր»: Զ. Ռոկֆելլերը — այս նվազ, փթած ուժուունամյա ծերունին — ուուժեղ մարդ եւ: Նրանից ամենքը վախենում են: Նրանից վախենում եւ կոնդրեսը (պարլամենտը). Նրանից վախենում է կառավարությունը, նույնիսկ ինքը հանրապետության նախագահը չի համարձակվում նրան հակառակել... Նա իր ձեռքումն է կենտրոնացըրել Ամերիկայի ամբողջ նավարդյունաբերությունը, զնել է Միացյալ Նահանգների, Մեքսիկայի և Հարավային Ամերիկայի բոլոր նավթաքեր հողերը: Նա գլուխ և անցել «Ելեկտրական տրեստի» և ներկայումն նրան և պատկանում Ամերիկայում գտնված «ամբողջ Ելեկտրական եներգիան»: Նրան են պատկանում Ամերիկայի բոլոր տրամվայների գծերը, բոլոր ընդհատակա և ոդալին ելեկտրական լերկաթուղիներն ու կալանները... Անուհետեւ նա իր ձեռքն է առել բոլոր հացագործարանները, շաքարի գործարանները, կաթնային ֆերմանները և վերջապես լեկեղեցիները: Ամերիկական լեկեղեցիների հալալ կեսը Ռոկֆելլերին է պատկանում... Ռոկֆելլերը — թագավոր է և նրա մայրաքաղաքն է Նյու-Յորքը: Համարլա թե ամբողջ այս համաշխարհական քաղաքը Ռոկֆելլերի սեփականությունն է: Նյու-Յորքի քաղաքագլուխը Ռոկֆելլերի գործակատարն է... Հողը, վորի վրա գութ փոխում եք ձեր վոտքերը, պատկանում է Ռոկֆելլերին: Հացը, վոր դուք ուտում եք, ջուրը, վոր դուք խմում եք, շորը, վոր կուք հագնում եք — այդ բոլորը Ռոկֆելլերային ե...

Ամերիկայում կան ընդամենը 400 արխի միլիոներներ, 400 անթագակիր կալսրներ: Այս 400-ն իրենց ձեռքում ունեն ըստած լերկրի ամբողջ տնտեսությունը, Կալսրները լավ են կազմակերպված, միավորված են մեկ կալսրական կազմակերպության մեջ: Նրանք պաշտպանում են միմյանց: Նրանք վոչնչի առաջ կանգ չեն առնում: Նրանք վոչ մի սպառնալիքից չեն վախենում, նրանք թքում են որենքի և կառավորության վրա: Նրանք միշտ ել իրենց ուզած կանեն»: (Ա. Մենշոլ «Ամերիկական արեստների կալսրները»):

Ֆինանսական կապիտալը, կենցրոնացնելով բոլոր հարստությունները հարուստերի մի խրակի ձեռքում, աղքատացնում ե լայն մասսաներին: Միացյալ Նահանգներում, որինակ, լերկրի բոլոր հարստությունները բաշխված են հետեւալ կերպ՝ Ազգաբն. 20% Ը (միլիոններներ) տիրում ե լերկրի հարստ. 60% Ը Ին: » 33% Ը (միջին դասակ). » » » 36% Ը Ին: » 65% Ը (չքավորութ.) » » » 5% Ը Ին:

Ֆինանսական կապիտալը ուժեղացնում ե աօխատող մասսաներին տահագործելը, հասցնում ե այդ տահագործումը մինչեվ ծայր աստիճանի, լեկ աղքատացնում ե երանց բառի բուն իմաստով:

§. 3. Խմբերի ալիքմը յեվ պայմար ռուկաների համար.

Ինչպես տեսանք, մենաշնորհային կապիտալի սիրապետությունը նշանակիլի չափով մեղմացնում ե մրցությունը ներքին շուկայում: Սակայն վազքը շահութիւն լետեից ստիպում ե կապիտալին փնտռելու նոր, ավելի լայն շուկաներ, նվաճել ուրիշ լերկրների շուկաները:

Դիցուք, Ամերիկայի պողպատի արեստի հաւաքությունի կառուց ԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՆԱ- մար գծվար և մուտք գործել գերմանական տուկան, յերբ այնտեղ գործում ե իր հալլենի մենաշնորհային տրեստը: Այդ պատճառով կապիտալիստական առաջավոր լերկրների մենաշնորհային կապիտալը ձգտում ե զեպի թուլլ զարգացած լերկրները, վորտեղ կապիտալը թուլլ եւ:

Կապիտալների այսպիսի արտահանումը կապիտալիզմի գարդացման նոր շրջանի ամենաբնորոշ գիծն ե հանդիսանում: Կապիտալը ձգտում ե գեպի լետամաց լերկրները, գրավում ե նրանց

և դարձնում ե իր գաղութները: Խնչմւ համար են պետք կապիտալին գաղութները: Գաղութները պետք են կապիտալին՝ 1) վորպես ապրանք սպառելու շուկաներ, վորը հնարավորություն ե տալիս արտադրությունը լայնացնելու, 2) վորպես հումուզի ստանալու աղբյուրներ, հումուզի պահանջն անդադար աճում ե և նրանով անհրաժեշտ ե ապահովել իր արգյունարերությունը, շարունակելու համար մրցումը, 3) վորպես տերրիտորիաներ, վորտեղ կարելի լե գործադրել ավելցած կապիտալները և վորոնց կարելի լե մուծել կապիտալի կողմից շահագործվող տերրիտորիաների ցանկի մեջ (այսինքն լայնացնել շահագործվող տերրիտորիան): Լենինը գրում եր, վոր «ազգայության քաղաքականության բազմաթիվ «հին» մոտիվներին փինասնական կապիտալն ավելացրել ե նաև պայքարը հումուզի աղբյուրներ գտնելու, կապիտալի արտահանության և «ազգեցության սահմանների», այսինքն ձեռնտու գործարքների, կոնցեսիաների, մենաշնորհալին շահությունների և վերջապես առհասարակ տնտեսական տերրիտորիայի համար» (Լենին—«Իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն ետապը»): Խստագույն պայքար ե մզգում մենաշնորհային կապիտալի տարբեր յերկրների միջև՝ թույլ, լետամաց լերկրների շուկաների համար:

Իր գարգացման այս աստիճանի վրա մենաշնորհալին կտպիտալիզմը կոչվում է իմպերիալիզմ:

Ինչ է ԻՄՊԵՐԻԱ-
ԼԻԶՄԸ: պիտալիզմի նորագույն ետապն ե (աստիճանը): «Իր տնտեսական ելությամբ իմպերիալիզմը մենաշնորհային կապիտալի մենաշնորհային կապիտալիզմն ե»—գրում եր ընկ. Լենինը և ցուց եր տալիս իմպերիալիզմի հետեւալ չորս նշանները.

1. Կապիտալիստաների մենաշնորհալին միությունները—սինդիկատներ, տրեստներ և այլն:

2. Արտագրության համար անհրաժեշտ հումուզի աղբյուրների մենաշնորհայի տիրապետություն:

3. Բանկերի, Փինասնական կապիտալի տիրապետություն:

4. Պայքար համաշխարհային շուկաների, գաղութների համար, գաղութային նվաճողական քաղաքականություն, վորը նպատակունի ամրող աշխարհի բաժանումն իմպերիալիստական պետությունների միջև:

Հնկեր լենինը այսպես ե բնորոշում իմպերիալիզմը՝ «Իմպերիալիզմը—ալդ գարգացման այն աստիճանի վրա գտնվող կա-

պիտալիզմն ե, լերք կազմակերպվել և մենաշնորհների ու ֆինանսական կապիտալի տիրապետությունը, առաջնակարգ նշանակություն և ձեռք բերել կապիտալների արտահանումը, սկսվել և աշխարհի բաժանումը միջազգային տրեստների ձեռքով և ավարտվել և լերկրագնդի ամրող տերրիտորիայի բաժանումը խոչորագույն կապիտալիստական լերկրների կողմից»:

Քաղաքական տեսակետից ընկ. Լենինը իմպերիալիզմը բնորոշում և ալսպես՝

«Ազատ մրցությանը գեմոկրատիան և համապատասխանում. մենաշնորհներ, քաղաքական բնակցիան և համապատասխանում»։ «մենաշնորհներ, ոլիկարխիա, ազատության ձգտման փոխարեն տիրապետության ձգտում, մի բուռն ամենահարժւած կամ ամենաառեղազգերի ձեռով հետզհետե ազելի մեծ թվով մանր կամ թույլ ազգերի շահագործում,—այս ամենը ծնեց իմպերիալիզմի այն բնորոշ գծերը, վորոնք ստիպում են նրան բնորոշել վորպես պարագիտային կամ նեխվող կապիտալիզմ»։

Լենինը սովորեցնում եր, վոր իմպերիալիզմ-ինքնառության մի միջենական ժամանակ կապիտալիզմի վերջին ասինանն ե: Կապիտալիզմի զարգացման այս աստիճանում նրա այն հակասությունները, վոր հատուկ ելին մինչ-մենաշնորհնային կապիտալիզմին, անսովոր չտփով սրվում են: Հակասությունները՝ արտագրության հասարակական բնույթի և անհատական լուրացման միջև առանձնապես ցայտուն են դառնում, վորովհետե ալդ լուրացումը կատարվում և կապիտալիստների հետզհետե փոքրացող խմբակի կողմից։ Մրցումը չտեսնված ուժ և ստանում մի կողմից կապիտալիստական միավորումների միջև՝ լերկրի ներսում և մլուս կողմից մի շարք լերկրների կապիտալիստների միավորումների և ուրիշ լերկրների նույնպիսի միավորումների միջև։ Մինչ-մենաշնորհնային շրջանի մրցության պարբին ավելանում և գաղութների, աշխարհի բաժանման համար մզվող պայքարը։ Այս պայքարը տանում և դեպի իմպերիալիզմի շրջանում անխուսափելի պատերազմներ, դեպի իմպերիալիստական պնտությունների անդադար զինումնեն։ Ալդ զինավորման վրա ծախսվում են հասարակական աշխատանքով ստեղծված տնասահման հարստություններ, իսկ դրա կողքին անում և աղքատությունն ու թշվառությունը, պրոլետարանում և հասարակության մեծամասնությունը։

Կապիտալիզմն սկսում և փթեր Յեթե սկզբներում, մինչեւ
մենաշնորհային դրության հասնելը կապիտալիզմը կատաղի թա-
փով զարգացնում եր մեքենայական տեխնիկան, մացնում եր-
տեխնիկական կատարելագործություններ, վորոնք կրճատում և
թեթեացնում ելին աշխատանքը և զարգացնում ելին հասարա-
կության արտադրական ուժերը, ապա այժմ մենաշնորհային կա-
պիտալը շահագրգոված չե այդ բանում: Ասած այդ հարկավոր եր-
փոխադարձ մրցության համար: Ներկայումս տրիստը մենաշնոր-
հային դրություն վայելելով շուկայում, այնու շահագրգոված չե
տեխնիկական կատարելագործություններ մացնելու և արտա-
դրական ուժերը զարգացնելու: Կարիք չկա ձեռնարկությունները
տեխնիկապես վերակառություն (դա խոշոր գումարներ և պահան-
ջում) – չե վոր շուկան իր ձեռքումն ե, ուրիշ վոչվոք չի կարող
նվաճել այլևս: Մինչեւ իսկ չեն ոգտագործվում հասարակության
ունեցած արտադրական ուժերը, վորովհետև մենաշնորհի տերերը
զերադասում են քիչ ապրանք բաց թողնել շուկա, վորակեսվի ա-
վելիք բարձր գներ ստանան նրանց փոխարեն (պահանջը գերա-
կշուի առաջարկությանը): Կապիտալիզմի հետագա զարգացումը,
նրա աճումը կանգ և առնում, վորի հետևանքով և ինչպես ա-
սում եր Լենինը, առաջ ե գալիս կապիտալիզմի փթումը: Սա,
ի հարկե, չի բացասում այն հանգամանքը, վոր իմպերիալիզմի
շրջանում արդյունաբերության առանձին ճյուղերը կամ կապի-
տալիստական առանձին լերկրները շարունակում են զարգանալ:
Սակայն մենաշնորհային կապիտալիզմի հիմնական տեխնիկացը—
դա դանիակ փրումն ե, կապիտալիզմն, ինչպես ասում են, սպա-
ռել ե իր ստեղծագործական բոլոր ուժերը, առաջգնալու ել տեղ
չունի, նա իր տեղը պետք ե զիջի մեկ ուրիշ հասարակակարգի:
Այդ ուրիշ հասարակակարգը հանդիսանում ե սոցիալիստական
հասարակակարգը: Յեկ նախադրյաները և պալմաններն այս հա-
սարակակարգի համար ավելանում են մանավանդ մենաշնորհային
կապիտալիզմի ժամանակ. արտադրական ուժերը մեծ բարձրու-
թյան են հասել վոչ միայն կապիտալիստական առաջավոր լեր-
կրներում, այլ նաև լետացնաց լերկրներում: Արտադրության մի-
ջոցները կենտրոնացել են միլիարդերների մի աննշան խմբակի
ձեռքում, վորոնք բոլորովին կապված չեն արտադրության հետ,
այլ այդ արտադրությունը վարում են վարձու ապարատի մի-
ջոցով—վերատեսուչների, կառավարիչների և այլն միջոցով: Այդ
խմբակի հեռացումը, նրանց ձեռքից արտադրության միջոցների

խլումը և հանձնումը հասարակության ձեռքը, դառնում և հասարակության հետագա զարգացման ուղղակի և անհրաժեշտ պայմանը, ինչպես մենք տեսանք, կապիտալիզմը նախապատրաստում և գեղի սոցիալիզմն անցնելու համար վոչ միայն տնտեսական նախադրյալներ, այլ և ստեղծում և իր գերեղմանափորին—պրոլետարիատին: Հակասությունները պրոլետարիստի և կապիտալիստաների դասակարգի միջն իմպերիալիզմի ժամանակ հասնում են ծալյր աստիճանի սրության: Կապիտալիստաների հզորագույն միավորումները բոլոր հնարավորություններն ունեն շահագործում ուժեղացնելու: Նրանց դիմագրավել կարող և միմիայն բանվորների միությունն ամբողջ աշխարհում: Դասակարգային կոիվ իմպերիալիզմի շրջանում միջազգային բնույթ և ստանում: Պրոլետարիատի դաշնակիցներն են հանդիսանաւմ գլուղի պրոլետարական և կիսապրոլետարական խավերը և գաղութային լերկը: Ինքների մագերիալիզմի կողմից հարստահարված աշխատավորները: Ակսվել և գնուական պալքար ամբողջ աշխարհի հարլուր միլոնավոր աշխատավորների և փթող, պարագիտալին կապիտալիզմի, աշխարհի բոլոր հարստություններն իրենց ձեռքում պահող պարագիտաների մի փոքրիկ խմբակի միջն: «Այս պալքարում պրոլետարները վոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շղթաներից, բայց ձեռք կրերեն ամբողջ աշխարհը»—գրում ելին դեռ Կարէ Մարքսն ու մ. Ենգելսը: Վաղ թե ուշ այդ պալքարում հաղթանակությունները, կամ լինելու լեռ պրոլետարիատը, վորովհետեւ կապիտալիզմի վերջին փուլում—իմպերիալիզմի շրջանում մտնում և մի փակուղի, վորտեղից դուրս գալու միակ բնական ուղին պրոլետարական հեղափոխությունն և ամբողջ աշխարհում:

§ 4. ԽՍՀՄ բանկերն ու արտադրության միավորումները.

ԽՍՀՄ կան տրեստներ, սինդիկատներ, բանակություններ, սինդիկատներ, կեր: Սակայն նրանց բնույթն ու նպատակը սինդիկատները, բոլորովին տարբեր են: Քննենք այս հարցը: ԽՍՀ Միության մեջ ամբողջ պետարդյունաբերությունը կառավարում և ժողովրդական Տնտեսության Գերազույն Խորհուրդը (Ժողովնախորհը): Սակայն նա անկարող և անմիջականորեն կառավարել ամեն մի ձեռնարկություն առանձին առանձին վիճակում և բացի այդ իսկի ձեռնատու լել չի նրանց արդարիսի ցըլածությունն ու բաժան-բաժան լինելը: Այդ պատճառով պետձեռ-

Նարկությունները միանում են տրեստների մեջ; Ամեն մի առանձին ձեռնարկության և նույնիսկ տրեստի համար ձեռնուու չի ինքնուրույնաբար լեռեան գալ շուկայում, առեւրական ծախսե. բը շատ կիլեն. Այդ պատճառով մեր ձեռնարկությունները միանալով կազմում են սինդիկատներ, վորոնք և վարում են ապրանքի սպառումը շուկայում: Որինակ, նավթասինդիկատն ստանալով նավթային տրեստներից ամբողջ քարյուղը, նավթն և ուրիշ նավթային մթերքները, կազմակերպում են րանց վաճառքը Միության սահմաններում և արտասահմանում: Նույնը և տեքստիլ սինդիկատը: Մինդիկատները գտնվում են Ասեւրական ժողոմատի վարչության տակ, վորը կառավարում է ԽՍՀՄ ամբողջ առևտուրը: Իսկ տրեստները՝ ժողունտիորնի վարչության տակ, վորը. և ղեկավարում են ամբողջ պետարդյունաբերությունը:

Այսպիսով տրեստներն ու սինդիկատները կառավարում յեն ղեկավարում են պետարդյունաբերությունն ու առեվտուրը: Մեր տրեստներն ու սինդիկատները վորոշ ճյուղերում մենաշնորհային դրության մեջ են շուկայում: Այլ կերպ ել չի կարող լինել, յեթե բոլոր հրամանատարական բարձունքները գտնվում են պետության ձեռքում և կառավարվում են մի կենտրոնի կողմից: Մակայն մեզ մոտ պետարդյունաբերության այդպիսի մենաշնորհային դրությունը շուկայում չի նշանակում մանր տնտեսությունների քայլքայում, այլ ընդհակառակը՝ նրանց բարձրացում: Մեզ մոտ տրեստներն ու սինդիկատները շահագործական բնույթ չեն կրում, ինչպիսին են կապիտալիզմի ուղանում:

ԽՍՀՄ կան նաև բանկեր՝ պետական, գյուղատնտեսական, առեւրառարդյունաբերական,

կոռպերատիվ և ուրիշներ: Մասնավոր կապիտալիստները մեզ մոտ բանկեր չունեն և չեն ել կարող կազմակերպել: Ինարկե, ավանդներ տալ բանկին, իր կապիտալները բանկերում պահել կարող են և մասնավոր կապիտալիստը, բայց միայն ալդքան, վոչ ավելի: Տիրանալ բանկին նա չի կարող: ԽՍՀՄ բոլոր բանկերը պետության և կոռպերացիայում կազմակերպված աշխատավորների (կոռպերատիվ բանկեր) ձեռքումն են գտնվում: Նրանց նպատակն են ժողովել աղդաբնակության խնալողությունները և գործադրել այն արդյունաբերության և գյուղատնտեսության բարձրացման վրա: Բանկերը մեզ մոտ ոգնում են արդյունաբերությանը, մատակարարում են նրան ժողոված գումարները: Նույնը և գյուղատնտեսության մեջ: Խորհրդային իշխանությունը ձգտում է

բարձրացնել գյուղացիական տնտեսությունը և բանկերի միջոցով ոգնում են նրան եժան վարկ բաց թողնելով: Այս նպատակի համար հիմնված ենատուկ գյուղատնտեսական բանկ, Խորհրդային իշխանության ձեռքում արեստները, սինդիկատները և բանկերը ծառայում են վոչ միայն ընդհանուր ժողովրդական տնտեսության բարձրացման, այլև Երան պլանային կարգավորմանը: Յեթե այս կամ այն ձեռնարկությունը, լինի նա պետական թե մասնատիրական-կապիտալիստական, կախումն ունի բանկային վարկից, ապա նա կարող ել լայնանալ նրան բացված վարկերի ծավալով: Բանկերը գտնվում են Խորհրդային պետության ձեռքում, այս պատճառով նա՝ պետությունը ունի բոլոր հնարավորությունները կարգավորելու ժողովրդական տնտեսությունն իր վարկերով: Խշխանության պլանային որգանները (Պետպլան) կազմում են յուրաքանչյուր տարրվա համար արտադրության, առևտրի և վարկերի պլանը: Այս պլաններով են գործում տրեստները, սինդիկատներն ու բանկերը: Սրանց մենաշնորհիալ գրությունն արտադրության, առևտրի և վարկերի ասպարեզներում միմիայն ոգնում ե պլանային կերպով կարգավորելու ԽՍՀՄ ամբողջ տնտեսական կյանքը:

Հետևաբար տարբերությունը կապիտալիստէական տրեստների, սինդիկատների ու բանկերի և խորհրդային տրեստների, սինդիկատների ու բանկերի միջն ծագում են նրանից, թե ում ձեռքումն են նրանք գտնվում և ինչին են ծառայում: Այստեղ նրանք գտնվում են կապիտալիստների ձեռքում, այդ պատճառով ծառայում են կապիտալիստների ուժեղացման, շահագործման ծավալման և մանր տնտեսության քայլալման նպատակներին: Այստեղ՝ մեզ մոտ նրանք գտնվում են աշխատավորների ձեռքում և այդ պատճառով ել ծառայում են սոցիալիստական շինարարության նպատակներին: Մեզնում դրանք հետեղողական սոցիալիստական տիպի արդյունաբերության շարքին են պատկանում և ծառայում են սոցիալիզմի կառուցման նպատակին:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ պատճառով և ինչու համար են կապիտալիստները միանում և սինդիկատներ ու տրեստներ կազմում:

2. Ի՞նչ գիրք են գրավում կապիտալիստական միավորումները շուկայում:

3. Ի՞նչ դեր են խաղում կապիտալիստական արդյունաբերության մեջ բանկերը:
4. Ի՞նչ ճանապարհով են տիրապետում արտադրությանը բանկերը կապիտալիզմի ժամանակի:
5. Ի՞նչ է բերում իր հետ ֆինանսական կապիտալի տիրապետությունն աշխատավորական մասսաների համար:
6. Վերացնելու են արդյուք կապիտալիստական միավորումները մրցությունը:
7. Իմպերիալիզմի Բնչ բնորոշ գծերի վրա լե մատնանշել Անինը:
8. Ինչու իմպերիալիզմի ժամանակ անսովոր չափով սրվում են ինչպես հակասություններն իրեն՝ կապիտալիզմի ներսում; Նույնպես և դասակարգավիճ պայքարը:
9. Ի՞նչ դեր են խաղում ԽՍՀ Միության մեջ տրեստները, աինդիկատներն ու բանկերը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԳԱՂՈՒՅՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ԹԵՍԱՔ, թե ինչպես կապիտալիզմն առևտնաբանութեալ ճեղով վեր և ածվում իմպերիալիզմի և թե ինչութեալուն չու իմպերիալիզմը ձգառում և անընդհատ լայնացնելու իր կողմից շահագործվող տերրիտորիաները։ Այժմ տեսնենք, թե ինչպես և իմպերիալիզմը շահագործում գաղութների և մյուս նվաճած լերկրների ժողովուրդներին և թե ինչ և բերում այդ ժողովուրդներին։ Սրա հետ միասին քննենք, թե ինչպես և վերաբերվում այդ ժողովուրդներին Խորհրդային իշխանությունը։

§ 1. Աջամարի բաժանումը խուռագույն իմպերիալիստական յերկրների միջեվ։

Այսպիսով կապիտալիստների մենաշնորհային հաջ եւ ԳԱՂՈՒՅՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՈ՞Ի ՅԵՎՆՔ ԱՐԱՆՔ ՀԱՐԿԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻՆ Միավորություն ամբողջովին իրենց ձեռքն են առնում լերկրի ներքին շուկան և շահագործում նրան։ Սակայն ներքին շուկայի այլպիսի անբաժան և մենաշնորհալ շահագործումը հնարավոր և միմիայն իրենց լերկրի սահմաններում, վորի պահանջներն այնպես արագ չեն աճում, վորպես կարող և լայնանալ արդյունաբերական արտադրությունը։ Կապիտալիստական տեսանկեր համար նեղ են իրենց յերկրի սահմանները, նրանց հարկավոր են նոր տուկաներ։

Բայց ինչպես ձեռք բերել այդ շուկաները։ — Կարելի լե պատերազմել ուրիշ կապիտալիստական պետության հետ, հաղթել նրան և խլել նրա հողը։ Սակայն դա դժվարին և պատասխանառու գործ ե։ Ավելի դյուրին և լենթարկել իրեն վորեա լետամնաց լերկր, վորտեղ կապիտալիզմը զեռէս չի զարգացած և վորտեղ, հետևաբար, մրցության և դիմադրության չես հանդիպի։ Դեպի

այդ լերկրներն ել դիմում են կապիտալիստները։ Սակայն բնչ
ենք հասկանում գաղութ ասելով։

Մենք գաղութ ենք անվանում ընական հարստություններով լի այն լերկրամասերին, վորոնք բռնի կերպով խլված են և շահագործվում են իմպերիալիստական պետությունների կողմից։

Գաղութներ են այն ազրարային լերկրները, վորոնցում քա-
ղաքալին արդյունաբերությունն ու տեխնիկան թույլ ե զարգա-
ցած, ազգաբնակչությունը կուլտուրապես լետամնաց և վորոնք
գտնվում են իմպերիալիզմի քաղաքական ճնշման և տնտեսական
շահագործման ներքո։

Կապիտալիստական առաջավոր պետությունները վաղուց
արդեն ձեռք են ձեզել այդպիսի անտեսապես լետամնաց լերկրներ—
գաղութներ։ Անգլիան, որինակ, լերկու հարյուր տարուց ավելի
է, ինչ տիրում ե Հնդկաստանին։ Բայց գաղութների գրավումն
ավելի արագ սկսեց կատարվել 40—50 տարի առաջ, լերք սկսեց
զարգանալ մենաշնորհային կապիտալիզմը։ Գաղութները հարկա-
վոր են կապիտալիստներին վոչ միայն իրեն նոր շուկաներ ար-
դյունաբերական ապրանքներն սպառելու համար։ Հարածուն ա-
նող կապիտալիստական արտադրության համար պահանջվում ե
ավելի ու ավելի մեծ քանակությամբ հումուկի։ Կապիտալիստա-
կան լերկրների հումուկիթի պաշարը սահմանափակ և կարող ե
վերջանալ։ Հարկավոր ե հումուկիթ փնտոել ուրիշ լերկրներում,
հարկավոր ե այդ լերկրները վաղորոք գրավել, քանի նրանք չեն
ընկել ուրիշ լերկրների կապիտալիստների ձեռքը։

Ահա, որինակ, անգլիական կապիտալը գրավել ե այն հո-
ղերը, վորտեղ կարելի լի ծառերի հումուկից ստանալ կառուզուկ,
վորից ուստին են պատրաստում։ սրա հետեւանքով ամերիկական
կապիտալիստները, վոր համաշխարհային շուկալում ամենազդիլսա-
վոր սպառողներն են ուստինի, ստիպված են հարյուրավոր մի-
լիոն ուռելիներ ավել վճարել շնորհիվ նրա, վոր անգլիացիներն
անշափ բարձրացրել են կառուզուկի գները։

Գաղութներն ու լետամնաց լերկրները գրավում են շահույթի
լետերց աղահարար վազող կապիտալիստներին նաև իրենց եժան
աշխատանքով։ Կապիտալիստի համար ձեռնտու լի իր կապիտա-
լի մի մասը փոխադրել գաղութ, հիմնել այնտեղ գործարան, բան-
վորներն այնտեղ միքանի անգամ եժան են, իսկ հաճախ ել
հումուկիթը մոտ ե։ Այդ բանին հարկադրում ե կապիտալիստնե-
րին նաև իրենց լերկրների շուկաներում տիրող դաժան մըցու-
ր

թլունք: Այդ շուկաներն այլևս նեղ են կապիտալի համար և նրա մի մասն ստիպվում ե փոխադրվել գաղութ և կամ առհասարակ իր լերկրի սահմաններից դուրս: Կապիտալների ալսպիսի արտահանումը լերկրի սահմաններից դուրս հանդիսանում է իմպերիալիստական շրջանի ամենաբնորոշիչ գիծը: Ալսպիտով գաղութների գրավումն իր լետնից բերում ե՝ 1) ապրանքների սպառում գաղութներում, 2) հումուզի ստացում գաղութներից և 3) կապիտալների մի մասի արտահանում դեպի գաղութները: Իսկ այդ բոլորը միասին տանում են դեպի կապիտալիստական արտադրության լայնացում և կապիտալիստական շահագործման ուժեղացում:

Ներկա դարի սկզբներում ամբողջ աշխարհում ԱՇԽԱՐՀՈՒ-
ՑԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, այլևս չեր մնացել մի կտոր ազատ, կապիտալի
կողմից չգրաված հող: Վայրենի կամ լետամնաց
ժողովրդներով բնակված բոլոր հողերը դարձել ելին իմպերիալիս-
տական առաջավոր լերկրների գաղութները: Ամբողջ աշխարհը
բաժանված եր մեծ պետությունների միջև:

Մեծ պետությունների գաղութային տիրապետությունները
1924 թվին (հազար քառակուսի կիլոմետրներով և միլիոն
քնակչությամբ):

	ՄԵՏՐՈԳՈԼԻԱ		ԳԱՂՈՒԹՆԵՐ	
	ՏԵՐԵԲԱՐՔԻԱ	ԲՆԱԿՆՈՒ- ԲՅՈՒՆ	ՏԵՐԵԲԱՐՔԻԱ	ԲՆԱԿՆՈՒ- ԲՅՈՒՆ
Անգլիա	300	46,5	33500	393,5
Մոռասո. (ցարական)	5400	186,2	17400	33,2
Ֆրանսիա	500	39,2	10600	55,5
Գերմանիա	500	61,9	2900	12,3
Միացյալ Նահանգն.	9400	97	300	9,7
Ճապոնիա	400	53	300	19,2

Այս աղյուսակից լերեռում ե, վոր Անգլիայի գաղութները
110 անգամ ավելի լին, քան իր սեփական տերրիտորիան (մետ-
րոպոլիան), իսկ Անգլիայի ամեն մի բնակչին ընկնում է հա-
մարլա թե մեկ տասնյակ գաղութային սարուկ:

1914—1918 թ. պատերազմը գլխավորապես նպատակ ուներ աշխարհի նոր ռաժանումը, Նրա հետևանքով Գերմանիան դրկվեց իր բոլոր գաղութներից, իսկ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութներն ավելի լախացան:

Իմպերիալիստներն իրենց գաղութներում լի-
թետանաց, կանոն-
ակատար տեր ու տիրական են: Նրանց ձեռ-
սը ունեցող թեր-
կումն և ամբողջ իշխանությունը, նրանք հրա-
կութեալ թեր-
րակում են իրենց որենքները, գրավել են
բոլոր հարսառությունները և լիովին անորինում

են ըստ իրենց ցանկության: Վորպես որինակ կարող ե ծառա-
լի չնդկաստանը: Սա մի խոշոր լերկիր և 320 միլիոն ազգա-
բնակությամբ, այստեղ բնակվում են ինդուստրիալ (ազգաբնա-
կության թվով լերկու անգամ ավելի էն ԽՍՀ Միությունից):
Չնդկաստանն Անգլիայի գաղութն և կառավարվում ե անգլիա-
կան չինովիկներով:

Բայց կան և այնպիսի լերկրներ, վորոնք թեև գաղութներ
չեն, սակայն մեծ կախումն ունեն իմպերիալիստներից և հարցու-
տահարվում են նրանց կողմից: Այսպիսի լերկրների որինակ
կարող ե ծառալի Զինաստանը, Արևելքի այս տհագին լերկիրը,
450 միլիոն ազգաբնակությամբ: Թղթի վրա Զինաստանն ան-
կախ պետություն ե. այստեղ գոյություն ունի չինական կառա-
վարություն, ունեն իրենց որենքները, գոստիկանությունը, զորքը
և այլն և այլն: Բայց իրականում Զինաստանը մեծ կախումն ու-
նի իմպերիալիստներից: Մրանք չեն կարողացել Զինաստանը լի-
ովին գաղութ դարձնել, բայց կարողացել են խճճել նրան ու
կաշկանդել այնպիսի ստրկացուցիչ պարմաններով, վոր փաստո-
րեն տեր են դարձել այդ լերկրում: Իմպերիալիստները հարկա-
դրել են Զինաստանին իրենց վարձակալության տալու լերկրի
աշքի ընկնող հարստությունները (կոնցեսսիաներ). քաղաքների
ամենալավ թաղամասերը գրավված են իմպերիալիստների կող-
մից, այստեղ չինական իշխանությունը և որենքներն անզոր են
(եքստերիտորիալ), լեզվոպացիք լենթակա չեն չինական որենք-
ներին, այլ գատվում են իրենց կառավարությունների ներկա-
յացուցիչների կողմից (կոնսուլներ): Յեզրոպացիք իրենց ձեռ-
քումն են կենտրոնացրել առևտուրը, արդյունաբերությունը, ծո-
վալին նավահանգիստները, պողինաներ են վերցնում և այլն:
Այսպիսի անհավասար պարմանագրերով իմպերիալիստները լեն-
թարկել են իրենց մի շարք լերկրներ, վորոնք թղթի վրա ան-

կախ են համարվում։ Այսպիսի լերկըները, վորոնք գաղութներ չեն, մենք անվանում ենք կախումն ունեցող երկըներ կամ կիսապաղութներ։

Այսպիսի լերկըներից ե Ասիալում՝ Զինաստանը, Ավղանըստանը, Պարսկաստանը, Աֆրիկալում՝ Յեզիդիստուսը, Հաբեշստանը։ Այդպիսի լերկիր եր Տաճկաստանը, բայց վերջին ժամանակները տաճիկ ժողովուրդը համառ ու դաժան պատքարի միջոցով փոքր էնչ ազատվել և իմպերիալիստաներից։

Ելազես տարբերությունը՝ գաղութալին և լետամնաց կիսազաղութալին լերկըների միջև այնքան ել մեծ չե։ Իմպերիալիստաների շահագործումն այդ լերկըներում լերբեմն գնում և տարբեր ձեռքով ու միջոցներով, սակայն հավասարապես ծանր և թե գաղութալին և թե կախումն ունեցող լերկըների ժողովրդների համար։

§ 2. Գաղութների յեվ կախումն ունեցող յերկրների շահագործումն իմպերիալիզմի կողմից。

Առեւրական և արդյունաբերական կապիտալի մուտքը լեռտամնաց լերկըները միշտ կատարվում և բռնությունների և թաշանի միջոցով։ Ներկալիս Ամերիկայում 300 տարի առաջ բնակվում ելին հնդկացիները, մեծաքանակ մի ժողովուրդ։ Ամերիկացի գլուխի և լեզրոպացիների այդ լերկըների տիրանալուց հետո հընդկացիները զրկվեցին իրենց հողից, գոնդվեցին զեպի լեռներն ու անտառները և սկսեցին կոտորվել։ Միլիոնավոր հնդկացիներից մնացին միմիկայն հազարավոր խզճուկ մնացորդներ։ Հնդկական ժողովրդի վոսկորների վրա աճեց ալժմլան կապիտալիստական Ամերիկան։

Կապիտալիզմն սկսեց մուտք գործել Աֆրիկա ամենից առաջ ստրկավաճառների ձեռվ, վորոնք վորսում ելին նեզրերին վորպես անասունների և վաճառում ելին գլխավորապես Ամերիկայում։ Ստրկատիրությունն Ամերիկայում վերացավ միմիկայն լութանասուն տարի սրանից առաջ։

Հնդկաստանում, Արևելքի այս ամենահարուստ լերկըներ, մինչև անգլիական կապիտալիզմի մուտքն արտեղ միլիոնավոր տնախնագործներ ապրում ելին ջուլհակությամբ։ Անգլիական կապիտալիստներն ար լերկիրն իրենց զաղութը դարձնելով, հեղեղեցին գործարանալին հժան չթեղենով։ Հնդկաստանի տնախ-

դործ-ջուլհակները մրցության չղիմանալով, միլիոններով քաղցից կոտորվում ելին: Կ. Մարքսը գրում եր, վոր Հնդկաստանի դաշտերն սպիտակին են տալիս քաղցած մեռած ջուլհակների վոսկորներից:

Ահա թե ինչ սարսափներ և բերում կապիտալիզմը գաղութային ժողովրդներին:

Ենք կապիտալիստներն ամրանում են զբաված գաղութում, նրանք սկսում են ընակչությանը սիստեմատիկ և գաֆանկերպով շահագործել: Նրանք հարկադրում են նրանց ծանր հարկերով և անողոքարար ժողովում են ալդ հարկերը: Ահա շահագործության մի պատկեր բեկդիական գաղութում՝ կոնգոլում (Աֆրիկա): «Ամբողջ Կոնգոն բաժանված է շրջանների: Այնտեղ կան կառուչուկի շրջան, հանքալին շրջան, պարենեղենի շրջան, փղոսկրի շրջան և այլն: Ամեն մի ալդպիսի շրջանում տեղացիներին ստիպում են աշխատել և իրենց հարկը մտցնել՝ նայած շրջանին, կառուչուկով, հանքով, փղոսկրով, պարենեղենով և այլն:

Շրջանի վերատեսուչը կազմում և ցուցակ, թե ինչ և պահանջվում շրջանից: Ցուրաքանչյուր մի զլուղ պարտավոր և հանձնել այսքան կիլոգրամ կառուչուկ, այսքան հացահատիկ, այսքան ժամիքներ և այլն:

Մեկ գյուղի բնակիչներ պարտական ելին լուրաքանչյուր շարաթ Յանջալիի (գյուղ ե) սպիտակամորթների և նրանց զինվորների համար վորոշ չափով հաց հասցնել:

Այսչափ հաց պատրաստելու համար ամբողջ գյուղն աշխատում եր ինչպես մի փեթակ. տղամարդիկ հավաքում ելին, կանալք աղում և թխում վաղ առավոտից մինչև ուշ գիշեր:

Իսկ թալանչիների պահանջները չկատարելը կամ նրանց հակառակելն ահա թե ինչ հետևանքներ եր ունենում աեղի բընակչության համար. «Մեկ ժամից հետո պատժիչ հանձնախումբը հեռացավ, Ավաղանները մնացին միայնակ իրենց լուրթյամբ».

Դյուղի խըճիթներն ավերված ելին: Խոտերի վրա թափթը փափած ելին անձեռ դիակները. պատժիչ հանձնախմբի մասնակիցները, հարբած իրենց գործունելությունից, դեռ չհեռացած, կապուտակ լերկնքից քարի պես ցած նետվեց անգղը: Նրանից հետո մյուսը, լերրորդը...

Ենթե վորեն մեկը մեկ ամսից հետո նալեր ալդ տեղին, ուր գործել եր պատժիչ հանձնախումբը, նրա հալացքին կներկայանար հետեւալ պատկերը. ահա ալն ծառի տակ, վորտեղ զինվո-

բը դաժանորեն անդամահատել եր մի աղջկա, ընկած ելին նրա վլուկորները: Այն տեղում, վորտեղ մի հարվածով կտրել ելին սեաչյա լերեխալի գլուխը, ընկած եր փոքրիկ գանգը, վոսկորներն անգզների կողմից մաքրված և տրոպիկական արևի տակ սպիտակած, թափթփված ելին այս ու այն կողմը: Ամեն տեղ գանգեր, ծնոտների և աղջրերի վոսկորներ, կոտրաված և ամբողջ: Տեղացիների խղճուկ խճիթների թշվառ մնացորդները լրացնում ելին այս գերեզմանատան պատկերը»:

Վերջին տասնամյակներում արևմտա-յեվրոպական և ամերիկական կապիտալիստներն սկսեցին գաղութները և Արևելքի լերկրները փոխադրել իրենց կապիտալները և կառուցել այնաեղ իրենց ֆարբիկաներն ու գործարանները: Աշխարհի լերեսին վոչ մի տեղ չկա այնպիսի դաժան շահագործում, վորպիսին տիրում և այդ գաղութալին ձեռնարկություններում:

Գաղութալին ժողովրդների ամեն մի գժգոհություն, գործադրուց կամ խռովություն խստորեն ճնշվում ե: Անգլիան, որինակ, իր գաղութներում «կարգն ու հանգստությունը» պահպանելու համար այնտեղ պահում ե իր բանակի և նավատորմի մեծ մասը: Հնդկաստանի խռովարար գյուղերն ավերվում են աերոպլաններից նետած ոռումքերով: 1919 թվին Հնդկաստանի Ամրիտարի քաղաքում գործադրուց արին միքանի գործարանների բանվորներ: Ութհաղարանոց ամբոխը հավաքվել եր հրապարակի վրա: Անգլիական զորքերն առանց վորսե նախազգուշացման հանկարծակի կրակ բաց արին ամրութի վրա: 500 մարդ սպանվեց, 1500 հոգի վիրավորվեցին: Այս «քաջազործությունը» կատարելուց հետ անգլիական գեներալը հետեւալ որը հրաման արձակեց, վորի համաձայն ամեն մի ինդուս, վորը ցանկանում եր շտաբի շրջանում գտնվող փողոցով անցնել, պարտավոր եր վորոշ տարածություն փորի վրա սողալ: Իսկ միտինգում ձերբակալվածները, նրանց թվում և կանալք հրապարակալին ծեծի շենթարկվեցին փայտերով:

Ծանը հարկերի և կապիտալիստական շահագործության ծանրությունից գաղութալին լերկրների բնակիչներն աղքատանում և քաղցից կոտրովում են:

Գաղութալին և կախումն ունեցող լերկրների ժողովրդները պայքարում են հարստահարող իմպերիալիստաների դեմ: Ինինն ահագին նշանակություն եր տալիս Արևելյան ժողովրդների այս պալքարին: Բանը նրանութիւն ե, վոր իմպերիալիզմի շրջանում

գաղութները հանդիսանում են կապիտալի հզորության հիմնական նեցուկներից մեկը, նրան ուժ են տալիս իրենց լեռների ներսում բանվորական շարժումը ճնշելու համար, Գաղութային ժողովրդների պայքարը թուլացնում է կապիտալիզմի այդ հենարանը, իսկ գաղութային ժողովրդների հաղթանակն սպառնում է նրա գոյությանը, լենինը սովորեցնում եր, վոր պրոլետարիատի դաշնաքը գաղութների ճնշված ժողովրդների հետ կստեղծի այնպիսի ուժ, վորին չի կարող դիմանալ կապիտալիզմը. նա ասում եր, վոր պրոլետարիատի պայքարը կապիտալիստական լեռներում և գաղութային ժողովրդների պայքարն իմպերիալիստական ճնշման դեմ միասին կտապալին կապիտալիզմն ամբողջ աշխարհում և կհաստատեն ամբողջ աշխարհի աշխատավորների հաղթանակը. Այսպիսով իմպերիալիզմը, հանձինս գաղութային ժողովրդների, ստեղծում ե պրոլետարիատի հզոր դաշնակից՝ կապիտալիզմի դեմ մղվող պայքարում:

Ներկայումս այդ հեղափոխական—ազատագրական պայքարն առանձին ուժով ծավալվում է Զինաստանում.

§ 3. ԽԾՀՄ Արեվելքի յելլ գաղութների ննելած ժողովրդների բարեկամն ե.

ԽԾՀՄ գաղութները չունի: Արևելյան այն ծայրագավառները, վորոնք ցարական կարգերի ժամանակ շահագործվում և հարստահարվում ելին, ալժմ՝ Խորհրդային իշխանության որով լիովին հավասար են Միության մյուս ժողովրդներին և ստացել են պետական ինքնուրոււնություն, Խորհրդային իշխանության որով նրանք հանդիսանում են առանձին ինքնուրոււն հանրապետություններ, վորոնք իրավահավասար անդամներ են ԽԾՀ Միության:

Խորհրդային իշխանությունը նախկին ցարական Ռուսաստանի արևելքի ծայրագավառների. ժողովրդներին ազատագրեց գիշատիչ կապիտալի շահագործումից: Ցարական կառավարությունը տիրելով այդ ծայրագավառներին և դարձնելով նրանց իրեն գաղութները, ամեն ջանք գործադրում եր, վորպեսզի այնտեղ զարգանա տեղական արդյունաբերությունը, ամեն կերպ կաշկանդում եր նրանց տնտեսական և կուտառական աճումն ու զարգացումը, Յեթե այդ կերպ չվարվեր, այդ ծայրագավառները կկորցնելին իրենց տնտեսական կախումը Ռուսաստանից

և ռուսական կապիտալիստները չելին կարող այդ լերկրներից խոշոր շահույթներ ստանալի ԽՍՀՄ կառավարությունն ամեն ջանք գործադրում և Միության մեջ մտնող արենելլան հետամմաց ժողովրդներին տնտեսապես և կուլտուրապես բարձրացնելու համար. այնտեղ կառուցվում են դպրոցներ, հիվանդանոցներ, զարգացնում են տեղական արդյունաբերությունը, մտցվում են հոգալին բարենորդումներ, կալվածատերերի և կուլակների հողերը հանձնվում են աշխատավոր գյուղացիությանը և այլն:

ԽՍՀՄ ամբողջ բաղաբանությունն աշխատում է արեվելյան ժողովրդների տեսական յել կուլտուրական կյանքը բարձրացնել:

Խորհրդավոր իշխանությունը վոչ միայն արենելլան ժողովրդներին ինքնուրոււն պետական գորության իրավունք և տվելը այլ և ձգուում և նրանց ինքնուրոււնությունն ապահովել նաև տնտեսապես, աշխատում և բարձրացնել նրանց ժողովրդական տնտեսությունը, դարձնել նրանց ինքնուրոււն:

Այսպիսի քաղաքականությունը խոշոր ազդեցություն ունի իմաստիալիստների իշխանության տակ գտնվող գաղութալիին ժողովրդների վրա. այդ ազդեցության տակ նրանք սկսում են պարագանել իմաստիալիստների գեմ:

ԽՍՀՄ աշխատավորները համակրությամբ են վերաբերվում ճնշված ժողովրդների այդ հեղափոխական աղատագրական շարժմանը: Այս շարժումը նրանք նկատում են վորապես իրենց հզոր դաշնակից, համաշխարհալին իմաստիալիզմի դեմ մղվող կովում: Արևելյան ժողովրդներին համարելով հավասար և լեզրաբակից ժողովրդներ, ԽՍՀՄ հրաժարվեց ցարի կառավարության կողմից կայացած բոլոր անհավասար յել սօրացուցիչ պայմանագրերից (Զինաստանի, Պարսկաստանի հետ): ԽՍՀՄ Արեվելքի ներկած ժողովրդների նույակից յել անկառառ բարեկամն եւ:

Ահա թե ինչու Արևելքի աշխատավորությունն այնպես սիրով և հուսով է վերաբերվում դեպի ԽՍՀՄ, հանձինս վորի նատեսնում և իր իսկական դաշնակցին իր մղած պայքարում: Ճիորհրդավոր իշխալիին Միությունը հանդիսանում է միակ լերկերը, վորն իր կլանքը կառուցում և աղքերի հավասարության և գործակցության սկզբունքի վրա: Խորհրդավոր կառավարությունը հանդիսանում է աշխարհին միակ կառավարությունը, վորը մինչև վերջ պաշտպանում և Տաճկաստանի և Պարսկաստանի, Ավղանստանի և Զինաստանի, ամբողջ աշխարհի գաղութալիին և կախումն ունեցող լերկըների միասնականությունն ու անկախությունը, ա-

զատությունն ու ինքնուրույնությունը։ Ճնշված մասսաները համակրում են Խորհրդակին Միությանն այն պատճառով, վոր հանձինս նրա նրանք տեսնում են իրենց գաղնակցին, իմպերիալիզմից ազատագրելու գործում» (Ստալին):

ՀԱՐՑԵՐ

1. Վճռ յերկրներն են կոչվում գաղութներ։
 2. Ինչի՞ համար են հարկավոր իմպերիալիզմին գաղութները։
 3. Ինչու յեն ձգտում իմպերիալիստական յերկրները, վորոքան կարելի է շատ գաղութային հողեր ձեռք բերելու։
 4. Ի՞նչ միջոցներով են իմպերիալիստաները լենթարկում իրենց արևելյան յերկրները։
 5. Ի՞նչի համար եր 1914—1919 թ. թ. իմպերիալիստական պատերազմը։
 6. Ի՞նչ և բերում իմպերիալիզմը գաղութների և արևելքի լետանաց ժողովրդներին։
 7. Ինչու համար են իմպերիալիստները խոշոր ռազմական ուժեր պահում գաղութներում։
 8. Ի՞նչպիսի քաղաքականություն և վարում ԽՍՀՄ գաղութների և արևելքի լետանաց ժողովրդների վերաբերմամբ։
 9. Ի՞նչ նշանակություն եր տալիս Լենինը գաղութների և արևելյան ժողովրդների հեղափոխական—ազատագրական պայման։
-

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՌԴ

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՑԻ ԴԻԿԱՏԱՏՈՒՐԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿԱՏԱՏՈՒՐԱՆ

Կապիտալիստական տնտեսությունը ԽՍՀ
ԳԼՈՒԽ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ- Միության տնտեսության հետ համեմատելուց
ԹՅՈՒՆԸ՝ հետո, դուք անդնում եք նրանց պետական կար-
գերի համեմատությանը, Դուք պետք եք պարզեք հետևեալ հար-
ցերը. 1) ինչ է պետությունը, 2) ինչումն ե կայանում բուր-
ժուական պետության և պրոլետարական պետության երության,
ձեր և քաղաքականության սկզբունքային տարրերությունը, 3)
ինչ խնդիրներ են զրված քանվորների և գլուղացիների առաջ-
բուրժուական պետության և պրոլետարական պետության վե-
րաբերմամբ:

§ 1. Բուրժուական պետություն.

ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ Դուք արդեն գիտեք, վոր ամեն մի մարդ-
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՐ- կալին հասարակության մեջ, վորը բաղկացած
ԺՈՒԱԶԻԱՑԻ ԴԱՍԱ- ե դասակարգերից, տեղի ունի մշտական կատա-
ԿԱՐԳԱՑԻՆ ԿԱԶՄԱ- ղի դասակարգային պայքար: Ճնշված և շահա-
ԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ Ե, գործվող դասակարգերը պայքարում են իրենց
ԲԱՆԿՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ գորությունը բարելավելու համար: Տիրող դասա-
ԳՅՈՒՆԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՐ, կարգերը պայքարում են իրենց տիրող զրու-
թյունը պահպանելու և ամրացնելու համար:

Դասակարգային կովկը ճնշողների և ճնշվողների միջև տար-
վում ե անընդհատ և համառորեն: Բանվորները կովում են կա-
պիտալիզմը տապալելու, բանվորական որը կրնատելու, աշխա-
տավարձը բարձրացնելու, իրենց համար կենցաղային և կուլտու-
րական տարրական պալմաններ ստեղծելու համար: Գլուղում աշ-
խատավորությունը կովում է կալվածատիրոջ և կուլտակի դեմ,

հողի վարձագինը պակասեցնելու, բատրակների ձնշումը վերացնելու և ընդհանրապես շահագործման ու ստրկացման դարավոր շղթան վերացնելու համար։ Ճնշված լետանաց ժողովրդները կովում են շահագործման և ազգային ճնշման դեմ և այլն։

Վորոշ գեղքերում կրիվը սուր կերպարանք և սահնում և արտահայտվում և գործագույների, ապստամբությունների միջոցով։ Վորպես որինակ կարելի լե բերել անգլիական ածխագործանվորների հերոսական գործագուլը 1926 թվին։

Անգլիայի հանքատերերը գեռ 1921 թվից սկսել ելին վատթարացնել աշխատանքի պայմաններն ածխալին արդյունաբերության մեջ։ Հանքագործների տասներեք շաբաթ տևող գործադուլը 1921 թ. վերջացավ նրանց պարտությամբ։ 1926 թվին հանքատերերը նորից հայտարարեցին, թե աշխատավարձը պակսեցնում են, իսկ բանվորական որն ել լերկարում, սպառնալով հակառակ գեղքում, յեթե բանվորները կրածարվեն այս պայմաններից, փակել ձեւնարկությունները և բանվորներին արձակել։ Հանքագործները նորից գործագուլ հայտարարեցին։ Այս անգամ նրանց կողմն անցան Անգլիայի մասցած բանվորները և ընդհանուր գործադուլ հայտարարեցին։ Գործադուլին մասնակցում ելին $4\frac{1}{2}$ միլիոն բանվորներ։ Արդյունաբերությունը կանգ առավ։ Ցերկաթուղու շարժումը կը ճանապարհությունն արտակարգ դրություն հայտարարեց լերկում։ Բանակը, նավատորմիղն ու ավիացիան ուազմական պատրաստության մեջ դրվեցին։

Ամբողջ բուժուական Անգլիան լերեսը դարձրեց դեպի գործադուլավորները։ Թրոնտը նրանց դեմ սեղմվեց։

Պարլամենտը հաստատեց մի որենք, վորով հանքագործների բանվորական որը լերկարում եր մեկ ժամով։ Կառավարությունը նախապատրաստեց մի որենք պրոֆմիլությունների դեմ։ Վաստիկանուրյունն սկսեց բազմաթիվ ձերբակալություններ անել։ Բանակը պատրաստ եր գործելու, Բուրժուական թերթեն աշխատում ելին ազդել հանքագործների վրա նրանով, վոր սուտ լուրեր ելին տպում, իբր թե բանվորների առանձին խմբակների աշխատանքը վերսկսելու մասին։ Ցերկեղեցին փորձում եր համոզել բանվորներին համաձայնության գալու։

Ցեւնարկատերերը, կառավարությունը, պարլամենտը, վոստիկանությունը, գործերը, թերթերը, լեկեղեցին—ահա բուրժուական այն շարքը, վոր շարվել եր հանքագործների դեմ հանդիման։

Ահա մեկ ուրիշ որինակ գլուղացիների կովկ՝ կարվածատերերի դեմ, 1905 թ. հեղափոխության ժամանակ հեղափոխական շարժումն ընդգրկել եր գլուղացիական բավական լայն մասսաներու գիտուղացիները հավաքվում ելին խմբերով, քննում ելին իրենց դրությունը և աստիճանաբար կովկի մեջ ելին ընկնում. մեծ խըմբերով դուրս ելին գալիս խոշոր հողատերերի դեմ, այրում ու ավերում ելին նրանց պալատներն ու ազարակները, խլում ելին նրանց պայառները, հացը և ուրիշ մթերքները, սպանում ելին գոստիկաններին, պահանջում ելին ժողովրդին հանձնել ազնվականների խոշոր հողալին կալվածները (Լենին), Այն ժամանակվա թղթակիցներից մեկն ահա, թե ինչպես և նկարագրում գլուղացիական խռովությունները.

«Ենրկնականաբն սկսում ե լուսավառվել ամբողջ գիշերը բոցերով, Պատկերը սոսկալի լի—առավոտից դուք տեսնում եք կառաքերի անվերջ շարաններ, լիքն ագարակներից փախչող մարդկանցով, իսկ հենց վոր մթնում ե, ամբողջ հորիզոնը կարծես հագնում ե բոցերից կազմված հրեղեն ապարանջան։ Գիշերներ ելին լինում, ինը միանգամից տասնվեց տեղում նկատվում ելին այդ հրեղեն բոցերը։ Կալվածատերերը խռումապի լենթարկված փախչում են»։

1905 թվի գլուղացիական ապստամբությունները դաժան կերպով ճնշվեցին կալվածատերերի ու ցարի կառավարության կողմից։

Յարական գեներալներ պատժիչ հանձնախմբերով ցըվելով ամբողջ լերկրով մեկ՝ գնդակահարում և ծեծում ելին բանվորներին և գլուղացիներին, այրում ելին գլուղերը, գրավում ելին ունեցվածքը։ Յարսկան բաները լցվել ելին ձերբակալված գլուղացիներով և բանվորներով։ Յարական դատարանները մահվան և տաժանակիր աշխատանքի ելին դատապարտում բոլոր նրանց, ով մի փոքր անգամ կասկածվում եր հեղափոխական շարժմանը մասնակցելու։ մեջ։ Գլուղացիական բանանաները և այլ հոգևոր անձինք լիսակտար աշխատություն ելին ցույց տալիս ժանդարմերին և գոստիկանությանը գլուղացիական ապստամբությունները ճնշելու գործում։

Ինչպես Անգլիակում, նույնական և նույնատանում կապիտալիստներն ու կալվածատերերը միախակ չելին բանվորների և գլուղացիների դեմ մղած այդ կովում։ Նրանց կողմն ելին պետական իշխանությունը, զինված ուժերը, հոգևորականությունը և

ալին. Ամբողջ պետուրյան ջանքերն ուղղված ելին հեղափոխական շարժումը խեղդելու և ստիպելու բանվորներին և գյուղացիներին նորից լենթարկվել կալվածատերերին յել բուրժուազիայի տիրապետությանը:

Կապիտալիստական լերկրներում պետական իշխանությունը պաշտպանում է իր լերկրի բուրժուազիալի շահերը վոչ միայն այն ժամանակ, իերբ բանվորներն և գյուղացիները բացարձակ կռվի լին դուրս գալիս տիրող դասակարգի գեմ (ինչպես վերև բերած որինակներում): Բուրժուական պետությունները միշտ և ամեն տեղ ոգոնում են կապիտալիստներին շահագործելու բանվորներին ու գյուղացիներին անկախ այն բանից, թե սրանք դուրս են յեկել ակտիվ կռվի ընդդիմ բուրժուազիալի, կամ հանդիսա կանգնած իրենց դադզահների առաջ, անտրառունջ տանում են բոլոր զրկանքները:

Բուրժուական պետությունները պաշտպանում են կապիտալիստների և կալվածատերերի շահերը, պահպանում են նրանց սեփականությունն ու արտօնությունները Նրանք (բուրժուական պետությունները) ստեղծված են կապիտալիստների և կալվածատերերի ձեռքով և ծառայում են վորպես գործիք նրանց ձեռքում աշխատավորների վրա տիրապետելու համար:

ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՍՊԱՐԱՍԸ որենքների Բուրժուական մինիստրներն այդ ուղարկությունը ե բենքներն անց են կացնում կյանքում: Հաս- ԲՈՒՐԺՈԱԶԻԱՅԻ կանալի լե, վոր բոլոր որենքները հրապարակ- ՇԱՀԵՐԸ:

Վում են բուրժուազիալի ոգակին: Բուրժուական մինիստրների կողմից նշանակված չինովարիկները հանդիսանում են բուրժուազիալի հավատարիմ ծառաները: Բուրժուական դատարանները պաշտպանում են կապիտալիստների սեփականությունը և նրանց շահագործելու իրավունքները Նրանք միջամտում են բանվորների և ձեռնարկատերերի միջն ծագած կռվին և բանվորների գեմ վորոշումներ են կալացնում: Նրանք բանվորներին բանտ են նստեցնում, իերբ սրանք փորձում են իրենց վրությունը բարելավել, իերբ ալդ նպատակով գործադուլ են անում, ձերբակալում են կոմունիստական կուսակցության պատկանելու համար և ալին: Վորպես որինակ կարելի լի բերել ամերիկական բուրժուազիալի դատը լերկու անարխիստ բանվորների՝ Սակկով և Վանցետիի վերաբերելաւ Սրանք ձերբակալված ելին 1920 թվին ամերիկական միքանի ֆարբիկաներում ծագած դործագուլը դեկա-

վարելու համար։ Զերբակալութիւն ժամանակ Սակկոի մոտ գտել ելին 500 հատ հայտարարութիւնն կայանալիք միտինդի մասին, վորտեղ պետք ե խոսել ընկ. Վանցետտին, Ամերիկական որենքներով միտինդներին դուրս գալը և դրա մասին հայտարարութիւններ տարածելը չի արգելվում։ Սակայն ամերիկական արյունուուշ դատավորն իր բուրժուազիալին հաճուանալու համար վճռեց գլխատել լերկու բանվորներին ել, Ալդ նպատակով նրանց մեղադրեցին արտելշիկին կողոպտելու և սպանութիւն մեջ։ Ապացուցելու համար, թէ Սակկոն և Վանցետտին մասնակցել են այդ սպանութիւնը, գործադրեցին պրովակացիաների և կեղծիքների բոլոր միջոցները։ Դաղտնի վոստիկանութիւն և հանցագործ տիպերից կեղծ վկաներ ցուցադրեցին, վորոնց պատվիրված եր սուս ցուցմունքներ տալ այս մասին։ Այն վկաներին, վորոնք կարող ելին ապացուցել լերկու բանվորների կատարւալ անմեղութիւնն ալի գործում, դատարան չթողեցին։ Այս բոլորի հետևանքն այն լեղավ, վոր ընկ. ընկ. Սակկոն և Վանցետտին մահվան դատապարվեցին ելեկտրականութիւն միջոցով։ Այս պատահեց 1927թ. հուլիսին։ Այս դատավճիռը խոշոր բողոքներ և դժգոհութիւնն առաջացրեց ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի կողմից։ Այս հանգամանքն ստիպեց բուրժուազիալին դատավճուի իրագործումը հետաձգել։ Ալդ ժամանակի ընթացքում հայտնաբերվեց իսկական հանցագործը։ Զնայելով այն հանգամանքին, վոր հանցագործը խոստովանվեց, վոր արտելշիկին սպանողն ինքն ե, բուրժուական դատարանը հրաժարվեց Սակկո և Վանցետտիի գործը վերանալել և 1927թվին հրամայեց դատավճիռն ի կատար ածել։ Ահա թէ ինչպես ե բուրժուական դատարանը հաշիվ տեսնում լավագուցւն բանվորների հետ, բուրժուազիալին հաճուանալու համար։ Ժանդարմերիալի և վոստիկանութիւնն նպատակն ե պալքարել բանվոր դասակարգի այն բոլոր փորձերի դեմ, վոր նրանք անում են կապիտալի, ճնշումից ազատագրվելու նպատակով։

Բուրժուական պետութիւնների զորքերն այնպիսի կազմակերպութիւններն, վոր նրանք բուրժուազիալի ձեռքում ծառայում են վորպես զենք բանվոր դասակարգի դեմ։ Հրամանատարական բարձր պաշտոններին նշանակվում են բացառապես ունեոք դասակարգերի ներկայացուցիչները։ Բանվորներին և գլուղացիներին հրամանատարական պաշտոնների նշանակելը չափազանց սահմանափակ ե և նույնիսկ լերբեմն անկարելի։ Զինվորները զրկված են լերկրի քաղաքական կյանքին մասնակցելու իրավուն-

քից։ Սպանսերն այնպես են դաստիարակում զինվորներին և այնպես են մթագնում նրանց գիտակցությունը, վոր նրանք կովի յեն գնում բուրժուազիալի շահերը պաշտպանելու և պատրաստ են կրակելու իրենց յեղալրների և հայրերի վրա, յեթե սրանք գործադուլ են անում կամ ազստամբվում են բուրժուազիալի տիրապետության դեմ։

Բուրժուազիան չի բավականանում միմիայն բանվորների դեմ որենքներ հրատարակելով և իր ունեցվածքի ու իշխանության պաշտպանության համար զինված ուժեր ստեղծելով։ Նա շատ ճարպիկ կերպով տղղում և նաև աշխատավոր մասսաների գիտակցության վրա։

Բուրժուազիալի տրամադրության տակ ե մամուլը, վորը յուրաքանչյուր որ մթագնում ե բանվորների և գլուղացիների ուղեղները, Բուրժուական պրոֆեսորները, գիանականները, ուսուցիչները, քաղաքական գործիչները և այն այնպես են լուսավորում աշխատավորներին, վոր նրանք սխալ ըմբռնողություն են ստանում դասակարգային կովի և իրենց գերի մասին այդ կովում։ Ավելի մեծ դեր ե խաղում այդ գործում հոգենորականությունը, վոր ամեն մի բուրժուական յերկրում մեծ քանակությամբ կա։ Տերտերները քարոզում են չգիմադրել բուրժուազիալին, քարոզում են յեղբալրություն և սեր բանվորների և ձեռնարկատիերերի, գյուղացու և կալվածատերերի միջև։ Այդ բանն, իհարկե, չի խանդարում հոգենոր հայրերին որհնել այն զորքերին, վորոնք գնում են խաղաղացնելու ապստամբ բանվորներին և գլուղացիներին։ Ըստ յերեսութիւն նրանց համար չարիք ե, իերը բանվորները կըուզում են իրենց տերերի դեմ և առաքինություն՝ յերը զնդակահարում են բուրժուազիալի տիրապետությունը տապալել ձգտող բանվորներին։

ՍՊՐԻԱԼԻՍԱԿԱՆ

ԿՈՒՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ. լու համար կարողացել ե ոգտագործել վորոշ պրո-

ՆԵՐԸ — ԲՈՒՐԺՈՒԱ- Փեսիոնալ միությունների և իրենց բանվորա-

ԶԴԱՑԻ «ԶԱՅՆ ՊԱ- կան կուսակցություն համարող սոցիալիստական

ՀՈՂՆԵՐՆ» ԵՆ։

կուսակցությունների։ Այդ պրոֆմիությունները

(նրանք կոչվում են դեղին պրոֆմիություններ) և այդ կուսակցությունները ղեկավարում են առաջնորդների մի փոքրիկ խմբակ, վորոնց վորոշ բան և հասնում բուրժուազիալի վաստակների փըշ-բանքներից։ Որինակ՝ անգլիական բանվորական կուսակցության ղեկավար Մակոնալդը Փարբիկանտներից նվերներ և ստանում

ավտոմոբիլներ, իսկ անգլիական յերկաթուղարիների պրոֆմի-
ության պարագլուխ թումասը տարեկան 10 միլիոն ռուբրի յերկա-
մուտ ունի: Նրանցից ամենաազդեցիկներին բուրժուազիան ձըգ-
տում և տալ այս կամ այն լավ վարձատրվող պաշտոնը: Այդ դե-
ղին պարագլուխներից շատերը յեղել են և կամ այժմ ել կառա-
վարության անդամներ են և բացարձակ կերպով վարում են բուր-
ժուական քաղաքականություն: Նրանք բոլորը փաստորեն անցել
են բուրժուազիայի կողմը և այնպես են զեկավարում իրենց մի-
ություններն ու կուսակցությունները, վոր դասակարգալին կովում
միջտ անցնում են կապիտալիստաների կողմը: Որինակ, 1926 թվին
Անգլիայում ածխագործների գործադուլի ժամանակ, գործադու-
լավորների կողմն անցան մնացած միուս արտադրությունների
բանվորները և ընդհանուր գործադուլ հայտարարեցին, սակայն
գեղին պրոֆմիությունների և անգլիական բանվորական կուսակ-
ցության (սոցիալիստական) պարագլուխներն սկզբում վիճեցրին
ընդհանուր գործադուլը և ապա ածխագործների գործադուլը:

Դեղին պրոֆմիությունների և սոցիալիստական կուսակցու-
թյունների առաջնորդները բանվորներին դաստիարակում են վոչ
թե բուրժուազիայի դեմ կովելու համար, այլ ընդհակառակը,
նրանք ձգտում են հաշտեցնել դասակարգալին հակասություննե-
րը: Նրանք կոչում են բանվորներին վոչ թե կովելու, այլ բուր-
ժուազիայի հետ համաձայնվելու (վորի պատճառով և կոչվում են
համաձայնողականներ): Նրանք աշխատում են ամեն կերպ խան-
դարել բանվորների քաղաքական յելությունները, յերբ այդ խան-
դարում և բուրժուազիայի շահերին: Նրանք ամեն միջոց գործ են
դնում բանվորական շարժմանը դավանանելու համար:

Ամերիկայի հայտնի բուրժուական գործիչ
ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ Մակ-կենզի-կինզը զրել ե մի զիրք այն մասին,
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ թե ինչպես պետք ե խարել ժողովրդին: Այդ
ԱՇԽԱՏԱԼՈՐՆԵՐԻՆ հարում ի միջի ալլոց գրում ե.
ԽԱԲՈՒՄ ԵՆ: գրքում ի միջի ալլոց գրում ե.

«Բանվորական մասսաները միամիտ են և
տղետ... Նրանք կուրորեն հետեւում են խոսքերին և լողունքնե-
րին: Նրանք կուապաշտներ են և հեքիաթներ սիրող: ուրեմն ստեղ-
ծեցեք նրանց համար կուրքեր: Տվեք նրանց հեքիաթներ: Դուք
կարող եք նրանց հետ անել ինչ ուղենաք, յեթե միայն դուք կա-
րողանաք հարկավոր բովակին պատմել նրանց համապատասխան
հեքիաթ»: Եեվ բուրժուազիան սիրում և կարողանում ե աշխա-
տավորներին հեքիաթ պատմել և նրանց համար կուրքեր ստեղծել:

Բուրժուազիային ձեռնտու չե բացարձակ խոստովանվել
վոր ամբողջ քաղաքական իշխանությունն իրեն և պատկանում.
այդ ձեռնտու չե այն պատճառով, վոր դրանով նա գոլություն
ունեցող պետության դեմ կրաքարացնի բանվոր դասակարգին և
դրանով նրան կմղի դեպի պատքար՝ իշխանությունը ձեռք ձգելու
համար։ Այս պատճառով ել կապիտալիստներն ամեն միջոց գոր-
ծադրում են բանվորներին և գլուղացիներին խարելու և ցուց
տալու, վոր խոշոր կապիտալի վոչ մի զիկատառւրա գոլություն
չունի, վոր պետությունը դասակարգային կազմակերպություն չե,
այլ ընդհակառակը դասակարգերից վեր և կանգնած և կոչված և
նրանց շահերը հաշտեցնելու։

Այս միտքը բուրժուազիան առանձին ուժով սկսեց տարա-
ծել մանավանդ այն ժամանակներից, իերը աճեց ու ամբացակ
բանվորական շարժումը։ Բանվորներին և գլուղացիներին ավելի
հեշտ խարելու նպատակով բուրժուազիան վորոշ զիջումներ և ա-
նում, կազմակերպում ե իր պետությունները, վորպիս զիմոլրա-
տական հանրապետություններ, նույնպես և առհասարակ դեմո-
կրատական պետություններ։

Ի՞նչ ե իրենից ներկալացնում գեմոլրատա-
հնաց են բուրժուազիան կան հանրապետությունը։ Սա մի պետություն-
կան «ԴԵՄՈԿՐԱ-
ՏԻԱՆ» ՅԵՎ ԲՈՒՐ-
Ե, վորտեղ թագավոր չկա և վորի կառավարու-
ժՈՒԱԿԱՆ «ԱԶԱՏՈՒ-
ԹՅԱՆ մասնակցում ե (խոսքով) ամբողջ ժողո-
թՅՈՒՆՆԵՐԸ»։ Վուրդը, իսկ գեմոլրատական պետությունը—
այնպիսի մի պետական ձև ե, վորտեղ զեմոլրատական հիմնարկ-
ների հետ միասին (պարլամենտ), պահպանվել ե դեռ ևս միա-
պետի իշխանությունը։

Վերցնենք, որինակ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-
հանգները։ Այստեղ ամբողջ պետությունը կառավարում ե, մի-
նիստրներին և ուրիշ պաշտոնյաներին նշանակում ե նախագահը,
վորը ընտրվում ե ընակչության բոլոր դասակարգերի կողմից
(ամբողջ ժողովրդի կողմից)։ Որենքները հրատարակում և պե-
տության բոլոր գործերը վճռում ե կոնգրեսը (պարլամենտը),
վորին ընտրում ե նույնպես ամբողջ ընակչությունը։ Ընտրու-
թյուններին մասնակցում ե ամբողջ ընակչությունը (ընդհանուր
ընտրություններ)։ (Ընտրական իրավունքը, ճիշտ ե, խոշոր չա-
փով սահմանափակված ե, մանավանդ բանվոր դասակարգի հա-
մար)։ Ընտրողներից և վոչ մեկն արտօնություններ չունի մլուսի
վերաբերմամբ։ լինի նա բանվոր կամ գլուղացի և կամ կապի-

տալիստ, միենուկն ե, նրանցից լուրաքանչյուրն ունի միայն մեկ ձախ (հավասար ընտրություններ), Պատգամավորներն ընտրվում են անմիջապես կոնգրեսի համար, առանց միջանկյալ տատիճանների (ուղղակի ընտրություններ), Ընտրողներն իրենց ձախը տալիս են գրավոր թերթիկների միջոցով, վոր ժողովում են կընքված արկղների մեջ, Այսպիսով ձախատվությունը բաց չի կատարվում, այլ գաղտնի (գաղտնի ձախատվություն):

Դրա հետ միասին Միացյալ Նահանգներում ըոլոր քաղաքացիները հավասար են, բոլորն ել ունեն միատեսակ իրավունքներ և կարող են ոգտվել բոլոր ազատություններից. Խոսքի, մամուլի, ժողովների, միությունների և այլ ազատություններից: Նահանգների ամեն մի քաղաքացի ոգտվում է «անձի անձեռնմը-խելիության» իրավունքից, այսինքն նրան վոչ վոք չի կարող ձերբակալել բանտ նստեցնել հակառակ որենքի և կամ դատարանի վորոշման:

Առաջին հայացքից թվում ե, թե Միացյալ Նահանգներում դրախտ և բարեկեցություն և տիրում բոլոր դասակարգերի համար անխտիր, վոր բուրժուազիան պետության կառավարչության մեջ առանձին արտօնություններ չունի բանվորների և զյուղացիների հանդեպ և վոր բուրժուազիայի դիկտատուրայի մասին վոչ մի խոսք լինել չի կարող: Սակայն իրականում դրությունը բոլորովին այլ ե. Միացյալ Նահանգները կառավարվում են վոչ թե «ամբողջ ժողովրդի» կողմից, այլ հինգ-վեց խոշոր բանկերի, կամ ավելի ճիշտ ե՝ այդ բանկերի տերերի՝ միքանի տասնյակ միլիոնատերերի ձեռքով, Նրանցից կախումն ունեն կալվածատերերի, ֆարբերկաների ու գործարանների տերերի մեծագույն մասը: Սրանց բոլորին իրենց են լենթարկում բանկերը, բանկերի և մնացած բուրժուազիայի մոտ ծառալության մեջ են գըտնվում գիտնականները, պրոֆեսորները, ճարտարապետները, ուսուցիչները, փաստաբանները: Սրանք բոլորը կախումն ունեն կապիտալից և հանդիսանում են նրա հավատարիմ ստրուկները: Խոշոր հարուստներն են կերակրում չինովնիկներին, դատավորներին, գեներալներին, սպաներին և այլոց: Սրանք բոլորը զբանվելով կախման մեջ կապիտալից, բացի դրանից բուրժուազիան միջավալից ծնունդներ են, սերտորեն կապված են բուրժուազիայի հետ և պատրաստ են իրենց կանքը զոհելու նրա իշխանությունն ամրացնելու և պահպաններու համար:

Այսպիսի պայմաններում բանվորներն ու զյուղացիները

գեմոկրատական հանրապետության սահմաններում փաստորեն զրկված են իրենց վերապահված իրավունքներից ոգտվելու հնարավորություննից։ Որինակ, մամուլի ազատությունը վոչինչ չի տալիս աշխատավոր դասակարգերին, քանի վոր լրագիրներ հրատարակելու կամ գրքեր տպագրելու համար հարկավոր են տպարաններ և թուղթ, իսկ տպարաններն ու թուղթը գտնվում են բուրժուազիայի ձեռքում և բանվոր դասակարգը փաստորեն մամուլի ազատություննից ոգտվել չի կարող։ Նույն բանն ե նաև ժողովների ազատության իրավունքը։ Ժողովվել կարելի չե այն դեպքում, իբր զրա համար կան համապատասխան շենքերի իսկ շենքերը բոլորը պատկանում են բուրժուազիային և ժողովների ազատությունն այսպիսի պայմաններում կախված ե բուրժուազիայի բարի կամքեց։ Ավելի լավ զրության մեջ չե նաև միությունների ազատության իրավունքը։ Քանի արհեստակցական միություններն զգալի չափով ճնշում չեն գործադրում բուրժուազիայի վրա, նա համբերատար ե ու հաշովում ե նրանց գործության հետ։ Բայց հենց վոր բանվոր դասակարգն սկսում ե բացարձակ դասակարգային կոփվ, բուրժուազիան ցրում ե պրոֆմիությունները և ձերբակալում ե բանվորներին, առանց հաշվի առնելու, վոր ձեականորեն միությունների ազատություն գոյություն ունի։

Բոլորովին վոչինչ չի տալիս բանվոր դասակարգին և գյուղացիությանը ընդհանուր, հավասար, ուղղակի և զաղտնի ընտրական իրավունքը։ Զխոսելով այն մասին, վոր բանվորների մի քանի բավական խոշոր կատեգորիաներ (մանավանդ ցածը աշխատավարձ ստացողները) չեն ոգտվում ընտրական իրավունքով (կանայք իրավունք վատելում են միայն մի քանի կապիտալիստական պետություններում), բուրժուազիան ընտրություններն այնպես և դասավորում, վոր բանվորների թեկնածուները պարլամենտ անցնել չեն կարողանում։ Կապիտալիստաներն ամեն միջոց գործադրում են ընտրական իրավունք ունեցող քաղաքացիներին կաշառելու համար։ Նրանք կաշառում են թերթերին, վարձում են ամենալավ հոետորներին, վորոնք սկսում են գովարանել բուրժուազիայի թեկնածուներին։ Այդ բալորի հետևանքը լինում ե այն, վոր ընտրություններն անպատճառ վերջանում են բուրժուազիայի հաղթությամբ, վորը և անց ե կացնում իր թեկնածուներին։ Բուրժուազիան հնարավորություն ունի այնպիսի ձեռվ բաշխել ընտրական շրջանները, վոր բանվոր դասակարգի

աղդեցությունն ալդ շրջաններում ուժեղ կերպով թուլանում եւ Շնտրական կամպանիալի առանձնապես սուր մոմենտներին բուրժուազիան սկսում եւ խստություններ գործադրել բանվորների դեմ, բանտն եւ նստեցնում նրանց իսկական հեղափոխական ներկայացուցիչներին և ամեն միջոց գործադրում եւ բանվորների աղդեցությունը նվազեցնելու համար:

Այն գեպքերում, յերբ բանվոր գասահարդին հաջողվում եւ պարլամենտ անցկացնել ավելի մեծ թվով թեկնածուներ, քան ալդ ցանկանում եւ բուրժուազիան, ալդ գեպքում շատ հասարակ կերպով ցրվում եւ այսպիսի պարլամենտը:

Մի քանի որինակներ բերենք, յերբ բուրժուազիան ալդ-պես անորեն կերպով եւ վարվել գեպի ընտրությունները և գեպի պարլամենտը: 1927 թվի հուլիսին կալացան պարլամենտի ընտրությունները Ռումինիայում: Բուրժուազիան, իհարկե, ամեն միջոց ձեռնարկել իր իր թեկնածուներին անցկացնելու համար: Ահա մի քաղվածք ընտրությունների մասին տված հեռագրից՝ «Նախընտրական տերրորը Ռումինալում ուժեղանում եւ Առանձնապես հետևում են բանվորա-գյուղացիական բլոկի թեկնածուներին»: Մի շարք քաղաքներում ձերբակալված են ալդ բլոկի ընտրական կոմիտեները... Նախընտրական ժողովներն արգելված են, նախընտրական թուրքիկները գրավում են: Ձերբակալված են բանվորա-զյուղացիական բլոկի կողմնակիցներից մոտ հազար հոգի:

Նորվեգիա	—	—	200.006
Անգլիա	1.406.155	1.751.033	2.000.000
Չեխո-Սլովակիա	—	—	400.000

Կապիտալիստական բոլոր լերկրների անդորձների թիվը համառում ե մոտ 20 միլիոնի, լեթե հաշվենք և նրանց ընամանիքը, այդ թիվը կհասնի 60—80 միլիոնի: Գործազրկության այս չտեսանված թիվը հեղափոխական շարժման խոշորագույն բանակի և կապիտալիզմի կործանման մեծագույն ուժի մասին ե խոսում: Կոմկուսակցությունների անելիքներից մեկն ել այն պետք ելինի, վոր հեղափոխության այս պահեստի ուժը կազմակերպեն և ակտիվ պարագարի հանեն կապիտալիստական հասարակակարգի տապալման համար:

Ամեն որ տասնյակ հազարավոր նոր բանվորներ փողոց շպրտելով բուրժուազիան միաժամանակ ուժեղացնում ե հարձակումն ամբողջ բանվոր դասակարգի կենսական մակարդակի վրա: Ամենուրեք կրնատվում ե գործազրուրկներին տրվող չնչին նպաստը, ամենուրեք արագ բարձրանում են կոմունալ ծախսերը Ոգտվելով գործազրուրկ բանվորների հսկա ռեգերվի գոյությունից, ամենուրեք հարձակում ե գնում գեռ աշխատող բանվորության աշխատավարձի վրա. լայնորեն գործադրության և դրվում հժանձեռքը, կանանց և լերկիսանների աշխատանքը: Թե գործազրուրկ և թե աշխատող բանվորները հավասարապես լենթակա լին անընդհատ, արագորեն ուժեղացող ու անտանելի դարձող կեղեկքման:

Գործազրուրկը ծալը աստիճան աղքատության մեջ ե ապրում. նա բացի ցամաք հացից ուրիշ վոչինչ չունի: Ընտանիքավոր մարդն ստացած նպաստից չի կարողանում վճարել իր բնակարանի վարձը, վորքան ել չնչին լինի նաև Գործարանից դուրս վունդվելուց հետո նա մեխանիկորեն գուրս ե շարտվում բնակարանից և նույնիսկ այն թաղից, վորտեղ նա ապրել ե լերկարտարիներ: Շվեցարական թերթերը հաղորդում են, վոր բանվոր Ստիֆելն սպանել ե իր կնոջը, չորս փոքրիկ լերկիսաններին և ինքնասպանություն ե գործել: Իսկ թնչու Ստիֆելին վոնդել ելին գործարանից, մացել եր առանց վորեե միջոցի և ընտանիքին սպառնում ելին դուրս անել բնակարանից, Ալսպես են վարվում կամքով թուլերը, միանակները: Ավելի ուժեղները միանում են, պարագում են, ցուցեր են կազմակերպում, կորչում են վոստիկանների և ժանդարմների հարվածների տակ, մեռնում են հուծվածությունից, բայց չեն ընկճվում, չեն վհատվում:

Գործազրկության ծանրության տակ ընկճված միլիոնավոր մասսաներն արագորեն վոտքի լեն կանգնում բոլոր լերկիսաններում և կոմկուսակցությունների ղեկավարությամբ հակահարձակման

են անցնում, Վերջին ամիսների ընթացքում որ չի անցնում առանց զործագուրկ մասսաների մարտական ցուցերի, վորոնք դնալով ընդունում են ավելի լայն չափեր։ Բոլոր լերկրներում կոմկուսակցութիւնները լըջորեն ձեռնարկել են գործազուրկների կաղմակերպմանը, սկսել են հետևողականորեն գործադրել բայլշնիկան տակտիկան բանվոր դասակարգի ընդհանուր հարձակողական ֆրոնտ ստեղծելու համար և արդեն իսկ ունեցել են խոշոր հաջողություններ։

Արդեն շատ լերկրներում կազմակերպվել են գործազուրկների կոմիտեներ, վորոնք մարտնչում են արագորեն աճող հեղափոխական գործարկոմների հետ ձեռք-ձեռքի (Գերմանիա, Ամերիկա, Չեխո-Մոլովակիա)։ Արդեն գործազուրկ լայն մասսաների սեփականությունն ե դառնում կոմունիստական կուսակցությունների հիմնական լոգունգը՝ «Հաց լել ածխատանք սահնալ կարելի յե միայն պրոլետարական հեղափոխության միջոցնվ»։

Գործազուրկների կազմակերպման համար մղվող պայքարում խոշորագույն հեղափոխականացնող ու կազմակերպող դեր ե խաղում Խորհրդային Միության որինակը, Կապիտալիստական ռազմական ռազիոնալիզացիան, Նրանց առաջ պարզորեն գծագրվում ե կարիքից ու թշվառությունից դուրս գալու միակ ճանապարհ—այն ե՝ բուրժուական հասարակարգի տապալման, պրոլետարական դիկտատուրայի միջոցով սոցիալիստական հասարակարգ կառուցելու ուղին։

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ Ներքեւ բերած աղլուսակը խոսում ե այն մատրությունը ԿԱՊԻ-ՍԻՆ, վոր ամենախոշոր կապիտալիստական լերսալիստական ՅԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՅԵՐ-կրներում գլուղացիությունը կազմում ե ազգակրներում այդպէս այդ տոկոսն ավելի մեծ ե։

Առաջատարագործութիւն բանակը զանազան յերկրների զյուղական
յև անտառային անտառություններում.

Պետություններ	Վոր աշխարհամասութեան	Վոր թվի տվյալներն են	Քանակը	0/0 աշխարհագործութեանուրության գանակի վեցաբերմամբ
Գերմանիա . . .	Յեղուպողական	1907	9.883.000	35.1
Ֆրանսիա . . .	»	1911	8.517.000	41.2
Իսպանիա . . .	»	1910	4.221.000	56.3
Իտալիա . . .	»	1900	9.666.000	59.4
Վենգրիա . . .	»	1910	5.601.000	64.3
Բոլգարիա . . .	»	—	—	80.0
Հ. Ամ. Միաց. Նահ.	Ամերիկա	1910	12.659.000	32.2
Չինաստան . . .	Ասիա	—	250.000.000	60.0
Յապոնիա . . .	»	—	48.000.000	64.0
Հնդկաստան . . .	»	1911	225.000.000	72.0

Կապիտալիստական լերկրներում հողը գլուղցիներին չէ պատկանում: Ահա թե ինչ են ասում թվերը.

Ցերկրներ	Աշխարհամաս	Դուրացիական անանություններ թիվը	Ռւնեն հողեր. հեկտարներով	Կալվածատիրական տնտեսություններ	Հողեր ռւնեն հեկտարներով
Գերմանիա	Յեղուպողական	2.200.000	18.530.000	23.000	10.900.000
Ֆրանսիա	»	4.600.000	13.952.000	147.000	17.440.000
Լեհաստան	»	800.000	654.000	9800	9.810.000
Հիտլա	»	48%	50%	2%	40%

Այստեղ բերված են միայն միքանի լերկըներ, վորոնց մասին գան ճշգրիտ տվյալներ: Խնչպես ազդուսակից լերեռմ ե, այդ կապիտալիստական լերկըներում միլիոնավոր հեկտարներով հողեր պատկանում են մի խումբ կալվածատերերի և կուլակների: Մինուն ժամանակ միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ ունեն ամենաչշին շնչարաժին հողեր: Շատ գյուղական տնտեսություններ բոլորովին հող չունեն և վարձակալական պարմաններով են վերցնում հողը: Այսպես և բաշխված հողը բոլոր կապիտալիստական լերկըներում: Զպետք և մոռանալ նաև այն, վոր գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը մանր և մանրագույն տնտեսություններն են: Որինակ, Գերմանիայում մեկ միլիոն միջակ և խոշոր գյուղացիական տնտեսությունների գիմաց գույությունը ունեն 3.25 միլիոն գյուղատնտեսական պրոլետարիատ, 2.3 միլիոն ամենամանր տնտեսություններ, 1.3 միլիոն մանր տնտեսություններ, այսինքն 86% ՝ Լեհաստանում 5 հեկտարից ավելի հող ունեցող տնտեսությունները կազմում են 24% , Ֆրանսիայում—մոտ 20% , իսկ մնացածները մանր, մանրագույն և հողագործ տնտեսություններն են:

Կապիտալիստական լերկըներում հողադրկությունն ու հողասակագությունը հարկադրում են գյուղացիներին վարձակալությամբ հող վերցնել կալվածատերերից ամենաբարձր վարձագներով: Գերմանիայում պատերազմից առաջ մեկ դեսլատին հողի տարեկան վարձագինը հասնում էր $50-60$ ռուբլու: Պատերազմից հետո այդ գումարն ավելացել է $8-10$ անգամ: Ցիթեհաշվելու լինենք, թե չքավոր գյուղացին իր ընտանիքով վորքան բանվորական որ և գործադրում վարձակալած հողի մշակության վրա և համեմատելու լինենք: Թե վորքան այդ գյուղացին կվաստակեր, յեթե վարձով աշխատելու լիներ, կգանք այն յեղակացության, վոր նա վարձագինը վճարելուց հետո իր աշխատանքի համար ստանում ե անհամեմատ ավելի քիչ, քան յեթե նա կստանար վարձով աշխատելու գեպքում: Սակայն այդ բոլորը չեն Դյուլացին յեթե ցանկանում ե լավ բերք ստանալ իր գաշտից, պետք ե իր հողը բարելավի, մշակի, պարարտացնի: Վարձակալության ժամկետը լրանալուց հետո այս բոլորը մնում ե կալվածատիրոջը: Ցիթե վարձակալը լավ հողագործ ե, լավ և մշակել հողը, պարարտացը ե նրան, այն ժամանակ կալվածատերը վարձակալության ժամկետը լրանալուց հետո նրան ասում ե: «այժմ այս հողն ավելի լավացել ե, ուրեմն դու ինձ պետք ե ավելի բարձր վարձագին վճարեած»:

Պատերազմն ամենախոշոր չարիքն եր աշխատավոր գլուղացիության համար, վորովիկետն նա խեց նրանից միլիոնավոր կյանքեր: Սակայն պատերազմն ավելի մեծ չարիքներ առաջցրեց կենդանի մասցածների համար:

Յանքսերի տարածությունը և բերքատվությունը Յեվրոպական լերկրներում, համեմատած նախապատերազման շրջանի հետ, ընկան: Յանքսերի տարածությունն ավելացավ միմիայն Ամերիկայում, վորը պատերազմի ժամանակ Յեվրոպային հաց եր մատակարարում: Սակայն այդ ավելացումը ժամանակավոր լեռնավ: Աղքատացած Յեվրոպան չի կարողանում գնել ամերիկական հացը: Ընկնում են ամերիկական բամբակի գները. բամբակի ցանքսերը տեղ-տեղ կրճատվում են $25^0/_{\circ}$ ով, ամերիկական ֆերմերները (ֆերմալի տերերը կամ վարձակալները) քայլքայվում են և միլիոններով հողից փախչում են դեպի քաղաքները: Հասկանալու համար մանրագույն, մանր և միջին գլուղացիության գրությունը կապիտալիստական լերկրներում, պետք են կատար առնել հետեւալը.

1) Գլուղացիներն իրենց աշխատանքի արտադրանքը վաճառում են շուկայում ամեն մեկն առանձին, անկազմակերպ, իսկ մեքենաներ, պարտատանկութեր և քաղաքի այլ ապրանքներ գընում են կազմակերպված կապիտալիստներից, վորոնք իրենց ապրանքների գները սահմանում են իրենց հայեցողությամբ:

2) Մինչև պատերազմը Յեվրոպայի գլուղացիական լերկը ավելորդ ազգարնակությունը տեղափոխվել եր (գաղթել եր) գլխավորապես Ամերիկա (պատերազմից առաջ վերջին տարիները տարեկան գաղթում ելին մոտ 2.000.000 հոգի): Պատերազմից հետո այդ գաղթը համարև թե դադարել ե, վորովինետն Ամերիկան ստիպված եր խիստ սահմանափակել մուտքը դեպի իր լերկիրը:

Կապիտալիստների խոստումները հողային բարեկարգություն մտցնելու մասին, վոր արվում ելին գլուղացիներին դեպի պատերազմ գրավելու նպատակով, լիովին սուստ դուրս լեկան: Սակայն ազգ գլուղացիության հույսերը՝ հող ստանալու մասին, ողը ցնդեցին, չիրականացան:

Իրենց հսկայական զինվորական պարտքերի, ԶԻՆԱՎՈՐՄԱՆ ՑԵՎ ինչպես և անազին զորաբանակների պահպանության տարրեւության վամար պահանջվող որբասորե անող ծախսը ազնիւթյունը մաքող ծանրությունը (տես աղյուսակը) կապիտալիստական պետությունները գցում են աշխատավորաբյան

վզին, ավելացնելով հարկերը: Անգլիայում, Ֆրանսիայում և ուրիշ շատ լերկներում, համեմատած նախապատերազմյան շրջանի համար, հարկերն ավելացել են լերկու և նույնիսկ լերեք անգամ (ըստվորում ավելացել ե գլխավորապես աշխատավարձից վերցվող հարկը):

Դերմանիայում 1924 թվից հարկ ե վերցվում տարեկան 200 ռուբլի և կամուտից սկսած (նախապատերազմյան շրջանում վերցվում եր 450 ռուբլուց սկսած): 1913 թվին 750 ռուբլի լեկամուտը հարկադրվում եր 7 ռ. 50 կոպեկով, իսկ 1924 թվին՝ 75 ռուբլով, այսինքն 10 անգամ ավելի:

Բնակչության յուրաքանչյար 1000 մարդուն զինվորականներ ընկնում են (1926—27 թ.)

Խ Ծ Մ	Զբանական	Ենունիան	Լատական	Խելատան	Մաժ Բլումանիան	Բուլինիան	Ֆենանդիան	Իտալիան	Հայունական	Ց. Ամերիկայի Նահանգներ	Յապոնիան	Պերումանիան
3,8	17,2	12,7	11,1	10,4	8,9	9,6	9,5	9,6	3,7	3,5	1,7 ¹	

Մանրագույն, մանր և միջին գյուղացիությունն աղքատանում ե, քայլայվում, հոծ մասսաններով գնում ե քաղաք և սովորացնում գործազուրկների բանակը: Քայլայված գյուղացիան տնտեսությունների մոխիրների վրա աճում են կուլտակալին կապիտալիստական տնտեսությունները:

§ 2. Բանվորների յեզ գյուղացիների դրույունն Արեվելքում.

Արևելքի կապիտալիստական լերկներում (Յապոնիա) և մանավանդ գաղութային (Հնդկաստան) և կիսագաղութային լերկներում (Չինաստան) բանվորների և գյուղացիների դրությունն անհամեմատ ավելի ծանր է, քան Յեվրոպայի և Ամերիկայի կապիտալիստական լերկներում: Կապիտալիստական գիշատիչները մտրակի և դնդակի ոգնությամբ գաղութներից և կիսագաղութ-

¹ 1914—1918 թվականներին պատերազմում պարտվելով, Գերմանիան իշխակունք և ստացել պահելու միմիայն 100,000 զուբ:

Ներից մեծամեծ շահութներ են քամում, վորի համար նրանք կանգ չեն առնում և վոչ մի գաղանության առաջ: Բերենք մի-քանի փաստեր:

Բոմբելում (Հնդկաստան) հաշվում են 422000 լՆԴԿԱՍՏԱՆ: բանվոր նրանցից 146.000-ն աշխատում են 85 մանաժագործարաններում: Սակավահողությունն ու ծանր հար-կերը Հնդկաստանի քաղաքալին արդյունաբերությանը հալթա-թում են շատ ավելի բանվորական ձեռքեր, քան դրա պա-հանջը կա:

Գործարանում աշխատանք փնտռելու համար Բոմբել լեկած բանվորն այնքան զուրկ և միջոցներից, վոր մինչև աշխատանք դաշնելը, հաճախ ել նույնիսկ աշխատանք գտնելուց հետո, բնա-կարան չի ունենում և քնում է վորտեղ պատահում և՝ փողոցնե-րում, այդիներում, հրապարակներում, միջանցքներում և այլն: Միայնակ բանվորների 53%ը բնակարան չունի: Բանվորական-որը տեսում է 10 ժամ, ըստավորում, այդ «զիջումը» կապիտալիստ-ների ճանկերից դուրս և կորզված 1920 թվի հսկայական գործա-դումի հետևանքով:

Վոչ այնքան անբավարար սնունդը, վորքան բնակարանա-ցին այլանդակ պայմաններն են անդրադառնում Բոմբելի բան-վորների առողջության վրա և ավելացնում մահացության թիվը նրանց մեջ: Բանվորական բնակարաններին մեծ մասը կառուց-ված են քարյուղի (կերոսին) հին ամանների թիթեղներից: Պա-տուհաններ չկան: Հատակն ու պատերը ճոճում են քամու ու-ժից: Առաստաղից պարաններ են կապված, վորոնց վրա չորաց-նում են լիացքը: Վոչ մի սանիտարական հարմարություն չկա-այն թաղերը, վորտեղ բանվորներն են ապրում, ազտուված և աներեակալիք չափերով: Այսպիսի պայմաններում կարելի լի-արդյոք զարմանալ, վոր Բոմբելում ծնվող 1000 լերեխալից մի-ջին թվով 572-ը մեռնում են իրենց կանքի հենց առաջին տա-րում: Բանվորական թաղերում 1000-ին ընկնում է 828 մահ, այն միջոցին, լերը Անդիալում 1000-ին ընկնող 172 մահն ահա-դին տոկոս և համարվում:

Հնդկացի բանվորների միմիայն 50%ը գիտե ստորագրել իբ-անունը: Նորերս մտցրած ընդհանուր ձրի կրթությունը մնում է թղթի վրա, քանի վոր առանց լերեխաների վաստակի ընտանի-քըն անկարող և ապրել Բանվորներին իրենց աշխատանքի տե-ղում թժշկական ոգնություն չի տրվում: Կանալք աշխատանքից

ազատվում են ծննդաբերությունից միմիայն 1 կամ 2 որ առաջ, իսկ հուճախ ել ծնում են ուղղակի գործարանի դազգահների առաջ:

Բանվորունու միջին որական վաստակն ե 13 կոպեկ:

Իրենց իրավունքները պաշտպանելու ամենափոքրիկ փորձն անդամ խիստ կերպով հալածվում եւ 1919 թվի ապրիլի 13-ին Հնդկաստանի Ամրիտսարա մեծ գործարանային քաղաքում շուկաի հրապարակում հավաքվել եր գործարուավոր բանվորների և նրանց կանանց ու իրեխաների ութ հազարանոց ամբոխը: Այս հրապարակն ամեն կողմից շրջապատված ե քարե ցանկապատերով և տներով և մի կատարյալ թակարդ և ներկայացնում իրենից:

Եերբ այս մասին տեղեկացավ անգլիական բրիգադայի հը- րամանատար գեներալ Դաւիերը, զինվորներով շրջապատեց հրա- պարակի մոտ գտնվող բոլոր փողոցներն ու նրբանցքները և առանց վորեկի նախազգուշացման կրակ բաց արեց անգեն ամբոխի վրա: Խնչպես իերենում ե, գեներալը գնդակներ չեր խնայում, քա- նի վոր հրապարակի վրա մնացին 500 սպանվածներ և 1500 վի- րավորներ: Հրացանաձգությունը շարունակվում եր և այն ժա- մանակ, իերը ամբողջ մասսան պառկել եր հողի վրա:

Այս քաջազրությունը կատարելուց հետո, հետևյալ որը գեներալը հրաման արձակեց, վորի համաձայն ամեն մի ինդուս, վորը ցանկանում եր անցնել շտարի ուլոնի փողոցով, պարտա- կան եր վորոշ տարածություն անցնել սողալով:

Փողոցներում պահապաններ ելին դրված սույն հրամանի կատարմանը հսկելու համար Բոլոր ձերբակալվածները, վորոնց թվում և կանայք փալուով դանակոծվեցին հրապարակորեն:

Իր այս գործունելության համար Դաւիերը շնորհակալություն ստացավ իր բարձր իշխանությունից:

Գյուղացիների դրությունը Հնդկաստանում ավելի լավ չէ բանվորների դրությունից:

Հնդկաստանի գյուղացին գտնվում ե մի կողմից անգլիա- կան և մյուս կողմից իր սեփական կալվածատերերի կրկնակի ճնշման տակ 280 միլիոն գյուղացիներից միմիայն 30 միլիոնն ունեն հող, 78 միլիոնը մանը վարձակալներ են, իսկ մնացածնե- րը գյուղատնտեսական բանվորներ են կամ զբաղվում են վորսոր- դությամբ և ձկնորսությամբ:

Անգլիացի և տեղացի կալվածատերերը պետությունից վերց-

նում են խոշոր հողալին տարածություններ, վորն իրենց կողմանը մանր կտորներով վարձակալությամբ տալիս են գյուղացիները խոշոր վարձագիննեն վճարում դրամով կամ պարենով, վորը ժողովում են կալվածատերի գործակալները, վորոնք բացի վարձագինը գանձելուց, գյուղացիներից կաշառքի և ալլ ձեւրով կորզում են իրենց ոգտին նոր գումարներ:

Աղքատության և քաղցի հետեւանքով Հնդկաստանում հաճախ կրկնվում են ժանտախտն ու խոլերան: Մեկ անգամ դատի յենթարկվեց մի յեվրոպացի, վորն այնքան խիստ ծեծել եր իր խոհարաբին, վոր նա այդ ծեծից վախճանվել եր: Յեվրոպացին իրեն մեղավոր ճանաչեց և դատապարտվեց... մեկ որվա ձերբակալության և 500 ըուփ տուղանքի: Մեկ ուրիշ զեպքում դատի յեր յենթարկված մի ինդուս, վոստիկանին հայութելու համար, իդեպ ասած, վոստիկանը յեղել եր քաղաքացիական հագուստով և սրան կարող եր իսկի ճանաչած չլինել ինդուսը: Ինդուսը դատապարտվեց նույնքան տուղանքի—500 ըուփ և մեկ տարի բանտարկության:

Հնդկաստանն ապրում ե աղքային ազատագրական պայքարի բուռն խմբությունների շրջան:

Հնդկական բուրժուազիան թեկուղ և յերկրի անկախության անհրաժեշտության մասին: հայտարարություններ ե անում, բայց իրականության մեջ աշխատավորական մասսանների հաշվին ձըգտում ե համաձայնության գալ անգլիական իմպերիալիզմի հետ: Անգլիան կալվածատերներին ու բուրժուազիային կաշառելով, ողագործում ե նաև Հնդկաստանի բազմաթիվ ժողովրդներին՝ աղքային խտրություններն ու կրօնական թշնամությունն իրարդեմ վարելու համար: Վերջին տարիների ընթացքում բանվոր դասակարգի յելությունների թիվն ու չափերը նկատելիորեն մեծացել են (գործադուլներ, ցուցեր և ալլն):

Գյուղացիական շաբժումը, վոր շնորհիվ կիսատ լիքերալ ազգայնական առաջնորդների դավաճանությամբ ճգմվել եր, այժմ արթնանում ե: Իմպերիալիստական լծից աշխատավորներին ազատագրել հնարավոր ե միայն բանվորների, գյուղացիների և հեղափոխական ինտելիգենցիալի միություն առաջացնելով՝ պրոլետարիատի և նրա կուսակցության զեկալվարության տակ: Հնդկաստանի Կոմունիստական կուսակցությունը չնայած արագործն աճում ե, բայց գեռ թուղ ե և ցան ու ցըիվ: Արհեստակցական

միություններում ուժեղ են սոցիալ-դավաճան առաջնորդները։ Հնդկական բանվորների և գլուղացիների պալքարը նույնպես, ինչպես և չինական հեղափոխությունը, լուրջ վտանգ են համաշխարհային իմպերիալիզմի դժմ։ Զարմանալի չե, յեթե Անգլիան Հնդկաստանին պահում ե իր նավատորմդի, բանակի, վոստիկան նության և չինովնիկների աշալուրջ հսկողության տակ։

Ահա չինական բանվորների դրության ու արևածանության արդյունքները։

Չինաստանում գլուղից գործարան ե գնում մեծ մասամբ առաջին հերթին վոչ թե տղամարդը, այլ կինը։

Ահա տվյալներ արդյունաբերական մեկ կենտրոնի մտածին։

	Չեռնավոլիներ բանակը.	Տղամարդիներ բանակը.	Տղամարդիներ բանակը.	Կին.	Տղամարդիներ բանակը.	Տղամարդիներ բանակը.	Կինավառաներ բանակը.	Բանակը.
Մետաքսի արդյունաբ.	51	2760	27785	1509	11257	12766	43311	
Մանածային	»	38	23579	61158	2686	5307	7993	92730
Ծխախոռի	»		3705	—	247	318	565	12147
Մետաղային	»	3	2520	450	—	—	—	2970
Զանազան	»	4	1290	1400	—	—	—	2690
Ընդամենը	101	33854	98670	4442	16882	21324	153848	

Այսպիսով կանալք և լերեխաները կազմում են ուսումնասիրության ինթերկված խոշոր արդյունաբերության պրոխտարիատի մոտ $\frac{3}{4}$ մասը։ Ըստվորում պիտք ե ասել, վոր և լերեխտաներ (տղաներ և աղջիկներ) սլունլակում մտցված են միմիայն 12 տարեկանից ցած հասակ ունեցողները։ Մետաքսագործարաններում գլխավորապես աշխատում են կանալք և աղջիկներ։ Առվորաքար լերկու հասակավոր կնոջ ընկնում ե մեկ լերեխտա։ Ցերեխաներն աշխատում են տաք, լեռացող ջրով լի կաթսաների վրա, վորի պատճառով և շարունակ ալրում են իրենց ձեռքերը։ Բանվորական որը սովորաբար տեսում ե 12 ժամ, զաղ առավոտից մինչեւ լերեկո, առանց ընդհատումի, սակայն լերեխտաները պարտական են աշխատանքներն սկսվելուց կես ժամ առաջ ներկալանալ։ Աշխատանքը կատարվում է վոտքի վրա, արհեստանոցներում անասելի տոթ ե, վորի հետևանքով ուշաթափություններն

ու գիտակցությունը կորցնելու դեպքերը սովորական լեռնութեան։ Մանածագործարտներում բանվորական որն ավելի լիրակար եւ

Լուցկիի գործարանում 1110 բանվորներից մեծ մասը 9-ից մինչև 15 տարեկան տղաներ են, վորոնք աշխատում են առավոտյան ժամը 4-ից մինչև լեռեկոլան 8 $\frac{1}{2}$ ժամը, մի փոքրիկ ընդմիջումով միայն։ Նրանք միջին թվով ամբողջ շտաբին աշխատում են որական 15 ժամ, առանց կիրակնորյա հանգստի Տղաներն ստանում են 6-ից մինչև 12 ցենտ վոսկով, իսկ հասակավորները մոտ 25 ցենտ որական։

Այն զործարանում, վորտեղ Ամերիկայի և Չինաստանի միլիոներների բնակարանները զարդարելու համար ամենագեղեցիկ գորգերն են պատրաստում, աշխատում են մոտ 1200 տղաներ և պատանիներ 9-ից մինչև 25 տարեկան հասակով։ Վարպետն ամսական ստանում ե 8 դոլար, իսկ մեացած՝ բանվորները՝ միջին թվով 4 դոլար 50 ցենտ¹ և սնունդ՝ Տղաներն ու հասակավորներն որական աշխատում են մոտ 16 ժամ միջին թվով, առավոտյան ժամը 5 $\frac{1}{2}$ -ից մինչև լեռեկոլան 9 ժամը։ Տղաների մեծ մասն առաջին տարին աշխատում են վորպես աշակերտներ և այդ ժամանակամիջոցում ստանում են միայն սնունդ, առանց վորտեղ դրամական վարձատրության։ Այս «աշակերտությունը» կատարյալ խարդախություն ե, վորովհետեւ լեռեք տարին անցնելուց հետո, սովորաբար նրանց դուրս են անում և նրանց տեղը վերցնում են նորերին նույն պայմաններով։

Մանածագործարաններում տղամարդկանց աշխատավարձը տարուբերվում ե 5 ցենտից մինչև 67 ցենտ վոսկով, իսկ միջին աշխատավարձը հավասար ե 16 $\frac{1}{2}$, ցենտի որական։ Կանաչը ստանում են 5-ից մինչև 40 ցենտ, միջինը հավասար ե 13 ցենտի որական։ Պողպատ ձուլող և լեռվաթագործական գործարաններում ինչպես և գունավոր մետաղների գործարաններում տղամարդկանց աշխատավարձը հասնում ե 6-ից մինչև 42 ցենտի, միջինը 15 $\frac{1}{2}$ ցենտ, իսկ բանվորուհիներինը՝ 5—15 ցենտի։ Քիմիական արդյունաբերության մեջ միջին աշխատավարձը հավասար ե 18 $\frac{1}{2}$ ցենտի, իսկ վոչ վորակալ բանվորի աշխատավարձը 12 $\frac{1}{2}$ ցենտից չի անցնում։

Չինաստանի բանվորների մոտ 70 $\frac{0}{0}$ ը աշխատում են շտաբվար բոլոր 7 որը և հանգստի որը չունեն։

¹ Դոլարը=1 ռ. 97 կոպեկ։ Դոլարն ունի 100 ցենտ. ուրեմն ցենտը մի փոքր պակաս ե 2 կոպեկից։

Տասը քառակուսի վոտնաչափ ունեցող մի սենյակում քնակ-
վում են 10 մարդ: Կեսը նրանցից քնում ե գիշերվա և մլուս կե-
սը ցերեկվա դադարի ժամանակ: Սենյակում վոչ վառարան կա-
և վոչ ոդանցք: Կրակն արվում ե ուղղակի հատակի վրա, իրկաթե
կաթսայի տակը, վորի մեջ բոլորը կերակուր են պատրաստում:
Տներում չկան ջրմուղ և արտաքնոցներ: Դրանց փոխարեն դրված
ե մի զույլ սենյակում, վորտեղ որ ու գիշեր 10 հոգի տղամարդ,
կին ու ցերեխա կերակուր են պատրաստում, ուտում են,
խմում, քնում:

Վոչ պակաս ծանր և Զինաստանի գլուղացիութիւն դրու-
թլունը: Առա թե ինչ պատկեր ե տալիս հետեւալ ազուսակը.

Հողերի բաշխումը Զինաստանում

Տնտեսություններ	Զափը.	Ընտանիքների քա- նակը	Ունեցած հողը
Մանրագույն	1-ից մինչև 20 մու ¹	24.429.362 կամ 49.5%	244 293.620 մու կամ 15.9%
Մանր	20-ից » 40 »	11685.344 կամ 23.7%	350.560.320 մու կամ 22.8%
Միջակ	40-ից » 75 »	7.735.226 կամ 15.6%	386.763.200 մու կամ 25.4%
Խոշոր	75-ից » բարձր	5.509.621 կամ 11.2%	550.962.100 մու կամ 35.9%

Ինչպես ցուց ե տալիս աղլուսակը, գլուղացիական տնտե-
սությունների 73% -ը (մանրագույն և մանր տնտեսությունները)
ունեն հողի միմիայն 38,7% -ը: Այսպիսի բաշխման հետեւանքով
գլուղացիների 50% -ը վարձակալութիւնը հող ե վերցնում խոշոր
կալվածատերերից ու հողատերերից: Վարձակալութիւն պալման-
ները չափաղանց ծանր են: Վարձագինը մեծ մասամբ վճարվում
ե պարենով: բերքի 40-ից մինչև 75% -ը վերցնում ե կալվա-
ծատերը: Այդ գլուղացիների տարեկան միջին յեկամուտը հաս-
նում է 45-ից մինչև 70 ռուբլու: Ցեղե հաշվի առնենք այն հան-
գամանքը, վոր չինական վորոշ շրջաններում դուրանները (նա-
հանդապետները) այժմ գլուղացիներից գանձում են տասնյակ
տարիների հարկերն առաջուց, ապա դժվար չի լինի պատկերաց-
նել, թե ինչ թշվառ դրութիւն մեջ ե գտնվում Զինաստանի գլու-
ղացիութիւն մեծամասնությունը:

¹ Մու—մու 1/15 հեկտարի:

Վերջին տարիների ընթացքում հատուկ նշանակություն ստացան չինական անցքերը։ Չինաստանում կենտրոնացել են իմպերիալիստական պետությունների խոշորագույն շահերը։ Այդ պատճառով ել չինական հեղափոխության հաջողությունը սպառում է Արևելքի լերկրների և գաղութների շահագործման ամբողջ սիստեմին։ Չինական հեղափոխության հաղթանակը Խորհրդային Միության ամրապնդման և Յեվրոպայի ու Ասիայի կենտրոնում հզոր մարդկակին մի զանգված ստեղծելու գործոններից մեկն ե՝ իմպերիալիզմի գեմ հետագա պայքար մղելու համար։

Զարմանալի չե, չեթե իմպերիալիստները բոլոր ուժով պարագարում են Չինաստանում իրենց ազգեցությունը պահպանելու և չինական հեղափոխությունը ճգմելու համար։ Տասինակ հազարավոր զինվորներ և հարլուրավոր ուազմագործիչներ են ուղարկվում Չինաստան։ Փաստորեն իմպերիալիստները Չինաստանի դեմ իսկական պատերազմ են մղում։

Չինաստանում ստեղծված կացությունը գնահատելիս պետք ե ընդունել, վոր այդտեղ գորություն ունեցող բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն ի կատար չի ածված՝ վոչ տնտեսական տեսակետից, վորովհետև ագրարային հեղաշրջում չի առաջացած և չին տապալված կալվածատերերի իշխանությունն ու ֆեոդալական հարաբերությունները, վոչ իմպերիալիզմի դեմ այդ լերկրի ազգային պայքարի տեսակետից (Չինաստանի միավորում չկա, անկախություն չի նվաճված), վոչ ել նոր իշխանություն՝ պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատորակի կազմակերպության տեսակետից։

Կոմունիստական կուսակցությունը պետք ե պատրաստվի հեղափոխության նոր վերելքին, վորը գործնականորեն կդնի զինված պատամբության կազմակերպության և կիրառման խընդիրը։ Այժմ ծանրության կենտրոնը բանվորական և գյուղացիական մասսաների նվաճման, նրանց քաղաքական կրթության և կոմունիստական կուսակցության շուրջը կազմակերպելու մեջ ե։ Կուսակցության մոտակա լողունգներն են՝ Չինաստանի միացումը ու իմպերիալիզմի լծից ազատագրումը, գորություն ունեցող իշխանության տապալումն ու պրոլետարիատի և գյուղացիության դեկտատորակի ստեղծումը, Խորհուրդների կազմակերպումն ե։ Նրանցից կլինի անցումը դիպի պրոլետարիատի սոցիալիստական դիկտատորական։

Կապիտալիստական լերկրներում բանվոր-
քառաբարձր հրա- ներն ու գլուղացիները փաստորեն չեն ոգտ-
վում քաղաքական իրավունքներով: Թեև
նրանք լուրաքանչյուր կապիտալիստական լերկրում ազգաբնա-
կության խոշոր մեծամասնությունն են կազմում, սակայն և վոչ
մի որենալրական հիմնարկում չունեն իրենց մեծամասնություն
կազմող ներկայացուցիչները: Սովորաբար ընտրական որենքներն
այնպիսի խորամանկությամբ են կազմված լինում, վոր բանվոր-
ներն ու գլուղացիները գժվարությամբ են անցկացնում իրենց
ներկայացուցիչներին: Վորոշ լերկրներում ընտրական իրավուն-
քով ոգտվում են միայն նրանք, ովքեր խոշոր հարկեր են վճա-
րում իրենց լեկամուտներից, այսինքն՝ վոչ բանվորները և վոչ
ել գլուղացիները: Ուրիշ տեղերում ընտրում են միմիայն գրա-
գետները, լերրորդում—բավական լերկար ժամանակ տվյալ վար-
ում բնակվողները, ուրիշ խոսքով՝ բազմաթիվ բանվորներ, վո-
րոնք աշխատանք փնտռելու նպատակով մի տեղից մլուսն են
անցնում, բնականաբար զրկվում են ընտրական իրավունքից:
Այնուհետև ընտրելու իրավունք վայելողները վոչ բոլոր կարող
են ընտրվել: Շատ լերկրներում կանալք բոլորովին զրկված են
ընտրական իրավունքներից: Բուրժուազիան ամեն միջոց ձեռ-
նարկում ե, վորպեսզի ընտրող բանվորների և գլուղացիների
թիվը քիչ լինի: Շատ լերկրներում ընտրելու իրավունք ունեն
25, 30 և ունիսկ 35 տարեկան հասակ ունեցող քաղաքացինե-
րը, իսկ ինտրվելու իրավունք միմիայն 40 տարեկանները: Այս
ճանապարհով ընտրություններից չեղոքացնում են բանվորների և
գլուղացիների ավելի հեղափոխական մասին, լերիտատարդու-
թյանը: Կապիտալիստական լերկրների զինվորները, վորպես կա-
նոն չեն ոգտվում ընտրական իրավունքով: Նրենց մամուլի և
լեկեղեցու միջոցով, կաշառքի և բռնությունների ոգնությամբ
բուրժուազիան կարողանում է իր ներկայացուցիչներին անց-
կացնել որենսդրական հիմնարկներում և արդպիսով զրոյի լե հա-
վասարեցնում աշխատավորների ընտրական իրավունքը: Որի-
նակ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 27 մի-
լիոն բանվորներ և ծառայողներ կոնդրեսում (պարլամենտում)
չունեն և վոչ մի ներկայացուցիչ: Ավելի իրավազուրկ են մլուս,
վոչ սպիտակամորթ ցեղին պատկանող բանվորներն ու գլուղա-
ցիները, որինակ, նեգրերը:

ՆԵԳՐԵՐԻ ԴՐՈՒ-
ՔՑՈՒՆԸ. Միացյալ Նահանգների ամբողջ ազգաքնակու-
թիան $\frac{1}{8}$ մասը, այսինքն մոտ 17 միլիոն։ Այս
թվից 10 միլիոնն ապրում են հարավային նահանգներում և կազ-
մում ե բատրակների և սակավահող գյուղացիության ամենա-
հարստահարված մասը։ Մնացող սեամորթները գտնվում են քա-
ղաքներում և իրենց գոյությունը պահպանում են ծանր վար-
ձու աշխատանքով։ Նեգրերը Միացյալ Նահանգներում սահմանա-
փակված են իրենց ամենակենսական տնտեսական, քաղաքական
և սոցիալական իրավունքներում։ Արգելված են նեգրերին վորակ-
չալ աշխատանք տալը։ Կապիտալիստներն ամեն կերպ աշխա-
տում են գրգռել սպիտակամորթ բանվորներին իրենց սեամորթ
ընկերների գեմ։ Նեգրերի իրավահավասարությունը միայն թըդ-
թի վրա լի։ Հարավում նրանք զուրկ են ընտրելու իրավունքից,
չեն կարող պատասխանատու պաշտոններ ունենալ պետական
հիմնարկներում և կազմակերպել արհեստակցական միություն-
ներում։ Ազատ խոսքը, նույնիսկ այն սահմանափակ չափով, ինչ
չափով թուլլատրվում և սպիտակամորթ բանվորների համար,
նեգրերի համար անթուլլատրելի լի։ Քրեյսական հանցագործու-
թյան մեջ մեղադրվող նեգրը զրկվում ե նույնիսկ դատվելու ի-
րավունքից, նրան ինքնաղատաստանի լին լինթարկում։ Ամե-
րիկական թերթերում և հանդեսներում շատ հաճախ հանդիպում
են լուսանկարներ և տեղեկություններ առանց դատաստանի
կալված, գնդակահարված, կենդանի թաղված, ալրված կամ այլան-
դակված նեգրերի մասին։ Սակայն այդ բոլորն արդեն բավա-
կանաչափ բժացըրել են հասարակական ուշադրությունը։ Ամերի-
կացիներն արդեն սովորել են ալղակիսի լիքենութների։ Այժմ
նրանք հարմարացըրել են դրա համար ռազիոն, վորապեսզի ամե-
նուրեք կարելի լինի լսել մահվան լինթակա նեգրի տանջանք-
ների աղաղակը։ Մոտ ժամանակներում Ֆլորիդա շտատում կեն-
դանի արքեցավ մի նեգր բանվոր, վորի աղաղակները հաղորդ-
վում ելին ռազիուի միջոցով։

Շատ ավելի հասարակ կերպով ե վճռում բուրժուազիան
իշխանության հարցը գաղութներում։ Գաղութներում մեծ մա-
սսամբ բարձրագույն իշխանությունը հանդիսանում ե գեներալ-
նահանգապետը, նշանակված կապիտալիստների կողմից։ Աչք
փակելու համար տեղ-տեղ այդ գեներալ-նահանգապետներին առ-
ընթեր ստեղծվում են խորհրդակցական մարմիններ, կազմված

տեղական բնակչության ներկալացուցիչներից, բայց նրանք վոչ մի ուժ և նշանակություն չունեն, Այսպես և կառավարվում Անդրկայի Խոշորագույն գաղութը՝ Հնդկաստանը: Այստեղ գլխավորում է Անգլիայի կողմից նշանակված այսպես կոչված կալսեր փոխանորդը (վիցե-կայսր): Խորհրդակցական մարմինների ընտրություններին Հնդկաստանի 320 միլիոնանոց ազգաբնակությունից մասնակցում և մեկ միլիոնից ել պակասը:

Աշխատավորների քաղաքական իրավազրկությունը կապիտալիստական լերկըներում և գաղութիներում ավելի ցայտուն դարձնելու համար, համեմատենք այդ գրությունը ԽՍՀՄ Խորհրդադների IV համագումարի տվյալների հետ (1927 թ. ապրիլ):

Խորհրդադների Համամիութենական IV Համագումարում ներկա և լին 1601 պատգամավոր վճռական ձայնով և 747 պատգամավոր խորհրդակցական ձայնով, Սրանցից անկուսակցականներ՝ 440 վճռական և 137 խորհրդակցական ձայնով, Բանվորներ—265, նախկին բանվորներ, վորոնք այժմ գրավում են զանազան տնտեսավարական կամ վարչական պոստեր—566, Գլուղացիներ—վճռական ձայնով 255, նախկին գյուղացիներ, այժմ զանազան տնտեսական և վարչական պաշտոններում—223:

Ազգությունները համագումարում ներկալացված ելին հետեւալ կերպով.—վելիկուուսներ—905, ուկրաինացիներ—255, բելուուսներ—56, հրլաներ—60, զըրզըզներ—53, լատիշներ—41, ուզբեկներ—31, թաթարներ—26, վրացիներ—25, թուրքեր—17, հայեր—14, բաշկիրներ—10, գերմանացիներ—9, մորդվիններ—7, լեհներ—7, տաջիկներ—6 և այլն:

Համագումարին մասնակցում ելին 116 կին պատգամավորուհիներ: Սրանցից՝ ՌՍՖԽ Հանրապետությունից—96 հոգի, Ուկրաինացից—13, Իւկուուսիայից—4, Անդրկովկասից—2, Ուզբեկստանից—1:

Իրեն կազմով աշխատավոր մասսաներին այսքան մոտեիկ իշխանություն չունի և վոչ մի լերկիր, բացի ԽՍՀ Միությունից:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչն ե պատճառը, վոր բանվորների կենսական մակարդակը ցածրացել և կապիտալիստական լերկըներում:

2. Ի՞նչով և բացատրվում կանաց և լերեխաների թվի աճումը արագության մեջ:

3. Ի՞նչ գեր ե խաղում «աշխատանքի պահեստների բանակը»—գործազրկությունը կապիտալիստական կարգերում:

4. Վորմնք են գյուղացիության աղքատության հիմնական պատճառները կապիտալիստական լերկրներում:

5. Ինչմեկ ե բացատրվում աշխատանքի ցած վարձատրությունը Զինաստանում, Հնդկաստանում և ուրիշ գաղութավին լերկրներում:

6. Ինչմեռ լեն ամերիկական կապիտալիստները գրպառում սպիտակամորթ բանվորներին նեգրերի դեմ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՈՎ Ե ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ
ՊԱՅՔԱՐԾ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

§ 1. Կոմիներնը յեվ նրա խնդիրները.

Բանվոր գասակարգի և գլուղացիութիւն
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ դրությունը կապիտալիստական լերկրներում
ԿՈՎԵՇ ԴԱՍԵՐԸ՝ մղում և նրանց դեպի պալքար՝ տիրող գասա-
կարդերի դեմ՝ կապիտալիստների և կալվածատերերի դեմ։ Այդ
դասակարգային կոփին առաջ և գալիս դասակարգային անհաշտ
հակասություններից և անընդհատ շարունակվում ե զանազան
ձեռքով։ Ընդ վորում պայքարող կողմերի դրությունը շատ հեռու
լի միատեսակ լինելուց բուրժուական պետության ամքող տըն-
տեսական և քաղաքական հզորությունը շահագործողների կողմն
ե, ընդդեմ բանվոր դասակարգի և գլուղացիութիւն։ Զորքն ու
վոստիկանությունը, դատարաններն ու բանտերը, դպրոցներն
ու լիկերեցիները, թերթերն ու դրգերը — այս բոլորը հզոր գոր-
ծիքներ են հրաշալի կերպով կազմակերպված շահագործողների
ձեռքում։ Այս պատճառով բոլոր ճնշվածների և հարստահարված-
ների հաղթանակի հիմնական պայմանն ե ըստ հնարավորին ա-
մուր, շնորհալի և ձուլված կազմակերպություն ստեղծելի Ընկ.
Լինինը շատ տարիներ առաջ այս միտքն արտահայտել ե հետե-
ւալ խոսքերով։ «Պրոլետարիատն իշխանություն ձեռք բերելու
համար մղած իր կովում ուրիշ վորեն գենք չունի, բացի կազ-
մակերպվելուց»։

Սակայն հաղթելու համար միմիայն այդ պայմանը գեռ բա-
վական չէ։ Կազմակերպել բանվորներին պրոֆմիությունների
մեջ և ստեղծել գլուղացիական միություններ—դա գործի կեսն
ե միայն։ Պայքարը պահանջում ե ղեկավարություն։ Ղեկավա-
րությունն իրագործելու համար անհրաժեշտ ե բանվորների աշ-

ռավել գիտակից և առաջավոր մասին միավորել և կազմակերպել կոմունիստական կուսակցության մեջ: Հաշվի առնելով դասակարգային կովի փորձը, ըստ Լինին լեկել ե այն յեզրակացության, վոր «Միմիայն կոմունիստական կուսակցությունը, յեթե նա իսկապես հանդիսանում է հեղափոխական դասակարգի ավանդաբարը, յեթե նա իր մեջ ունի նրա բոլոր լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա կազմված է լիովին դիտակից և նվիրված, լուսավորված և հեղափոխական պալքարի համառ փորձ կոփիված կոմունիստաներից, յեթե նա կարողացել է իրեն անքակտելի կերպով կապել իր դասակարգի ամբողջ կյանքի հետ և նրա միջոցով ել ճնշվածների ամբողջ մասսայի հետ և կարողացել է այդ դասակարգին և այդ մասսային լիակատար հավատ ներշնչել—միմիայն արագիսի կուսակցությունն ընդունակ է ղեկավարելու պրոլետարիատին ամենավճռական, ամենաանողոք և վերջնական կովում ընդդեմ կապիտալիզմի բոլոր ուժերի: Մըս կողմից ել միմիայն արագիսի կուսակցության ղեկավարությամբ պրոլետարիատն ընդունակ է զարգացնել իր հեղափոխական թափի ամբողջ կարողությունն ու հզորությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կոմունիստական կուսակցություններ ստեղծվեցին բոլոր կապիտալիստական լեր կը ընդունակ:

3-րդ կոմունիստական ինտերնացիոնալը
ԿՈՄԻՏԵՐՆԻ ԾԱ- ծնվել ու մեծացել ե բարդ և փոթորկահույզ
ԳՈՒՄԸ միջավարում: Առաջին ինտերնացիոնալը, վո-
րը ղեկավարում ելին Մարքսն ու Ենգելսը, հիմք դրեց բանվոր
դասակարգի միջազգային համերաշնությանը: Նա ստեղծվել է
այն ժամանակ, երբ դեռ հիշողության մեջ թարմ ելին 19-րդ
դարի կեսերի հեղափոխական փոթորկիները (Գերմանիա, Ֆրան-
սիա, Ավստրիայի հեղափոխությունները, Անգլիայի հեղափոխա-
կան շարժումը): Նա կազմալուծվեց 1871 թ. Փարիզիան կոմու-
նայի անկումից քիչ հետո:

2-րդ ինտերնացիոնալը (1889 թվից սկսած) կաղապարվեց
և գործեց հեղափոխության խաղաղացման շրջանում, կապիտա-
լիզմի արագ աճման տարիներին գաղութների զավթման և բա-
ժանման պահին, կապիտալիստական պետությունների ձեռքով
ավելի լիտամաց լերկրների շահագործման որերին: 2-րդ ինտեր-
նացիոնալը եւապես միախմբում եր Յեվրոպայի և մասսամբ Ամե-
րիկայի բանվորներին: Այդ միախմբման մեջ չեր մասնակցում

գաղութիների պրոլետարիատը՝ Զինաստանի, Հնդկաստանի, Աֆ-
րիկայի ճնշված ժողովրդների պրոլետարիատը:

Հենց վոր 2-րդ Ինտերնացիոնալի սնանկացումը պարզվեց,
մեր կուսակցությունն առաջադրեց Յ-ըդ Ինտերնացիոնալի ըս-
տադիման նշանաբանը: Դիր պատերազմի առաջին ամիսներին
Լենինը զրում եր ալդ մասին, մատնանշելով, թե բանվորների
նոր միջազգային միախմբումն ստեղծել կարելի է միայն հեղա-
փոխական բազալի վրա՝ պայմանով, վրաբեսզի անջատվեն ինչ-
պես ոպորտյունիստներից (այսինքն սոցիալ-հայրենասերերից,
վորոնք պատերազմի որերին պաշտպանում ելին իրենց բուր-
ժուազիալին), այնպես և ցետքիստներից (կենտրոնի կողմանից-
ներից); այսինքն այն մարդկանցից, վորոնք չեն ուղում իրենց
կապերը խզել սոցիալ-հայրենասերերից և փաստորեն նրանց յե-
տեւից են ընթանում:

1917 թվի ապրիլան կոնֆերանսի ժամանակ մեր կուսակ-
ցությունն առաջադրում են նոր ինտերնացիոնալ ստեղծելու խըն-
դիրը, վրաբես իր կուսակցության հերթական անելիքը: Վորո-
շում և հանգում, վրաբեսզի կենտկոմն անհապաղ ձեռնամուխ
լինի Յ-ըդ Ինտերնացիոնալի հիմնադրությանը:

Ֆրոնտաների փոթորկահույզ կերպով զարգացող անցքերի և
պայքարի պատճառով 19 թ. մարտին միայն հաջողվում ե հրա-
վիրել Յ-ըդ Ինտերնացիոնալի առաջին հիմնադրի կոնգրեսը:
Կոնգրեսին մասնակցում ելին 24 կուսակցությունների և կազ-
մակերպությունների 50 ներկայացուցիչները (վորոնցից վճռա-
կան ձայն ունելին 19 կուսակցությունների 33 ներկայացուցիչ-
ներ): Այս կոմունիստական միախմբումների ճնշող մեծամասնու-
թյունը դեռևս մասսայական կուսակցություններ չելին, այլըան-
վորական շարժման հոսանքներ ու խմբավորումներ միայն:

Կոնգրեսի մանիֆեստն ասում եր, «Եկթե առաջին Ինտեր-
նացիոնալը նախատեսնում եր ապագա զարդացումն ու ուղիներ
նշում, յեթե 2-րդ Ինտերնացիոնալը հավաքել ու կազմակերպել
ե միլիոնավոր պրոլետարների, ապա Յ-ըդ Ինտերնացիոնալը
բացահայտ մասսայական գործողության ինտերնացիոնալ ե, հե-
ղափոխական իրականացման ինտերնացիոնալը՝ գործի ինտեր-
նացիոնալը»:

Առաջին կոնգրեսի աշխատանքների հիմքում ընկած եր Լե-
նինի «բուրժուական դեմոկրատիալի և պրոլետարիատի դիկտա-
տուրայի մասին» թեզերի քննարկությունը: Այդ թեզերը՝ ուսւա-

կան և գերմանական հեղափոխությունների փորձից լենելով, Կոմիտանի համար ծրագիր, տակտիկա և կազմակերպչական հիմունքներ ելին մշակում:

Նրանք դիկտատուրայի և խորհրդային սիստեմի համար մղվելիք պալքարը առաջադրում ելին վորպես կոմունիստական կուսակցությունների հերթական անելիքը: Նրանք պարզեցին, վոր բուրժուական պետական կարգերը չեն կարող ուղարկություն հաղթահարվող պրոլետարիատի կողմից, այլ պետք և փշրվեն և փոխարինվեն խորհրդային սիստեմով, ինչպես այդ արված և մեղմությունը մանրամասն բնութագիր տվավ խորհրդային սիստեմի բոլոր առանձնահատկությունների մասին:

Թեզերը մատնանշում ելին, վոր պրոլետարիատի հաղթահարվող հնարավոր եմիայն այն գեղքում, ինը պրոլետարիատի կուսակցությունը բոլորովին խզե իր կապերը սոցիալ-դեմոկրատիայի հետ, վորոնք բուրժուազիալին ամեն կերպ պաշտպանում են: Մենքերիների գեմ մղած պալքարի մեր փորձն ընդարձակ կերպով ուղարկործվեց լեզրայրական կուսակցությունների գործելակերպը մշակելու ժամանակ: Անինն ընդգծում եր, վոր պրոլետարիատի ինքնուրուցն և ուժեղ կուսակցությունները միայն Մարքսի ուսմունքին հենվելով և ամեն տեսակի ոպղրատունիդմից մաքրվելով կարող կլինեն համախմբել բանվոր դասակարգին և գեպի հաղթանակ առաջնորդել նրան:

Հենց առաջին կոնգրեսում ընդգծվեց կոմունիստական կուսակցությունների անլիբալ ընդհատակյա աշխատանքների անհրաժեշտությունը բացահայտ պալքարի հետ միասին:

Պետք և ավելացնել, վեր Կոմինտերնը սկզբնավորման առաջին որվանից կառուցվել և սկսել վորպես աշխարհի բոլոր պրոլետարների միություն (ներառնելով նաև չինացիներին, հընդիկներին, նեղըներին և ալլն), այլ վոչ թե միայն սպիտակ բանվորների կազմակերպություն (ինչպես 2-րդ հնտերնացիոնալներ):

Անինյան սկզբունքներն այս ձևով կազմեցին Յ-րդ հնտերնացիոնալի հիմքը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը և մեր ԿՈՄԻՏԵՐՆԸ ՅԵՎ սոցիալիստական շինարարության փորձը կենսուրա և ԽՄԴՀ երանի որինակով ցուց տվին, թե ինչ վճռական դեր ունի հեղափոխության մեջ կոմունիստական կուսակցությունը: Մակայն բանվորների և գլուղացիների պալքարի

փորձը վրչ միայն Ռուսաստանում, այլ և ամբողջ աշխարհում, առում ե, զոր անհրաժեշտ ե բոլոր լերկրների կոմունիստական կուսակցությունների միավորությունը:

Յերբ զործը վերաբերում ե աշխատավորներին ճնշելուն, բանվորների կամ գուռզացիների ապստամբությունները խեղեղելուն, ամբողջ աշխարհի կապիտալիստները միմյանց ոգնում են, միասին են գործում: Այսպես եր Խորհրդացին իշխանության վրա կատարված ռազմական գրոհի տարբեներում: մեղ հետ պատերազմում ելին վոչ միայն ռուսական, այլ և անգլիական, ֆրանսիական, ամերիկական, յավոնական, լեհական և այլ կապիտալիստներն ու կալվածատերները: Բացի այդ, հայտնի յե, զոր վենդրիական և բավարական Խորհրդացին հանրապետությունները (1919 թ.) տապալելու գործին մասնակցեցին շատ կապիտալիստական լերկրներ: Զինական հեղափոխության գեմ պալքարում ելին բոլոր լերկրների իմպերիալիստները: Այսպիսի որինակներ անցյալից ու ներկայից կարելի յե շատ բերել: Բուրժուազիալի այս միասնական ճակատին պետք ե հակադրել աշխատավորների և նրանց ավանդարդ՝ կոմունիստական կուսակցությունների միասնական ճակատը:

Կոմունիստական կուսակցությունների միջազգային միավորությունը կամ Կոմունիստական Խնտերնացիոնալը (Կոմինտերն) հիմնվել է ընկ. Լենինի ջանքերով: Անա թե ինչ ե ասել ընկ. Լենինը Կոմինտերնի հիմնադրությունից հետո:

«Ընթացիկ 1919 թ. մարտին Մոսկվայում կայացավ Կոմինտերնի միջազգային համագումարը: Այս համագումարը հիմնեց III Կոմունիստական Խնտերնացիոնալը՝ ամբողջ աշխարհում Խորհրդացին իշխանություն հաստատել ցանկացող բանվորների միությունը: Առաջին Խնտերնացիոնալը, վորի հիմնադիրն եր կ. Մարգոսը, գոյություն ունեցավ 1864 թվից մինչև 1872 թիվը: Փարիզի հերոս բանվորների պարտությունը՝ նշանավոր «Փարիզի Կոմունայի» անկումը նշանակում եր այդ Խնտերնացիոնալի վախճանը: Նա անմոռանալի յե, նա հավիտենական ե բանվորների պատարագական պալքարի եներում: Նա հիմքը դրեց համաշխարհային սոցիալիստական հանրապետության այն շենքի, վորը մենք բախտ ունեցանք կառուցելու Եներկրորդ Խնտերնացիոնալը գոյություն ունեցավ 1889 թվից մինչև 1914 թիվը, մինչև պատերազմը: Այս ժամանակաշրջանը կապիտալիզմի զարգացման ավելի հանգիստ ու խաղաղ շրջանն եր, առանց մեծ հեղափոխու-

թյունների: Ալդ ժամանակամիջոցում բանվորական շարժումն ամրացավ ու առնացավ մի շարք լերկրներում: Կուսակցություններից շատերի նոր բանվորական ղեկավարներն ընտելանալով խաղաղ ժամանակների պայմաններին, կորցրին հեղափոխական կովկի իրենց ընդունակությունը: Յերբ 1914 թ. սկսվեց պատերազմը, վորը չորս տարիների ընթացքում ամբողջ լերկերը վողողեց արյունով, վորը ծագել եր կապիտալիստների մեջ շահուկըթ բաժանելու և մանր ու թուլլ ազգերին նվաճելու համար, այն ժամանակ այդ սոցիստիստներն անցան իրենց կառավարությունների կողմը: Նրանք դավաճանեցին բանվորներին, նրանք ողնիցին լերկարելու սպանողը, նրանք սոցիստիկմի թշնամիներ դարձան, նրանք անցան կապիտալիստների կողմը: Բանվորական մասսաները լերես դարձրին սոցիստիկմի այդ դավաճաններից: Ամբողջ աշխարհում սկսվեց դարձ դեպի հեղափոխական պալքարը: Պատերազմը ցուց տվեց, վոր կապիտալիկմը կործանվում է, և վոր նրան փոխարինելու գալիս են նոր կարգերը:

Սոցիալիզմի դավաճաններն անարգեցին հին «սոցիստիկմ» խոսքը: Ալժմ կապիտալիկմի լուծը թոթափելու կողմակից բանվորներն իրենց անվանում են կոմունիստներ: Ամբողջ աշխարհում աճում է կոմունիստների միությունը:

Կոմինտերնը ձգտում է կորհրդային իշխանություն հաստատել բոլոր լերկրներում. այդ հնարավոր և միմիայն այն ժամանակ, լերը բանվորներն ու զյուղացիները կհաղթեն կապիտալիստներին և կալվածատերերին: Ալդ հաղթանակի կազմակերպման համար ել աշխատում ե կոմինտերնը: Կոմինտերնի հիմնական խնդիրն ե ղեկավարել բանվորների ու զյուղացիների պարագը կապիտալիստական հասարակակարգը տապալիլու և պրոետարական դիկտատուրա ստեղծելու համար. նա աջակցում է ազգային ազատագրական շարժումներին. նա պալքարում է ազգերի նկատմամբ իմպերիալիկմի կողմից գործադրվող ճնշման դեմ. նա ղեկավարում է կապիտալիկմի ղեմ ուղղված ամեն մի պարագը, վորովհետև նրա տապալման և խորհրդային իշխանություն հաստատելու միջոցով ե, վոր նա պետք է հասնի լուր վերջնական նպատակին—համաշխարհային կոմունիզմին:

Կոմինտերնը—համաշխարհային հեղափոխության շտաբն է: Ի՞նչ ճանապարհներով և կոմինտերնը գնում դեպի իր հիմնական խնդրի իրականացումը: Ամենից առաջ կոմունիստական կուսակցություններ ստեղծելով և նրանց ամրացնելով: Պատե-

բազմից հետո մի շարք լեվրոպական լերկրներում (Խտալիալում—1920 թվին, Գերմանիայում—1923 թվին) կային բոլոր պայմանները պրոլետարական հաղթանակի համար կար բանվորների հզոր հեղափոխական շարժում, պալքարի պատրաստակամություն, բուրժուազիայի շարքերում նկատվում եր պանիկա: Բացակալում ելին միան ամուռ կոմունիստական կուսակցություններ, վորոնք դեկավարելին ալդ շարժումը, վորի հետևանքով ել բուրժուազիան սոցիալ-դեմոկրատների ոգնությամբ ճնշեց ալդ:

1914 թվի նշանավոր դավաճանությունից ոկտոստ, սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստները, վորոնք մտնում են Ա Խնաերնացիոն.ալի մեջ, հավատարիմ ծառայում են բուրժուազիային: Զար բանվոր դասակարգի և վոչ մի պարտություն, վորը գլուխ դար առանց Ա Խնաերնացիոնալի սոցիալիստների ոգնության: Գերմանական սոցիալ-դեմոկրատները մեղավոր են բանվոր դասակարգի առաջնորդներ Կարլ Լիբենսիտի և Ռոզա Լուկսենբուրդի սպանության մեջ: Գերմանական սոցիալ-դեմոկրատիալի առաջնորդները՝ Շելդեմանը, Նոուկեն, Երերազ, արլունով ներկեցին գերմանական պրոլետարիատի էլեկութները և այնտեղ հասցըին, վոր գերմանական հանրապետության նախագահ դահճնեկց կասեր հավատարիմ ծառա գեներալ Գինդենբուրդը: Վենց գրիալի սոցիալ-դեմոկրատները դավաճանեցին վենցրիական հեղափոխությանը և ստորագրեցին նրա հերոս դեկավարների մահավան դատավճիռը: Բուրդարիալում և Ավստրիալում սոցիալ-դեմոկրատները ֆաշիստների հետ միասին արլունի մեջ խեղդեցին բանվորների և գյուղացիների էլեկութները: Զմեաց մի լերկիր, վորտեղ սոցիալ դեմոկրատներն ալդ ստոր գերը չխաղացին: Զաւալով արդարիուի դավաճանական դործունելության, կապիտալիստական լերկրներից շատ շատերում գեռ սոցիալ-դեմոկրատների լետեից գնում են բանվորական զգալի մասսաներ: Այդ նրանով և բացառքում, վոր սոցիալ-դեմոկրատները տասնյակ տարիների ընթացքում դեկավարել են բանվորական շարժումը և դեռևս ամուռ հիմքեր ունեն բանվորական կազմակերպություններում, արհեստական միություններում, գործարանալին կոմիտեներում, կոռպերատականներում և այլն: Սոցիալ-դեմոկրատների մամուլն որ որի վրա շարունակ զրպարտություններ և տարածում ԽՍՀ Միության հասցելին, վախեցնելով բանվորներին մեր հեղափոխության առաջին տարիների պալքարի դժվարություններով, վլուզումով, ազքատությամբ և սովոր: Այս պատճառով մի-

լիոնավոր լետամնաց բանվորներ դեռևս գնում են Ա Ինտեր-
նացիոնալի լետերից:

Կոմունիստական կուսակցությունները պետք ե դուրս կոր-
զեն բանվորական մասսաներին Ա Ինտերնացիոնալի մեջ մանող
կուսակցությունների ձեռքից և նրանց տանեն իրենց լետերից:
Ինչպես պետք ե այդ անելու Պետք և համոզիլ բանվորներին, վոր
սոցիալ-դեմոկրատները դավաճաններ են, և պետք ե ապացուցել
նրանց, վոր ճշմարիտը և ուղիղը կոմունիստների պահանջներն
են, պետք ե հասկացնել նրանց հեղափոխության անհրաժեշտու-
թունը: Այս բանին կոմունիստները կարող են հասնել միմիայն
մասնակցելով բանվորների ամենորդա պալքարին՝ կապիտալիստ-
ների դեմ գործարաններում և ֆարբիկաներում, ֆաշիստների
դեմ մզած պալքարին, բուրժուական կառավարությունների դեմ
տարած կավիճ: Բանվորական մասսաներին իրենց կողմը պահե-
լու նպատակով սոցիալիստներն ամեն կերպ աշխատում են բան-
վորների ուշադրությունը հեռացնել հեղափոխական պահանջնե-
րից: Յերբեմն նրանք ճարպկորեն հարմարվում են և սկսում
պաշտպանել բանվորների անհան պահանջներն աշխատավարձի
վերաբերյալ, զլուխ են անցնում բանվորների այս կամ այն
լելութիւ, վորպեսզի հարկավոր բոպելին բոլոր այդ պահանջներն
ի չիք դարձնեն, դավաճաննեն բանվորների շահերին: Կոմունիստ-
ները պետք ե աշխատեն բանվորների այդ ամենորդա և կենսա-
կան պահանջների դեկապարությունն իրենց ձեռքը վերցնել:

Այս նպատակն իրականացնելու համար ե
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԱԿԱՏԻ ծառայութիւնը միամնական ճակատի տակատիկան,
ՏԱԿԻԿԱՆ: ճառայում միամնական ճակատի տակատիկան,
վորպես մասսաներին զրավելու միջոց: Այն
բանվորները, վորոնք գնում են սոցիալ-դեմոկրատական դավա-
ճան առաջնորդների լետերից—մոլորված են: Նրանք կարծում են,
թէ կապիտալին կարելի լու հաղթել խաղաղ ճանապարհով, առանց
հեղափոխության: Կոմունիստների պարտականությունն ե աշխա-
տավարձի, բանվորական որը կը ճատելու, աշխատանքի պաշտ-
պանության, սոցիալական ապահովագրության և այլնի համար
մզգող առորդա պալքարի կենդանի որինակներով վերադաստիա-
րակել այդ բանվորներին, բարձրացնել նրանց դասակարգակին
գիտակցությունը և նրանց հետ միասին, սոցիալ-դեմոկրատ ա-
ռաջնորդների գլխի վրայով, ստեղծել մեկ միասնական ճակատ՝
ընդգեմ բուրժուազիալի: Կոմինտերնը առաջարկում ե կոմկու-
սակցություններին միանալ սոցիալ-դեմոկրատ բանվորների հետ

ալս կամ այն գործնական գործադուլների համար, ուշադիր և ընկերական վերաբերմունք ունենալ գեղի սոցիալ գեմոկրատ քանվորները՝ հնարավորություն տալու համար նրանց գնալու մեջ հետ միասին ընդուն բուրժուազիալի՛ իհարկե, այդ անելով հանդերձ, կոմկուսակցությունները լեռները չպետք ե թուլացնեն պայքարը սոցիալ-գեմոկրատական առաջնորդների դեմ և պետք ե մերկացնեն նրանց ամեն մի դավաճանական քալլը:

Վորպես միասնական ֆրոնտի ճիշտ տակտիկալի որինակ կարող ե ծառայել այն կամպանիան, վոր տարավ գերմանական կոմկուսակցին կարսին և մեծ իշխաններին՝ նրանցից նվաճ գույքը և հողի փոխատուցումը վճարելու դեմ (մոտ մեկ և կես միլիարդ ռուբլի):

Դերմանական սոցիալ-գեմոկրատիալի առաջնորդներն արդ գեն սկսել ելին պայմանավորվել մլուս բուրժուական կուսակցությունների հետ, վճարվելիք գումարի չափի և ժամկետների մասին։ Կոմկուսակցությունը լայն ագիտացիա սկսեց բանվորական մասսաների մեջ հակառակ փոխատուցման՝ «վոչ մի կոպեկ իշխաններին» լոգունգով և սկսեց ստորագրություններ ժողովել արդ հարցը համաժողովրդական ձայնատվությամբ լուծելու համար։ Կոմունիստները ճիշտ ըմբռնեցին բանվորների տրամադրությունը։ Սոցիալ-գեմոկրատ առաջնորդները հարկադրված ելին ընդունել կոմունիստների միատեղ պարագաները առաջարկը։ 1926 թ. հունիսին կալացավ համաժողովրդական ձայնատվությունը։ Թեև կոմունիստների առաջարկն ստացավ 15 միլիոն ձայն, փոխարեն պահանջված 20 միլիոնի, այնուամենայնիվ կառավարությունն որենսգիծը չետ վերցրեց։ Սակայն այս բոլորը խորածանկություն եր կառավարության և սոցիալ-գեմոկրատների կողմից։ Այն, ինչ չհաջողվեց բացարձակ և միանգամից անցկացնել ամրող Գերմանիայում, նրանք անց են կացնում մաս-մաս, գերմանական առանձին հանրապետություններում։ Պրուսիալի (Գերմանիայի ամենախմուր մասը) սոց.-գեմոկրատական կառավարությունն արդեն պայմանավորվել է իշխանների հետ՝ նրանց տարեկան բավական խոշոր գումարներ վճարելու Նրա որինակին հետեւում են նաև գերմանական հանրապետության մյուս կառավարությունները։

Կոմկուսակցության պարտականությունն ե տվյալ գեղքում մերկացնել սոցիալ-գեմոկրատների հանցավոր քաղաքականությունը, կոմկուսակցությունը պետք ե ցուց տա բանվորական

մասսաներին, թե ինչպես սոցիալ-դեմոկրատները նրանց հիմարացրին, և դրանով նվաճի այդ մասսաներին, ապացուցելով միաժամանակ, վոր հաղթություն կարելի է ձեռք բերել միմիայն այն ժամանակ, չերը կառավարության մեջ չեն լինի վոչ բուժուազիան և վոչ ել սոցիալ-դեմոկրատները:

Թերորդ ինաերնացիոնալն իրեն նպատակ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԽԸՆ- է գնում բոլոր ցեղերին պատկանող պրոլետարներին և բոլոր լերկրների ճնշված ժողովրդներին միախմբել Հենց սրանով ել նրա համար ազգային և գաղութային խնդիրները հատուկ կարերություն ունեն:

Ենինը 4-րդ կոնգրեսում այս նյութին վերաբերող իր զեկուցման մեջ մատնանշել եւ, վոր աշխարհում նվազագույն զեալ-քում մեկ և մեկ քառորդ ($1^1/4$) միլիարդ բնակչություն կա, վորը գաղութային կամ այլ տնտեսական կախման մեջ և իմպերիալիստական լերկրներից: Իսկ այս վերջիններում մի քառորդ միլիարդը շահագործում ե մեկ և մի քառորդ միլիարդ մարդկանց—այս և մեր դարաշրջանի բնորոշ առանձնահատկությունը:

Գաղութներին տիրապետող լերկրն այդ գաղութների վերաբերմամբ կիրառում ե շահագործման ամեն տեսակ միջոցներու նա աշխատում ե ամեն կերպ դանդաղեցնել նրանց տնտեսական զարգացումը, որինակ՝ նավահանգիստներն ու լերկանուղիները կառուցվում են՝ ուղղմական շահերից և իմպերիալիստական լերկրների առևտրական հարաբերություններից չելնելով: Յերկրի ինդուստրացումն ամեն կերպ դանդաղեցվում ե: Գաղութներն ամեն կերպ ոդտագործվում են վորպես իմպերիալիստական լերկրի ապրանքներն սպառելու և կապիտալը շահագործելու շուկաներ: Այսպիսով՝ գաղութը հարկադրված է իր ինքնուրույն զարգացման շահերը զոհաբերել և դառնալ մի ուրիշ պետության ինչ-վոր մի կցորդը. մի կցորդ, վորը նրան հումուլթ (կառուկուկ, բամբակ, նավթ և այլն) և հաց և մատակարարում:

Առանց գաղութներն իմպերիալիստական լծից ազատագրելու, իմպերիալիզմին հաղթահարել չի կարելի:

Այդ պատճառով ել պրոլետարիատն իր ազատագրության համար մղած պայքարը պետք է սերտորեն կապի գաղութների անկախության համար մղած պայքարի և բոլոր ճնշված ժողովրդների ազգային պայքարի հետո:

Կոմինտերնը հայտարարել է ազգերի ինքնորոշման իրա-

վունքը՝ մինչև անջատում և ինքնուրուցին պետության կազմակերպում:

Գաղութալին պրոբլեմին կոմինսերնը հատուկ ուշադրություն և հատկացրել և կոմունիստական կուսակցություններին պարզ ցուցմունքներ տվել:

Իմպերիալիստական լերկրներում կոմունիստական կուսակցությունները պարտավոր են սիստեմատիկ աջակցություն ցուցալ գաղութների ազատագրական հեղափոխական շարժումներին: Այդ աջակցությունն առաջին հերթին պետք է ցուց տան նույն լերկրի բանվորները, վորոնցից կախված են գաղութները: Այսպես, որինակ՝ Անգլիաի պրոլետարիատը պարտավոր և պահանջել, վորպեսզի անգլիական զորքերը հետ կանչվեն Հնդկաստանից, հրաժարվեն այնտեղ զորք և գենք փոխադրելուց:

Գաղութալին և կիսագաղութալին լերկրների մեջ կոմունիստական կուսակցությունները պարտավոր են համարձակ և հետեւ վողական պալքար մղել ոտաքերկրյա իմպերիալիզմի դեմ և միաժամանակ պրոլետարիատին մղեն իմպերիալիստական լերկրների պրոլետարիատին մերձնալու և նրա հետ դաշն կռելու գաղափարի շուրջը: Անհրաժեշտ և պրոպագանդ մղել և կենսադործել ագրարալին հեղափոխության (կալվածատերերի լծի տապալման) նշանաբանը:

Պրոլետարիատի կուսակցությունն ամրակուելով՝ այդ լերկընների կոմունիստները պարտավոր են լայնարձակ ծավալի մասսայական կազմակերպությունները, արհեստակցական միությունները, գյուղացիական հեղափոխական միությունները: Պրոլետարական կուսակցության լիակատար ինքնուրուցինությունը խստորեն պահպանելով և պրոլետարիատն ու գյուղացիությունը բոլորքուազիալի աղջեցությունից ազատագրելով կոմունիստական կուսակցությունները կարող են այնու հանդերձ ժամանակավոր համաձայնություններ կնքել բոլորքուազիալի հետ այն չափով, ինչ չափով նա արգելք չի հանդիսանում բանվորներին և գյուղացիական հեղափոխական կազմակերպությանը և իրոք պարագում և իմպերիալիզմի դեմ: Մակար այս պարագալին կոմունիստները պետք է քաղաքարական և քաղաքական ամենաանինա պայքարը մղեն բոլորքուական նացիոնալիզմի դիմ, դիմակազերծ անեն նրա կիսակատարությունն ու անկարունությունը:

Ազգերի ինքնորոշման համար պարագար մղելով կոմինստերննառանձնապես նշել և գատապարտել և պղգամությունը (շո-

վինիզմը), արհամարհանքն ոտար աղգերի վերաբերմամբ, վորին հաճախակի հանդիպում ենք աիրող ազգերի մեջ:

Կոմինտերնը վճռականապես դատապարտել ե մանր բուրժուական ազգային նախապաշարությունը, ինչպես, որինակ, անտիսեմիտիզմը: Սակայն համազոր չափով նա մասսակար ե համարել նաև պանխիզմիզմը (համիսլամություն) և այն,—հոսանքներ, վորոնք փորձում են միացնել ճնշված ժողովրդների ազգային պայքարը տաճկական կամ վորեւ ալ իմպերիալիզմի հզորությունն ուժիղացնելու հետ:

Պրոլետարական հեղափոխության հաջողությունն Արևմուտքում և ազգային շարժություների հաղթանակը գաղութներում և Արևելքի լերկրներում համաշխարհային հեղափոխությանն իսկական հենարաններ կտան: Այս պարագային գաղութների և Ասիայի լերկրների համար հնարավորություն կներկայանա կապիտալիզմը մի կողմը թողնել և կիսաֆեոդալական կարգերից ու մի շարք անցողական միջոցներից հետո անցնել սոցիալիստական կարգերի:

Կոմինտերնի ծրագիրը, վոր ընդունվեց ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՄՐԱ-
ԳԻՐԸ, 6-րդ կոնգրեսում, մշակվել ե միքանի տարի-
ների ընթացքում, ըստ վորում նրան հիմքն են
կազմել այն դրույթները, վոր Մարքսն ու Լենինն են զարգաց-
րել, և լայնորեն հաշվի ին առնվել բանվոր գասակարգի համաշխարհային պայքարի և մասնավորապես մեր կուսակցության փորձը:

Աշխարհի բոլոր կուսակցությունների համար մի ծրագիր ընդունելը յեղակի լերկութ եւ Մինչև այդ ժամանակ մարդկային ամբողջ պատմության ընթացքում վոչ մի դասակարգ գործունելության միասնական ծրագիր չի ունեցել:

Միասնական ծրագիր ընդունելը նշանակում եր, վոր միշտագային կոմունիստական հեղափոխության պայմանները հասունացել են և բանվոր դասակարգը գիտակցել ե կապիտալիզմի տապալման և պրոլետարիատի դիկտատուրա սահմանելու հիմնական անելիքներն ու ուղիները: Այդ նշանակում եր նաև այն, վոր կոմունիստական Խնտերնացիոնալը միշտագային պրոլետարական հեղափոխության իսկական առաջնորդն ե հանդիսանում:

Կոմինտերնի ծրագիրը համաշխարհային պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող պայքարի ծրագիրն ե. սրա մեջ ե ծրագրի հիմնական գաղափարը: Մըագիրը պայքարող պրոլետարիատի ձեռքը հզոր զենք ե տալիս:

Կոմինտերնի ծրագրի առանձնահատկություններն այն են, վոր նա—1) տալիս ե հեղափոխական պալքարի միջազգային փորձի կատարչալ թերժատիկական ընդհանրացումը, 2) կապիտալիզմի միջազգային սիստեմին հակադրում ե կոմունիզմի միջազգային սիստեմը, Նա վոչ միայն առաջավոր լերկրների բանվորության հեղափոխական մարտական գործողության ծրագիրն ե, այլև ճնշված գաղութների միլիոնավոր մասսաների ծրագիրը։ Նա լուսաբանում է ԽՍՀ Միության սոցիալիստական շինարարության ու բայց միզմի հեղտփոխական փորձի նշանակությունը միջազգային պրոլետարիատի հեղափոխության համար։

Կոմինտերնի ծրագիրը հակիրճ ձևով և միայն բնորոշում կոմունիզմի հիմնական առանձնահատկությունները։ Նրա մեջ գլխավոր ուղաղը ուղղությունը դարձված ե կապիտալիզմի անխուսափելի անկման և ամրող աշխարհում բանվոր դասակարգի հաղթանակն ապացուցելու վրա։ Նա պալքարող պրոլետարիատին հիմնական ցուցմունքներ ե տալիս, թե ինչպես պետք ե պալքարել և շուտափուզի հաղթանակ ձեռք բերել։ Ծրագիրը մանրամասնորեն քննարկում ե կապիտալիզմի և իմպերիալիստական դարաշրջանի բոլոր առանձնահատկությունները։

Ծրագիրը մերկացնում ե կապիտալիզմի կործանման ամրող անխուսափելիությունը, ընդնշում և բանվոր դասակարգի և գաղութային ժողովրդների շահագործման աճումը, դասակարգային պալքարի սրումը, համաշխարհային պրոլետարական հեղափոխության ուժերի զարգացումն ու ծավալումը։

Այնուհետև ծրագիրը մանրամասնորեն բնութագրում ե կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու շրջանը և պրոլետարիատի դիկտատուրայի ելությունը։ Այստեղ առանձնապես ուսուական փորձի վրա մշակվում ե կոմունիստական կուսակցությունների գործողությունների մանրամասն ծրագիրը՝ պետական իշխանությունը նվաճելուց հետո սկսվող անցողական շրջանի համար։ Հատուկ կերպով բնութագրվում ե գաղութների ճնշված ժողովրդների պալքարը։

Հատուկ գլխի մեջ քննարկվում է ԽՍՀ Միության մեջ պրոլետարիատի դիկտատուրայի նշանակությունը և հետեւթյուն ե արգում, վոր և ԽՍՀ Միության վրա իմպերիալիստական պետությունների հարձակման և նրա դեմ սկսված պատերազմի դեպքում միջազգային պրոլետարիատը պարտավոր և պատասխանել ամենահամարձակ և վճռական ու մասսայական լեռութներով և

իմպերիալիստական կառավարությունների տապալման համար մղվելիք պալքարով՝ պրոլետարիատի դիկտատուրայի և ԽՍՀ Մի-թյան հետ միավորելու նշանաբանի տակ»:

Տրագիրը մանրամասնորեն ընդունում է Կոմինտերնի ստրա-տեգիան և տակտիկան պրոլետարական դիկտատուրայի համար մղվելիք պալքարում։ Մասնավորապես հատկանշվում ե սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական դերը, վորն (սոցիալ-դեմոկրա-տիան) ամբողջովին անցել ե համաշխարհային բուրժուազիային սպասարկելու գործին և բանվոր դասակարգի մեջ իմպերիալիզ-մի զիխավոր հենարանն ու բանվորական մասսաներում կոմու-նիզմի գլխավոր թշնամին և հանդիսանում։

Խվանությունը նվաճելու համար պրոլետարիատի պալքա-րի ուղիները մանրամասնորեն նշենով, ծրագիրն ընդունում ե կո-մունիստական կուսակցությունների ե բանվորական ամբողջ մաս-սաների ամենասերտ կապի վողջ կարեռությունը։

Վերջապես ծրագիրը ցուց ե տալիս, վոր պրոլետարիատի հաջող պալքարը սերտորեն կապված ե միջազգային ամրակուռ դասակարգային կարգապահության հետ։ Այդ կարգապահությու-նը պահանջում ե շարժման մասնավոր և տեղական շահերը յն-թարկել շարժման ընդհանուր և տեղական շահերին։

Տրագիրը վերջանում ե Մարքսի խոսքերով, «Կոմունիստ-ներն ավելորդ են համարում իրենց հայացքներն ու արամադրու-թյունները թագանել, նրանք բացահայտորեն հայտարարում են, վոր իրենց նպատակներին հասնել կարելի լի ժամանակակից բո-լոր հասարակակարգերի բռնի տապալման ճանապարհով միայն։ Ցիրակալող դասակարգերը թող գողան կոմունիստական հեղափո-խության առաջ։ Պրոլետարները նրանց մեջ իրենց շղթաները միայն կարող են կորցնել, իսկ ձեռք են բերելու ամբողջ աշխար-հը։ Պրոլետարներ բոլոր լերկրների, միացեք»։

§ 2. Կոմունիստների ուժերը.

1919 թվին, լեռը հիմնվում եր Կոմինտերնը, կապիտալիս-տական յերկրներում գոլություն ունելին միմիայն թուլլ կոմու-նիստական խմբակներ։ Կոմինտերնի I կոնգրեսին մասնակցում ելին ընդամենը 44 պատգամավոր 19 լերկրներից։ V կոնգրեսին (1924 թ.) արդեն ներկա ելին 55 լերկրների կոմկուսակցություն-ների 327 պատգամավորներ։ Հետևյալ ազլուսակը տալիս ե Կո-մինտերնի ուժերի պատկերը։

Խառուագույն կապիտալիստական յերկրների Կոմիտսակցությունները
(1929 թ. սկզբին).

ՅԵՐԿՐՆԵՐ	ԿՈՄԻԿՈՍԱԿ- ՑՈՒԹՅԱՆ ՔԱ- ՆԱԿԸ	ԴՐՈՒԹՅՈՒՆ.
Անգլիա	9,000	Լեգալ
Գերմանիա	130,000	»
Հնդկաստան	9—10,000	»
Իտալիա	30,000	Անլեգալ
Չինաստան	30,000	»
Նորվեգիա	7,000	Լեգալ
Լիճաստան	9,000	»
Հ.Ամ.Միացյալ Նահանգներ	15,000	»
Ֆրանսիա	56,000	»
Չիխո-Սլովակիա	130,000	»
Շվեյցարիա	15,500	»

Այն ժամանակ, յերբ Անտերնացիոնալը հանդիսանում է համարյա թե բացառապես լեզրպական միավորություն¹, Կոմին-տերնը իր սեղիաներն ունի Արևելքի համարյա բոլոր լերկրներում։ «Կոմինիստական Ինտերնացիոնալն իրեն նպատակ է քննում ամբողջ աշխարհի աշխատավորության ազատագրումը։ Կոմինտերնի շարքերում լեզրալրաբար միանում են ամբողջ աշխատավորները—թե սպիտակամորթ, թե դեղնամորթ» (Կոմին-տերնի կանոնադրությունից)։

Կոմինտերնը իր շարքերում հաշվում եաժմ 56 կուսակցություն, վորոնցից 25-ը անլեգալ են, վորովետև 8եվրոպակի կետում տիրում ե սպիտակ տերրոր կոմունիստների վերաբերմամբ, մոտ 5 կուսակցություն կիսալեզալ են, վորոնք միքանի շարաթլեզալ ապրում են, բայց հետո նորից հարկադրված են ընդհատակալյա գործելու

¹ Ա Ինտերնացիոնալի քաղաքականությունը դեպի Արևելքի գաղութային ժողովրդների ազգային ազատագրական շարժումը փաստուեն ոգնում ե բուրժուազիային կողապետելու և ճնշելու գաղութները։ Ֆրանսիական իմպերիալիստները նույնիսկ հնարավոր են գտել, իբևնց ամենախոշոր գաղութներից մեկի (Սլեքիայի) կոմիտարի պալտունին նշանակել սոցիալիստական ականավոր առաջնորդներից մեկին։

Կիմը կոմինտերնի ամենամոռափկ կազմա-
թերթասսրդական կերպությունն ե, վորը միավորում և ամբողջ
ԿՈՄԻՆՏԵՐՆԸ(ԿԻՄ), աշխարհի պատանեկան կոմինիստական
կազմակերպությունները և աշխատում և կոմինտերնի ղեկավա-
րությամբ:

Ձեզ արդեն հայտնի լեն փաստեր, վորոնք վկայում են բան-
վոր լերիտասարդության ծանր դրությունը կապիտալիստական
լերկրներում:

Դաղլահի մոտ ժողովելով լերիտասարդության ահագին
բանակ, լենթարկելով նրանց միանման ճնշված պայմանների,
կապիտալիզմը գրանովի իսկ ստեղծում և պալմաններ նրանց կազ-
մակերպելու և միանմալու համար: Յերիտասարդությունն աշխա-
տանքի մեջ ինքնուրուն և զառնում, տնտեսապես անկախ, սո-
վորում և իրեն իրավազոր ընկեր համարել հասակավոր բանվո-
րին և նրա հետ միասին սկսում և պալքարել իր դրությունը
բարելավելու համար:

Կապիտալիստական ճնշումից հարկադրված՝ բանվոր լերի-
տասարդությունը համարլա բոլոր լեվրոպական լերկրներում գեռ
պատերազմից շատ առաջ սկսել եր ստեղծել իր կազմակերպու-
թյունները: Պատերազմի ժամանակ, լերը II Բնակերնացիոնալն
անցավ բուրժուազիակի կողմը, լերիտասարդության լավագույն
մասը պալքար սկսեց իմպերիալիստական պատերազմի գեմ: Այս
լերիտասարդության վրա լեր հիմնվում այն ժամանակ միջազ-
գալին բանվորական շարժմանը հավատարիմ մնացած փոքրա-
թիվ հեղափոխականների խմբակը՝ Լենինը, Լիբկնեխտը, Լյուկ-
սենբուրգը և ուրիշները՝ պատերազմի գեմ պալքարը լավագույն
կերպով կազմակերպելու համար: Այս լերիտասարդությունը 1915
թվին հրավիրեց լերիտասարդական հեղափոխական կազմակեր-
պությունների Միջազգային Կոնֆերենցիա: Կոնֆերենցիան վորո-
շեց յուրաքանչյուր տարի անցկացնել Միջազգային պատաճեկան որ,
նվիրված բանվոր լերիտասարդության շահերի և իրավունքների
պաշտպանության և վորպես ցուց ընդգեմ պատերազմի:

1919 թ. նոյեմբերին, լերը Լենինի ղեկավարությամբ ստեղծ-
վել եր Կոմինտերնը, Բերլինում կայացավ պատանեկան կազմակեր-
պությունների Միջազգային Կոնֆերենցիա, վորը վորոշեց
հարել Կոմինտերնին և ընդունեց «Յերիտասարդական Կոմունիս-
տական ինտերնացիոնալ» անունը:

Ներկայումս ԿիՄ-ը միավորում է 39 սեկցիաներ, վորոնցից
19 լեռալ 3 կիսալիգալ և 17 անկապալ: Բացի Համամիութենա-

կան լենինյան Յերիտմիությունից, ԿԻՄ-ը հաշվում է մոտ 110.000 անդամ:

Յերիտառարդական Կոմունիստական կազմակերպությունների գեմ սկսած խիստ հալածանքը վերջին տարիներում, կոմյիրիտականների գնդակահարություններն ու սպանությունները վկայում են այն մասին, վոր հանձինս Կոմունիստական յերիտասարդական կազմակերպությունների, կապիտալիստները տեսնում են իրենց վտանգավոր թշնամիներին: Խտալիալում Կոմյիրիտամիությունը մի. ժամանակ բոլորովին քայլալման եր յենթարկվել Բուլղարիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Լեհաստանում և ուրիշ յերկրներում Կոմյիրիտամիությունը նույնպես մեծ զոհեր տվեց: 1924 թ. ապրիլի 28-ին, յերեկոյան ժամի 5-ին Լոձի ազգիներից մեկում ատրճանակի 5 գնդակներով սպանվեց լրտես և Լոձի ախրանկայի գործակալ Լուչակը, վորը մատնել եր միքանի տասնյակ յերիտասարդների: Նրան սպանողն ընկեր Ենդելն եր, Լեհաստանի Կոմյիրիտամիության Լոձի կազմակերպության անդամը: Ենդելին անորինարար յենթարկեցին զինվորական դատարանի և գնդակահարեցին:

«Նա մահվան եր գնում գլուխը հպարտ բարձրացրած»:

Յերբ նրա վրա ուղղեցին հրացանի փողերը, նա բարձրաձայն աղաղակեց՝ «Կեցցե հեղափոխությունը»:

ԿԻՄ-ի գործկոմի այս առթիվ հրապարակած իր կոչի մեջ դրում եր.

«Ընկ. Ենդելի սուրբ դամբարանի առաջ մենք յերդվում ենք մեր բոլոր ուժերով ոգնել Լեհաստանի մեր յերիտասարդ ընկերներին: Ընկ. Ենդելի հիշատակն ընդմիշտ կմնա ամբողջ աշխարհի հեղափոխական յերիտասարդության սրտում: Նույնպիսի հերոսական մահով ընկան Լեհաստանի Կոմյիրիտականներ Բոտվինը, Կնիքսկին, Ռուտկովսկին: Հարյուրավոր կոմյիրիտականներ նստած են կապիտալիստական բանտերում:

Հալածանքների ամենածանր պայմաններում ե կոփվել պատանեկան կոմունիստական շարժման մարտական միջուկը:

Ներկայումս ԿԻՄ-ի հիմնական խնդիրն ե՝ նվաճել քաղաքի և գլուղի յերիտասարդական լայն մասսաներին: Այս խնդիրն իրագործելու միջոցին ԿԻՄ-ը հանդիպում է խոշոր դժվարությունների, վորովհետեւ ստիպված ե դուրս կորզել յերիտասարդությունը բազմաթիվ ուժեղ բուրժուական, Փաշիստական, Քրիստոնեական և այլ յերիտասարդական կազմակերպությունների ազ-

գեցության տակից: Յերիտասարդության վրա բուրժուական ազ-
դեցություն տարածողներից և նաև Ա Խնտերնացիոնալի ղեկա-
վարությամբ գործող «Յերիտասարդական Սոցիալիստական Ին-
տերնացիոնալը»: Այդ կազմակերպությունները բուրժուական
վոգով ներշնչված լուսավորչական աշխատանքների, զանազան
սպորտային, կրօնական և այլ նման միավորությունների միջոցով
աշխատում են ամեն կերպ բանվոր յերիտասարդության ուշա-
դրությունը հեռացնել դասակարգային պալքարից: Այդ կազմա-
կերպությունների մեջ գտնվող յերիտասարդներին բուրժուազիան
առաջնություն և տալիս աշխատանքի վերցնելիս, գործազրկու-
թյան գեպքում նույնիսկ նյութական աշակցություն և տալիս և
այլն: Բանվոր յերիտասարդներից կապիտալի հավատարիմ ըստ-
րուկներ պատրաստելու համար բուրժուազիան միջոցներ չե-
խնայում: Այս պատճառով յերիտասարդական կոմունիստական
կազմակերպությունները մեծ լարվածությամբ պիտի աշխատեն
բանվոր յերիտասարդների լայն մասսաներին դասակարգային
կովկին մասնակից անելու համար: ԿիՄ-ը կոմունիստական կու-
սակցությունների որինակով կազմակերպում և ամրացնում և
գործարանային կոմիերիտական ըջիջները և բանվոր յերիտասարդ-
ության միասնակոն ֆրոնտի քաղաքականությունն և տանում:
Այն միջոցին, յերբ Յերիտասարդական Սոցիալիստական Ինտեր-
նացիոնալը (ՍԻՄ) միավորում և միմիայն մի քանի յեվրոպական
յերկրների յերիտասարդությունը, ԿիՄ-ը իր կազմակերպու-
թյուններն և ստեղծում աշխարհի բոլոր յերկրներում:

ԿիՄ-ի ղեկավարությամբ զարգանում և միջազգային ման-
կական շարժումը, վորի նպատակն և պալքար մանկական աշ-
խատանքի շահագործման և բուրժուական դպրոցի և նրա ազ-
դեցության դեմ: Այս ճանապարհով դաստիարակվում և յերիտա-
սարդության աճող սերունդը և պատրաստվում և պալքարելու
բանվոր դասակարգի շահերի համար: Մանկական կոմունիստա-
կան խմբակներ գործություն ունեն բոլոր կապիտալիստական յեր-
կրներում:

§ 3. Պրոֆինտերնը յեվ նրա գործունեյությունը.

ՊՐՈՖԻՆՏԵՐՆ
ՊՐՈՖԻՆՏԵՐՆ
ՊՐՈՓԻՆՏԵՐՆ
ՊՐՈՓԻՆՏԵՐՆ

Կարմիր Ինտերնացիո-
նալը կազմվել է Մոսկվայում 1921 թվին:
պրոֆինտերնը պրոլետարիատի միջազգային դասակարգային

կազմակերպություն և և կանգնած և պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող դասակարգային կովի տեսակետի վրա։ Պրոֆինտեռնը գործում և Կոմինտերնի քաղաքական և դաշտավարական զեկավարությում:

«Պրոֆմիությունները ծագել են կապիտալիզմից և հանդիսացել են բանվոր դասակարգի զարգացման միջոցը», ասում են նկ. Լենինը։ Պրոֆմիությունները բանվորների դասակարգային մարտական կազմակերպություններն են լեղել և այդ պատճառով չեն կարող չհալածվել կապիտալիստների և նրանց կառավարությունների կողմից։ Այնտեղ, վորտեղ կապիտալիստներն իրենց բավական ուժեղ են զգացել, նրանք ցրել են պրոֆմիությունները, նրանց անդամներին հրաժարվել են գործ տալուց։ Ցարական կառավարությունը 1905 թվի հեղափոխությունից հետո քայլեց Ռուսաստանում նոր ծագած բոլոր պրոֆմիությունները։ Սակայն նրանք նորից աճում են։ Այն ժամանակ բուրժուազիան վճռեց անվտանգ դարձնել պրոֆմիությունները, զրկելով նրանց դասակարգային բնույթից։ Բանվորների կովի փորձը ցույց է տվել, վոր լուրաքանչյուր մի տնտեսական կոիվ, այսինքն՝ մի կոիվ, վոր մղվում և բանվորների նորությական դրությունը բարելավելու համար, վերջին հաշվով դառնում և քաղաքական կոիվ, այսինքն՝ կոիվ իշխանության համար։ Յենթազրենք, վոր բանվորները գործադուլ են հայտարարել և պահանջում են աշխատավարձն ավելացնել։ Զեռնարկատերը չի համաձայնվում, գործադուլավորներին ճնշելու համար զինվորներ և կանչում, սրանք բանվորների վրա զենք են կրակում։ Այսպիսի զեպքերը սակավ չեն կապիտալիստական լերկրներում, նրանք շատ հաճախ կըրկնվում ելին նաև ցարական Ռուսաստանում։ Այսպիսի զեպքերից հետո բանվորներն սկսում են հասկանալ, վոր պետությունը, զորքը, վոստիկանությունը ծառալում են իրենց տերերին, վոր անհրաժեշտ և ամենից առաջ խելել իշխանությունը կապիտալիստներից և դրանից հետո միայն կարելի լե խոսել կյանքը բարելավելու մասին։ Կապիտալիստները հենց այս բանից ե, վոր վախենում են և ամեն կերպ աշխատում են թուլացնել բանվորների հետաքրքրություննը դեպի քաղաքականությունը։ Այստեղ բուրժուազիային ամենից առաջ ոգնության և գալիս կըրոնը։ Մտեղծվում են «քրիստոնելական» և այլ պրոֆմիություններ, վորոնք նպատակ ունեն բանվորների ուշադրությունը հեռու պահել քաղաքականությունից, համոզել բանվորներին, վոր իրենք

կարող են կապիտալիստների հետ խաղաղ ճանապարհով համաձայնության դալը: Այսպիսի միություններ ստեղծում եր ցարական կառավարության վոստիկանությունը 1904 թվին: «Քրիստոնեական» միությունները վոչ այնքան հեռու անցյալում Գերմանիայում հաշվում ելին 1.700.000 անդամ, Խտալիալում մոտ 1.100.000 անդամ: Այնուհետև բուրժուազիան աշխատում ե ջլատել բանվոր դասակարգի ուժերն, առանձնացնելով լավ վարձատրվող վորակյալ բանվորներին, ստեղծելով ալպես կոչվոծ «բանվորական արխստոկրատիա»: Բուրժուազիան դրանով կաշառում ե նրանց: Ոգտվելով գաղութիւնների թալանից, բուրժուազիան վորոշ զիջումներ անում ե իր չերկրի բանվորներին: Բուրժուական մամուլի, լեկեղեցու, կաշկանդված բանվորական «արխստոկրատիայի», չնչին զիջումների և աննշան բարելավումների միջոցով բուրժուազիան բանվորների զլուխն ե մտցնում այն միաքը, թե բանվորների զրությունը կարելի չե բարելավել վոչ թե հեղափոխության, այլ ռեֆորմների, բարենորոգումների միջոցով, այսինքն՝ առանձնակի որենքների հրատարակությամբ և զանազան միջոցների ձեռնարկությամբ, վորոնք կձեռնարկվեն իրենց՝ կապիտալիստների կողմից և վորոնք մասամբ կրարելավեն նրանց դրությունը, վոր դասակարգային կովի փոխարեն հարկավոր են դասակարգային խաղաղություն և գործակցություն: Պրոֆմիությունների առաջնորդներն ու բանվորական «արխստոկրատիան» ոգնում ելին բուրժուազիային (նրանց այդ պատճառով ել կոչում են ռեֆորմիստներ):

Պատերազմը բանվորների աշքերը բացեց: Նրանք տեսան, թե ինչ ստոր գեր ելին կատարում իրենց ղեկավարները: Խոշոր դեր կատարեց Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորը բանվոր դասակարգի ձեռքը տվեց իշխանությունը Ռուսաստանում: Պրոֆմիությունների անդամների քառասուն միլիոնանոց բանակից (այդքան ելին հաշվում պրոֆմիությունների անդամների թիվը ամբողջ աշխարհում 1919 թվին) սկսեցին անշատվել հեղափոխական խմբակներ և ամբողջ միություններ, վորոնք հուսախարվել ելին խաղաղության և բուրժուազիայի հետ գործակցելու հնարավորությունից: Ռեֆորմիստական առաջնորդները շարժվեցին, ձգտելով պահպանել իրենց ձեռքերում պրոֆմիութենական մասսաներին, Նրանք 1919 թվին ստեղծեցին Ամստերդամում (Հռանդիա) պրոֆմիությունների ինտերնացիոնալը: Սրա ամբողջ գործունելության նպատակն ե համոզել բանվորներին, վոր

գասակարգալին կորիմս ավելորդ և և դասակարգալին խաղաղությունը՝ հնարավոր։ Այս պատճառով Ամստերդամի (գեղին կամ ռեֆորմիստան) ինտերնացիոնալը թուլ չի տալիս, վոր կոմունիստները մտնեն իր գլխավորությամբ միավորվող պրոֆմիությունների կազմի մեջ, նա մասնակցում և Ազգերի Լիգայի աշխատանքներին, վորը կապիտալիստական պետությունների կազմակերպությունն և նա մշտապես հարձակվում և Խ. իշխանության և Խորհրդապետությունների վրա, սաոր ու կեղաստ մեղադրանքներ թափելով սրանց գլխին և հալածելով սրանց հեղափոխական շարժումը։ Ամստերդամի ղեկավարները բազմաթիվ անդամ վիճեցրել են բանվորների գործադուլները, գավաճանելով բանվորների շահերին։ 1.200000 անգլիական ածխադորժների գործադուլը 1921 թվին, Անգլիայի ածխադորժների գործադուլը և դրա պատճառով ծագած ընդհանուր գործադուլը 1926 թվին վիճեցրելն Ամստերդամի ինտերնացիոնալի դավաճան առաջնորդների ջանքերով։ Ամստերդամի ինտերնացիոնալը գործակցում և բուրժուազիայի հետ։

Պրոֆմիությունների կարմիր ինտերնացիոնալ ստեղծելու գլխավոր նպատակն եր սիստեմատիկ պալքար կազմակերպել Ամստերդամի ինտերնացիոնալի դեմ։ Պրոֆինտերնի մեջ մըտնում են ԽՍՀՄ պրոֆմիությունները և այն լերկրների կարմիր պլոֆմիությունները, վորտեղ ոեֆորմիստական առաջնորդներն իրենց վարքագծով պառակտել են ալդ պրոֆմիությունները։ Բացի ալդ, կարմիր ինտերնացիոնալը մուտք և գործել նաև այն լերկրները, վորտեղ Ամստերդամի ինտերնացիոնալը վոչ մի աղդեցություն չուներ (Զինաստան, Ավտորաալիա)։ Պրոֆինտերնի գործունելության հիմնական ուշադրությունը կենտրոնացած է լեզել պեպի Ամստերդամի ինտերնացիոնալի մեջ մտնող պրոֆմիությունները։ Եթե պրոֆմիությունները գտնվում են ոեֆորմիստների աղդեցության տակ, ապա կոմունիստների պարտականությունն է չլքել ալդ միությունները, ալլ ընդհակառակը, մնալ և աշխատել նրանց շարքերում, իրենց աղդեցությունն ուժեղացնելու և ոեֆորմիստական առաջնորդներին ալնտեղից գուրս վոնդելու նպատակով։ Համարյա թե բոլոր լերկրներում կարմիր ինտերնացիոնալին հաջողվել է ալդ միությունների մեջ կազմակերպել հեղափոխական ոպողիցիա, վորը պալքարում և նրանց ղեկավարությունն իր ձեռքն առնելու համար։

Կարմիր ինտերնացիոնալի ակտիվության հետևանքով և

շնորհիվ կոմունիստական կուսակցությունների ոգնության, կարմիր պրոֆմիությունների և ռեֆորմիստական միությունների հեղափոխական թերթի անդամների թիվն ամենախոշոր էրկրում մոտավորապես հետեւալ պատկերն եներկալացնում (1927թվի սկզբում)։

Ավտորալիա	25.000	Լեհաստան	70.000
Մեծ Բրիտանիա	1.080.000	Հ. Ա. Միաց Նահ.	420.000
Իտալիա	75.000	Ֆրանսիա	450.000
Չինաստան	2.800.000	Չեխո-Մոլդավիա	200.000
Նորվեգիա	35.000		
Պրոֆինտերնը աշխարհի բոլոր մասերում կապված և 50 մերկրի հետ։			

Պրոֆինտերնի կարևորագույն խնդիրն են պայքար պրոֆմիութենական շարժման միասնականության համար և նա արգելում ենթանդամներին հետանալ դեղին պրոֆմիությունների շարքերից։ Զպառակտելով բանվորների ուժերն առանձին կազմակերպություններ և խմբակներ ստեղծելով, այլ հեղափոխական աշխատանք տանելով գոյություն ունեցող կազմակերպությունների ներսում, հարկավոր և մասսաներին ներգրավել դեպի հեղափոխական գործունելություն և ապացուցել ռեֆորմիստական առաջնորդների դավաճանական ընուզթը։ Ահա այս ենոմինտերնի և Պրոֆինտերնի տակտիկան պրոֆեսիոնալ շարժման վերաբերյալ Պրոֆմիութենական շարժման միասնականության ձգտումը վերջին ժամանակներս առանձնապես ուժեղացնում է զանազան լերկրների բանվորների լայն մասսաների մեջ։ Պրոֆմիութենական միասնականության շարժման գլուխն են անցել ԽՍՀՄ և Անգլիաի պրոֆմիությունները, այսինքն լերկու ինտերնացիոնալների ամենաուժեղ կազմակերպությունները։ 1925թվին բանվորական մասսաների ճնշման ազթեցության տակ անդալիական պրոֆմիությունների ռեֆորմիստ առաջնորդները հարկադրված ելին համաձայնվել ստեղծելու անդլուսուսական լումիտե կապիտալի հարձակողական քաղաքականության և նոր պատերազմի վտանգի դեմ միասնաբար կովկելու, ինչպես և միջազգային պրոֆեսիոնալ շարժման միասնականություն ստեղծելու նպատակով։ Մակար Անգլիաի պրոֆշարժման ռեֆորմիստ ներկալացցիները դավաճանական քաղաքականություն ելին վարում, շարունակ հետաձգում ելին հեղափոխական հարցերի լուծումը և վերջիւներջո Անգլիաի բոլորժուական կառավարության

որինակին հետևելով, կտրեցին իրենց հարաբերությունները մեր պլրովմիությունների հետ և լուծեցին անգլո-ռուսական կոմիտեն:

§ 4. Գյուղինտերնը, Սապորտինտերնը յեվ Մոպրը.

Կոմինտերնը մեծ ուշադրություն է հատուցուական կացնում գյուղի աշխատանքին, գիտենալով, վոր զգալի գյուղական ազգարնակչություն ունեցող լերկրներում հեղափոխական պրոլետարիատը չի կարող հաղթանակել լիթենա հանձինս գյուղի աշխատավորության չունենա իր դաշնակիցը՝ բուրժուազիայի դեմ մղած կովում: Դեռ իր Ա համաշխարհային կոնդրեսում կոմինտերնը ընդունեց լենինի առաջարկած բանաձեռ, վորը պարզում եր կոմունիստական կուսակցությունների վերաբերմունքը գեպի գյուղացիությունը: Այդ բանաձեռում ասված եր՝ «Միմիայն քաղաքի արդյունաբերական պրոլետարիատը, ղեկավար ունինալով կոմունիստական կուսակցությունը, կարող և գյուղի աշխատավորական մասսաներին աղատել կապիտալի և խոշոր հողատերերի ճնշումից, քայլայումից և իմպերիալիստական պատերազմներից, վորոնք նորից ու նորից անխոռուսափելի լեն կապիտալիստական հասարակակարգում: Գյուղի աշխատավոր մասսաներն այլ փրկություն չունեն, քան դաշնակցել կոմունիստական պրոլետարիատի հետ, ոգնել նրան իր հեղափոխական պայքարում՝ բուրժուազիայի և կալվածատերերի լուծըտապայելու համար»:

Հոկտեմբերյան հեղափոխությունն ահազին ազգեցությունն ունեցավ ամբողջ աշխարհի գյուղացիության վրա, ցուց տալով նրան, թե ինչպես գյուղացիությունը բանվոր դասակարգի ղեկավարությամբ վնանեց կալվածատերերին, ստացավ հող և անմիջապես մասնակցում և Խորհրդալին իշխանության շինարարությանը:

1923 թվին կազմակերպվեց Գյուղացիական Խոտերնացիոնալը (Գյուղինտերնը), վորը միավորում և իր շուրջը բոլոր ալն գյուղացիական կազմակերպություններն ու կուսակցությունները, վորոնք կողմանակից են գյուղացիության և բանվոր դասակարգի միատեղ կովկին՝ ընդդեմ բուրժուազիայի:

Գյուղինտերնի սեղցիաները գույություն ունին լեվրոպական շատ լերկրներում և, վոր առանձնապես կարևոր ե, Զինաստանում, Խոդոնեղիալում և Արևելքի մի քանի ուրիշ լերկրներում: Խոկա-

տի ունենալով գլուղացիական շարժման առանձնահատկությունները զանազան լերկրներում, վորոնք կապ ունեն գլխավորապես հողալիին հարցի հետ, Գլուղինտերնը Մոսկվալում հիմնել և հատուկ ազգաբարյին ինստիտուտ, Գլուղինտերնը ավելի քան քսան զուներով հրատարակում և գլուղացիական գրականություն, կոռոպերատիվ շարժման վերաբերյալ նյութեր և իր ամբողջ գործունելությամբ իրազործում և հետեւալ նպատակները.

1. Ուժեղացնել պալքարը՝ ամբողջ աշխարհի գլուղացիությունն ազատազրելու կալվածատերերի և կապիտալիստների ճնշումից:

2. Պաշտպանել ամբողջ աշխարհի գլուղացիական ամենալայն ժամաների շահերը և բարձրացնել նրանց տնտեսությունը:

3. Ամենասերտ կապ հաստատել ամբողջ աշխարհի գլուղացիական տնտեսական, քաղաքական և կոռպերատիվ կազմակերպությունների հետ:

4. Գլուղի և քաղաքի զողումը, զլուղացիության կապը բանվոր դասակարգի հետ՝ կապիտալիստների և կալվածատերերի դեմ միատեղ կովելու համար:

5. Ցեղարական կապ հաստատել ամբողջ աշխարհի բանվորական կազմակերպությունների հետ, վորոնք պաշտպանում են և կողմանակից են Գլուղինտերնի ծրագրին և զործունելությանը:

6. Միավորել բոլոր զլուղացիական կազմակերպությունները ու հոսանքները, իրականացնելու համար բանվորա-զլուղացիական կառավարություն լոգունքն ամբողջ աշխարհում:

Գլուղինտերնի միջոցով կոմինտերնը հնարավորություն և ստացել կապ հաստատելու ամբողջ աշխարհի չքավոր և միջակ զլուղացիության միլիոնավոր մասսաների հետ, վորոնք կոմունիստների ճիշտ քաղաքականության դեպքում կղառնան պրոլետարական հեղափոխության դաշնակիցները:

Այն չափով, վոր չափով աճում և կնոջ գերեն ԿԱՆԱՏ ՄԻԶԱԶԳԱ- արտադրության մեջ, աճում և նաև նրա նշանակությունը բանվորական շարժման մեջ։ Այս ԲԱՐՏՈՒՆԵ- պատճառով կոմինտերնի նպատակներից մեջն ե հանդիսանում աշխատավորուհիներին կազմակերպելը և նրանց ներգրավումը բանվոր դասակարգի ընդհանուր պրոֆեսիոնալ և քաղաքական կազմակերպությունների մեջ։ Անկազմակերպ, պրոֆմիության շարքերից դուրս մնացած բանվորուհին անոդնական ե և այդ պատճառով ել հարկադրված և աշխատելու ցածր աշխա-

տավարձով: Վորովհետև գործազուրկ կանանց թիվը մեծ է, ձեռնարկատերերը կարող են ոգտագործել բանվորուհիների այդ անկազմակերպ գրությունը՝ բոլոր բանվորների աշխատավարձը նը-վաղեցնելու համար: Այս վտանգի, ինչպես և աշխատանքի համար մղվող պատքարի հետևանքով՝ շատ յերկրներում բանվորները պահանջ են դնում հեռացնել կանանց արտադրությունից և վերադարձնել նրանց դեպի ընտանեկան ոջախը: Այս հանգա-մանքն սպառնում է պառակտել բանվոր մասսաներին յերկու թշնամի բանակների, ի մեծ ուրախություն ձեռնարկատերերի, վորոնք աշխատում են մի կողմին գրգռել մլուսի դեմ: Այս պատ-ճառով կոմինտերնը իր գլխավոր խնդիրներից մեկն և համարում շահագրգռել կին պլոյետարների ամենալայն մասսաներին քա-ղաքական կովով և գրավել նրանց դեպի կոմունիստական կու-սակցությունները: Այս նպատակով կոմինտերնին կից հիմնվել ե կանանց միջազգային քարտուղարություն:

Բուրժուազիան, ֆաշիստները, ռեֆորմիստներն ոգտագոր-ծում են անկազմակերպ կանանց մասսաներին, գրգռելով նրանց ընդդեմ բանվորական հեղափոխական շարժման: Գերմանիայում գոյություն ունեն մոտ 3000 բուրժուական, գլխավորապես աղ-դային-կրօնական բնուլիթ կրող կանանց միություններ, վորոնք յուրաքանչյուր որ նոր ու նոր անդամներ են գրավում քաղաքի բանվորուհիների և գլուղի գեղջկուհիների շարքերից: Անզիա-լում կառավարության հաշվով հատուկ ցեխեր են պահվում կին-շտրեկըրեխերներից կազմված: Ամերիկայում ձեռնարկատերերը կազմակերպել են գեղին և քրիստոնեական կանացի պրոֆմիու-թյուններ և այլն:

Իր գասակարգային թշնամիների բոլոր այս փորձերին կո-մինտերնը պետք է պատասխանի ավելի ուժեղացնելով իր աշ-խատանքը կանանց մեջ և առաջին հերթին գործարաններում և պրոֆմիություններում:

Կոմինտերնը ձգտում է մուտք գործել այնտեղ, ԿԱՐՄԻՐ ՍՊՈՐՏԻՆ- ուր այս կամ այն կերպ, այս կամ այն ընդհա- ՏԵՐՆ:

Նուր շահերի շուրջը կազմակերպվում են բան-վորները: Այս պատճառով կոմինտերնը իր ուշագրությունն է դարձրել դեպի բանվորների շրջաններում լայն տարածված սպոր-տակին կազմակերպությունները, վորոնք միավորում են բազմա-թիվ լերիտասարդ և հասակավոր բանվորներ: Հիմնված ե կար-միր սպորտային Խնտերնացիոնալ, վորն իրեն քաղաքական հիմ-

Նական նպատակն ե գրել բանվորական սպորտային կազմակերպությունների ինտերնացիոնալ և ազգային միավորումը՝ նրանց դասակարգային կովին ակտիվ մասնակցելու հիման վրա։ Այստեղ նույնպես, ինչպես և պրոֆմիությունների և գյուղացիության հարցերում, Կոմինտերնը Սպորտինտերնի միջոցով ընդունել ե անկուսակցական բանվորների և բանվորուհիների նոր ու նոր մասսաներ և ֆիզիկական դաստիարակության, հետ միասին նրանց տալիս ե անհրաժեշտ քաղաքական դաստիարակություն, վորագնդի նրանք կարողանան գիտակցորեն մասնակցել բանվոր դասակարգի ընդհանուր հեղափոխական կովին։ Ճիշտ քաղաքական դեկադարության դեպքում այս սպորտային միությունները կարող են ապագա կարմիր գվարդիաների սաղմերը հանդիսավոր

ՍՈՊՐ. Բուրժուազիան գաժան կերպով պատժում ե իր հակառակորդներին—հեղափոխական բանվորներին և գլուղացիներին։ Կապիտալիստական բանտերում տանջվում են տասնյակ հազարավոր քաղաքական բանտարկվալներ։ Մրանց հետ վարդում են գաղանաբար, վորի հետեանքով քաղաքական բանտարկվալներն ստիպված են լիրկարատես սննդադուլներ հայտարարել, խոռվություններ առաջ բերել բանտերում, վորոնք սովորաբար վիրջանում են բանտարկվալների անխնա՛ծեծով ու ջարդով։ Մակավ չեն նաև քաղաքական բանտարկվալների ինքնասպանությունների գեղաքերը։ Մարտավելի վատ դրության մեջ են գտնվում նաև քաղաքական բանտարկվալների ընտանիքները։

1922 թ. սպուտասին մեր թերթերում լույս տեսավ մի դիմում, ԽՍՀՄ-ում ապրող լին կոմունիստներին և անկուսակցական լինացիներին ուղղված, վորով ինդրվում եր նրանց նվիրատվություններ ժողովել լինական բուրժուազիայի անխնա տերը զոհերի սպատին։

Շուտով կազմակերպվեց նվիրատվություններ ժողովով մի կոմիտե, Խորհրդային լերկրի սահմաններից դուրս գտնվող կապիտալի գեմ պալքարող պրոլետարներին ոգնելու պատրաստականություն հայտնեցին նաև Ռուսաստանի, Բելորուսիայի և Ուկրաինայի աշխատավորական լայն մասսաները։ 1922 թ. նույնմերերին հիմնվեց հեղափոխության մարտիկներին ոգնող միջազգական ընկերություն (Մոպը), Կոմինտերնի IV կոնդրեսը կոչուղղեց բոլոր կոմունիստական կուսակցություններին Մոպը-ին

աշակեցող կազմակերպություններ ստեղծելու իր կարճատե գոլության ընթացքում Մոպր-ը իր կազմակերպություններն ստեղծեց 34 լերկրներում և զարձավ միջազգային պրոլետարիատի ամենախոշոր կազմակերպություններից մեկը: Մոպր-ը ունի 10 միլիոն անդամ, վորհից 5 միլիոնը արտասահմանում: Մոպր-ի Հայաստանի կազմակերպությունը ունի 80 հազար անդամ:

Մոպր-ը կազմակերպում և հեղափոխականների պաշտպանության գործը կապիտալիստական դատարաններում, նյութական ոգնություն և հասցնում քաղաքական բանտարկություններին և նրանց ընտանիքներին: Մոպր-ի առանձին քիջներն իրենց վըրա լին վերցնում կապիտալիստական բանտերում ձերբակալվածների շեֆությունը: ԽՍՀՄ սահմաններում Մոպր-ի հաշվով պահվում են հանգստի տներ և այլ կազմակերպություններ այն հեղափոխականների համար, վորոնք փախչում կամ աքսորվում են կապիտալիստական լերկրներից: Մոպր-ի հիմնական խնդիրն երարրության կավական և նյութական աջակցություն ցուց տալ կապիտալի բանտերում տառապող հեղափոխական մարտիկներին և նրանց ընտանիքներին: Մոպր-ի կազմակերպությունները աշխատավորության ինտերնացիոնալիստական դաստիարակությունը կազմակերպելու և ուժեղացնելու լավագույն դպրոցներից են: Մոպր-ը՝ դա համաշխարհային հեղափոխության կարմիր թիկունքն ե, այլ հեղափոխության գործը արագացնող և նրա հաղթանակի համար պայքարող կազմակերպություններից մեկը, վորը գործում և կոմինտերնի ղեկավարությամբ:

Կոմինտերնի աշխատանքն ու պայքարը, նույնաշատ և կոմինտերնը՝ իսկ ալսպես կոչված գեմոկրատական լերկրներ կուսնաւությունը:

ըստմ, վորտեղ կոմունիստական կուսակցությունները լեզար գոլություն ունեն, ընթանում են ամենածանր պայմաններում: Այդ պայքարի հաջողության համար հարկավոր են պրոլետարական ամբողջ նախընթաց շարժման փորձն ու իսկական բարեկարգական ուսմունք: Ամուր կապվել բանվորական մասսաների հետ, միշտ նրանց հետ լինել և գլխավորելով նրանց, տանել նրանց լենինյան հեղափոխական ուղիով—ահա բալշեիկական կուստկցության հիմնական գծերը: Համամիութենական կոմունիստական (բալշեիկների) կուսակցությունը կոմինտերնի ամենախոշոր սեկցիան և ունի լերեք հեղափոխությունների փորձը: Աշխարհի մեջ առաջին սոցիալիստական հեղափոխությունը կատարվել է Համեկ (բ)-ի և նրա հիմնադիր և առաջնորդ Լե-

Նինի զեկավարությամբ։ Համեկ (ը)-ն ունի պրոլետարիատի գիշտատուրայի ամրացման համար մղվող պալքարի տասնամյա փորձ։ Համեկ (ը)-ն զեկավարում և սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում։ Ահա թե ինչու Համեկ (ը)-ն զեկավար դեր և կատարում կոմինտերնում։

Համեկ (ը)-ի փորձով բոլոր կոմկուսակցությունները սովորում են, թե ինչպես պետք ե կառուցել բայլշենիկական լենինյան կուսակցությունը, ինչպես պետք ե աշխատել մասսաների մեջ, ինչպես պետք ե զբավել բանվորական և գլուղացիական մասսաներին կոմունիստական հեղափոխության համար։ Համեկ (ը)-ն մըս կոմկուսակցությունների համար որինակ և ծառալում կարգապահության, միաձուլության և հեղափոխական կովկի ուղիղ և ճշգրիտ տակտիկայի։

Սրա որինակով Համեկ Յ-ը զեկավարող դեր և կատարում կիմ-ի մեջ, իսկ Խորհրդային պրոֆմիությունները՝ Պրոֆինտերնում։

ՀԱՐՑԵՐ

- Վորժնք են կոմինտերնի հիմնական խնդիրները։
- Ինչնում և կայանում միասնական ֆրոնտի տակածիկան։
- Վճրն և կոմինտերնի քաղաքականությունը գլուղացիական հարցում։
- Ի՞նչ խնդիրներ են դրված կիմ-ի առաջ։

ԽՆԴԻՐՆԵՐ

- Հանձնարարել առանձին աշակերտների կազմել վերջին տարվա հեղափոխական շարժման տեսությունն Արևմուտքում և Արևելքում (լրագրական նյութերի հիման վրա)։
-

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՑԵ

§ 1. Պատերազմից հետո կապիտալիստական յերկրների ներառությունները արվել են.

Աշխատավորների դրությունը վատթարացնելով թե կապիտալիստական յերկրներում և թե գաղութներում, միջազգային կապիտալին հաջողվեց իր՝ 1914 թ. պատերազմի հետևանքով խարիսխած դրությունը վորոշ չափով բարելավել:

Կոմինտերնի I լայնացրած պլենումը (1925 թ.) մանրամասնորեն ուսումնասիրելով միջազգային դրությունը, հաստատեց կապիտալիզմի մասնակի կայունացման փաստը, այսինքն գտավ, վորմիջազգային կապիտալի տնտեսական և քաղաքական հզորությունը մասնակի կերպով վերականգնել և վորոշ չափով ամրացել եւ:

Ստարիլիզացիա հայերեն նշանակում ե կակալիտալիզմը ՍՍՀԻԼԻԶԱՑԻԱՑԻ ԵՑՈՒ-
ԹՑՈՒՆԸ:

Ինչի՞ մեջն ե կապիտալիզմի այդ կայունացման նշանները: Ամենից առաջ արդյունաբերության վերականգնման մեջ: 1921 թվին քարածուխի արտադրությունը մինչպատերազմյանից $20^0/₀$ -ով պակաս եր, թուղի (չուգունի) ձուլումը մինչպատերազմյան կեսին անգամ չեր հասնում, բամբակի սպառումը հավասար եր մինչպատերազմյանի $\frac{3}{4}$ մասին: 1926 թ. համաշխարհային արտադրությունն ընդհանուր առմամբ արդեն հասնում ե իր մինչպատերազմյան մակարդակին և մի շաբթ բնագավառներում նույնիսկ սկսում ե ավելի առաջ անցնել (որինակ, պողպատի արտադրանքը, բամբակի սպառումը): 1927 թ. արդյունաբերական արտադրության աճումը շաբունակվում ե: Քարածուխի արտադրումը մինչպատերազմյանից վորոշ չափով անցնում ե, բարձրանում ե թուղի ձուլումը, բարձրանում ե մինչպատերազմյանից $80^0/₀$ -ով, պողպատը $31^0/₀$ -ով, բամ-

բակի սպառումը 12°/0-ով՝ 1927 թ. նավթի արդյունաբերությունը
մինչպատերազմանից 31/2 անգամ ավելանում է (սակայն պետք ե
նկատել, վոր այս արդյունաբերությունն ընդհանրապես համառ
և զարգացել և նույնիսկ 21 թվին նավթի արդյունաբերությունը
մինչպատերազմանից լերկու անգամ բարձր է լեղել), Հավասար-
ապես վերականգնվել է նաև գյուղատնտեսությունը, Հինգ գըլ-
խավորագույն տեսակի հացահատիկների արտադրությունը 1927
թ. մինչպատերազմյան համեմատությամբ աճել է 12 տոկոսով:

Անհրաժեշտ է ընդունել նաև մի շարք արտադրական ընա-
գավառների բացառիկ արագ զարգացումը. ընագավառներ, վո-
րոնք մասամբ նորերս են առաջացել. որինակ, արհեստական մե-
տաքսի, ավտոմոբիլային, քիմիական, ելեկտրո-տեխնիկական
արդյունաբերությունները և այլն. 1926 թվին համարյա 10 ան-
գամ ավելի արհեստական մետաքս և արտադրվել, քան մինչպա-
տերազմյան շրջանում. Ավտոմոբիլային արտադրությունը ավտո-
մոբիլների քանակն աշխարհում հասցըրել է 28 միլիոն հատի
(Միացյալ Նահանգներում 5 բնակչին մեկ ավտոմոբիլ է ընկնում)
և ավտոմոբիլային արդյունաբերության զարգացման շնորհիվ
կառւկուկի արտադրանքը 28 թվին աճել է 6 անգամ:

Յերկրորդ՝ կապիտալիզմի մասնավոր կայունացման նշանն
և հանդիսանում համաշխարհային առևտորի վերականգնումը. 26
թվին նա համարյա թե հասել եր մինչպատերազմյան մակար-
դակին, իսկ 27 թվին անցել է արդեն արդյունավետ 28 թվին աճել է 6 անգամ:

Յերրորդ՝ բնորոշ և վայլուտալի վերականգնումը. Անգլիա-
կան և գերմանական դրամները հասան իրենց վոսկու կուրսին.
Մի շաբաթ այլ լերկըներում (Ֆրանսիա, Իտալիա և ուրիշները)
փողական սիստեմի աստիճանական ամրացում ետեղի ունենում:

Պետք է հիշել, վոր կապիտալիզմի ստաբիլիզացիան ժամա-
նակավոր և անկայուն լերկություն: Նման անկայունության նշանն
ները շատ-շատ են: Մենք, որինակ, տեսնում ենք, վոր կապիտա-
լիստական արդյունաբերության կայունացումը առաջ և զնում
ծայրահեղ անհավասարությամբ, ցատկութներով, ինչ վոր տեսնուտ
հիվանդագին տեմպով: Առանձնապես աչքի լե ընկնում առան-
ձին-առանձին լերկըների զարգացման ցատկութներն ու անհամա-
չափությունը: Մենք տեսնում ենք արտադրական ապարատի
թերաբեռնվածությունը: Նույնիսկ Միացյալ Նահանգներում ձեռ-
նարկներն իրենց կարողության $\frac{3}{4}$ չափով են բեռնավորված
միայն, իսկ ներկայումս անտեսական կրիզիսի պատճառով մի
շաբաթ արտադրության ճյուղեր զգալիորեն կրճատվել են:

Վերջապես ստարիլիզացիոն անկալունության նշան և հանգիսանում նաև չվերջացող գործադրկությունը։ Անգլիայի, Գերմանիայի, Միացյալ Նահանգների գործազուրկների քանակը բազմաթիվ միլիոններով և հաշվում։ Յեթե մինչև պատերազմը Անգլիայում և Գերմանիայում արհեստակցական միությունների յուրաքանչյուր 100 անդամին 3—4 գործազուրկ եր ընկնում, ապա այժմ ընկնում և 15—20 գործազուրկ։

Բուրժուազիան հուսահատական ճիգեր և գործադրում իր գրությունն ամրացնելու և կապիտալիստական տնտեսությունը կայունացման հասցնելու համար։ Միքանի կապիտալիստական պետություններ իսկապես ամրացրել են իրենց տնտեսությունն ամերիկական կապիտալի ոգնությամբ։ Սակայն, նախ՝ միքանի կապիտալիստական պետությունների ամրացումը կատարվում է ի հաշվիվ մյուս պետությունների դրության վատթարացման, յերկրորդ՝ կապիտալիզմի կայունացումը կատարվում է ի հաշվիվ առաջնակության մեծամասնության—բանվորների, գլուզացիների, մանր բուրժուազիայի։ Այս հողի վրա ուժեղանում են հակասություններն առանձին կապիտալիստական յերկրների միջև և սըրվում ե դասակարգային պայքարը կապիտալիստական յերկրների ներսում։ Քննենք այս յերկությները, վորոնք ուժգին թուլացնում են կապիտալիզմի կայունացումը և տալիս են նրան չափազանց անհաստատ և ժամանակավոր բնույթ։

Իր դրությունն ամրացնելու համար բուրժուազիան ռացիոն ռացիոնալիզացիայի յե յենթարկում ուսիրուալիզացիան տնտեսությունը, Ռացիոնալիզացիա ասելով, թեկ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ պետք և հասկանալ արտադրության տեխնիկայի բարելավումը և տալիս են նրան չափազանց անհաստատ և ժամանակավոր բնույթ։

ՎՐԱ. Թյան տեխնիկայի բարելավումը (նոր կամ կատարելագործված մեքենաներ), աշխատանքի արտադրողականության բարձրացումը, աշխատանքի կանոնավոր կազմակերպումը և այլն, այսինքն այնպիսի միջոցների կիրառում, վորոնք անց են կացվում նաև ԽՍՀՄ մեջ։ Բայց ԽՍՀՄ-ում պրոլետարական պետության կողմից կիրակվող ռացիոնալիզացիան նպաստում է արտադրության բարագ աճմանը, բանվորների թվի ավելանալուն, աշխատավարձի բարձրանալուն և ապրանքների գների իջեցմանը։ Բոլորովին տարբեր հետեւանքներ ե առաջացնում կապիտալիստական ռացիոնալիզացիան։ Ռացիոնալիզացիան կապիտալիստական յերկրներում անշուշտ տվել և շատ կարենը տեխնիկական կատարելագործություններ։ Բայց ամեն մի տեխ-

նիկական կատարելագործում կապիտալիստական գործարանում անմիջապես անդրադառնում և տվյալ գործարանի բանվորների գրության վրա՝ Կիրարկելով ուցիոնալիզացիան, կապիտալիստները ձգտում են իշեցնել ապրանքների ինքնարժեքը՝ շուկաներում իրենց մրցորդների հետ հաջող կովելու և իրենց կապիտալներն ավելացնելու նպատակով։ Սակայն շուկաները սակայ են, նրանց համար ուժեղ պարզաբ տեղի ունի և այդ նրանք անում են բանվոր դասակարգի շահագործումն ուժեղացնելու հաշվին։ Ցեթե ավելանում և բանվորական որը, կնշանակի ավելի քիչ թվով բանվորներ են հարկավոր, յեթե մուծվում են նոր կամ կատարելագործված մեքենաներ, ապա նշանակում և բանվորների մի մասն ավելորդ եւ։ Այս պատճառով գործազրկության առումը, բանվորական որվա լերկարումը և աշխատավարձի նվազեցումն Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում և ուրիշ կապիտալիստական լերկրներում անմիջապես կապված են այդ լերկրներում կիրարկվող ուցիոնալիզացիայի հետ։

Տուրքուազիան միաժամանակ հալածանք իսկսում բանվորների գեմ նաև քաղաքական գծով։ Համարյա ամենուրեք նաև իշխանությունը հանձնել և բանվոր դասակարգի ամենակատաղի թշնամիներին։ Ֆրանսիայում—Պուանկարեին, Գերմանիայում—Գինդենբուրգին, Իտալիայում—Մուսսոլինիին, Լեհաստանում—Գիլսուզսկուն, Անգլիայում—«պնդաճակատ» կոնսերվատորներին կամ բանվորների դավաճան Մակրոնալդին։ Գնալով ուժեղանում են հալածանքները կոմունիստական կուսակցությունների—բանվոր դասակարգի այս ավանդարդի գեմ։

Գերմանական բետկցիոնները մենշեկների ոգնությամբ իշխանությունն իրենց ձեռքը ձգելով և այնուհետև իրենց ոգնականներին վոտնահարելով, պատրաստ են ամեն կերպ պարելու՝ բանվորների աշխատավարձն իշեցնելու և բանվորական որը լերկարելու համար։ Սև հարյուրակալին բուրքուազիայի և ոֆիցիերության շարժումը փաշիզմի անվան տակ, իրեն բույնը հյուսելով Իտալիայում, լայն կերպով տարածվում են նաև մլուս լերկրներում։ Լեհական ֆաշիզմը մարշալ Պիլսուզսկու ղեկավարությամբ քայլաբելով գլուղացիական բոլոր կազմակերպությունները, այժմ արշավանք եւ սկսել բանվորների դեմ, լցնելով բանտերն ու կատորդաները նրանցով։ Լեհական իշխանների որինակին հետեւելով, կիտակալի կալվածատերերը ձեռք ձեռքի տված հոգեորականության հետ, հեղաշրջում առաջ բերին և իշխանու-

թէան գլուխ կանգնելով, ալժմ զբաղվում են բանվորների տռաջնորդներին գնդակահարելով: Բալկաններում, Լեհաստանում, Ռումինիայում, Մէջքալթիան չերկրներում ամենուրեք բուրժուազիայի արշավանքը բանվորների դեմ կրում և սպիտակ տերրորի ընուլթի: Իր այս արշավանքի ընթացքում բուրժուազիան լայն կերպով ոգտվում ե դավաճան սոցիալ-դեմոկրատիալի ծառայություններով, վորը քարոզում ե դասակարգային խաղաղության և գործակցության հնարավորությունը, ուժեղ ազիտացիա յե մզում վորոշ չերկրներում տերերի ու բանվորների միացյալ միություններ կազմելու համար, շահուկթին մասնակցելու և այլ նման հարցերով զբաղեցնելով բանվորներին, հեռու յե պահում նրանց հեղափոխական կռվից:

Վերենում հիշված Լիվերսը Բելգիայի մասին ասում ե. «Զեռնարկատերերը դաժան արշավանք են սկսել բանվորների դեմ: Առանց աշխատավարձն ավելացնելու, նրանք յերկարել են բանվորական որը, հասցնելով այն 12 ժամից ել ավելի, Կառավարությունը գործարանատերերին հնարավորություն և տվել յերկարելու բանվորակտն որն իրենց հայեցողությամբ: Ներկայումս կապիտալիստները միանում են, ամրակուռ կազմակերպություններ են ստեղծում, վորպեսզի մոտիկ ապագայում ավելի խիստ գրոհի դիմեն բանվորների դեմ: Միևնույն ժամանակ նրանք կազմակերպել են իրենց դրամարկղները գործադուրկների համար, հիվանդանոցային և թոշակների գանձարկղներ, ինչպես և սպորտալին խմբակներ, ճանապարհորդություններ են կազմակերպում—այս բոլորի նպատակն ե հեռու պահել բանվորների ուշադրությունը պրոֆմիություններից: Վորոշ գեպքերում ձեռնարկատերերին այդ հաջողվում ե:

Կապիտալիստների արշավը պսակվեց նրանով, վոր նրանք պարլամենտի միջնոցով ընդունեցին մի որենք, վորով լայնացվում են ժանդարմերիայի իրավունքները՝ ոգտվելու պուլեմյուններից ու թնդանոթներից «փողոցային անկարգությունները», այսինքն բանվորների յելուկթները ճնշելու համար:

Սակայն բուրժուազիայի գործողություն-բանվորական ՄԱԱ- ներն առաջ են բերում հակագործողություն- ՍԱԱ- ները բանվոր դասակարգի կողմից: Այն միջո- ւն: ներ բանվոր դասակարգի կողմից: Այն միջո- ցին, յերբ սոցիալ-դեմոկրատական առաջնորդ- ները գնալով հետզինետե ավելի սերտ են կապվում բուրժուա- զիայի հետ, բանվորական մասսաները ճախանում են, այսինքն

հեղափոխականանում են, բացարձակ կովի յեն դուրս գալիս կապիտալիստների գեմ և կորցնում են իրենց հավատը դեպի սոցիալ-դեմոկրատները։ Առանձնապես բանվոր մասսաների ձախանալը նկատվում է այն լերկըներում, վորտեղ բուրժուազիային չի հաջողվել վերականգնել պատերազմի հետեւանքով քայլարված անտեսությունը։ Այդպիսի լերկըների թվին եւ պատկանում ամենից առաջ Անդիան։

Անդիական իմպերիալիզմը խորը ճգնաժամ է ապրում։ Բավական եւ բերել Անդիայի ժողովրդական տնտեսության մասին հետեւալ տվյալները։

	1913 ₣.	1922 ₣.	1923 ₣.	1924 ₣.	1925 ₣.
Ածուխի արդյունահանումը (հազ. մետր. տոնն)։	24.336	21.133	23.450	22.646	20.694
Չուզունի հալոցքը (հազար մետր. տոնն)։	869	415	630	620	528
Պողպահի հարցքը (հազար մետր. տոնն)։	649	401	718	696	626
Նավաշինարարութ. (հազ. տոնն)։	1.957	2.469	1.395	1.297	885
Գործազուրկների թիվը %/օ %/օ-ներով ապահովագրված- ների թվից)։	—	14,0	11,6	10,3	11,3

Ինչպես լերեւում եւ ազլուսակից, ածուխի արդյունահանումը, չուզունի հալոցքն ու նավաշինարարությունը տարեցտարի պակասում եւ Զի պակասում միայն գործազուրկների տոկոսը։ Անդիայի տնտեսական դրությունը վատթարանում եւ

Անդիան վոչ մի կերպ չի կարողանում արդյունաբերությունը հասցնել մինչպատերազման մակարդակին։ Լեռնալին արդյունաբերությունը, վոր խոշոր գեր եւ կատարում Անդիայի տնտեսության մեջ, տեխնիկապես չափազանց լետ եւ մնացել։ Անդիայի ածուխը համաշխարհային շուկայում չի կարողանում մրցել ամերիկական և գերմանական եժան ածուխի հետ։ Անդիական բուրժուազիան փորձեց ուացիոնալիզացիայի լենթարկել լեռնալին արդյունաբերությունն ի հաշիվ բանվորների։ Բանվորները սրան պատասխանեցին աշխարհում դեռ չտեսնված գործադրուլով։ 1926 թ. մայիսի 1-ին գործադրուլ արին 1.200.000 ածխահատները նրանց միացավ Անդիայի ամբողջ բանվոր դասակարգը։ Անդիական ամբողջ արդյունաբերությունը դափարեց, լերկաթուղիները կանգնեցին։ Այս խոշորագույն գործադրուլը դա-

դարեց շնորհիվ անգլիական պրոֆմիությունների գլխավոր խորհրդի առաջնորդների դավաճանության, վորոնք համաձայնություն կայացրին բուրժուազիայի հետ։ Ածխագործներն իրենք ամբողջ 7 ամիս շարունակեցին իրենց հերոսական պալքարն անգլիական բուրժուազիայի դեմ։ Զատանալով վոչ նյութական ոգնություն և վոչ ել անգլիական պրոֆմիությունների գլխավոր խորհրդի բարոյական աջակցությունը, ածխագործները պարտվեցին։ Այս պարտությունը նպաստեց Անգլիայի բանվոր դասակարգի քաղաքական զարգացմանը։ Անգլիական բանվորները հասկանալ սկսեցին քաղաքական պայքարի անհրաժեշտությունը, սակայն այլ առաջնորդների ղեկավարությամբ։ Կոմունիստական կուսակցությունը, վորով դեռ բավականաչափ ուժեղ չեք ածխագործների գործադուլը ղեկավարելու համար, իր մարտական վարքով գործադուլի ժամանակ համարյա կրկնապատկեց իր շարքերը։ Անգլիական բանվոր դասակարգի ամենազիտակից մասն սկսել ե յերես դարձնել իր դավաճան առաջնորդներից։ Անգլիայում ստեղծվում են պայմաններ՝ մասսայական կոմունիստական կուսակցության համար։

Միենուն ժամանակ անգլիական գործադուլի չտեսնված թափը մի շրջագարձ ե հանդիսանում համաշխարհային հեղափոխական շարժման մեջ։ Նա ամբողջ աշխարհի պրոլետարների սըրտերում վառեց անվեհերության ջահը և նոր հավատ ներշնչեց դեպի իր սեփական ուժը։ Հանքագործների պայքարը ցուց աըվեց ըոլոր յերկրների բանվորներին, վոր մի յերկրի պրոլետարիստը, նույնիսկ իր տնտեսական պայքարում, առանց ուրիշ յերկրների պրոլետարների համերաշխության և ոգնության, հաղթանակել չի կարող։ Միենուն ժամանակ հոգուտ գործադուլավորների կատարած հանգանակությունները համոզեցին անգլիական բանվորներին, վոր պայքարող պրոլետարիատն իրական ոգնություն կարող ե սպասել միմիայն այն բանվորներից, վորոնց ղեկավարում են կոմունիստները։ Դավաճան 11 ինտերնացիոնալի ղեկավարության տակ գտնվող կազմակերպությունները վոչ միայն չեն ոգնում պրոլետարիատի հեղափոխական կովին, այլ ընդհակառակը, ամեն բան անում են բանվորների հաղթանակը խանգարելու համար։ ԽՍՀ Միության պրոֆմիությունների ոգնությունն անգլիական հանքագործներին հասավ 11 միլիոն ռուբլու այն ժամանակ, յերբ անգլիական պրոֆմիությունների գլխավոր խորհրդի ոգնությունը նույնիսկ կես միլիոնի չհասավ։ Այս թվերն իրոք խոսում են իրենց մասին։

Բոլոր լերկրների պրոֆեսիոնալ շարժման մեջ ուժեղանում և ձախ հոսանքը: Անգլիայում 1926 թվին ձախակողմանների կոնֆերանսին ներկալացված ելին միլիոնից ավելի բանվորներ: Գերմանիայում կոմունիստների ազդեցության տակ աճում և ձախ թեր խոշորագույն պրոֆմիությունների՝ հանքագործների, մետաղագործների և քիմիական աշխատողների շարքերում: Գերմանիայում աճում են Կարմիր ճակատայինների (համաշխարհային պատերազմի մասնակից բանվորների) ուժերը, վորոնք կազմակերպված են Գերմանիայի կոմկուսակցության ղեկավարությամբ: Այս կազմակերպությունները հաշվում են ամբողջ Գերմանիայում մոտ 200.000 անդամ և թեև նրանք զենք չունեն, բայց այնուամենայնիվ հանդիսանում են վորապես մարտական կադրեր գերմանական պրոլետարիատի Կարմիր գվարդիայի համար: Մրանսիայում պրոֆեսիոնալ շարժումը բաժանված է լերկու հավասար մասների՝ հեղափոխական և ռեֆորմիստական: Վերջին ժամանակները ռեֆորմիստների շարքերում ուժեղանում և շարժումը հոգուտ պրոֆշարժման միասնականության: Զեխո-Սլովակիայում գոլություն ունի հեղափոխական պրոֆմիությունների ուժեղ կազմակերպություն: Խտավիայում, վորտեղ ռեֆորմիստներն աշխատում են պրոֆմիությունները դարձնել ֆաշիստական կազմակերպություններ, նույնպես կոմունիստների ղեկավարությամբ ուժեղանում և ձախ հոսանքը:

Կայունացման կարևորագույն միջոցներից ԱԶԳԱՑԻՆ ՀԵՂԱՓՈՒՆԿԱԿԱՆ ՏԱՐԺՈՒՄՆ ԱԿԱԿԱՆ ՏԱՐԺՈՒՄՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ, մեկը ճնշումն ե գաղութների և կիսագաղութային թային լերկրների վրա, վոր գործադրում են կապիտալիստները հնարավորին չափ խոշոր շահույթներ քամելու նպատակով: Սակայն այս ճակատում իմպերիալիստները հանդիպում են իրենց դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժմանը: Մասնավորապես Զինանուանում վերջին տարիներն ազգային-հեղափոխական շարժումը խոշոր չափերի լե հասել: Այնտեղ ծագած տնտեսական գործադրությունը չափազանց արագ կերպով ընդունեցին հստակ քաղաքական բնույթ: Այդ գործադրությունը ամրացրին բանվոր դասակարգի պրոֆմիութենական կազմակերպությունները: Բանվորական շարժման ակտիվության հետևանքով ուժեղ կերպով աճեց կոմունիստական կուսակցությունը, վորը լերկրի զարգացման քաղաքական խոշոր գործոններից մեկը դարձավ և 1927 թվի կեսերին իր շարքերում հաշվում եր մոտ 57.000 անդամ: Կոմկուսակ-

ցությունը բացառիկ խոշոր ազդեցություն ուներ պրոֆմիություններում և գլուղացիության մեջ:

Բանվոր ական շարժման բարձրացման հետ միասին լայն դարձացավ գլուղացիական շարժումը: Սկսեցին աճել գլուղացիական «Կարմիր նիզակների» զինված խմբերը, սկսեցին զարգանալ զանազան նահանգների «գլուղացիական միությունները», վորոնք պարապում ելին հողալին ծրագրի մշակելով և այդ պահանջները կապելով հեղափոխական պահանջների հետ: Հաճախակի դարձան գլուղացիների լեռությունները, վորոնք կապված ելին գլուղի ներսում սրվող դասակարգալին կովի հետ: Զինաստանի գլուղատնտեսության դրությունը, վորի մասին խոսեցինք վերևում—չափազանց հողասակավությունը, վաշխառուների տիրապետությունը, ծանր հարկերը և խոշոր վարձագները, ամեն տեսակի միանվագ գանձումները, քաղաքացիական պատերազմի հետեանքով սոսկալի քայլքալումը, միքանի տարբիների հարկերի նախորոք գանձումը—այս բոլորը առատ հող ելին ստեղծում գլուղացիների մասսայական և տարբերակին շարժման համար: Նա յել, ինչպես բանվորական շարժումը, խոշոր թափ ստացավ:

Զինական հեղափոխության առաջին ետապում, յերբ նա իր հարվածներն առաջին հերթին ուղղում եր ոտարերկրտա իմպերիալիզմի դեմ, հնարավոր եր պրոլետարիատի և գլուղացիության համաձայնությունը չինական ազգալին բուրժուազիալի և մանր բուրժուազիալի հետ: Այդ համաձայնությունն արտահայտվեց նրանում, վոր կանտոնի ազգալին-հեղափոխական կառավարությունը (վոր հետագալում տեղափոխվեց Ուխան) և մասսայական ազգալին հեղափոխական Գոմինդան կուսակցությունը, վորոնց մեջ մտնում ելին նաև կոմունիստները, միասին կովում ելին իմպէրիալիստների և չինական միլիտարիստների դեմ:

Ազգալին-հեղափոխական կառավարությունն իր իշխանության տակ միավորում եր Զինաստանի մոտ կես մասը, բանվորների ոգնությամբ գրավելով Շանխայ քաղաքն իր նավահանգստով: Այն ժամանակ իմպերիալիստական կառավարություններն Անգլիայի գլխավորությամբ դեպի Շանխայ և ուրիշ նավահանգստներ ուղղեցին տասնակ ռազմանավեր և տասնակ հազարավոր զինվորներ: Զինաստանի գրավումն իմպերիալիստների կողմէց, բանվորների և գլուղացիների մասսայական գնդակահարություններով և խաղաղ քաղաքների ավերումով, կատարված փաստ դարձավ: Միևնույն ժամանակ չինական բուրժուազիան,

Մինչև կապիտալիզմը, գլուղացտեսությունը ժողովրդական տնտեսության ամենաառաջավոր և գերակշռող ասպարեզն եր: Կապիտալիզմը զարգացնելով քաղաքային-գործարանային արտադրությունը, գլուղացտեսությանը զարգրեց իրեն զաղութ, շահագործման առարկա: Կապիտալիզմի քաղաքային արդյունաբերության բարձր տեխնիկան ճնշում և գլուղացտեսությանը իր թույլ տեխնիկայով: Կապիտալիզմի զարգացման շահերը չեն զուգադիպում և անհամատեղելի լին աշխատավոր գլուղացիների անհատական տնտեսության զարգացման հետ: Կապիտալիզմը ցանկանում է վոչ Շե գլուղացու անհատական աշխատավորական տնտեսությունը, այլ նրա քայլքայման և շահագործման գնով ստեղծված խոշոր կապիտալիստական-կուլակային տնտեսություն: Կապիտալիստական արդյունաբերությունը վոչ թե աջակցում և գլուղացտեսության զարգացմանը, այլ քայլքայում և կործանում և նրան: Կապիտալիզմի պայմաններում գլուղացտեսությունը արդյունաբերության զաղութն եւ Կապիտալիզմը վոչ միայն չի աշխատում գլուղին բարձրացնել և հասցնել քաղաքին, այլև ուժեղացնում և սրանց միջի տարբերությունը, խորացնում և հակասությունը:

Կապիտալիստական զարգացման պայմաններում աճում են գլուղի ծայրահեղ խմբերը՝ մի բնեռում մասսալական չքավորություն, մյուսում՝ կուլակային շահագործողական վերնախավ, իսկ միջակ մասը մեջտեղից սրբվում, հալվում, նվազում և քայլքայվում ե: միջակների մեծ մասը գալիս ե չքավորների բանակը, իսկ փոքր չնշին մասը՝ կուլակների:

Մեզանում ընդհակառակը՝ նվազում և չքավորների և կու-

զակների խմբակը և աճում և միջակությունը «վորպես հողագործության կենտրոնական դեմք»։ Ծնորհիվ Խորհրդային իշխանության քաղաքականության, չքավորները դուրս են գալիս չքավորությունից, նրանց ցուց և տրվում բազմակողմանի աջակցություն՝ տնտեսության աղքատիկ վիճակը վերացնելու համար։ Կուլակը նվազում ե, վորովհետև մենք սահմանափակում ենք նրա շահագործմասն տենդենցիանը, իսկ ներկայումս վարում ենք նրան վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը։

... յն Խորհրդային և սոցիալիստական տնտեսության պարագաներում ե, վոր քաղաքային արդյունաբերությունը և գլուղատնտեսությունը կազմում են միմյանց ոգնող միասնական ժողովրդական տնտեսության տարրեր ճյուղերը. նրանք փոխադարձարար իրար ոգնում են և շահագրգոված են միմյանց զարգացումով։

Խորհրդային Միությունը չի կարող գնալ միլիոնավոր գլուղացիների քայլայման կապիտալիստական ուղիով. գլուղատնտեսության զարգացման այդ ուղին մեզ համար խորթ ե անընդունելի։ Մեր ուղին փոքր անհատական տնտեսությունների միացման, կոլեկտիվի և խորհրդային տնտեսություններ կազմակերպելու սոցիալիստական ուղին ե։

Մեր արդյունաբերությունը վոչ թե քայլայում, շահագործում ու գաղութացնում ե գլուղատնտեսությունը, այլ ոգնում և ղեկավարում ե նրա զարգացումն, ուղղելով նրան սոցիալիստական կերպարանափոխման ուղիով։ Մենք վոչ թե մեծացնում, խորացնում ենք գլուղի և քաղաքի միջև գոյություն ունեցող ճեղքը, հակասություն և անհավասարություն, այլ վերացնում ենք այդ։

Եթե կապիտալիզմը շահագրգոված ե գլուղացիական աշխատավորական տնտեսության քայլայումով, մենք, ընդհակառակը, քայլայելով գլուղում կապիտալիստական տնտեսությունները, աջակցում ենք աշխատավորական տնտեսությունների զարգացմանը և նրանց կոլեկտիվացման ճանապարհով տանում ենք դեպի սոցիալիստական տնտեսություն։

Կապիտալիզմն աղքատացնում և սեփականազուրկ ե դարձնում չքավոր և միջակ տնտեսություններին, իսկ սոցիալիզմը նրանց դարձնում ե կոլեկտիվ սեփականության հիման վրա կազմակերպված աշխատանքային ընկերակցության հավասար անդամներ։

Աշխատավոր գյուղացիության տնտեսության զարգացման միակ ճիշտ ուղին սոցիալիստական զարգացման ուղին ե, վորք նրան ընդմիշտ կազմակի շահագործման, քայլքալման և աղքատացման սպառնացող վտանգից:

III. ԴԱՍԱԿԱՐԳՎԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

«Պրոլետարիատի դիկտատուրան վոչ թե դասակարգակին պայքարի վերջն ե, այլ նրա շարունակումը նոր ձեռքով։ Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգակին պայքար և հաղթանակած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի՝ ընդդեմ հաղթված, բայց չվոչնչացված, չանհետացած, դիմագրությունը չդադարեցրած, ընդդեմ իր դիմագրությունն ուժեղացրած բուրժուազիալի» (Անին):

«Պրոլետարիատի դիկտատուրան համառ պայքար ե, արյունալից և անարլուն, բռնի և խաղաղ, ուղմական և տնտեսական, մանկավարժական և վարչական, հին հասարակության ուժերի և տրադիցիաների դեմ, արտաքին կապիտալիստական թշնամիների դեմ, շահագործող դասակարգերի մնացորդների դեմ լերկը իներսում, նոր բուրժուազիալի բողբոջների դեմ, վորոնք ծնունդ են աւնում դեռևս չհաղթանարված ապրանքային արտադրության հիման վրա։ Քաղաքացիական պատերազմի լիկվիդացիալի պայմաններում գասակարգակին համառ պայքարը շարունակվում է նոր ձեռքով, ամենից առաջ հին տնտեսական ձեռքի մնացորդների ու նրանց նոր բողբոջների և տնտեսության սոցիալիստական ձեռքի միջև տեղի ունեցող պայքարի ձևով, ըստ վորում պայքարի ձևերը փոխվում են սոցիալիստական զարգացման դանագան փուլերում և նրա առաջին շրջանում այդ պայքարը կարող և վորոշ պայմանների դեպքում սրանալը (Կոմինտերնի ծրագիրը):

«Խաղաղ» սոցիալիստական շինարարության պայմաններում մենք վարում ենք կուլակներին և նեպմաններին վերացնելու քաղաքականությունն. նրանց տնտեսապես հաղթահարում ենք ուժեղացնելով ժողովրդական տնտեսության սոցիալիստական տարրերը պետ. արդյունաբերության, պետ. առևտորի, կոռպերացիալի ամրացման և կոլտնտեսությունների ու խոր. տնտեսությունների շինարարության միջոցով։ Ճնշում ենք նրան հարկալին և վարկալին քաղաքականության միջոցով. հատուկ որենք-

ներով և պարչական միջոցներով պայքարում ենք նրանց շահագործման միջոցով ուռանանալու դեմ:

Մենք տռաջադրել ենք համատարած կոլեկտիվացման և խոշոր սոցիալիստական տնտեսությունների կազմակերպման լուղունգը. կուլակը չի կարող չկովել այս քաղաքականության դեմ, վորովհետև դա խլում ե իր վոտքի տակից շահագործելու բոլոր հիմքերն ու հնարավորությունները՝ նա իր համար մահ ե բերում: Նա վոչնչացնող հարված ե հասցնում իրեն, վորպես գյուղի կապիտալիստական տարրի. «Հկա ավելի վճռական սրարշավ հարձակում գյուղի և քաղաքի կապիտալիստական եկեմնաների վրա, քան սոցիալիզմի աճումը գյուղում և քաղաքում» (Մոլոսով):

Համայնական խոշոր տնտեսություններ ստնդելու մեր վճռական կուրսին կուլակը պատասխանում ե իր ուժեղացրած դիմադրություններով: Մենք կանխում և խորտակում ենք այդ դիմադրությունները, մահացու հարված տալով նրան սոցիալիզմի հաղթական արշավով: Դասակարգային հակառակորդին վերացնելու այդ քաղաքականությունից որինաչափորեն բղխում և դասակարգային պայքարի հետագա սրումը:

Կուլակին վորպես դասակարգ վոչնչացնելու քաղաքականությունն իրագործվելու յե նրա ակտիվության բարձրացման պայմաններում: Նա կամավոր չի վիշի իր դիրքերը—խնդիրը պետք ե լուծվի դաժան և համառ պայքարի միջոցով: Ներկայումս դասակարգային պայքարը գյուղում գլխավորապես պայքար ե կոլխոզի և կուլակի միջն: Այդ պայքարի ներկա փուլի առանձնահատկությունն այն ե, վոր միջակի զգալի մասը գերազանցով կոլեկտիվ տնտեսությունն իր անհատականից, անցնում ե նրա կողմը: Կոլտնտեսություններում կազմակերպված չքավորությունը, բարրակությունը ու միջակ գյուղացին անհաշտ պայքարի մեջ են մտնում կուլակի հետ:

Սոցիալիզմի հաջող հարձակման հիման վրա սրվող դասակարգային պայքարն ընդգրկում ե տնտեսության, կուլտուրալի և քաղաքական կրանքի զանազան բնագավառները, դասակարգային թշնամին զգալով իր մոտալուս վոչնչացումը, վոտքի յե հանում հին աշխարհի բոլոր մնացորդներին, ձեռք ե առնում պայքարի բոլոր հնարավոր միջոցներն իր անխուսափելի վախճանի ժամկետը իրեկարացնելու համար: Նա զգում ե, վոր ճզմվում ե սոցիալիզմի հումկու արշավի անիվների տակ, վորի համար ել

հավաքում և իր ուժերը վերջին դիմադրությունը ցուց տալու համար, Նա աշխատում և ոգտագործել դասակարգային պալքարի բոլոր զենքերը վոչ թե նրա համար, վոր ուժեղացել ե, այլ նրա համար, վոր թուլացման և կործանման անժխտելի փաստերն ստիպում են նրան մի անգամ ևս ձեռքը զցելու չոփին, ինչպես խեղդվողը ծովում:

«Մեռնող դասակարգերը վիմադրում են վոչ թե այն պատճառով, վոր իրենք ավելի լին ուժեղացել, քան մենք, այլ այն պատճառով, վոր սոցիալիզմն ավելի արագ ե աճում, քան իրենք» (Ստալին): Դասակարգային հակառակորդի ջղաձգային գալարումների այս վերջին փորձը նրա թուլացման և անխուսափելի վոչնչացման նշանն ե:

Յերկրի ներսում դասակարգային պալքարի սրումն ամբողջովին հերքեց աջերի խոսակցությունն այն մասին, թե դասակարգային պալքարը չի սրվում, վոր կուլակն աստիճանաբար ներաճում և սոցիալիզմի մեջ կոռպերացիայի և այլ ճանապարհներով, Նման տեսությունները հակառակ են լենինի ուսմունքին: Նրանք զինաթափ են անում պրոլետարիատին իր դասակարգային թշնամիների դեմ մղած պալքարում: Կուսակցությունը վճռողական հակահարված տվեց դասակարգային պալքարի սրումը թերագնահատող և կուլակի վրա կատարվող հարձակման թափը թուլացնել ցանկացող աջ ոպրոտյունիստներին: Բանվոր դասակարգը, կոմունիստական կուսակցության զեկավարությամբ, հենվելով չքավորների վրա և զաշնակցելով միջակի հետ, կվոչնչացնի կուլակին վորպես դասակարգ և կառուցը սոցիալիստական հասարակություն:

«Կուլակներն ամենագաղանային, ամենակոպիտ, ամենավայրենի շահագործողներն են, վորոնք այլ լերկրների պայմաններում քանիցս վերականգնել են կալվածատերերի, թագավորների, տերտերների, կապիտալիստների իշխանությունը: Կուլակներն ավելի շատ են, քան թե կալվածատերերն ու կապիտալիստները: Այնուամենայնիվ կուլակները ժողովրդի մեջ փոքրամասնությունն են կազմում: Այդ արյունաքները հարստացել են ժողովրդական կարիքի վրա, պատերազմի ժամանակ, բարձրացնելով հացի և այլ պրոդուկտների գները: Այդ սարդերը չաղանում ելին ի հաշիվ գլուղացիների քալքալման պատերազմից, ի հաշիվ սովածքանվորների: Այդ տղբուկները խմում ելին աշխատավոր-

ների արլունը, այնքան ավելի հաստանալով, վորքան առվելի սովի լեր մատնվում բանվորը քաղաքում և գործարանում: Այդ վամպիրները հավաքում ելին և հավաքում են իրենց ձեռքը կալվածատիրական հողը, նրանք նորից և նորից կապալալի տակ են ցցում չքավոր զյուղացիներին:

Կուլակներն ոգտվում են զյուղական շքավորության խավագությունից, ցրվածությունից և ջլատությունից: Նրան դրդում են բանվորների դեմ, լերբեմն կաշառում են նրան՝ հնարավորություն տալով նրան մի հարյուր ոուրլի «շահել» հացի սպեկուլիացիալից (և միենուէն ժամանակ հաղարներով թալանել չքավորությանը): Կուլակները ձըգտում են իրենց կողմը քաշել միջակ զյուղացուն և լերբեմն այդ նրանց հաջողվում եր» (Լենին):

Կուլակն ու նեպմանը բոլոր հնարավոր միջոցները ձեռք են առնում՝ խանգարելու խորհրդային իշխանության ձեռնարկութեա- րին: Պրոլետարական դիկտատուրալի դեմ մղած իրենց պայքարում նրանք գործադրում են բազմազան ձեր՝ սկսած կոլեկտիվ- ները քայլայելու փորձերից, վերջացրած խորհրդային ակտիվ աշխատողների, կոմիտեիտականների, կոմունիստների և գյուղ-թղթա- կիցների դեմ կազմակերպվող մահափորձերով: Այդ պայքարի կազմակերպման համար նրանք ստանում են քաղաքային նեպ- մանի, հոգենորականության և արտասահմանաւան բուրժուազիայի նյութական, բարոյական և քաղաքական աջակցությունը:

Կուլակն աշխատում ե խախտել չքավոր և միջակ գյուղացու դաշինքը, վորպեսզի այդ փոխարինի իր և միջակի դաշինքով և տապալի պրոլետարիատի դիկտատուրան: Նա աշխատում ե ու- նենալ իր մարդկանց գյուղում աշխատող զանազան կազմակեր- պությունների մեջ և առաջին հերթին՝ գյուղխորհրդում: հաճախ նա իր պայքարը տանում ե չքավոր և միջակ լետամաց տարրերի միջոցով:

Մեր բոլոր ձեռնարկութեարին կուլակը հակադրում ե իրենը. մենք անցկացնում ենք հացամթերում—նա ևս անցկացնում ե հացամթերում, թագցնում ե իր հացը և գնում մյուս գյուղա- ցիների ավելցուկը, վորպեսզի սովի մատնի լերկիրը և ստիպի մեզ զիջութեար կատարելու իրեն: Նա խանգարում ե ինդուստրաց- ման փոխառությունների իրացմանը. «իզուր եք ձեր կոպեկները տալիս կառավարությանը, դուք նախ մտածեք, թե քանի՞որ ե մնալու այդ իշխանությունը, վոր տասը տարվա վարկ եք տալիս»—

ասում և կուլակը՝ նրանք սպանում կամ ծեծում են չքավոր-ներին, գյուղթղթակիցներին, քեֆերի կազմակերպման միջոցով աշխատում են գյուղացիների վորոշ մասին քաշել իրենց կողմը։ Կուլակները և քահանաները ազիտացիա լին անում կուսակցության և իշխանության դեմ, զանազան պրովոկացիաներ և պոչավոր ստեր են տարածում անտեղակ մարդկանց միտքը պղառելու ու գրգռելու համար։ Կուլակներ տարածում են, թե կոմունաներում բոլորի կանալք և աղջկիկները համայնացվում են, նրանք քնում են բոլորի համար պատրաստված մի մեծ վերմակի տակ, նրանք ճաշում են մի ընդհանուր ափսելում և այլ նման ստահող լուրեր։

Կուլակները և նեպմաններն աշխատում են կաշառել և քայլքայել մեր ապարատները. նա կեղծ դիմակ հագած մտնում և կոլտնտեսության մեջ, վորպեսզի նրան քայլքայի և պայթեցնի։ Կուլակները պայլքարում են գների պետական կարգավորման դեմ, աշխատում են խափանել գների իշեցման քաղաքականությունը, վորպեսզի իրենց ապրանքը կրկնակի գներով վաճառեն և ցցեն դրամի կուրսը։ Կուլակը կատաղի դիմադրություն և ցուց տալիս մեր հարկալին, վարկալին և չքավորին ոգնելու քաղաքականությանը։ Նրանք պայլքարում են անհատական հարկման և գյուղատեսական գործիքները դասակարգալին սկզբունքով բաշխելու դեմ։ Կուլակը պայլքարում ե բամբակի ցանքսադաշտերը ծավալելու դեմ—«գալող տարի հացը շատ քիչ ե լինելու, սովորելու ամքող լերկում, լեթե բամբակցանեք, սովից կկոտորվեք»—ահա նրա խորամանկ պայլքայի նմուշներից մեկը։

Այս բոլոր փաստերն ապացուցում են, վոր կուլակը սոցիալիզմի դեմ պայլքարելու հստակ ծրագիր և տակտիկա ունի։ Կուլակն իր հականեղափոխական ազիտացիայով և պայլքարով միշտ աշխատում է քաղաքական պահանջներ և առաջարում, վորոնց իրագործման դեպքում կվերանար պրոլետարական դիկտատուրան։ Նրանք հասկանում են, վոր լեթե չլինի կոմունիստական կուսակցությունը, չի լինի և խորհրդային իշխանությունը, վորի համար ել առաջադրում են «խորհուրդներն առանց կոմունիստների» լողունգը. նրանք պահանջում են գաղտնիքեարկություն և բուրժուական ու մանր բուրժուական կուսակցությունների լեզար և անարգել գործելու հնարավորություն։ Նրանք լավ գիտեն, վոր լեթե չլինի պրոլետարիատի ղեկավարությունը խորհրդներում, բանվորագլուղացիական դաշինքի մեջ, գյու-

դացիությունը կենթարկվի բուրժուական և մանր բուրժուական ազդեցությունների, և կթուլանա պրոլետարական դիկտատուրան, վորի համար ել պահանջում են «բանվորների և գլուղացիների հավասար ընտրական իրավունք, նրանցից խորհրդներում պետք ե լինի այնքան պատգամավոր, վորքան իրենց տեսակարար կշիռն և ազգաբնակչության մեջ»: Նրանք պահանջում են գլուղացիների ինքնուրուցն կազմակերպություններ—«գլուղացիների միություն»—քաջ գիտակցելով, վոր գրանք հականեղափխության բներ են լինելու Նրանք պատքարում են չքավորներին ինքնուրուցն կազմակերպելու և նրանց դասակարգալիին գիտակցությունը բարձրացնելու համար տարվող աշխատանքների դեմ—«գլուղացիներին պետք ե բաժանել վոչ թե չքավորների, միջակների և կուլակների, այլ աշխատավորների և ծուլերի, անբանների»: Կուլակալին այս ազիտացիալի իմաստը պարզ ե. նա ցանկանում է թագցնել գլուղի դասակարգալին շերտավորումը և դասակարգերի անհաշտ պատքարը, վորպեսզի դրանով թագցնի իր շահագործող դեմքը:

Թված փաստերը գալիս են մեզ համոզիլու, վոր պետք ե անխնա պատքար մղել կուլակին քաղաքականապես և տնտեսապես վոչնչացնելու համար, վորպես սոցիալիստական շինարարության և պրոլետարական դիկտատուրայի ամենակատաղի հակակորդի:

IV. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊՈՅՔԱՐԾ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ

«Էհարկե կոլտնտեսություններում կան հակասություններ: Էհարկե կոլտնտեսություններում կան ինդիվիդուալիստական և նույնիսկ կուլակալին սովորություններ, վորոնք դեռևս մի կողմ չեն նետվել, վորոնք սակայն անպայման մի կողմ պիտի նետվեն ժամանակի ընթացքում—կոլտնտեսությունների ամրացման, նրանց մեքենաբացման հետ զուգահեռ: «Դասակարգալին պատքարի տարրեր կան արգյուք կոլտնտեսություններում: Այս, կան, կոլտնտեսություններում դասակարգալին պատքարի տարրեր չեն կարող, յեթե այստեղ դեռևս պահպանվում են ինդիվիդուալիստական և անդամ կուլակալին հոգեբանության մնացորդները, յեթե այստեղ դեռևս կա վորոշանական վարչություն» (Ստալին):

«Աշխատանքի կազմակերպումը կոլտնտեսություններում չի կարող ընթանալ առանց պայքարի։ Կազմակերպման, բաշխման և աշխատանքի վարձատրման շուրջը կիննեն նույնիսկ դասակարգալին պայքարի տարրեր» (Պրադդալի առաջնորդողը №48, 30 թ.)։

Տնտեսության սոցիալիստական հատվածի համատարած արշավը և հաղթանակը, կոլխոզ շարժման հզոր ծավալումն ուղեկցվում և դասակարգալին պայքարի աննախընթաց սրումով։ Կուլակությունը շատ տարբեր ձևերով պայքարում և կոլխոզ շարժումն անհաջողության մատնելու համար, սկսած զրագարտություններից ու վարկարեկումից, վերջացրած տերրորով, ծեծով, գուլքի հրկիզումով և ինվենտարի փչացումով։ Պայքարի այս «խաղաղ» միջոցները գործադրվում են գլխավորապես կոլխոզների կազմակերպման առաջին շրջանում։ Կոլխոզի ձևավորման և ամրացման առընթեր ալդ պայքարի ձևերը նորանոր մոմենտներ են ընդգրկում իրենց մեջ։

Կոլտնտեսությունների գեմ կուլակների պայքարի գլխավորդին ընթանում և նրանց կազմակերպման աշխատանքներին ընդդմանալու, նրանց կազմակերպումը խանգարելու ուղղությամբ։ Պայքարի այս գլխավոր գծից բացի, կա նաև զարտուղի ճանապարհ, դա յե՛ մտնել կոլտնտեսությունը նրան քայլակնելու, կամ նրան իրեն կապիտալիստական տնտեսության շահերին լինթարկելու և սոցիալիստական դառնալու պրոցեսը կես ճամպին թողնելու համար։ Աս պայքարի յերկրորդ ուղին եւ կուլակը կոլտընտեսությունը գնում վորոշ ծրագրով և նկատառություններով։ Նա գնում ե այնտեղ, վորպեսզի պաշտպանվի պրոլետարական պետության ճնշումից, ազատվի անհատական հարկից, հացամթերումից և ալլու։ Նա մտնում է կոլտնտեսությունն, վորպեսզի ոգտագործի նրան տրվող արտօնությունները, կոլեկտիվի անվամբ ստանա մեքենաներ և զգտագործի իրեն անհատական տնտեսության համար։ Նրանք հաճախ ծախում կամ թագցնում են իրենց գուլքը և արտադրական միջոցները և կոլտնտեսությունն են գնում վորպիս միջակ կամ չքավոր, յեթե ալդ չի հաջողվում իրենց շըրջանում—տպա հաջողվում ե մի ուրիշ շրջան տեղափոխվելով։ Մանելով կոլտնտեսությունն, նրանք աշխատում են նրան հակադրել պետությանը։ Նրան կապում են մասնավոր շուկայի հետ և վաճառում հացի ավելցուկը նրան։ Իրենց սպառման նորմաները դիտավորալ կերպով ավելացնում են, վորպեսզի հացը չտան պե-

տութիւնը. իրենց անվամբ թագյնում են կոլտնտեսութիւնից. դուրս գտնվող կուլակների հացը և ալին:

Խասակարգալին պայքարը կոլտնտեսութիւն ներսում մեղմանում ե, բայց չի վերանում. Այդ պայքարը մղվում ե զգալիուրեն փոխելով իրեն ձեւերը. Վորտեղ կուլակալին տարրերին հաջողվում ե մտնել կոլտնտեսութիւն մեջ, նրանք պայթուցիկ աշխատանք կատարողի գեր են տանում. նրանք կարողանում են շատ հմտորեն քայքայիլ կոլտնտեսութիւնը և լերբեմն քայքայման մեղավորին չքավոր կամ միջակ գուռզացուն դուրս բերել. կոլտնտեսութիւն զաղափարը գուռզացիութիւն աչքում վարկարեկելու համար, նրան քայքայում, կազմալուծում և պայթեցնում են ներքուստ:

Նրանք աշխատում են դուրս հանել կոլխոզից ակտիվ հասարակական աշխատողներին և չքավորներին՝ «ծուլլ ե, չի աշխատում» և այլ պատրվակներով. ամեն կերպ խանգարում են կոլտնտեսութիւն պարզ ձեւերից բարձր և ավելի համայնացված ձեվերին անցնելուն (որինակ՝ միասին հողոգտագործող ընկերութիւնից արտելի կամ կոմունալի անցնելու համար), նրանք ցանկանում են համայնացումը պահպանել իր ամենասկզբնական աստիճանների վրա, վորտեղ գեռ անհատական տնտեսութիւնն իր հիմնականում գոլութիւնն ունի. Կուլակը կոլտնտեսութիւն ներսում խանգարում ե համայնացման բարդ ձեւերին անցնելուն խանգարելը կուլակի ներկոլխողալին տակտիկայի հիմնական խնդիրն ե:

«Կոլտնտեսութիւն ներսում կուլակը դիմակավորված աշխատում ե պահպանել իր կուլակալին ելութիւնը, նա գործում է վորպես ֆաստակ, վորպես սոցիալիստական տնտեսութիւն կատաղի թշնամի: Նա փչացնում ե կոլտնտեսութիւն գործիքները, թշնամանք ե սերմանում և սրում ե անդամների փոխհարաբերութիւնը, անտնտեսավարութիւն ե ստեղծում, կուլտուրական-քաղաքական աշխատանքներին խանգարելու համար հարբեցողութիւնն ե տարածում, աշխատում է չքավորներին դուրս հանել կոլտնտեսութիւններից, խանգարում ե համայնացման ավելի բարձր ձեւերին անցնելուն, կոլտնտեսութիւն ներսում շահագործողական հարաբերութիւններ ե հաստատում, փորձում ե կոլտնտեսութիւնը կապել մասնավոր շուկայի հետ և խանգարել պետության հան-

դեպ ստանձնած պարտավորությունները և ալլն և ալլն։ Ահա սրանք են կուլակի պալքարի մեթողները կոլտնտեսության ներսում։

Քոյություն ունեն նաև, այսպես կոչված՝ կեղծ կոլխոզներ, վորոնց կազմակերպիչները և հիմնական կադրերը կուլակալին և խորթ տարրերն են։ Կուլակությունն այդ «կոլտնտեսության» մեջ ե քաշում նաև չքավորական և միջակալին խավերից, ինարկե, այնպիսի քանակությամբ և այնպիսի մարդկանց, վորպեսզի զեկավարությունը մնա իրեն ձեռքին, իսկ նրանք կլինեն մի ցուցանակ կեղծ կոլտնտեսությանն իսկական գույն տալու համար։ Կեղծ կոլխոզները—դրանք գյուղի կուլակալին-շահագործող խավերի կազմակերպություններն են։ Կոլտնտեսություններին ոված արտոնություններն իրենց ուռճացման և անհատական տնտեսության ամրացման համար ոգտագործելու։ Դրանք կապիտալիստական տնտեսություններ են, վորոնք կոլտնտեսության անվան տակ թագնվում են պրոլետարական դիկտատուրայի հարվածներից։

«Մաքրել կոլտնտեսությունները այնտեղ ևս սողոսկված կուլակալին տարրերից, և վճռողական պալքար մղել կեղծ կոլտընտեսությունների դեմ, միաժամանակ կազմակերպել ամրող չքավոր և միջակ ակախվի պալքարը այն կոլխոզներում, վորոնք գտնվում են կուլակների զեկավարության կամ ազդեցության ներքո... Կուսակցությունը պետք ե համառ և սիստեմատիկ աշխատանքով ապահովի կոլխոզների չքավոր-միջակալին միջուկի ուժեղացումը։ Դա անհրաժեշտ է, վորովհետեւ կոլտնտեսություններում, հատկապես պարզ տիպի կոլտնտեսություններում, վորքան վոր նրանցում զեռևս արտադրության բոլոր միջոցները չեն հանրայնացված և ընդհանրապես ուժեղ են մանը սեփականատիւրական շահերը—այստեղ զգալիորեն մնում ե կուլակալին ազդեցությունների վտանգը (Կենտկոմի պլենումի բանաձեռը կոլտնտ. շինարարության մասին)։

Կոլտնտեսության ներսում դասակարգային պալքարը մղվում ե նաև աշխատանքի արդյունքի բաշխման ձևեր սահմանելու շուրջը։ Վորոշ տեղերում բաշխումը կազմակերպում են ըստ միացրած արտադրական միջոցների։ Բաշխման նման ձևն անթույլատրելի յէ և դասակարգանորեն սխալ, վորովհետեւ հնարավոր և դարձնում արտադրական միջոցներ ունեցողների շահագործումը չունեցողներին։ Սա ստեղծում է նլութական անհավասարություն, և կոլտնտեսության անունն ոգտագործվում է իրենց անհատա-

կան տնտեսության ամրացման համար։ Այս ձեզ գլխավորապես կիրառվում ե այն կոլտնտեսություններում, ուր մուտք են գործել կուլակալին տարրեր կամ նրանց ագնենտները։

Աշխատանքի և բաշխման կազմակերպումը կոլտնտեսություններում կարեռագույն սոցիալական խնդիր ե, վորի սխալ լուծումն առաջացնում ե հակասություններ, վոր և ստեղծում ե դասակարգալին պարզար կոլտնտեսության ներսում։ Մթերքի բաշխումն ըստ մուծած փալի, կամ միացրած արտադրական միջոցների, հարվածում ե չքավորությանը և պետք ե դեն շպրտվի վորպես կուլակալին ձեւ։

Միայն համայնացման պրոցեսի խորացումն ե, նրա ավելի բարձր ձևերին անցնելը, վոր կատեղծի նախապայմաններ նյութական-տնտեսական անհավասարության վերացման համար։ Քանի զեր կա տնտեսական անհավասարություն կոլտնտեսության ներսում, այնքան ժամանակ կմնա և դասակարգալին պարզաբանությունը, նամանավանդ, չեթե նա վորոշ շահագործողական տարրեր ե պարունակում իրեն մեջ, ընականաբար վերածվում ե դասակարգալին պարզաբանությունը։

Կոլտնտեսությունների ներսում, բացի սողոսկված կուլականներից, նրա զեմ պարզաբան են նաև լենթակուլակները (կուլակիթութակները, նրա ազդեցության տակ գտնվող գլուղացիները)։ Կուլակները սովորաբար աշխատում են պարզաբան կազմակերպել իրենց ալյդ գործակալների միջոցով, վորոնք լինելով աշխատավորների ամենալետամասաց և դասակարգալնորեն բութ խավը, գիտակցաբար աշխատում են կուլակի ոգափին՝ ընդգեմ կոլտնտեսության։ Ցենթակուլակները դասակարգալին թշնամու զենքերն են կոլտնտեսության վիճեցման համար։ Նրանք մտել են կոլխոզ, նրան քարվակելու և կուլակի պատվերը կատարելու համար։ Արանց պետք ե հարվածել և դուրս հանել կոլտնտեսությունից, վորպես մեռնող կուլակի պաշտպանների։ Իհարկե, լենթակուլակին չպետք ե շփոթել այն աշխատավոր գլուղացու հետ, վորը լերկար ժամանակ ըստաղաղ ապրելով կուլակի հետ, զեռոդժվարանում ե հաշտվել նրա հանդեպ կիրառվող խիստ միջոցների հետ (գուլքի գրավում, արտաքսում և ալլն)։ Արանք այն աշխատավոր գլուղացիներն են, վորոնք զեռ խղճահարվում են, վորոնք զեռ մինչև վերջը չեն գիտակցել կուլակի մասարար դերը նոր հասարակակարգ ստեղծելու գործում, վորոնցում դասակարգալին պարզաբանութեալ չի գնացել։ Ցենթակուլակին չպետք ե շփոթել սրանց հետ,

սրանց միջև խոշոր տարբերություն կա։ Շեշտելով տարբերությունը, միենուլին ժամանակ պետք է ասենք, վոր սրանց միջև անանցանելի չինական պարիսպներ չկան։ այդ մեղմ և խղճահարվող վերաբերմունքը կարող է վերածվել կուլակի ակտիվ պաշտպանության (գառնալյենթակուլակ) և ընդհակառակը։

Կոլտնտեսությունների միջոցով մենք գնում ենք դեպի սոցիալիստական հասարակակարգ, բայց կոլտնտեսությունը դեռևս կատարլալ սոցիալիստական տնտեսություն չե։ Կոլտնտեսության անդամների խոշորագույն մասը յերեկվա մասնավոր տնտեսատերն ե, պարզ ապրանքալին տնտեսություն ունեցող գլուզացին։ Մանր բուրժուական այդ հատվածը միանգամբ չե, վոր փոխում ե իր սեփականատիրական հոգեբանությունն ու մանր բուրժուական մտածողությունը։ Դեկրետի և լոգունդի ուժով չե, վոր նրա այս կողմը պիտի վերամշակվի, այլ այդ պետք ե տեղի ունենա համառ և յերկարատև պալքարի միջոցով։ Մեր պալքարը այդ մանր բուրժուական մասնավոր սեփականատիրական մտայնության և հոգեբանության դեմ ևս դասակարգալին պալքար ե։ «Մանր յերկրագործի վերամշակման և նրա ամբողջ հոգեբանության ու սովորությունների վերափոխման գործը սերունդներ պահանջող գործ ե, կուծել այդ խնդիրը մանր յերկրագործի վերաբերմաբ, առողջացնել, ալսպես ասած, նրա ամբողջ հոգեբանությունը, կարող և միմիայն նյութական բազան, տեխնիկան, տրակտորների և մեքենաների գործադրումը մասսայական մասշտաբով յերկրագործության մեջ, ելեկտրիֆիկացիան մասսայական մասշտաբով» (Լենին)։

Դասակարգալին պալքարը կոլտնտեսության ներսում զգալիորեն տարբերվում է նրանից գուրս մզգող պալքարից, մենք վերը շեշտեցինք, վոր այդ պալքարը մեղմանում ե և խոշոր չափով, սկզբունքորեն տարբերվում է նախկինից։ Պալքարի բովանդակությունը և ձևերը մեծ մասամբ տարբերվում են կոլտնտեսությունից գուրս մզգող պալքարից։

Ընկ. Ստալինը Մարքսիստ ազգարագետների համագումարում այդ առթիվ ասում ե. «Հռետորն այնպես գունեղ նկարագրեց դասակարգալին պալքարը կոլտնտեսություններում, վոր կարելի յե կարծել, թե դասակարգալին պալքարը կոլտնտեսություններում չի տարբերվում կոլտնտեսություններից գուրս կատարվող դասակարգալին պալքարից։ Ավելին՝ կարելի յեր կարծել, թե այդ պալքարն այնտեղ ավելի կատաղի յե դառնում... Դասակար-

պալին պալքարի տարրեր կան արդյոք կոլտնտեսություններում:
Այս կան Կոլտնտեսություններում դասակարգալին պալքարի
տարրեր չլինել չեն կարող, յեթե այնտեղ դեռևս պահպանվում են
ինդիվիդուալիստական և անդամ կուլտակալին հոգեբանության
մնացորդներ, յեթե այնտեղ դեռևս կա վորոշ անհավասարու-
թյուն: Բայց կարել՞ յե ասել, արդյոք, վոր դասակարգալին պալ-
քարը կոլտնտեսություններում նույն նշանակությունն ունի, ինչ
կոլտնտեսություններից գուրս կատարվող դասակարգալին պալ-
քարը: Վոչ չի կարելի: Մեր «ձախ» ֆրազիոնների սխալն ել հենց
նրանումն ե, վոր նրանք չեն տեսնում այդ տարրերությունը:
Ի՞նչ է նշանակում դասակարգալին պալքար կոլտնտեսություննե-
րից գուրս՝ մինչև կոլտնտեսությունների կազմակերպումը: Այդ
նշանակում ե պալքար կուլակի դեմ, վորը տիրապետում ե ար-
տազրական միջոցներին, գործիքներին և ստրկացնում ե չքա-
վորներին արտադրական այդ միջոցների ոգնությամբ: Այդ պալ-
քարը վոչ թե կենաց, այլ մահու պալքար ե: Իսկ ի՞նչ է նշանա-
կում դասակարգալին պալքար կոլտնտեսությունների հողի վրա:
Այդ նշանակում ե նախ և առաջ, վոր կուլակը ջախջախված ե և
զրկված ե արտադրական միջոցներից: Այդ նշանակում ե յերկ-
րորդ, վոր չքավորներն ու միջակները միացել են կոլտնտեսու-
թյուններում, արտադրական հիմնական գործիքների և միջոցների
համայնացման հողի վրա: Այդ նշանակում ե, վերջապես, վոր խըն-
դիրը կոլտնտեսության անդամների միջև յեղած պալքարի մասին
ե, վորոնցից վոմանք դեռևս չեն ազատագրվել ինդիվիդուալիս-
տական, կուլակալին հոգեբանության մնացորդներից և փորձում
են ոգտագործել կոլտնտեսություններում յեղած վորոշ անհավա-
սարությունն իրենց ոգտին, իսկ վոմանք ել ցանկանում են կոլ-
տնտեսություններից գուրս վտարել այդ մնացորդները և այդ ան-
հավասարությունը: Միթե պարզ չե, վոր միայն կուլակը չեն
կարող տեսնել կոլտնտեսությունների հողի վրա և կոլտնտեսու-
թյուններից գուրս կատարվող դասակարգալին պալքարի միջև
յեղած տարրերությունը»:

Այսպիսով կոլտնտ. շարժումը աճելով և ծավալելով դասա-
կարգալին պալքարը, ինքը լինելով այդ պալքարի արդյունք, չի
կարող միանգամից վերացնել այդ իր կազմակերպման առաջին
շրջանում. սակայն նա հանդիսանում է պրոլետարական-սոցիա-
լիստական ամրոց դասակարգալին թշնամու դեմ կրակ բանալու
համար. պալքարելով և դուրս վանելով կոլտնտեսությունը քալ-

քարող կուլակներին և յենթակուլակներին, ուժեղացնելով չքա-
վորական կազմակերպությունները և նրանց կշիռը դեկավարու-
թյան մեջ, պատքարելով աշխատանքի կազմակերպման և բաշխ-
ման կապիտալիստական-կուլակալին ձևերի դեմ, պարբարելով
մանր բուրժուական մտածելակերպի և հոգեբանության դեմ, մենք
կուլանտ, շարժումն իր պարզ ձևերից կվերածենք բարձր և բարդ
ձևերի ու կստեղծենք սոցիալիստական յերկրագործություն:

V. ՎՈԶՆՉԱՑԵՆՔ ԿՈՒԼԱԿԻՆ ՎՈՐՄԵՍ ԴԱՍԱԿԱՐԳ

«Դասակարգերի վոչնչացումը—համառ դասակարգա-
լին պատքարի գործը, վորը կապիտալի իշխանությունը տա-
պալելուց, բուրժուական պետությունը կործանելուց և
պրոլետարական դիկտատուրա հաստատելուց հետո չի վե-
րանում (ինչպես յենթադրում են հին սոցիալ-դեմոկրատիզ-
մի և հին սոցիալ-դեմոկրատիալի գուհկացնողները), այլ
միայն փոխում ե իրեն ձեր, դառնալով շատ կողմերով ա-
վելի դաժան» (Լենին):

«Սոցիալիզմը դասակարգերը վոչնչացնում եւ Պրոլե-
տարական դիկտատուրան այդ վոչնչացման համար արագ
այն ամենը, ինչ կարող եր. բայց դասակարգերը չի կարելի
մեկ անգամից վոչնչացնել» (Լենին):

Կոլխոզ շարժումը մտել ե իր աննախընթաց տեմպի և հա-
րաճուն վերելքի մեջ՝ դառնալով համատարած և տալով միավո-
րումների ավելի բարձր ձևեր։ Զքավոր և միջակ գյուղացիները
հեղափոխական խանդավառությամբ ջախջախելով հակառակորդի
դիմադրությունը, իրագործում են համատարած կոլխոզիվացումը։

Սոցիալիզմի դիրքերի և բանվորա-գյուղացիական դաշինքի
ամրացման հողի վրա մենք կատարում ենք շրջադարձ մեր գյու-
ղական քաղաքականության մեջ։ Այդ շրջադարձը նախապատ-
րաստվել ե սոցիալիզմի փալլուն նվաճումներով՝ յերկրի ինդուստ-
րացմանն, կոլխոզ և սովխոզ շինարարության ամրացմանն,
բանվորա-գյուղացիական զողման նոր, արտադրական ձևերի
տարածման և դասակարգալին թշնամու շահագործողական տեն-
դենցը սահմանափակելու ու նրա առանձին ջոկատների վանման
նախընթաց քաղաքականությամբ։ Յեթե մինչև վերջերս մենք
վարում ելինք կուլակի շահագործողական ձգտումները սահմա-
նափակելու քաղաքականություն, այսոր այդ քաղաքականու-

թյունը համատարած կոլեկտիվացման շրջաններում փոխվում են նրան վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունով. այսորվա խնդիրն ե կուլակին վորպես դասակարգ իսպառ վերացնել, վոչնչացնել կապիտալիզմի բոլոր արմատներն ու ծիլերը գյուղում:

Ապակուլակացման լոգունգը կիրառվելու յի միայն համատարած կոլեկտիվացման շրջաններում: Համատարած շրջաններից դուրս, մյուս շրջանների համար կիրառվելու յի նրա շահագործողական ձգտութմները սահմանափակելու և վանելու հին լուղունգը: Մակարն այս դրությունը մշտական չե. բատրակների և չքաղորների կազմակերպման, միջակին մեր քաղաքականության շուրջը ել ավելի համախմբելու և կուլակին չհղոքացնելու գուգահեռ, հիմք ունենալով կոլեկտիվացման ուժեղացումը տվյալ շրջանում, մենք աստիճանաբար սահմանափակելու և հրապարակից վանելու լոգունգից կանցնենք ապակուլակացման և նրան վերացնելու լոգունգին:

«Զի կարելի «կուլակության վորպես դասակարգի վերացումը» և «կուլակության սահմանափակում» լոգունգները պատկերացնել վորպես էերկու ինքնուրույն, իրավահավասար լոգունգներ, կուլակության վորպես դասակարգի վերացման քաղաքականության անցնելուց սկսած, այդ վերջին լոգունգը դարձել ե գլխավոր լոգունգ, իսկ համատարած կոլեկտիվացման ինթարկված շրջաններում կուլակության սահմանափակման լոգունգն ինքնուրույն լոգունգից վերածվեց գլխավոր լոգունգի վերաբերմամբ ոժանդակ լոգունգի, մի լոգունգի, վոր հիշալ շրջաններում հեշտացնում և գլխավոր լոգունգին անցնելու պայմանների նախապատրաստումը» (Ստալին):

Այդ քաղաքականությունը պահանջում ե «բաց պայքարում ջախջախել կուլակի ընդդիմադրությունը և զրկել նրան իր գություն ու զարգացման արտադրական միջոցներից» (հողից աղատորեն ուժովելը, արտադրության գործիքները, վարձակալությունը, վարձու աշխատանքից ոգտվելը և ալլն») (Ստալին): Այս քաղաքականությունը, ի հարկե, տարրերվում ե մեր նախկին քաղաքականությունից. «կուսակցության արդի քաղաքականությունը հին քաղաքականության շարունակությունը չե, այլ գյուղի կապիտալիստական տարրերը սահմանափակելու (և վանելու) հին քաղաքականությունից մի շրջադարձ, դեպի կու-

լակությունն իրքեւ դասակարգ վերացնելու նոր քաղաքականություն (Ստալին):

Մեր կուսակցության XV, համագումարը, ընդունելով գուղի և քաղաքի կապիտալիստական տարրերի դեմ վճռողական հարձակման, նրանց ել ավելի սահմանափակելու ու վանելու քաղաքականությունը—միենուելն ժամանակ դեմ արտահայտվեց ապակուլակացմանը, նա չվերացրեց հողի վարձակալություն և վարձու աշխատանքի որենքը, նա չոչչակեց կուլակին վորպես դասակարգ վերացնելու լոգունզը:

Ճիշտ եր արգւոք XV համագումարի վորոշումը՝ Անկասկած, ճիշտ եր: Ճիշտ կլիներ արգւոք այս վորոշման պահպանումը՝ համատրած կոլեկտիվացման պայմաններում: Ի հարկե, ճիշտ չեր լինի: Այդ վորոշումների պահպանումը կհակասի կուլակին վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը—վորի համար ել պետք ե մի կողմը թողնվի:

Խնքնըստինքան պարզ ե, վոր մեր քաղաքականության այս վճռողական շրջադարձը պահանջում և ապակուլակացնել կուլակին: «Ապակուլակացումն անթուլատրելի է եր, քանի դեռ մենք կանգնած ելինք կուլակության շահագործողական տենդենցները սահմանափակելու քաղաքականության վրա... ալժմս ապակուլակացումն ամբողջական կոլեկտիվացման ռայոններում, այլևս սոսկ վարչական միջոց չե: Այժմս ապակուլակացումը կատարվում և հենց իրենց՝ չքավոր և միջակ մասսաների կողմից, վորոնք կենսագործում են ամբողջական կոլեկտիվացումը: Ապակուլակացումն այստեղ կոլտնտեսությունների գուացման և դարդացման բաղկացուցիչ մասն և հանդիսանում» (Ստալին):

Զքավոր և միջակ գյուղացիներն արդեն ըմբռնել են ալդ ճշմարտությունը և համատարած կոլեկտիվացման շրջաններում ձեռնարկել են ապակուլակացման գործնական աշխատանքներին: Գյուղի հասարակության «չքավորների և միջակների» ընդհանուր ժողովի վորոշմամբ գրավում են հոգուտ կոլտնտեսությունների (վորպես անբաժանելի համայնական ֆոնդ) կուլակների արտադրության բոլոր միջոցները, թողնելով նրանց տվյալ շրջանի չքավորական տնտեսությունների միջին նորմայի չափով: Դրավում են կուլակի տնտեսական բոլոր ձեռնարկությունները և շինությունները: Ակտիվ հականեղափոխական գործունելությունն ունեցող կուլակները, վորոնք կատաղի դիմադրություն են ցուց տալիս կոլեկտիվացմանը, աշխատավոր գյուղա-

ցիների շանկութիւնը ու վորոշամբ արտաքսվում են համատարած կոլեկտիվացման շրջաններից:

Կուլակին, գուղի ազրուկներին և վաշխառուներին իրենց տնտեսական-արտադրական հիմքից զրկելու դատավճիռը չքավոր և միջակ գյուղացուն և հանձնված, վորն այդ իրագործում և բանվոր դասակարգի և նրա կոմունիստական առաջնորդի գեկավարութիւնը Զշեղվելով լինինան փորձված գծից, մենք կշարունակենք սոցիալիզմի արագատեմպ արշավը կապիտալիզմի արմատները վոչնչացնելու և սոցիալիզմի հոլակապ շենքը կառուցելու համար:

VI. ՊԱՅՔԱՐ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ ՃԻՇՏ ԳԾԻ ԱՂԱՎԱՂՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ

Դյուղի սոցիալիստական վերակառուցման ճակատում մենք ունենք անվիճելի ու փայլուն նվաճումներ: Դյուղի հիմնական մասսաների շրջադարձը դեպի սոցիալիստական զարգացման ուղին, կոլանտշարժման արագատեմպ աճումը, մի շարք շրջաններում համատարած կոլեկտիվացման իրականացումը և այդ բարգավի վրա կուլակութիւն վերացումը, կոլտնտեսությունների ամրապնդումը և արտադրութիւն կազմակերպումը և այլ նվաճումների կողքին տեղի իւ ունեցել կուսակցութիւն ճիշտ գծի խեղաթյուրման և աղավաղման պրակտիկա մի շարք տեղերում:

Տեղի էն ունեցել համատարած կոլեկտիվացման շրջանում կիրառվող փորձի ու ձեռնարկումների մեխանիկական փոխադրումը դեպի այնպիսի շրջաններ, վորոնք դեռևս բավականաչափ նախադրյալներ չունեն համատարած կոլեկտիվացման և կուլակութիւն իրեն դասակարգ վերացնելու քաղաքականութիւնն կենսագործման համար: Յեղել են դեպքեր, լերը ընկել են քանակական նվաճումների, տոկոսների բարձրացման յիշենից, կիրառել են վարչական-հարկադրական միջոցներ և խախտել են կոլտնտշինարարութիւնն կամավորականութիւնն սկզբունքը: Բավականաչափ հաշվի չեն առել կոլեկտիվացվող շրջանի տնտեսական, քաղաքական և կուլտուր-կենցաղակին առանձնահատկությունները: Վորոշ յետամաց շրջաններում կիրառել են համատարած կոլեկտիվացումը և կուլակութիւն վերացումն անպես, ինչպես այդ արել են Միութիւնն գյուղատնտեսական զարգացած շրջաններում: և վորակեսղի «լետ չմնան ուրիշներից», կոլեկտի-

վացման ասպարիզում մասսաների ինքնագործունելությունը և կամավորականությունը փոխարինել են խորհրդային որդանների վարչական ինքնագործունելությամբ:

Խորհրդային Միության մեջ կան մի շարք ազդային հանրապետություններ ու շրջաններ, վորտեղ դեռևս չեն հասունացել համատարած կոլեկտիվացման անհրաժեշտ պարմանները, վորտեղ կուսակցության և իշխանության ուղադրությունը դեռևս պետք և մնա անհատական ինքարագործության և անասնապահության վրա, ուր գեռ հերթի չեն դրված մասսաների կոռպերացման ամենապարզ ձևերը և քոչվորների նստակյաց դարձնելը, վորտեղ դեռևս բավականաչափ չեն կիրառված կուլակային և բեկական շահագործումը սահմանափակելու վերաբերյալ որենքները. և այդ շահագործումը գոլություն ունի ամենավալերնի ու բարբարոսական ձեերով. ինարկի, նման շրջաններում համատարածի անցնելը ձևական, անոգուտ և մասսակար գործ կլինիկան փաստեր, վոր անդամ նման տեղերում վորձել են համատարածի անցնել, ցանկացել են գլուղի սոցիալիստական վերակառուցման դժվարին և տեսական աշխատանք պահանջող գործը ևմեկ հարվածով կատարելու, վոգեսրված հաջողություններից ու նվաճումներից առաջ են վաղել շտագի են և խախտել կուսակցության ու իշխանության ճիշտ ցուցմունքները:

Մի շարք տեղերում թույլ են տվել կոպիտ սխալներ միջակաների նկատմամբ. լեզել են միջակների «ապակուլակացման» դեպքեր, արհամարհանք դեպի անհատական, չքավոր և միջակ այն տնտեսությունները, վորոնք դեռևս չեն մտել կոլեկտիվի մեջ. Միանգամայն սխալ և գործին մասսակար լեբեկութ և այն, վորաչքաթող են անում անհատական աշխատավորական տնտեսությունների զարգացումը. ուշադրությունը կենտրոնացնելով կողեկտիվ և խորհրդային տնտեսությունների վրա, չպետք և մոռանալ չքավոր և միջակ տնտեսությունները, վորովհետև նրանք գրավում են և դեռ կդրավեն զգալի տեղ գլուղատնտեսության մեջ:

«Այս աղավաղութների հետ միասին վորոշ տեղերում նկատվում են նաև անթուլատրելի և գործի համար մասսակար փաստեր, այն եւ բնակելի շենքերի, մանր անասունների, թռչունների և վոչ ապրանքային կաթնատու անասունների ստիլպողական համայնացումը, և դրա կապակցությամբ կոլտնտեսությունների արտելային ձևից, վորը կոլտնտեսական շարժման հիմնական

դակն ե, քայլագլողաբար կոմունալի ձերին ցատկելու փորձեր։ Մոռանում են, վոր մեղ համար գլուղատնտեսության հիմնական պրոբլեմը վոչ թե «Թունալին» կամ «վարունգների» պրոբլեմն ե, այլ հացահատիկալին պրոբլեմն ե (Համկոմկուսի կենտրոնի վորոշումից):

Սակայն Բնչակես կարող ելին առաջանալ այդ սխալները. վմբառեղ փնտուել այդ սխալների արմատը. այդ հարցին ընկեր Ստալինը պատասխանում է. «Միջակի նկատմամբ ճիշտ մոտեցում չունենալին ե. միջակի հետ տնտեսական հարաբերությունն պահպանելու ասպարիդում բռնություն ցուց տալը. Այն, վոր մոռացվել ե, վոր տնտեսական մերձեցումը միջակ տարրերի հետ պետք է կառուցվի վոչ թե բռնի միջոցների հիման վրա, այլ միջակի հետ համաձայնության գալու հիման վրա, միջակի հետ դաշինք կապելու հիման վրա։ Այն, վոր մոռացվել եր, վոր կոլտնտեսական շարժման հիմքը տվյալ մոմենտում հանդիսանում ե բանվոր դասակարգի ու չքավորության դաշինքը միջակի հետ՝ ընդդեմ կապիտալիզմին առևասարակ և ընդդեմ կուլակության առանձնապես։ Ընկեր Լենինը խոսելով միջակի հետ տնտեսական հարաբերություններ պահպանելու մասին, ասել ե. «Ամենից շատ մենք պետք ե հիմնվենք այն ճշմարտության վրա, վոր այստեղ բռնության մեթոդներով ըստ ելության վոչ մի արդյունքի չի կարելի հասնել։ Այստեղ տնտեսական խնդիրը բոլորվին այլ կերպ ե զրված։ Այստեղ չկա այն վերնախավը, վոր կարելի լինի կտրել, թողնելով ամբողջ Փունդամենտը և ամբողջ շենքը։ Այն վերնախավը, վոր կազմում ելին քաղաքում կապիտալիստները, այստեղ չկա։ Գործել այստեղ բռնությամբ—նշանակում ե կործանել ամբողջ գործը... Չկա ավելի հիմար բան, քան միջակ գլուղացիության հետ տնտեսական հարաբերությունները պահպանելու ասպարիդում բռնության մասին անգամ մտածելը»։

Կոլեկտիվացման ասպարիդում կատարած սխալներն ու աղավաղութները հիմնականում հետեւալներն են.

1. «Խախտել են կամավորության լենինյան սկզբունքը կոլտնտեսություններ կառուցելիս։ Խախտել են կուսակցության հիմնական ցուցումները և գլուղատնտեսական արտելի տիպարացին կանոնադրությունը՝ կոլտնտեսության շինարարության մասին... Լենինիզմն ուսուցանում ե, վոր կոլտնտեսությունը մարդկանց վզին ուժով փաթաթելու լուրաքանչյուր փորձ և կոլտըն-

տեսությունները հարկադրման կարգով ստեղծելու յուրաքանչյուր փորձ կարող ե տալ միայն բացասական արդյունք և կարող ե միայն խրանեցնել գյուղացուն կոլտնտեսական շարժումից:

2. «Խախտել են լենինյան այն սկզբունքը, վորի համաձայն պետք ե հաշվի առնել ԽՍՀՄ-ի տարբեր շրջանների բազմազան պարմանները՝ կոլտնտեսական շինարարության ասպարիցում։

3. «Խախտել ելին լենինյան սկզբունքը, վորով անթույլատրելի յէ համարվում շարժման չափարտված ձեկի վրայով թոփիք գործելը, կոլտնտեսության շինարարության վերաբերմաճը՝ Խախտել ելին լենինյան սկզբունքը՝ մասսաների զարգացումից առաջ չանցնել, մասսաների շարժումը դեկրետով չկատարել մասսաներից չկտրվել, այլ շարժվել մասսաների հետ միասին և նրանց առաջ շարժել, մոտեցնելով նրանց մեր լողունքներին ու թեթևացնելով նրանց համար իրենց սեփական փորձով համոզվելու մեր լողունքի ճշմարտության մեջ» (Ստալին):


Ինչ կասկած, վոր այդ շեղումները, աղավաղումներն ու խոտորումները ջուր են ածում դասակարգավին թշնամու ջրաղացին, դրտնք անուղղակի ծառայություն են դասակարգավին հակառակորդին և ուժեղացնում են նրան: Այդ սխալները հրում են մեղանից միջակների և չքավորների առանձին խմբակները, վորով ել գյուրացնում են կուլակի գիմագրությունը Խորհրդավին իշխանության դեմ: «Տարտեկույս չի կարող լինել վոր արդարիսի պրակտիկան, վոր կիրառվում ե «Ճախ» ֆրազների դրոշի տակ, իրոք ջուր ե ածում հակահեղափոխականների ջրաղացին և վոչ մի ընդհանուր կետ չունի մեր կուսակցության քաղաքականության հետո: Ինարկե, այս չի նշանակում, վոր աջ սխալներ չկան, կամ նրանք պակաս վտանգավոր են այս գործում. աջ վտանգը դարձալ շարունակում ե մնալ վորպես ներկա շրջանի գլխավոր վատանգ, սակայն «Ճախ» շեղումների սխալները գլխավոր խոչընդոտն ե կոլեկտիվացման գործում։

Վերջին շրջանում գյուղացիների մի մասի հեռանալը կոլտնտեսություններից—առիթ տվեց վորոշ մարդկանց կուսակցության գծի ճշտությունը տարածկուսանքի տուկ առնելու, այս մարդիկ սկզբից գործը շատ հեշտ են համարել, վոգնորվել, արբել և գլխավորուտ են իեկել քանակական հաջողություններից և լերը հանդիպել են դժվարությունների, ի հայտ են քերել իրենց մանր բուրժուականությունը. չունենալով բավականաչափ կամք, տոկունություն և համառ պատքարի ընդունակություն,

Նրանք խուճապի մատնված սկսեցին բարբաջել՝ «պետք չեր կոլտնտեսությունների աճման արդպիսի տեմպ վերցնել. դա սխալ եր և չեր ըղխում մեր պայմաններից ու հնարավորություններից»:

Կոլտնտեսություններից հեռացման և նույնիսկ առանձին կոլտնտեսությունների քայլայման փաստերը չպետք ե մեզ հանգարծակի բերեն. պետք ե ընդմիշտ ըմբռնել, վոր խոշոր գործերը ու սոցիալ-քաղաքական վերակառուցումները չեն կատարվում առանց գժվարությունների ու հիվանդությունների: Ինչ զարմանալի բան կա ալստեղ, վոր կոլտնտշարժման հզոր և հաղթական ալիքն իր մեջ և առել վորոշ անկայուն տարրեր, կամ վոչ հաստատորեն կոլանտեսությունները լեկած խալեր, վորոնք ցուցակագրման շրջանում «ցանկացել են» լինել կոլեկտիվում, իսկ հիմա խսկական կոլեկտիվացման, արտադրության միջոցների համայնացման և կոլխոզների ամրացման շրջանում թողնում են նրա շարքերը: Հեռացողների մեծագույն մասը փաստորեն կոլեկտիվներում չեն լեզել, նրանք լեզել են միայն ցուցակներում և «յես կարծում եմ, վոր միանգամայն նորմալ լերնույթ ե... կոլտնտեսություններից հեռանում են նախ և առաջ ալսպես կոչված «մեռլալ անձինք»: Դա նույնիսկ հեռացում չե, այլ զատարկության լերնան հանելը: Քետք են արդյոք մեզ «մեռլալ անձինք»: Ի հարկե, պետք չեն... Յերկրորդ՝ հեռանում են մեր գործին ուղղակի թշնամի, խորթ տարրերը: Պարզ ե, վոր վորքան շուտ դուրս գցվեն ալսպիսի տարրերը, նույնքան լավ է կոլտնտեսական շարժման համար:

Վերջապես, հեռանում են տատանվող տարրերը, վորոնց չի կարելի անվանել վոչ խորթ, վոչ ել «մեռլալ անձինք»: Դրանք հենց այն գուռղացիներն են, վորոնց մենք այսոր դեռ չենք կարողացել համոզել, վոր մեր գործն արդարացի լի, սակայն վորոնց մենք անվիճելիորեն կհամոզենք վաղը: Արդպիսի գուռղացիների հեռանալը հանդիսանում է լուրջ, թեպետ ժամանակավոր, մի կորուստ կոլտնտեսական շարժման համար: Այդ պատճառով կոլտնտեսությունների տատանվող տարրերի համար մզվող պայքարն այժմ հանդիսանում է կոլտնտեսական շարժման ամենաելական հարցերից մեկը» (Ստալին):



ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ. ԽՍՀ ՄԻՈՒԹԵՈՒՆԸ ՅԵՎ
ՆԱՊԻՑԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՐԴՅԱՆ.

Եջ

Կապիտալիստական տնտեսությունը և ԽՍՀ Միության տնտեսությունը	5
Ներածություն	5
Գլուխ առաջին. — Արտադրությունը կապիտալիս- տական հասարակակարգում	16
§ 1. Կապիտալիստական արտադրության բնորո- շիչ գծերը	16
§ 2. Վերտեղից և կապիտալիստական հասարակու- թյան մեջ ստացվում շահուկթը	25
Գլուխ երրորդ. — Արտադրությունը ԽՍՀ Միու- թյան մեջ	32
§ 1. Խնչվել և տարբերվում խորհրդային տնտեսու- թյունը կապիտալիստականից	32
§ 2. Շահուկթը ԽՍՀՄ մեջ և թե ուր և նա գնում § 3. Մասնավոր կապիտալիստական արտադրու- թյունը ԽՍՀՄ մեջ	39
Գլուխ յերրորդ. — Կապիտալիստական տնտեսու- թյան և ԽՍՀՄ տնտեսության զարգացումը .	46
§ 1. Մանր և խոշոր արտադրության պալքարը կա- պիտալիստական կարգերում	46
§ 2. Ո՞վ և հաղթողը մբցման միջոցին կապիտա- լիստական կարգերում	53
§ 3. Գոլությունն ունի՞ արդյոք պալքար ԽՍՀՄ սո- ցիալիստական արդյունաբերության մեջ	58
Գլուխ չորրորդ. — Գյուղացիական տնտեսության վիճակը կապիտալիստական հասարակակար- գում և ԽՍՀ Միության մեջ	63

§ 1. Գլուղացիական տնտեսությունը կապիտալիզմի որով	63
§ 2. Գլուղացիության դրությունը Խորհրդավոր կարգերում	71
Դլուխ հինգերորդ գլուղացիական կապիտա- լիզմի տիրապետությունը	75
§ 1. Կապիտալիստական միավորումները և նրանց մենաշնորհը շուկայում	75
§ 2. Ֆինանսական կապիտալ	82
§ 3. Իմպերիալիզմը և պատքար շուկաների համար	87
§ 4. ԽՍՀՄ բանկերն ու արտադրության միավո- րումները	91
Դլուխ վեցերորդ գլուղացիական կապությունների շահագործումն իմպերիալիզմի շրջանում	95
§ 1. Աշխարհի բաժանումը խոչորագույն իմպերիա- լիստական լերկրների միջև	95
§ 2. Գաղղությունների և կախումն ունեցող լերկրների շահագործումն իմպերիալիզմի կողմից	99
§ 3. ԽՍՀՄ Արևելքի և գաղղությունների ճնշված ժողո- վրդների բարեկամն և	102
Դլուխ չորրորդ գլուղացիական պիկտատու- րան և պրոլետարիատի դիկտատուրան	105
§ 1. Բուրժուական պետություն	105
§ 2. Պրոլետարական պետություն	120
ՀԱՅՎԱԾ ԵՐԵՎԱՐՈՐԴԻ. ՊԱՅՏԱԾՐ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՎԱՄՈՒՅՏՎՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԱԼՎՈՒՄ.	
Դլուխ ութերորդ գլուղացիական պան- վորներն ու գլուղացիները պատքարում կապի- տալիստների գեմ	139
§ 1. Բանվորների և գլուղացիների դրությունն ա- ռևելություն	139
§ 2. Բանվորների և գլուղացիների դրությունն ա- րևելքում	149
Դլուխ իններորդ գլուղացիական զեկավարում բանվոր- ների և գլուղացիների պատքարը կապիտա- լիստական լերկրներում	161

§ 1. Կոմինտերնը և նրա խնդիրները	161
§ 2. Կոմինտերնի ուժերը	174
§ 3. Պրոֆինտերնը և նրա գործունելությունը	178
§ 4. Դյուղինտերնը, Սպորտինտերնը և Մոպքը	183

Դ լ ո ւ ի տ ա ս ն ե ր ո ր դ.—Սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ամբողջ աշխարհում անխուսափելի լե

§ 1. Պատերազմից հետո կապիտալիստական լեր կրների ներսում հակասությունները սրվել են	189
§ 2. Արշավանք ԽՍՀ Միության վրա	201
§ 3. Սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ամբողջ աշխարհում անխուսափելի լե	208

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԵՐՈՈՐԴ. ՄԵՐ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

I. Ժողովրդական տնտեսության զարգացման հընդանյա պլանը	215
II. Դյուղատնտեսության կոլեկտիվացումը	222
III. Դասակարգային պալքարը գյուղում	226
IV. Դասակարգային պալքարը կոլտնտեսության ներսում	238
V. Վոչնչացնենք կուլակին վորպես դասակարդ	240
VI. Պալքար կոլեկտիվացման ճակատում ճիշտ գծի աղավաղութների դեմ	243

YS4.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004772